Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՏԻԿԻ՜Ն ՄՈՆՍՈՐՕ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Ա. ՏԻՒՄԱՅԻ ԵՒ Օ. ՄԱԳԷԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Գ. ԳԵՍՏԷՊԷԹԵԱՆԻ

ԶՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ
1879

742

84
Ղ-60

# ՏԻԿԻՆ ՄՈՆՍՈՐՕ

## ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՄԻ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ ԵՒ Ի ՄԵՏԱՍԱՆ ՊԱՏԿԵՐՍ.

ԳՈՐԾ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱՅԻ ԵՒ ՕԿԻՒՍԹ ՄԱԳԷԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ Գ. ԳԱՏԻՎԷԹՃԵԱՆԻ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ

1879

[illegible] 31 [illegible] 1916

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

574-2013

742-642

# ՏԻԿԻՆ ՄՈՆՍՈՐՕ

## ՅՈՒՆԱԶԱՐԵԱՆ

## ՊՈԺԵԼԻ ԼԻՃԿ

### ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Անժուի մէջ Պօժէի դղեկին ստորին մէկ սրահը, քանդակեալ կաճ կարասիք, Սպանիական կաշիէ օծոցք, ծանր գորգեղէնք: Ցաջ՝ եւ 'ի ձախ դռներ: Ձախ կողմէն խորը շինուածոց երեւելի մասունք որ կարմիր մոմերով լուսաւորեալ գաւիթի մը վրայ բացւող դուռներով կտրուած են: Խորը Պօժէի լճին վրայ նայող երեք ապակեզարդ փեղկերով լայն պատուհան մը: Սեւ ծառերով հորիզոն մը: Վերջ ժմերան:

### ՏԵՍԻԼ Ա.

ՕՐԻՑԼԻ, ՍՊԱՍԱՒՈՐՔ (շքամուտին մէջ):

ՕՐԻՑԼԻ. (Ներս մտնելով) Այս յարկը՝ պատրաստ է: Երկու սենեակներուն մէջ ալ կրակ կայ . . . . լաւ: Ամեն կողմ ներքին նիզերն ու փակարանները հանեցին . . . լաւ: Հիմա 'ի մաի առէք. քիչ մը յետոյ այս յարկը մէկը պիտի գայ բնակելու. թէոր ձեզմէ մէկը այն անձը տեսնել կամ ճանչել ջանայ պիտի բանտարկուի, կարելի է որ աղմուկ և աղաղակներ լսէք . . . գգուշացէք. որովհետեւ ով որ ձեզմէ այս յարկէն ելնող աղաղակի մը կամ նշանի մը պատասխանէ՝ նա իբր մատնիչ պի-

տի նկատուի. և մանչի մը համար տ՚Անժու դուքսին արդարութեան մէջ բանտէ մը աւելին իսկ կայ։

(Սպասաւորները կը խոնարհին)

## ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԱԽՈՌԱՊԵՏ ՄԸ

ԱԽՈՌԱՊԵՏԸ. Պարոն Օրիյլի, սալայատակին վրայ ձիերու դոփիւնք կը լսուին։

ՕՐԻՅԼԻ. Լաւ. ինչ որ ըսի հասկցաք. մինչև իշխանին գալուստը գղեկին մէջ ոչ ստուեր պիտի որոշէք և ոչ շշունջ մը լսէք. գացէք։ (Սպասաւորք կը մեկնին)

ԱԽՈՌԱՊԵՏԸ. Պարոն Օրիյլի, կառքը դղեկին պատշգամին առջև կը կենայ. և կը տեսնեմ որ կ՚իջնեն....

ՕՐԻՅԼԻ. Լաւ. իմ սենեակս գացէք և միայն երբ ձեզ կոչեմ այն ատեն դուրս ելէք։ (Ախոռապետը կը մեկնի, Օրիյլի առաջ կը նետուի և դուռը կը բանայ)։

## ՏԵՍԻԼ Գ.

ՏԻԱՆԱ, ԴԻՄԱԿԱՒՈՐ մարդ մը, յետոյ ԺԵՐԹՐԻՒՍ

ՏԻԱՆԱ. Եթէ իմ հարցմանցս չպատասխանէք՝ քայլ մը աւելի առնելու չեմ. (Մարդը սրահը ներս կը ցուցնէ) Ո՞ւր եմ...

(Մարդը բան մը չպատասխաներ)։

ԺԵՐԹՐԻՒՍ. Հանդարտեցէք օրիորդ. զձեզ բերել տուած անձերնին արդէն հասած կ՚երևին. և անշուշտ ձեզ հետ խօսող մը պիտի գտնուի։ (Սոյն միջոցին մարդը դուրս կ՚ելնէ)։

ՏԻԱՆԱ. (ցնցուած, ինքնին) Ո՛հ...։

ԺԵՐԹՐԻՒՍ. Օհ ուրեմն, մեկնեցաւ... դուռը կը գոցէ... ա՛հ, աս ինչ ըսել է։

ՏԻԱՆԱ. Սարսափէս կը մեռնիմ։



ԺԵՐԹՐԻՒՍ. Ո՛հ, բայց վերջապէս պիտի զայրանամ. կեցէք... (Ներքնայ դրան կը բախէ՝ պոռալով) Պարոն... Ինծի նայէ... Օգնութիւն, Օգնութիւն (առ Տիանա) Պիտի տեսնէք հիմայ։

ՏԻԱՆԱ. Զգուշացիր Ժերթրիւտ։

ԺԵՐԹՐԻՒՍ. Բէհ, պէտք է վերջացընել օրիորդ. (սաստկօրէն կը զարնէ) Մարդասպանութիւն կայ, կրակ կայ։

ՏԻԱՆԱ. Կու գան։

ԺԵՐԹՐԻՒՍ. Աստը խիստ ապահով էի. (Օրեյլին տեսնելով) դարձեալ դիմակաւոր մը։

## ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ՕՐԻՅԼԻ (դիմակաւ)

ՏԻԱՆԱ. Պարոն, Փրանսուա առաջին թագաւորին զինակից՝ պարոն տը Մերիտորի միակ զաւակն եմ, ես՝ պարոնուհի Տիանա. Միթէ հօրս տունէն այսքան հեռու եմք որ զիս չճանչեն և համարձակին նախատել... Ես Լիւտի դղեակը իմ մէկ ազգականիս կ՚երթայի։ Ինչու համար ձեր մարդիկը իմ կառքս կեցուցին. ինչու զիս ճամբէս խոտորեցին։ Զիս հոս բերող ձիաւորները ինչ իրաւամբ իմ սպասաւորներուս հետ դէշ վարուեցան և զանոնք վռնտեցին։ Ո՞վ են այս թշուառականները, և դուք՝ դուք ալ ո՞վ էք։ Ո՞ւր եմ հոս.... ո՛ւր եմ։

ՕՐԻՅԼԻ. Ձեր տունը տիկին։

ՏԻԱՆԱ. Կը ծաղրէք միթէ....

ՕՐԻՅԼԻ. Հաճեցէք հրամայել, տիկին. Այս գաւիթին մէջ ձեր հրամաններուն պատրաստ սպասաւոր մը կայ միշտ, երբ այս դրան բախէք։

ԺԵՐԹՐԻՒՍ. Զմեզ տեսութենէ կը ծածկեն։

ՏԻԱՆԱ. Վերջապէս ինչ ընել կ՚ուզեն զիս։

ՕՐԻՅԼԻ. Ձեզ հետ թագուհւոյ մը պէս վարուիլ։

(կը բարևէ և կը մեկնի)

## ՏԵՍԻԼ Ե.

ՏԻԱՆԱ, ԺԷՐԹՐԻՒՏ

ՏԻԱՆԱ. Աւելի լաւ էր սպառնալիքներ . . . Ժէրթրիւտ, ալ չեմ խօսիր ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Ա՛հ, օրիորդ, Թակարդի մը մէջ ինկած եմք։

ՏԻԱՆԱ. Որուն հեղինակը դժուարին չէ գուշակել։

ԺԷՐԹՐԻՒՏ. Պարոն Մոնսորօ կոմսը ։

ՏԻԱՆԱ. Անկից զատ ով պիտի ըլլայ . . ։ Զանի ճանչելէս 'ի վեր՝ նոյն իսկ Թշուառութիւնը կը ճանչեմ ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Բայց՝ օրիորդ, պարոն Մոնսորօ զձեզ առեւանգելու պէտք չունէր, քանի որ ազատ էր զձեզ Մերիտորի մէջ տեսնել, քանի որ ձեր հօրմէն զձեզ խնդրած էր և նա ալ բնաւ մերժած չէր ։

ՏԻԱՆԱ. Այո՛, բայց ես մերժած էի ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Գուցէ անիրաւ էիք ։

ՏԻԱՆԱ. Դու ի՞նչ գիտես, կրնա՞ս ուրանալ այն անբացատրելի սարսափը զոր Մերիտորի մէջ առաջին անգամ Մոնսորօ անունը լսած ատենս զգացի ։ Անշուշտ նախազգացում մ'էր քանի որ դեռ կոմսը տեսած չէի ։ Եւ զինքը տեսնելէս 'ի վեր՝ գիտե՞ս ինչու համար սիրտս կը սառի երբ նա ինձ կը մօտենայ, երբ իւր ցանկասէր և նենգաւոր ակնարկը իմ վրայ կ'զգամ . . . ո՛չ, զայն չես գիտեր՝ Ժէրթրիւտ. բայց հիմայ պիտի գիտնաս։ Կը յիշե՞ս այն օրը որ մեր փայտահատները զիս հողեվարք եւմարած գղեակը բերին ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Զանի չյիշեմ։ Ձեր պարոն հայրը զձեզ՝ այնքան գունատ տեսնելով քիչ մնաց վշտէն պիտի մեռնէր. բայց սակայն եթէ լաւ կը յիշեմ, դուք միայն քիչ մը պարտասեալ և անտառէն շեղած ըլլալնուդ համար քիչ մը սարսափած էիք . . . ։ Պարոն Մոնսորոյի Պօժէի անտառին մէջ առաջին անգամ որսի ելած օրն էր այն ։

ՏԻԱՆԱ. Լաւ ուրեմն, այո, պարոն, տ'Անժու դուքսը իւր անուամբը կառավարած այս գաւառը դեռ նոր խլած էր զանի ։ Մինչև այն ատեն Մերիտորի մէջ շատ երջանիկ ապրած էի, իմ ծաղիկներուս, մաքիներուս և կարապներուս հետ՝ իմ ալեզարդ հօրմէս պաշտուելով զիս շրջապատողներէ՝ երկնի Թռչունները, անտառաց էրէները սիրելով։ Նաև ամէնքն՝ ալ զիս կը սիրէին, և իմ Տաֆնէ եղս գալ իմ ձեռքէս ուտելու՝ համար իւր մացառները կը Թողուր ։ Առտու մը մօտակայ անտառներուն մէջ շուներու հաչիւն և որսորդաց փողի ձայներ կը լսեմ։ Ինչպէս որ ըսիր նոր կառավարչին առաջին որսորդութիւնն էր կ'ասի ։ Հետաքրքրութենէ շարժեալ՝ մինչև մակաղատեղին կը վազեմ. կը տեսնեմ Տաֆնէն հալածեալ և շնչասպառ, անոր ետևէն՝ շուներու և որսորդաց բոլոր խումբը, նոյն վայրկենին նաև հեծեալ մը որ իւր սև ձին գրգռելով մրրկի արագութեամբ կ'ընթանար. պարոն Մոնսորօն էր նա որ խեղճ Տաֆնէին հետամուտ եղած էր . . . . ։ Շնորհ, պօռացի . . . բայց առանց լսելու անցաւ ։



ԺԷՐԹՐԻՒՏ. Ո՛հ ։

ՏԻԱՆԱ. Սիրտս կեղեքող այս հալածումնքը խափանելու համար, ջանացի կոմսին կամ իւր որսորդներէն միոյն հանդիպիլ ։ Որսին աղմուկով առաջնորդեալ անտառներուն մէջէն յառաջացայ ։ Երբեմն խեղճ Տաֆնէն կ'ընդնշմարէի միշտ խուսափման մէջ և արդէն պարտասեալ ։ Անգամ մ'ալ տխրութեամբ բառաչելով քովէս անցաւ կարծես իւր մնաս բարևը ինձ ըսելու համար ։ Յոգնութիւնս մոռցած գոչելով կը յառաջանայի՝ երբ վերջապէս Պօժէի ընդարձակ լճին եզերաց վրայ Պ. տ'Անժու դուքսին դղեակին առաջնորդող հին կաղնիներու ծառուղին հասայ ։ Շունչ առի, ուշ դրի. Յանկարծ հաչիւններու, փողերու և աղաղակաց մրրիկ մը որոտաց . . . . որսականները ետ կը դառնային. և ընդարձակ ջրահօսանաց միւս կողմէն՝ եղը անտառէն դուրս ցատկեց և որպէս Թէ ինձ գալու համար դէպ 'ի ջուրը խոյացաւ ։ Աչերս արտասուալից բազուկներս կարկառած կը դիտէի զանիկա։ Զայն բռնելու մօտ շուներու մէջ իւր բոլոր զօրութեամբն կը լողար նա ։ Այն ատեն անտառին ծայրը պարոն Մոնսորօ երևցաւ և իւր ձիէն վար ցատկեց՝։ Անշուշտ զիս տեսած էր, իմ պաղա-

տանքս լսած էր, որովհետև վազեց նաւակի մը, անմիջապէս սրա-րանը քալեց և իմ խեղճ Տաֆնէս պիտի ազատէր։ Արդէն անոր կը դպէր՝ իր կատաղի թշնամիները խառնելով երբ յան-կարծ փայլակի մը շողալն տեսայ, իր որսի դանակն հանած էր, փայլակը երկաթին հետ անյայտ եղաւ որն որ խեղճ կենդանւոյն սրտին մէջ մխուեցաւ բոլորովին։ Տաֆնէ վշտագին հառաչք մը արձակեց և իր արեամբ կարմրացած ջուրին մէջ մեռած սահեցաւ։ Իսկ ես այս սոսկալի տեսարանէն խոյս տալու համար քանի մը քայլ առի և թուփերու մէջ մարած ինկայ՝ ուր երե-կոյին մեր մարդիկն զիս գտան։ Ա՛հ Ժէրթրիւտ, այն օրէն ի վեր՝ ամեն անգամ երբ կոմսը տեսայ – կուչէ զիս այլանդակ, ա-նիրաւ և յիմար – անոր և իմ մէջ այն աղաղակը այն արիւնը և այն անհնարին տագնապն կար։

ԺԷՐԹՐԻՒՏ. Բայց օրիորդ նա չէր գիտէր թէ խեղճ Տաֆ-նէն ձեր սիրելին էր. և անոր ըրածը ամէն որսորդ կ՚ընէ ա-ռանց ոճիր մը գործած ըլլալու։

ՏԻԱՆԱ. Գուցէ այդպէս ըլլայ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Կոմսը զձեզ չափազանց կը սիրէ և ինքզինքը ատելի ու նախատելի ընելու չափ կը յարգէ զձեզ։ Բռնու-թիւն մը իրեն չպիտի ներէիք. ինչ բանի պիտի ծառայեր ա-ռեւանգութիւն մը… մինչ զձեզ պաշտպանելու համար ներ-կայ չեմ։

ՏԻԱՆԱ. Լաւ, Ժէրթրիւտ… սակայն այս բռնութիւնը, այս յափշտակութիւնը ասոնք անժխտելի են և հեղինակ մը ունին։

ԺԷՐԹՐԻՒՏ. Կ՚ուզէք իմ գաղափարս գիտնալ՝ օրիորդ։

ՏԻԱՆԱ. Խօսէ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Ամիս մը կայ որ դուք ձեր հօրը հետ Անժէ-րի մէջ խնջոյքի մը հրաւիրուեցաք զոր պարոն Մօնսօրօ Հէնրի Գ. թագաւորին եղբօր՝ Պ. տ՚Անժու դուքսին տուաւ։

ՏԻԱՆԱ. Խիստ շքեղ խնջոյք մը։

ԺԷՐԹՐԻՒՏ. Ուր գաւառին բոլոր ազնուականները ներկայ էին և ուր զձեզ շատ զմայլմամբ դիտեցին։

ՏԻԱՆԱ. Այո, կը յիշեմ յամառ ակնարկ մը որ ամբողջ երեկոյթին մէջ իմ վրայ ծանրացաւ։



ԺԷՐԹՐԻՒՏ. Որու համար կ՚ըսէք։

ՏԻԱՆԱ. Շարունակէ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Պարոն Մօնսօրօ փոքր ինչ նախանձոտ է, վասն զի ասի բնական բան է, զձեզ կը սիրէ։ Պարոն Մօնսօրօ հետեւ-եալ օրը ձեր հօրը պարոն Մերիտորի հետ երկար տեսակցու-թիւն մը ունեցաւ որով պարոնը շատ մտազբաղ գտնուեցաւ։

ՏԻԱՆԱ. Ճշմարիտ է։

ԺԷՐԹՐԻՒՏ. Այս խօսակցութենէն վերջը ձեր հայրը յան-կարծ որոշեց որ Լիւտի երկիրը երթաք։

ՏԻԱՆԱ. Իրաւունք ունիս։

ԺԷՐԹՐԻՒՏ. Արդ ասկից կը հետեցընեմ օրիորդ, որ դուք այն խնջոյից մէջ դրացի իշխանի մը վրայ չափազանց տպաւորու-թիւն մը յառաջ բերած ըլլաք, և թէ պարոն կոմսը զայն նշմարած ըլլայ և իրեն, գուցէ ձեզ համար ալ վտանգաւոր հե-տամտութենէ մը վախնալով զձեզ Մերիտորէն հեռացընելու խրա-տած ըլլայ ձեր հայրը։ Ահաւասիկ ասոր համար այս երեկոյ Լիւտ կ՚երթայինք. ասոր համար դիմակաւոր մարդիկ կառքը կե-ցուցին, ձեր մարդիկը վանեցին և ասոր համար հոս կը գտնուինք։

ՏԻԱՆԱ. Այն նախանձոտ պարոն Մօնսօրօի տունը, այսպիսի վատ դաւաճանութիւն մը գործող մարդու մը տունը։ Բայց Ժէր-թրիւտ, այդ ենթադրութեանդ չափ սարսափելի բան չկայ։ Ո՛ւր ենք… պէտք է գիտնալ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Համբերութիւն. մտքերնիս ամփոփ պահենք։ Նախ և առաջ նշմարեցիք օրիորդ որ այս սենեակը գալու հա-մար միայն հինգ աստիճան վեր ելանք։

ՏԻԱՆԱ. Այո։

ԺԷՐԹՐԻՒՏ. Ուրեմն գետնայարկն ենք, այնպէս որ եթէ այս պատուհանները…

ՏԻԱՆԱ. Եթէ վանդակեալ չեն ըսել կ՚ուզէք։

ԺԷՐԹՐԻՒՏ. Եւ եթէ օրիորդը քաջասրտութիւն ունի…

ՏԻԱՆԱ. Թէ ունիմ. պիտի տեսնես։

ԺԷՐԹՐԻՒՏ. Լռէ. – Ա՛հ՝ ուրիշ սենեակ մ՚ալ կայ հոն։ Սպասեցէք։ (Ճրագը հոն կը տանի. – Տիանա կը ջանայ պա-տուհանները բանալ։) Ինծի թողէք։ (Կը բանայ. կը տեսնուի

ծէ-ւը նախ ամպերու տակ յետոյ պայծառացեալ և լեռը ծածկելով։)

ՏԻԱՆԱ. (Ուրախութեամբ) վանդակ չկա՛յ։

ԺԵՐԹՐԻՒՏ. Այո՛, բայց ջուր մը կայ, որ պատերը կը լուայ։

ՏԻԱՆԱ. Ջուր մը. անհուն լիճ մը... Ո՛չ, բայց Պօժէի լիճն է, կը ճանաչեմ։

ԺԵՐԹՐԻՒՏ. Ուրեմն դղեակն ենք։

ՏԻԱՆԱ. Պարոն տ՚Անժու դուքսին տունն ենք։

ԺԵՐԹՐԻՒՏ. Ուրեմն օրիորդ։

ՏԻԱՆԱ. Ուրեմն Ժէրթրիւտ, այն մարդը որուն չարագուշակ ակնարկը և ծախիչ ուշադրութիւնը բոլոր խնջոյից մինչև վերջը գլխ տանջեցին՝ այն մարդը տ՚Անժու դուքսն էր։

ԺԵՐԹՐԻՒՏ. Ա՛հ։

ՏԻԱՆԱ. Բոլոր գաւառին ահարկու այն բռնաւորը, դժգունադէմ այն դժոխային լիրբը, թագաւորին այն ամենազօր եղբայրը, որն որ իր չարութենէն ու ոճիրներէն կը վախնայ։

ԺԵՐԹՐԻՒՏ. Լռութիւն, լռութիւն...։

ՏԻԱՆԱ. Բայց նորա տունը կը գտնուինք, նորա զօրութեան տակ։ Այս վատ թակարդը լարողը նա է. Ժէրթրիւտ, պէտք է ասկից ելնել։

ԺԵՐԹՐԻՒՏ. Իմ ուզածս ալ այդ է, բայց ինչպէս։

ՏԻԱՆԱ. (ծովէ սենեակը դիտելով) Հոս՝ անել սենեակ մը...։ Հոս՝ իրենց լրտեսները, պահապանները.... հոն՝... (պատուհանը կը ցուցնէ։)

ԺԵՐԹՐԻՒՏ. Մահը։

ՏԻԱՆԱ. Մահը շատ անգամ փրկութիւնն է։ Հիմայ ինձ այնպէս կ՚երևի թէ որմերը կ՚սպառնան, բոցեղէն աչքեր գիս կը հսկեն. ալ չեմ կրնար խորհիլ, շունչս կը հատնի, կը վախնամ։ Խօսս տանք, խօսս տանք։

ԺԵՐԹՐԻՒՏ. Ոչինչ, նիգ մը, փականք մը չկա՛յ։ Ամէն ինչ նախապատրաստեալ է, օրիորդ։

ՏԻԱՆԱ. Ո՛վ հայր իմ, բարի հայր իմ, դու գիս պիտի պաշտպանէիր։

ԺԵՐԹՐԻՒՏ. Ըսել թէ կլին են, թէ անզօր, ոչինչ են... կեցիք, հոն ուռենիներուն մէջ նաւակ մը կը տեսնեմ հարիւր



դրկաչափ հեռու. եթէ մարդ մը ըլլայ՝ լողալով կ՚երթայ կը բերէի։

ՏԻԱՆԱ. Ո՛հ՝ Աստուած իմ։

ԺԵՐԹՐԻՒՏ. Ի՞նչ ունիք։

ՏԻԱՆԱ. Շլացած եմ, յիմար եմ։

ԺԵՐԹՐԻՒՏ. Բա՛յց ինչ կայ ուրեմն։

ՏԻԱՆԱ. Ինձ կ՚երևի թէ նաւակը կը շարժի։

ԺԵՐԹՐԻՒՏ. Այո՛ կը քալէ։

ՏԻԱՆԱ. Կը յառաջանայ։

ԺԵՐԹՐԻՒՏ. Եւ անտառին ծայրը շարժող սա՚ստուերները... թերևս բարեկամներ են։

ՏԻԱՆԱ. Կամ իշխանը։

ԺԵՐԹՐԻՒՏ. Նա այսպէս ինքզինքը չպիտի ծածկէր։ Տեսէք նաւակը ինչպէս խաւարին կը հետևի, և այն ստուերները ինչպէս խորհրդաւոր կերպով կը շարժին եղէգներուն մէջ, ուռենիներուն տակ։

ՏԻԱՆԱ. Ձի մը խնջեց։

ԺԵՐԹՐԻՒՏ. Ա՛հ, լուսինը կը ծածկուի, ալ բան մը չեմ տեսներ։

ՏԻԱՆԱ. Ես թիակաց ձայնը կը լսեմ։

ԺԵՐԹՐԻՒՏ. Մօտեցաւ։

ՏԻԱՆԱ. Գոցէ պատուհանը։

ՁԱՅՆ ՄԸ (դուրսէն). Ժէրթրիւտ։

ՏԻԱՆԱ. Ո՞վ կայ հոն։

ԺԵՐԹՐԻՒՏ. Իմ անունս։

ՏԻԱՆԱ. Ո՞վ է ուրեմն։

## ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄՈՆՍՈՐՕ

ՄՈՆՍՈՐՕ. (ծեպլին վրայէն ելնելով). Բարեկամ մը։

ԺԵՐԹՐԻՒՏ. Պարոն Մոնսորօ։

ՏԻԱՆԱ. Նոյն ինքն։

ՄՈՆՍՈՐՕ․ Ինձ չէի՞ք սպասեր՝ օրիորդ, քանի որ գործը ձեր պատույն վրայ է։

ԺԷՐԹՐՈՒՏ․ (ցած առ Տիանա) Կը տեսնէ՞ք։

ՄՈՆՍՈՐՕ․ Ձեզ ղրկող մատնութիւնը՝ Մերիտորի մէջ ինձ իմացուցին։ Դիմակաւոր յափշտակիչներ զձեզ կ'առևանգէին․ վազեցի, ղանոնք հալածեցի, ձեր հետքը գտայ։ Ալ բանէ մը մի՛ վախնաք՝ օրիորդ, ապահով եմ։

ՏԻԱՆԱ․ Ձեզ երախտապարտ եմ՝ պարոն։

ՄՈՆՍՈՐՕ․ Ձեր հրամանները տուէք՝ օրիորդ․ հոս նաւակ մը ունիմ, անտառին մէջ իմ ընտիր ձիերուս հետ այէկ սպասաւորներ։ Ոչ ոք զիս տեսաւ և ոչ ոք կը կասկածի։ Ժամանակ չկորուսած մեկնինք։

ՏԻԱՆԱ․ Ո՞ւր պիտի տանիք զիս։

ՄՈՆՍՈՐՕ․ Ի Մերիտոր։

ՏԻԱՆԱ․ Հօրս տո՞ւնը։

ՄՈՆՍՈՐՕ․ Երեք ժամէն կրնաք զինքը գրկել։

ՏԻԱՆԱ․ Ո՛հ՝ պարոն․ եթէ ճշմարիտ կ'ըսէք։

ՄՈՆՍՈՐՕ․ Պատրաստ էք։

ՏԻԱՆԱ․ (վարանելով) Պարո՛ն․․․․։

ՄՈՆՍՈՐՕ․ Վայրկեանները թանկագին են․․․․ իշխանը գիշակը չէ, բայց գուցէ վաղը հասնի։ Ցերեկ ժամանակ անկարելի է խոյս տալ։ Եւ երբ անգամ մը իշխանը հասնի՝ 'ի զո՛ւր կեանքս վտանգի դնելէ զատ բան մը չպիտի կրնամ ընել ձեզ համար, ինչպէս որ հիմայ զայն կ'ընեմ զձեզ ազատելու յուսով։

ՏԻԱՆԱ․ Ձեր կեանքը վտանգի կը դնէ՞ք։

ՄՈՆՍՈՐՕ․ Անշուշտ․ քանի որ իշխանը զիս իւր բարեկամը կը կոչէ և ես ձեզ համար զանի կը մատնեմ։ Թէ որ կասկածէր թէ ես հիմայ հոս եմ՝ վաղը զիս սպաննել կուտար։

ԺԷՐԹՐՈՒՏ․ Ա՛հ օրիորդ, հաւատացէք իրեն։

ՏԻԱՆԱ․ (ինքնին) Օգնութիւնն ալ վտանգին չափ ահարկու է ինձ։

ՄՈՆՍՈՐՕ․ Այդ վարանման պատճառը տկարութի՞ւն է, անվստահութի՞ւն է․․․ իմ անձնուիրութեանս վրայ լաւ յոյս մը ունէի։

ՏԻԱՆԱ․ Կ'ըսէք թէ Մերիտորէն կուգաք ազդարարեալ և հօրմէս խրկուած․․․ ի՞նչպէս ձեզ չ'ընկերացաւ։

ՄՈՆՍՈՐՕ․ Հա՛ս, նորին վսեմութեան տունը․ թոյլ տայի զինքն վտանգի ենթարկել․ ինձ համար յաջող․․․․ բայց ձեր հօրը համա՛ր․․․․։

ՏԻԱՆԱ․ Բայց կրնար ինձ գրել․․․ իւր մէկ տողը զիս պիտի համոզէր․․․․ ձեզ պիտի հետևէի։ (Մոնսօրօ թուղթ շուրթմորթ մը իւր բաճկոնէն նամակ մը կը հանէ․) գրեց, այնպէս չէ՞․․․․ տուէ՛ք․ (Յետոյ կ'երկնցնէ)։

ՄՈՆՍՈՐՕ․ (որ խորհեցաւ և գիրը պահեց)։ Ո՛չ, օրիորդ չգրեց․․․ կրնա՞ր հաւատալ որ անձնուէր բարեկամ մը, ազատարար մը ձեզ այսքան կասկածելի ըլլայ։

ԺԷՐԹՐՈՒՏ․ Մտի՛կ ըրէք․․․ քայլերու ձայն կայ․․․․ հոս կուգան։

ՏԻԱՆԱ․ Պարո՛ն կո՛մս․․․․։ (կը մեկնի)

ՄՈՆՍՈՐՕ․ Կորսուեցայ և առանց զձեզ ազատելու։ (կը մեկնի)

ԺԷՐԹՐՈՒՏ․ Հոս՝ պարո՛ն, հո՛ս (դռնէ դուրս ելնելու կը պատէ․ մէկը կը բախէ՝ Տիանա նստած կ'ենայ)։

## ՏԵՍԻԼ Ե․

ՆՈՅՆՔ, ՄՈՆՍՈՐՕ (պահուած)․ ՕՐԻՅԼԻ (դիմակաւ)

ԺԷՐԹՐՈՒՏ․ (բանալով) Ի՞նչ է․․․․․ ի՞նչ կայ։

ՕՐԻՅԼԻ․ (նամակ մը ցուցնելով)։ Օրիո՛րդ․․․

ՏԻԱՆԱ․ Ո՞ւսկից կուգաք։

ՕՐԻՅԼԻ․ Հաճեցէ՛ք կարդալ։

ՏԻԱՆԱ Առանց ուսկից գալը գիտնալու չեմ կարդար այդ նամակը․ զայն կը մերժեմ։ (Օրիյլի նամակը Տիանային առջև սեղանին վրայ կը դնէ և դուրս կ'ելնէ)։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՔ, ՄՈՆՍՈՐՕ (ելլան կ'ելնէ)

ԺԻՐԹՐԻՒՏ. (կարդալով) « Առ գեղեցիկն Տիանա տը Մերիտոր : »

ՏԻԱՆԱ. Դուրս նետէ՛ այդ թուղթը :

ՄՈՆՍՈՐՕ. Ընդհակառակը՝ օրիորդ, կարդացէ՛ք զայն, կարդացէ՛ք զայն : (Ժերթրիւտ զայն կը բանայ եւ Տիանայի կարդայ։)

ՏԻԱՆԱ. (կարդալով) « Թշուառ իշխան մը սիրով խելացնորեալ ձեզ նախատեց եւ կ'ուզէ թողութիւն խնդրել։ Այս իրիկուն իսկ ժամը տասնին պիտի գայ զայն ձեր տուներուն տակ խնդրելու : »

ՄՈՆՍՈՐՕ. Այս իրիկո՛ւն . . . . . . : (դղեկին ժամացոյցին զանգը կը լսուի :)

ԺԻՐԹՐԻՒՏ. Ժամը տասնի՛ն . . . . . :

ՄՈՆՍՈՐՕ. Պօժէի մէջ ինն եւ երեք քառորդ կը հնչէ. դուքսը իր սիրոյ ժամադրութեանց շատ ճիշդ կը գտնուի՝ օրիորդ :

ՏԻԱՆԱ. Ա՜հ՞ ինչ տանջանք :

ՄՈՆՍՈՐՕ. Եւ Մերիտորի Տիանային համար որ այնքան գեղեցիկ է, հաւանական է որ ժամանակէն ալ յառաջ գայ : Կեցի՛ք, կը տեսնէ՞ք սա լոյսերը անտառին մէջ տեղէն :

ԺԻՐԹՐԻՒՏ. Ճշմարիտ է :

ՄՈՆՍՈՐՕ. Իւր ուղեկցաց ջահերն են :

ԺԻՐԹՐԻՒՏ. Օրիո՛րդ, օրիո՛րդ, կ'աղաչեմ ձեզ . . . .

ՏԻԱՆԱ. (անշարժ) Փախչիլ պիտի ուզէի, անկարելի՛ :
(տղմուկ մը, հեռաւոր զանգակի մը ձայնը կը լսուի :)

ՄՈՆՍՈՐՕ. Դուքսը դղեակը կը մտնէ. վայրկեան մը յետոյ շատ ուշ եղած պիտի ըլլայ : (դուրս առջեւ կեցած մը կը դառնէ)։

ՏԻԱՆԱ. Ինձ եկո՛ւր՝ Ժերթրիւտ, ինձ եկո՛ւր։ (զանի դէպ'ի պատուհանը կը քաշէ կը տանի)։

ԺԻՐԹՐԻՒՏ. Աւասի՛կ եմ, աւասի՛կ եմ։



ՄՈՆՍՈՐՕ. (ձեռքը լճին մէջ՝ ձգելով) Իւր քօղը : Զինքը մեռած պիտի կարծեն, այսպէս աւելի աղէկ : (անյայտ կ'ըլլայ։)

## ՏԵՍԻԼ Թ.

ՕՐԻՑԼԻ (պատուհանէն մտնելով)

ՕՐԻՑԼԻ. Բացէ՛ք, բացէ՛ք, բանէ մը մի՛ վախնաք, իշխանն է եկողը : (դուռը կը ցնցուի, Օրիցլի մինչ դռնէն կը մտնէ եւ [illegible] ենեակը կը նայի, յետոյ կարաւէտը կը վերցնէ : Իշխանը եւ սպասաւորները ջահերով ներս կը մտնեն :) Ոչ ոք կայ տէր իմ. (դէպ'ի բաց պատուհանը կը դիմէ :) Անյայտ եղեր են։

ԴՈՒՔՍԸ. (ներս մտնելով եւ պատուհանը դիտելով։) Իւր քօղը ջուրին վրայ կը ծածանի՛. մեռած է՛, մեռա՛ծ :
(տարափահար կը հեռանայ)։

# ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

## ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Մեծ դահլիճ մը՝ Գօսէ—Պրիսագի պանդոկին ճեմելեաց քով։ Խորը ձախ եւ ՚ի յաջ դուռներ․ Մեծահանդէս ճրագավառութիւն մը ։*

### ՏԵՍԻԼ Ա․

ՄՕԺԻՐՕՆ (նստած) ։ ՇՕՄՊԵՐԿ, ՍԷՆ ԼԻՒՔ (յետոյ) ԳԷԼԻՒՍ ։

ՇՕՄՊԵՐԿ․ (Սէն Լիւքի հետ ներս մտնելով) Ա՜հ՝ *սիրելիդ իմ, Սէն Լիւք, , քու հարսանիքդ շքեղ է, բայց գիտե՞ս Սէն Լիւք երբ մարդու մը ամուսնանալը կը տեսնեմ՝ որ ինձմէ աւելի ճարտար է, շունչս դժուար կ՚առնում ։*

ՍԷՆ ԼԻՒՔ․ *Խեղճ Շօմպէրկ, այս դահլիճին մէջ դիւրաւ պէտի կարենաս շնչել․ ․ ․* (Մօժիրօնը դառնալով) *աղբի՛ս, արդէն հո՞ս ես, Մօժիրօն ։*

ՄՕԺԻՐՕՆ․ *Այո՛, ինքզինքս ազատեցի․ ․ ․ հարսը շատ գեղեցիկ է եւ ես հոս Գէլիւսի կ՚ըսպասեմ որ քու աներիդ պարոն Պրիսագի հետ բռնուած է ։*

ԳԷԼԻՒՍ․ (ներս մտնելով) Ա՜հ՝ *պարոնայք, ինչ աներ․ ․ ․* (Սէն Լիւքին դառնալով) *Թողութիւն՝ քաջդ իմ Սէն Լիւք, բայց աճապարիկ եօթն անգամ է որ այս սիրելի պարոն Պրիսագը ինձ կը հարցընէ թէ՝ Թագաւորը պիտի գա՞յ իր ներկայութեամբը պատուել․ ․ ․ ։ Միթէ երբէք կը գիտցուի՞ թէ Թագաւորը պիտի գայ թէ ոչ։* (կը խնդան)։



### ՏԵՍԻԼ Բ

ՆՈՅՆՔ ԵՒ ԺԱՆՆԸ

ԺԱՆՆԸ․ (ներս մտնելով), Ի՛նչպէս․ *Թագաւորը չպիտի՞ գայ․ բայց՝ պարոնայք, զինքը խոստացան ինձ ։*

ՍԷՆ ԼԻՒՔ․ *Ճշմարիտ է՝ բարեկամներս, ապահովցուցէ՛ք տիկին Սէն–Լիւքը ։*

ԳԷԼԻՒՍ․ *«Թագաւո՞րը» ըսի՝ տիկին․ ․ ․ լեզուս դարձեր է, մեզ տ՚Անժու դուքսին վրայ կը խօսէինք ։ Եւ կ՚ըսէի թէ «կը յուսամ որ չպիտի գայ» ։*

ԺԱՆՆԸ․ *Բայց պարոն տ՚Անժու դուքսն ալ խոստացան։*

ՍԷՆ–ԼԻՒՔ․ (ցած) *Սիրելի ժաննըս ։*

ԺԱՆՆԸ․ *Ինչու համար չպիտի տեսնուի ։*

ԳԷԼԻՒՍ․ *Որովհետեւ տիկին, ոեւէ Անժուեան մը չնըշմարեցինք ։*

ՇՕՄՊԵՐԿ․ *Փա՛ռք Աստուծոյ ։*

ԺԱՆՆԸ․ (զարմացած) *Փա՛ռք Աստուծոյ ։*

ՍԷՆ–ԼԻՒՔ․ (անոր նշան ընելով) *Հը՛մ, հը՛մ ։*

ԳԷԼԻՒՍ․ *Տիկին Սէն–Լիւք՝ որ բոլորովին նազելի և ժիր կերպով իր մենաստանէն մեկ կուգայ, տակաւին չճանչեր անժուական ապարանաց սովորութիւնները ։ Գիտցէ՛ք տիկին, որ պարոն տ՚Անժու դուքսը քայլ մը անգամ չ՚առներ առանց լուսատուներու, առանց կալանաւորակայներու, քասկահատներու և սիկարեաններու յառաջապահ փոքր գունդի մը ։*

ԺԱՆՆԸ․ *Ո՞հ․ ․ ․ ։*

ԳԷԼԻՒՍ․ *Անգլիակէ մը, Բրիգէրաք մը, Լիվարօ մը կամ Պիւսի մը ։*

ԺԱՆՆԸ․ *Լուի՛ տը Գլէրմօն, պարոն Պիւսի՛ սիկարեան մը ։*

ՍԷՆ–ԼԻՒՔ․ (առ Ժաննը) *Գէլիւս կ՚ուզէ ծաղր ընել։*

ԳԷԼԻՒՍ․ (ձանր կերպով) *Քա՛ւ լիցի ։Այսպէս տիկին, որովհետեւ հոս չտեսնուիր պարոն Պիւսի՝ մնապարծը, ատոր է*

որ չպիտի տեսնուի նաև պարոն տ'Անժու ։

ԺԱՆՆԸ. Տակաւին ժամանակ կայ ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. (ցած առ Ժաննը) Լռէ՛ կ'ըսեմ քեզ ։

ԺԱՆՆԸ. Հէ՞ ։

ԳԷԼԻՒՍ. Ի՞նչ է ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. (առ Գէլիւս) Տիկին Սէն-Լիւք օդոյն եղանակէն կը գանգատի ։

ԺԱՆՆԸ. Հոս տաք . . . դուրսը ձիւն ։

ՇՕՄՊԷՐԿ. Հարսանեաց օրերը օդը գեղեցիկ չ'ըլլար ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Աճապարեմ անոր որ դէպ 'ի հոս կուգայ ։

ԳԷԼԻՒՍ. Թերևս կ'ուզէ գիտնալ թէ թագաւորը պիտի պառուէ՞ . . . ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. ([illegible]) Մէկը կը խնդրէ ։

ԳԷԼԻՒՍ. Թերևս զիս ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Շատ կարելի է ։

ԳԷԼԻՒՍ. (առ Մօժիրօն) Ես կը փախչիմ ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Զմեզ կը թողո՞ւք ։

ԳԷԼԻՒՍ. (առ Սէն-Լիւք) Ասով ութն անգամ պիտի ըլլայ . բարեկամս . . . . դարձեալ կը տեսնուինք ։ ([illegible]) Շո՛ւտ . . . . ([illegible] կ'ելլեն ։)

ԺԱՆՆԸ. Բայց բոլոր այս անձինք խենդ են ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Վերջապէս ահա առանձին մնացինք ։

## ՏԵՍԻԼ Գ.

ԺԱՆՆԸ , ՍԷՆ-ԼԻՒՔ

ԺԱՆՆԸ. Բայց զիս կը տանջէք . ի՞նչ կայ ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ի՞նչ կայ , պաշտելիդ իմ Ժաննը . . . սա կայ որ դուք մեր հարսանիքը պիտի թօլուսի հարսանեաց կ'ուզէր փոխել . սիրեցեալդ իմ , ինքզինքնին մահուան պիտի ենթարկեն ։

ԺԱՆՆԸ. Է՛հ , ի՞նչ կայ , ո՛ երկինք ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ի՞չ կա՞յ . դուք կըմաղթէք թագաւորը և



տեսնել և թագաւորին հետ Պ. տ'Անժու դուքսը . . . . բայց ասի հուրն ու ջուրը առ մեզ հրաւիրել է . . . համօրէն կիզում մը և ջրհեղեղը ։

ԺԱՆՆԸ. Երկու եղբայրնե՛ր ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ո՛չ . Քաթերին տը Մէտիչիի երկու որդիք . . ։ Ա՛հ գեղեցիկ կոմսուհիս , այս ամենուն վրայ ձեզ հրահանգ մը տալ պարտիմ ։

ԺԱՆՆԸ. Տուէ՛ք պարոն , տուէ՛ք ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Դուք Պ. տ'Անժուն և Պ. Պիւսին կը պաշտպանէք , անխոհեմ՝ և թագաւորին բարեկամաց առջև ։ Բայց Ժաննը , մեր թագաւորը միայն իւր Ֆրանսուա եղբայրը իրեն ժառանգորդ ունի , և Ֆրանսուա պիտի ուզէր անմիջապէս ժառանգել . . ։ Ասկից կը հետևի թէ Հէնրի Ֆրանսուաէ կը վախնայ և Ֆրանսուա Հէնրիէն կը դարշի , ասի աչներև է ։

ԺԱՆՆԸ. Զափազանց աչներև ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Արդ Հէնրիի բարեկամները կ'ուզեն որ նա ապրի և տիրէ . . . այո՛ , սակայն Ֆրանսուաի բարեկամները չեն ուզեր , որպէս զի Ֆրանսուա նորա յաջորդէ ։ Ինչպէս ընելու է ։

ԺԱՆՆԸ. Սոսկալի՛ է այդ և կը համբերեն դորա ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ո՛հ , ինչպէս ոչ ։ Ասոնց վրայ հսկող մը կայ ։

ԺԱՆՆԸ. Խիստ լաւ ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Մէկը՝ որ ոչ զՀէնրի կ'ուզէ և ոչ զՖրանսուա ։

ԺԱՆՆԸ. Որովհետև՞ ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Որովհետև ինքը կ'ուզէ տիրել ։

ԺԱՆՆԸ. Ո՞վ ուրեմն ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Երեք որոշ և նկատեանց հանդոյն հաւասար գլուխներ ։ Մին , զինուց կը նախագահէ և կըկոչուի Հէնրի տը Կիզ . երկրորդը՝ խորհրդոց , որոյ անունն է Մայէն . երրորդը՝ կրօնից , որ է տը Լօրէն կարտինալը ։ Ի հաշիւ չեմ առնուր ասոնց ամենէն վտանգա-

տորը, Քօձի փոքրիկ ուրիշ գլուխ մը, իրենց քովըն տե-
կին Մօնբանսիէ։ Արդ Թագաւորը, Թագաւորին եղբայրը,
Կիզ՝ երեք կամ չորս գլուխներն ալ իրենց մասը, ի-
րենց նպատակը և գաղտնի հնարքն ունին, իւրաքանչիւ-
րըն ալ կը դաշնակցի և իւր դաշնակցաց փոքրիկ բա-
նակը իւր նախանձորդներուն վրայ կ'արձակէ։ Ամենքն ալ
ամեն տեղ են և ամեն բանի կ'զբաղին։ Դուք՝ առանց ա-
նոնցմէ մին տեսնելու կամ լսելու ոչ ձեր աչերն կըր-
նաք բանալ և ոչ բերանը. եթէ միայն կողմնակցիք բո-
լոր միւսները ձեզ հակառակորդ կ'ըլլան։ Ուստի ամենա-
սիրելագոյն իմ Ժաննը, տեսէ՛ք առանց դիտելու, խօսե-
ցէ՛ք առանց բան մը լսելու, ամենէն ալ վախցէ՛ք, ա-
մենուն ալ ժպտեցէ՛ք, միշտ ստեցէք և միայն մեր կող-
մանէ եղէ՛ք, միայն զձեզ և զիս սիրեցէք, զիս՛, որ կը
դողամ իսկ՝ ձեր ականջին լսելով թէ զձեզ կը սիրեմ.

ԺԱՆՆԸ. Ո՛հ՝ ահա՛ արքունիքը։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Այո՛, մեր արքունիքը։

ԺԱՆՆԸ. Ահա ձեզմէ սպասած երջանկութիւնս։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Օ՛հ, համբերութի՛ւն։ Եթէ գիտնայիք թէ
Թագաւորին բարեկամութենէն խոյս տալու և ազատութեան
սկիզբ մը ձեռք անցընելու համար որքան ճղանց և ճար-
տարութեան պէտք ունեցայ։ Ա՛հ՝ Ժաննը, Թագաւորը իւր
բարեկամութեանց մէջ խիստ նախանձոտ է։ Նա տհաճ
աչօք դիտեց իմ ամուսնութիւնս, որ զինքը բարեկամէ
մը հեռու կը կայուցանէր, զինքը՝ որ քիչ բարեկամներ ունի։
Գուցէ մեզի դէմ քէն իսկ ունենայ...։ Հաւատացէ՛ք ինձ,
քաջ գիրք մը բռնենք, մեզ մոռցնել տալ ջանանք և
գաղտնապէս առանձինն իրարու համար ապրելու միջոց մը
փնտռենք։

ԺԱՆՆԸ. Ես գտայ այդ միջոցը. Մերիտոր երթա՛նք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ի՞նչ է Մերիտորը։

ԺԱՆՆԸ. Արքունեաց հակապատկերը՝ անտառներ...
ծաղիկներ..., երկինքը... գեղեցիկ և պաշտելի բարեկա-
մուհի մը, գանձ մը, իմ սիրելի Տիանաս, մանկութեան ընկերու-



հիս Տիանան և իւր ծերունի հայրը բարի պարոն Օկիւսթէնը, որ
զմեզ իւր երկու աղջիկունքը կը կոչէր... ո՛հ զմայլելի օ-
րե՛ր զորս Մերիտորի մէջ անցուցի։ Այս անտառ մատրան
մէջ տեսա՛ք որ կուլայի և իմ արտասուաց պատճա-
ռը կը հարցնէիք.... պատճառն այն է որ բացա-
կայ Տիանայի այն խոստման վրայ կը մտածէի զոր իրարմէ
հեռի չամուսնանալու համար միմեանց տուած էինք։ Նա
հոս չէ. ահաւասիկ իմ ամենաերջանիկ օրուանս պակսած
բարեբաստութիւնը։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ի՞նչու զինքը բերել չտուիք։

ԺԱՆՆԸ. Գրեցի... բայց պատասխան չառի...
որովհետև Անժու շատ հեռի է և մեք ալ շատ շուտ ա-
մուսնացանք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Զիս կը յանդիմանէ՞ք ատոր համար։

ԺԱՆՆԸ. Ո՛չ, Բայց հիմայ որ մեր հոս ունենալիք վի-
ճակը ճանչցայ, կը հասկնաք թէ ո՛րքան կ'ուզեմ Մերի-
տոր երթալ։ Աղէ՛, հիմա իսկ մեկնի՛նք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ինչպէս, մեկնի՞նք... և հարսանիքը,
պալատականները, Թագաւորը։

ԺԱՆՆԸ. Պիտի մերժէ՞ք ձեզ մատուցած առաջին խնդ-
րիքս։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ո՛հ, ո՛չ, ո՛չ.... սակայն....։

ԺԱՆՆԸ. Մերիտո՛ր, Մերիտո՛ր, Մերիտո՛ր։

ՍԷՆ-ԼԻՒՔ. (ի ծունր) Լաւ ուրեմն... այո՛...
վաղը։

ԺԱՆՆԸ. Վա՛ղը... այս երեկոյ, անմիջապէս։

## ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ԱՆԴՐԱԿԷ, ԼԻԶԱՐՕ, ՐԻԳԷՐԱՔ

ԱՆԴՐԱԿԷ. Իւր կնոջ ծնգաց տակ... իմ յար-
գա՛նքս։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Անգղիակէ՛ և Անժուեա՛նք։

ԺԱՆՆԸ. Անժուեա՛նք։

ԱՆԴՐԱԿԷ. (Սէն-Լիւքի) կ'ամս, զմեզ տիկին կոմսուհւոյն ներկայացնելու պատիւն ըրէ՛ք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. (առ Ժաննը) Կոմսուհի՛, պարոն Անդրակէ մարգիզը, պարոն Լիվարօ, պարոն Ռիպէրաք, որոց բացակայութեան վրայ քիչ մը յառաջ կը ցաւէիք. (Ցածուկ) միայն թէ միւսները չգային։

ԺԱՆՆԸ. Այս պարոնները թերևս հայրս ողջունել պիտի ուզէին։

ԱՆԴՐԱԿԷ. Այդ պատիւը ունեցանք տիկին, և պարոն Պրիսաք կրկին և կրկին հարցուց...

ՍԷՆ-ԼԻՒՔ. Թէ թագաւորը պիտի գա՞յ։

ԱՆԴՐԱԿԷ. Անվրէպ, բայց քիչ հաւանական է... թագաւորը առանց մէկ քանի որոշ անձանց հեռաւոր խմբի մը չերթալէր և անոնցմէ ոչ զոք կը տեսնենք հոս։

ՌԻՊԷՐԱՔ. Փա՜ռք Աստուծոյ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. (առ Ժաննը) Ա՛րդ ուրեմն։

ԺԱՆՆԸ. (անհանգիստ) Այո՛, այո՛։

ԱՆԴՐԱԿԷ. Բայց պարոն տ'Անժու դուքսը հիմայ կուգայ։

ՍԷՆ-ԼԻՒՔ (Ցածուկ) Գեափին անցնի. (բարձր) Նորին բարձրութիւնը մեծ պատիւ կ'ընէ մեզ։

ԱՆԴՐԱԿԷ. Նորին Վսեմութիւնը Պիւսիի ժամադիր եղաւ, որ անշուշտ արդէն եկած է։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ոչ տակաւին, (առ կը դնէ) Գէլիւս կուգայ... (բարձր) կ'ուզէ՞ք որ երթանք միասին տեսնենք։

ԱՆԴՐԱԿԷ. Երթա՛նք։

ԺԱՆՆԸ (առ Սէն-Լիւք) Զանազէք զանոնք թողուլ։

(Սէն-Լիւք ընկերանալով ներս բերելու միջոցին՝ Գէլիւս կը տեսնուի դրան մէջ որ կը խօսակցի, Պ. Պրիսաքի հետ խօսելու զբաղած երեւելով։)



## ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ, ԳԷԼԻՒՍ, (յետոյ) ՇՈՄՊԷՐԿ ԵՒ ՄՕԺԻՐՕՆ

ԳԷԼԻՒՍ. (կրնակը դարձնելով) Այո՛, պարոն Պրիսաք, այո՛, թագաւորը պիտի գայ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Լաւ։

ԱՆԴՐԱԿԷ. (զԳէլիւս տեսնելով) Հա՛, հա՛։

ԳԷԼԻՒՍ. (առանց բան մը տեսնելու յառաջանալով) Եւ աւելի կամովին պիտի գայ քանի որ միայն բարի գաղղիացիք կը գտնուին հոս և ոչ Անժուեան մը։

ԱՆԴՐԱԿԷ, ՊՐԻՍԱՔ և ԼԻՎԱՐՕ. Հրամմյէ՞ք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ա՛յ։

ԳԷԼԻՒՍ. (զանոնք տեսնելով) Ո՜հ, ո՜հ։

ԱՆԴՐԱԿԷ. (Սէն Լիւքի) Լսեցի՞ք պարոն Սէն-Լիւք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. (փսփսալով) Ի՞նչ է ան։

ԱՆԴՐԱԿԷ. Ի՛նչ որ պարոնը Անժուեանց համար ըսաւ։

ԳԷԼԻՒՍ. Լաւ, յետո՞յ։

ԺԱՆՆԸ. (աղաչող դարձուածքով) Պարո՛ն Գէլիւս....։

ԳԷԼԻՒՍ. Ո՛հ տիկին....։

ՇՈՄՊԷՐԿ և ՄՕԺԻՐՕՆ. (ներս մտնելով) Ի՞նչ կ'ուզէն այս Անժուի պարոնները։

ԱՆԴՐԱԿԷ. (զանոնք տեսնելով) Աղէկ ժամանակին հասաք. խ- բաքանչիւր ոք իրենը պիտի ունենայ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Պարոննե՛ր, պարոննե՛ր։

ԺԱՆՆԸ. Պարոննե՛ր։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Կնոջ մը ներկայութեա՛ն։

(թատրոնին ետևի կողմէն ներկայութիւնը իմացնող չնչուն մը։)

## ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ, ԱՐՔԱՅՆ (կուսակալի դրան մը մէջ,) ՇԻՔՕ (միւս դրան մէջ) ՊԱԼԱՏԱԿԱՆՔ, ՄԱՆԿԼԱՒԻԿՔ (արահին խորը)

ԱՐՔԱՅՆ. Ի՞նչ կայ, պարոննե՛րը։

ՇԻՔՕ․ (Նօթատետրէն գլուխը վերցնելով) Պարոնա՛յք՝ ի՞նչ կայ . . . ։

ԱՐՔԱՑՆ․ Վարպետ Շիքօ , երկու թագաւո՛ր հոս . . . ։ Ինչո՞ւ այդ գէշ կատակը կ՚ընես ։

ՇԻՔՕ․ Մտիկ ըրէ՛ իմ փոքրիկ Հէնրիս . Ես թագաւոր պիտի ըլլամ, դուն Շիքօ ։ Ես պիտի զաշտպանեմ, դուն պիտի պարես ։ Ես բոլոր այս պարոններուն ստութիւններն ու անմտութիւններն պիտի լսեմ . դուն նոյն միջոցին պիտի զբօսնուս՝ խեղճ թագաւոր ։

ԱՐՔԱՑՆ․ Իրաւունք ունիս . . . . կ՚ուզեմ զբօսնուլ , շատ զբօսնուլ , կ՚իմանա՞ք՝ պարո՛ն Սէն-Լիւք ։

ՍԷՆ-ԼԻՒՔ․ Վեհափառ տէ՛ր . . . (Ժպտելով) մոլեգնած է։

ԱՐՔԱՑՆ․ (Ժաննը [illegible]) Տիկին Սէն- Լիւ՞ք . . . ։

ՍԷՆ-ԼԻՒՔ․ Այո՛՝ վեհափառ տէր ։

ԱՐՔԱՑՆ․ (Իր ձեռքը [illegible]) Սքանչելի էք՝ տիկին . (Կ՚անցնի, կը հեռանայ ։)

ԺԱՆՆԸ․ (Սէն Լիւք) Ի՞նչ կ՚ըսէք թագաւորին ամէնքուն վրայ . . . . զիս սքանչելի կը գտնէ ։

ՍԷՆ-ԼԻՒՔ․ Է՛հ , աւելի գէշ ։ (Կ՚ուզէ ծածկաբար մեկնիլ ։)

ԺԱՆՆԸ․ Զիս կը թողո՞ւք ։

ՍԷՆ-ԼԻՒՔ․ Սիրելիդ իմ , այդպէս ինծի մի նայիք յանուն երկնից ։ Կը տեսնէք որ թագաւորը շարունակ կը ժպտի . նոր հնարք մը կը խորհի ։

ԱՐՔԱՑՆ․ (Կոչելով) Սէն-Լիւ՞ք ։

ՍԷՆ-ԼԻՒՔ․ (Վազելով) Վեհափառ տէ՛ր ։

ԱՐՔԱՑՆ․ Այս հրաւէրք ուրախութեամբ զարդարանքներէն քեզ ընծայեմ . (Սէն Լիւք շնորհակալ կ՚ըլլայ) մտիկ ըրէ՛ ուրեմն, ներսը սրտում կը հանեն . . . . կը լսե՞ս ։ Թագաւորը կը բարկանայ ։



# ՏԵՍԻԼ Է․

ՆՈՅՆՔ , ՇԻՔՕ (Աթոռին վրայ)

ՇԻՔՕ․ Այո՛, ծախսային հրամաններ տուր , բայց եթէ այնչափ անբաւական ըլլան՝ տարիէն պիտի տամ ուրիշ հրամաններ ալ և միշտ պիտի տամ , է՛հ եթէ աղէկ չ՚ըլլան, գոնէ բազմաթիւ պիտի ըլլան ։ Բէհեզգէրուզի՛ եղջիւր . . . պարոն Պիւսի՞։

ԱՐՔԱՑՆ․ Ի՞նչ կը խօսի Պիւսիի վրայ ։ (Դուրսէն ձայներ կ՚ըլլան։)

ՁԱՑՆԵՐ․ (Դուրսէն) Պիւսի՛ , Պիւսի՛ , Պիւսի տ՚Ամպուազ Պիւսի՛ ։

ԺԱՆՆԸ․ Պարոն Պիւսի՛ ։ (Դեր ծօրէն շփեցնել մէջ մանկլաւիկներ ներս մտնելով՝ ծիծաղելով առջև կը կայնին ։)

ՍԷՆ-ԼԻՒՔ․ Նա պակաս էր մեզ ։

ԱՐՔԱՑՆ․ Վեց մանկլաւիկնե՛ր ։

ԳԷԼԻՒՍ․ Թագաւորին պէս ։ (Պէտք կ՚ըլլայ ։)

# ՏԵՍԻԼ Ը

ՆՈՅՆՔ , ՊԻՒՍԻ (Բոտթաղը բռնելով)

ՇԻՔՕ․ Բաւական է՝ պարոն Պիւսի , ո՛ն մեզ նայեցէք , չէ՞ք տեսներ որ Ճշմարիտ Հէնրին ես եմ . . . թագաւորը իւր խեղկատակէն չե՞ք զանազաներ ։

ՊԻՒՍԻ․ (Արհամ) Վեհափառ տէր ։

ԱՐՔԱՑՆ․ (Իր կերպով) Արքայն ձեզ կը կոչէ պարոն ․ (Կ՚ոտքը առնը կը դառնէ ։)

ՊԻՒՍԻ․ (Վշտացած) Ա՜հ . . . (Շիքօյի դառնալով) թողութի՛ւն՝ վեհափառ տէր , կը շփոթէի ։

ԱՐՔԱՅՆ . (զարմանալով) Ի՞նչ կ'ըսէ .

ՍԷՆ-ԼԻՒՔ . Ոչինչ՝ վեհափառ տէր , բոլորովին ոչինչ .

ՇԻՔՕ (առ Պիւսի) Պարո՛ն , դուք իմ առաւելութեանցս վրայ կը տիրապետէք : Մանկլաւիկներով զձեզ կը կործանէք : Ի՞նչ , այս ազնուականներուն ոսկեղէն ասուիներ և ձեզ գեղապետաւի մը , Գլերմոնի մը , գրեթէ իշխանի մը պարզ և սև թաւիշներ :

ՊԻՒՍԻ . (ժողովրդեան շնորհք ընելով ... նայելով ընդ առաջ) Վեհափառ տէր , մարդ երբ այնպիսի ժամանակի մը մէջ կ'ապրի , յորում սպասաւորները իշխաններու պէս կը հագուին , լաւ ճաշակ մ'է որ իշխան մ'ալ անոնցմէ զանազանելու համար սպասաւորներու նման զգենու :

ԳԷԼԻՒՍ , ՇՕՄՊԷՐԿ , ՄՕԺԻՐՕՆ . Գարշելի՛ , նըզովելից արմա՛տ, անիծեա՛լ :

ԱՐՔԱՅՆ . Լի՛ըբը :

ՇԻՔՕ . (առ Պիւսի) Ինչպէ՛ս . . . որո՞ւ համար կ'ընէք այդ խօսքը : Միթէ ի՛մ թէ եղբօրս բարեկամաց համար է :

ՊԻՒՍԻ . Ձեզ որ վշտացընէ , անոր համար՝ Վեհափառ տէր :

ԳԷԼԻՒՍ . (յառաջ գալով) Լա՛ւ , պարոն . . :

ՍԷՆ-ԼԻՒՔ . (ձեռն կեցնելով) Ցանուն երկնից , ինքզինքդ չափաւորէ՛ , սպասէ՛ :

ԳԷԼԻՒՍ . Ո՛հ , դու ինքդ սպասէ : Մեր վրայ յարձակիլը թագաւորին դպիլ է :

ԱՐՔԱՅՆ . (ցած ձայնով) Գէլիւս , լռեցէ՛ք :

ՊԻՒՍԻ . (իր բարեկամաց) Թողէ՛ք կ'ըսեմ , պիտի տեսնէք :

ՍԷՆ-ԼԻՒՔ . (մեկնելով) Հիմա ալ միւսին (առ Պիւսի) պարո՛ն Պիւսի :

ՊԻՒՍԻ . (առ Սէն Լիւք) Ըսած խօսքիս բացատրութեա՞ն կը փափաքիք :

ՍԷՆ-ԼԻՒՔ . Կը փափաքիմ միայն տիկին Սէն-Լիւքի հետ զձեզ ողջունել շնորհակալ ըլլալով ձեր ներկայութեամբ մեր տան մատուցած պատւոյն :

ՊԻՒՍԻ . (յարգանօք) Ներեցէք ինձ տիկին . . . . ձեզ անկեղած յարգանքը ոչինչ կարող է կորսնցունել տալ ինձ :

ԱՐՔԱՅՆ . (իր բարեկամաց) Սէն-Լիւք զանի կը գրգռէ :



բայց չեմ ուզեր որ ինքզինքը նուաստացնէ նոյն մանաւանդ իր հարսանեաց օրը : Գնա Գէլիւս . . . . ոչ . ոչ դու, դուն դեռ գլխի տէր մէկն ես : Գնա՛ Մօժիրօն , ոչ , դու ալ ոչ :

ՇԻՔՕ . (մեկնելով) Խեղճ թագաւոր . (առ Պիւսի) Ինչ բանի կը մտածէք՝ Պիւսի կոմս . կարծես ենելքերնիդ կը թողնէք , չէ՞ք տեսներ եղբայրս որ ներս կը մտնէ . իմ Ֆրանսուա եղբայրս , ձեր ընտրեալ տէրը . . : Ճշմարիտ է որ գեղեցիկ չէ , բայց վերջապէս զինքը ընտրողը դուք էք , ձեզի աւելի դէշ :

## ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՅՆՔ , ԵՒ Տ'ԱՆԺՈՒ ԴՈՒՔՍԸ (որ վերջին խօսքերը կը լսէ :)

ԴՈՒՔՍԸ . (առ արքայն) Վեհափառ տէր , կարելի է խեղկատակ մը ձեր և իմ ազնուական սպասաւորները նախատելը զուարճալի ըլլայ . բայց երբ իմ վրայ՝ Գաղղիոյ որդւոյ մը վրայ կը յարձակի՝ խնդիրը կը փոխուի և ես այնմ չեմ կրնար հանդուրժել :

ՇԻՔՕ . (արքային) Պատասխանեցէ՛ք՝ Շիքօ , ձեզի իշխանութիւն կու տամ :

ԱՐՔԱՅՆ . Եղբայր իմ , չափազանց գրգռուած էք : Մեր նախահայրը Ֆրանսուա առաջին Թրիպուլէն կ'ապականէր : Հէնրի երկրորդ , մեր հայրը՝ Պրիւսքէի Սթիրօձի մարաջախտին հետ կռուի բռնուիլը տեսնելով կը զուարճանար : Ես ալ Շիքօի շատ կը ներեմ , որովհետև սակաւ ինչ զիս կը սիրէ : Ձանի մի՛ յանդիմանէք՝ Ֆրանսուա . . : Ազնուական է , նա որ առնուելով՝ պատուաւոր կերպով զարդացաւ ձեր Անժուականներէն միոյն քով , որ թագաւորական հին ցեղէ մ'է , Մերիտոր մըն . . . :

ԴՈՒՔՍԸ . (մեկնելով) Մերիտո՞ր :

ԺԱՆՆԸ . Մերիտո՛ր :

ԱՐՔԱՅՆ . Անկից զատ Շիքօ թերևս իշխանէ մը իսկ նախատուելու յանձնառու չպիտի ըլլար : Նա սուրը խասիւ

կը քաշէ ։

ԴՈՒՔՍԸ. Ո՛չ թէ ինծ դէմ կարծեմ ։ Նա պարոն Մայէնի դէմ սուր չքաշեց որն որ զանի գաւաղանաւ ծեծել տուաւ ։ ոչ ալ Նիքօլա Տավլիտ փաստաբանին դէմ որն որ գաւազանը բըռնած էր ։

ԱՐՔԱՅՆ. Դժնդակ յիշողութիւն մը ունիք, Փրանսուա ։

ՇԻՔՕ. Արդ ուրեմն. Շի՛քօ, ձեզ կը յիշեցնեն թէ ծեծ կերած էք . . . թէ քառասուն և ինն գաւազանի հարուած ընդունած էք . . . համարենք թէ յիսուն ըլլայ։ Բայց ատի ձեր յանցանքը չէ, ատի կրնայ ամեն մարդու ալ պատահիլ ։ Աեցէ՛ք, աՀաւասիկ պարոն Պիսսի ; կարիճ մը, բարձրամիտ մը ։ Հարցուցէ՛ք իրեն թէ ինչ պիտի ընէ երբ երեկոյ մը իր սիրուհւոյն տունը հակառակորդէ մը՝ նախանձոտ իշխանէ մը բըռնուած՝ ինքզինքը տասներկու բռնակիրներու և Նորմանտացի փաստաբանի մը գաւազաններուն տակ իր ճգմուիլը կը տեսնէր . . . ։ Պատասխանեցէ՛ք Պիսսի՛, ինչ պիտի ընէք ։

ՊԻՍՍԻ. Պիտի ըսեմ թէ իշխանը թշուառ մը և վատ մ՚է և թէ նոյն իսկ ինքզինքը անպատուած է ։

ՇԻՔՕ. Լաւ, և ի՞նչ պիտի ընէիք ։

ՊԻՍՍԻ. Ատի չգիտեմ, բայց այն իշխանը հետևեալ օրն իր պարագն պիտի հատուցանէր ինձ ։

ՇԻՔՕ. Հետևեալ օ՛րը . . . ։ Ա՛հ պարոն Պիսսի, որքան դէշ գործ կը տեսնէք. Շիքօ իր հաշիւը հետևեալ օրը չվարկադրեց և թողուց որ տակաւը բանի ։ Արդ անկից ՚ի վեր եօթըն տարի է և որոց մին նահանջ է. հարիւրին տասնէն որ օրինակաւն սակ մ՚է, այն սակը որով թագաւորը հրեաներէն փոխ կ՚առնու, եօթն տարի պէտք է որ տակաները գրամագլուխը կրկնապատկեն ։ Ասկից կը հետևի որ Շիքօի տրուած փակերու յիսուն հարուածները՝ որոնք առժամեայ մ՚ալ արիւն հանեցին իր մարմնէն, այսօր հարիւր հարուածներու և իրաքանչիւր պարտականաց համար երկու առժամեայ արեան բարձրացած են, այնպէս որ պարոն Մայէն որքան գէր ալ ըլլայ և Նիքօլա Տավլիտ որքան երկար որ ըլլայ՝ Շիքօի հատուցանելու չափ ոչ արիւն ունին և ոչ մարթ և օրին մէկը անանկանալով



բիրերու ութսուն և ութերորդ կամ իննսուներորդ հարուածին իրենց հոգինին պիտի աւանդեն ։

(Ծեծում)

ՊԻՍՍԻ. Այդքան յիմար մ՚ ըլլար ։

ԱՐՔԱՅՆ. (առ Փրանսուա) Ինչպէս կը գտնէք այս թուաբանութիւնը ։

ԴՈՒՔՍԸ. Զմայլելի, վեհափառ տէր . . . պարոն Շիքօ կատարելութիւն մ՚է ։ Եւ հիմայ ոչ թէ առ յարգանս այսպէս է այլ առ ՚ի բանդագուշանս ։

(Ծեծում)

ՇԻՔՕ. (առ Փրանսուա) Ճշմարի՛տ կ՚ըսէք. զինքը պիտի սիրեն . . . քիչ մը, այս խեղճ Շիքօն ։

ԴՈՒՔՍԸ. Զանի պիտի պաշտեն ։

ՇԻՔՕ. Ո՛հ, ինչ սիրուն փոքրիկ արքունիք մը պիտի ունենանք. բոլոր գառնուկները միասին մայելով . . ։ Լաւ ուրեմն ես Անժուեանները շատ չէի սիրեր, և աղէկ կ՚ ըլլար եթէ . . . . բայց քանի որ ոսկի գպրուն հասանք, բեհեղաշէրիւղի եղջիւր, Բարիզի փողոցներուն մէջ կաթ և մեղր պիտի հոսեն ։ Եղբայր իմ, ո՞ւր են ձեր բարեկամները զորս կը պաշտեմ . . . պարոն Պիսսի ձեզմէ կ՚ըսկսիմ. շուտիկ։

ՊԻՍՍԻ. (ծաղրելով) Վեհափառ տէ՛ր . . . ո՛րքան բարեսրտութիւն ։

ՇԻՔՕ. Ձեզի երբէք բան մը տուած չեմ . . . ոչ ։ Լաւ ուրեմն, խրատներ չունէի։ Այս վայրկեանիս իմ գաՀոյիցս մեծ պաշտօններէն մին պարապ է, այն է որսորդապետութեան պաշտօնը . . ։

ԴՈՒՔՍԸ. (մեկուսի) Ի՞նչ կ՚ըսէ ։

ԱՐՔԱՅՆ. (առ Գէլէա) Թողէ՛ք ինծ ուշ դնել ։

ՇԻՔՕ. (առ Պիսսի) Ո՛հ Պիսսի, գիտեմ որ նորա կը փափաքիք և թէ եղբայրս ձեզի խոստացաւ զանի ձեզ համար խնդրել ։ (Փրանսուա կը յառաջէ) ։ Ասի պարզ բան մ՚է,

դուք իւր հաւատարիմ ծառան էք , իւր լաւագոյն բարեկամը , իւր մարգարիտը ։

ԴՈՒՔՍԸ. (ինքնին) Իւր մատնիչը ։

ՇԻՔՕ Դուք կատարեալ ազնուական մ'էք , կատարեալ տէր մը կորձութեան տիպար մը , , ձեզ որսորդապետ կ'ընեմ ։

ԴՈՒՔՍԸ. (բարկացած) Թշուառական ։

ՇԻՔՕ. (փոխելով առ Դոքտորն) Ո՛հ ինձ շնորհակալ մի՛ ըլլաք ։ (ցած առ Արքային) Թէ որ այս առիթէն օգուտ չքաղես որ զանոնք մինչ 'ի մահ հակառակեցնես քու մորդ որդին չես ։

ԴՈՒՔՍԸ (Պիւսին) Թակարդի մէջ բռնուած ։

ԱՐՔԱՅՆ. Եղբայր իմ , քիչ մը ներողամիտ եղիք ։ Շիքօ ձեզ զուարձութիւն մը պատճառել կը կարծէր ։ Նա չը կրնար գիտնալ թէ դուք արդէն այս առաւօտ այն պաշտօնը ուրիշի մը համար ինձմէ խնդրեցիք ։

ՊԻՒՍԻ. Ուրիշի մը համար . . ։

ԴՈՒՔՍԸ. (առ Պիւսին) Պիտի ըսեմ քեզ . . . պիտի բացատրեմ . . ։

ՊԻՒՍԻ. Անօգուտ . տէր . . . ։

ԱՐՔԱՅՆ. Այս նոր մեծ որսորդապետը՝ պարոններ , իմ եղբօրս պաշտպանեալը , բնականաբար Անժուեան մ'է , որուն անունն է . . . ինչպէս կը կոչուի Փրանսուա , երբէք չեմ յաջողիր այս անունն ալ յիշել ։

ԴՈՒՔՍԸ. Օ՜ն . . . . (առ Արքային) Պարոն կոմս տը Մօնսորօ , վեհափառ տէր ։

ՇԻՔՕ. (խորը) Մօնսորօ՞ ։

ԳԷԼԻՒՍ. Մօնսորօ՞ . ո՞վ է այդ ։

ՊԻՒՍԻ. Մօնսորօ . . . . ։

ԱՄԷՆՔԸ. Մօնսորօ՞ ։

ԱՐՔԱՅՆ. Փրանսուա՛ երբ զինքը մեզ պիտի ներկայացնէք , որպէս զի եթէ չենք ճանչեր՝ գոնէ տեսած ըլլանք ։

ԴՈՒՔՍԸ. Վեհափառ տէր , իրեն մէկ քանի օրեր շնորհեցէք . պարոն Մօնսորօ յԱնժու՝ իր երկիրներուն մէջ կը գտնուի , իր պաշտօնը տակաւին չկարացի իրեն ծանուցանել ։



ԳԷԼԻՒՍ. (առ Արքային) Այս գեղեցիկ պաշտօնը թշնամւոյ մը . ինչ սխալանք՝ վեհափառ տէր ։

ԱՐՔԱՅՆ. Մօնսորօ կամ Պիւսի , ինչ փոյթ ։ Միշտ Անժուեան մ'է , չե՞ս տեսներ որ իմ տէրերս են ։

ԳԷԼԻՒՍ. Ըստ մեզ ատի աւելի պատճառ մ'է զձեզ անոնցմէ ազատելու , զանոնք մէջ տեղէն վերցընելու և անոնց ամենէն աւելի զզուելիէն սկսելու ։

ԱՐՔԱՅՆ. Պիւսիին համար կ'ըսես ։ Ա՛հ թէոր կարող ես , առանց մեծ վտանգի . . . ։ Լաւ ուրեմն . . . (աւելի ցած) կատարեալ իշխանութիւն ։

ԳԷԼԻՒՍ. Կ'իմանա՞ս Մօժիրօն ։

ՄՕԺԻՐՕՆ Կ'իմանա՞ս , Շօմպէրկ ։

ԴՈՒՔՍԸ. (առ Պիւսին) Պիւսի՛ ինձ մօտիկ ըրէ , կ'աղաչեմ ։ (Պիւսի դողդոջելով ձեռքը կը բռնէ)

ՇԻՔՕ. (որ խորէն նշմարեց) Լաւ ։

ՍԷՆ–ԼԻՒՔ. (առ Արքային) Վեհափառ տէր , ձեր վեհափառութեան կ'ըսպասեն . . . . ։ (երաժշտութեան ձայնը)

ՇԻՔՕ. Փոքրիկ Հէնրիս . . . օ՜ն պարենք ։

ԴՈՒՔՍԸ. Անիծեա՜լ յիմար ։

ԱՐՔԱՅՆ. Եկէ՛ք Փրանսուա ։

ԴՈՒՔՍԸ. Աւասիկ եմ ։ (դուրս կ'ելնեն)

## ՏԵՍԻԼ Ժ.

ԳԷԼԻՒՍ , ՇՕՄՊԷՐԿ , ՄՕԺԻՐՕՆ , տ' Օ , (ձախ կողմը) ։ ՊԻՒՍԻ , ՐԻՊԷՐԱՔ , ԼԻՎԱՐՕ , ԱՆՏՐԱԿԷ , (աջ կողմը ։)

ՐԻՊԷՐԱՔ. Պիւսի , հոն դաւակցութիւն մը կը նիւթեն ։

ՊԻՒՍԻ. Չիավարժական պտոյտ մը ։

ԱՆՏՐԱԿԷ. Թագաւորականները մեզ կ'սպասեն ։

ՊԻՒՍԻ. Իրենց սպասենք ։

ԳԷԼԻՒՍ. (խոր բարեկամաց) Համաձայն ։ (բարձր) Ինչ կ'ուզէք՞ , պարոնայք , պէտք է որսի ելնելու խորհուրդն ընել , թագաւորը մօտացածին խորհուրդ մը ունի , կ'ուզէ որ վաղը

իր նախաճաշին գեղեցիկ երեք միս մը պատրաստուած ըլլայ . . . համադամ ճաշակ մ'ունեցող բան մը . . . օրինակի համար վարազի գլուխ մը ։

ՄՕԺԻՐՕՆ. Իտալական փողպատով մը ։

ՃՕՄՊԷՐԿ. Եւ տեսակը . . . ։ (Պէտօին կը նայի)

ՊԻԽՍԻ. (վայելչաբար մօտենալով) Ասկից թերևս . (իր քովը կը ցուցնէ)

ԳԷԼԻՒՍ. Գրեթէ՝ պարոն Պիւսի ։

ՊԻԽՍԻ. Ցիրաւի օդը շատ ցուրտ է . . . ձեր մորթը պիտի ճեղքորտի . ասկից զատ, վարազը խստաբարոյ կ'ըլլայ։

ՄՕԺԻՐՕՆ. Կենդանին բռնելու համար մուշտակեալ ձեռնոցներ պիտի ունենանք ։

ՐԻԳԷՐԱՔ. Միայն մէկ հա՞տ պիտի որսաք ։

ԳԷԼԻՒՍ Եղածին չափ պիտի որսանք։ (Րիգէրաք , Լէվարօ , Անդրակէ եղբայր կը մօտենան :)

ՊԻԽՍԻ. Բէ՛հ, միայն չորս հոգի են. մէկ հոգի իրենց բաւական է ։

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆՔ. Անխոհե՛մ ։ (Գէլիւսէ մէկ ականջով ծունկին կը զարնէ :)

ԱՆԴՐԱԿԷ. (առ Պէտօ) Բայց . . . ։

ՐԻԳԷՐԱՔ. (առ Պէտօ) Պիւսի՛ . . . ։

ՊԻԽՍԻ. Մէկը միայն . . . . (Խոժոռութեամբ) Ինչպէս կը որսաք՝ պարոնայք ։

ԳԷԼԻՒՍ. Դարանաւ . . . ։ Միթէ դուք ալ մեզմէ էք ։

ՊԻԽՍԻ. Ատի ինչպէս կարգաւորելու է ։ Ես այս գիշեր Սէնթ Անդուանի արուարձանին մէջ իմ վաշխառուիս տունը գործ ունիմ ։

ՄՕԺԻՐՕՆ. Շատ ամայի թաղի մը մէջ ։

ՃՕՄՊԷՐԿ. Ուր զմարդ կը խեղդեն ։

ՊԻԽՍԻ. Ցիրաւի՞, ես զայդ չէի գիտեր ։ Օգնեցէք ինձ փոքրը ինչ . . . . ո՞ր ճամբով կը խրատէք որ երթամ ։

ԳԷԼԻՒՍ. Ո՛հ՝ Աստուած իմ , գետեզերքէն մինչև Կրան Շաթըլէ , Թիքսէրանտրի ճամբէն , Կրէվէն և Սէնթ Անթուանի փողոցէն մինչև Թուրնէլլի պանդոկը , և Պաստիլէն ։



ՊԻԽՍԻ. Ահաւասիկ կատարեալ շաւղեկիր մը , գիծ մը չը պիտի շեղիմ այդ ճամբաներէն . . . ինձ ըսելիք ուրիշ խօսք մը չունի՞ք՝ պարոնայք ։

ԳԷԼԻՒՍ. (բարկանալով) Ամենևին ոչինչ ։

ՊԻԽՍԻ. (ինքնին) Առանց գրգռելու , այլ ես չեմ հասկընար . . . ։

ՃՕՄՊԷՐԿ. Բարի ճամբորդութի՛ւն , պարոն կոմս ։

ՊԻԽՍԻ. Այս անձանց հետ ընելիք գործ մը չկայ ։

ԳԷԼԻՒՍ. Ահա ծանուցուեցաւ . . . ասի նորա գործն է . . . մեք ալ մեր գործը կարգադրենք ։ (կը մեկնին ։)

ՐԻԳԷՐԱՔ. (առ Պէտօ) Ի՛նչ փոյթ , առանձին դուրս ելնելու չէք կրնար համարձակիլ։

ՊԻԽՍԻ. Բէ՛հ ։

ԼԻՎԱՐՕ. Քեզ պիտի հետևինք ։

ՊԻԽՍԻ. Ձայդ ձեզ կ'արգելում , ապա թէ ոչ զձեզ կը ամբաստանեմ ։

ՐԻԳԷՐԱՔ. Մի՛ բարկանար ։

ԱՆԴՐԱԿԷ. Դուքսը զքեզ կը խնդրէ ։

ՊԻԽՍԻ. Ես ալ անկէ խօսք կուտամ։ (Դուռը կ'երթայ, կը բարկանայ և կը մեկնի ։)

## ՏԵՍԻԼ ԺԱ.

ԴՈՒՔՍԸ (անոնց մեկնիլը դիտելով , յետոյ) ՕՐԻՑԼԻ.

ԴՈՒՔՍԸ. Զիս չեն սիրեր . բայց քիչ ատենէն ինձմէ պիտի երկնչին ։

ՕՐԻՑԼԻ Տէ՛ր ։

ԴՈՒՔՍԸ. Օրիյքի . . . արդ ուրեմն ։

ՕՐԻՑԼԻ. Միշտ այն կնոջ վրայ կը մտածէ՞ք , զոր անցեալ երեկոյ Սէնթ Քաթերինի եկեղեցւոյն մէջ նշմարեցիք ։

ԴՈՒՔՍԸ. Թէ կը մտածե՛մ . . . ։ Ինձ այնպէս թուեցաւ թէ իմ սպաննած այն գեղեցիկ Տիանի ուրուականը կը տեսնէի ։

ՕՐԻՅԼԻ. Այդ ուրուականին ես հետևեցայ . . . կ'ուզէ՞ք գիտնալ թէ ո՞ւր կը բնակի :

ԴՈՒՔՍԸ. Օրիյլի՛ :

ՕՐԻՅԼԻ. Պասթիյլէն հարիւր քայլ հեռաւորութեամբ, Թուրնելի պանդոկին ճիշդ դէմը եղող տան մը մէջ :

ԴՈՒՔՍԸ. Ապահո՞վ ես :

ՕՐԻՅԼԻ. Անհաւասիկ բանալին :

ԴՈՒՔՍԸ. Այս գիշեր իսկ խղճիս խայթը պիտի խեղդեմ :

## ՏԵՍԻԼ ԺԲ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՇԻՔՕ (որ դուռնէն կը մտնէ)

ՇԻՔՕ. Կեցիր, պարոն Օրիյլի . . : Ամէնքդ ալ եկէ՛ք . Պարոն Օրիյլի մեզ վրին պիտի նուագէ փոքր ինչ .

ՕՐԻՅԼԻ. Ինչո՞ւ համար, պարոն :

ՇԻՔՕ. Բայց Նորին Վսեմութիւնը զուարճացընելու համար : Տեսէ՛ք իւր տխուր դէմքը :

ԴՈՒՔՍԸ. Պարոն Շիքօ, կը տեսնեմ որ ինձ հեռաւ ալ հաշիւ մը բանալ կ'ուզէք :

ՇԻՔՕ. (ձեռքը կերպով գրպանէն ոսկեդրամներէն մը հանելով) Ձեզ համար, տէր, տոկոսները տասնուհինգէն պիտի գնենք : (Ծիծաղ. Դուրս կ'ելնէ) :

## ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՅՆՔ, ԺԱՆՆԸ, ՊԻՒՍԻ, (յետոյ) ՍԷՆ ԼԻՒՔ

ԺԱՆՆԸ. (առ Պիւսի) Շնորհակալ եմ՝ պարոն կոմս. տունըս տխրութեան մէջ թողուլ չ'ուզեցիք նոյն իսկ արդարացինք պաշտպանութեան մը համար : Ասկէ առաջ ձեր վրայ կ'զմայլէին, այսուհետև երախտագիտութիւն պիտի ունենան . . . . չեմ համարձակիր բարեկամութիւն ըսել :



ՊԻՒՍԻ. Ըսէք, տիկին . . . . ձեզ անկ եղածէն շատ քիչ է :

ՍԷՆ-ԼԻՒՔ. (առ Պիւսի՝ ցած) Պարոն Պիւսի, ձեր տունէն զատ ուրիշ տեղ մ'երթաք :

ՊԻՒՍԻ. (շուարած) Ա՛հ :

ՆԱՆՍԷՅ. Թագաւո՛րը :

## ՏԵՍԻԼ ԺԴ.

ՆՈՅՆՔ, ԱՐՔԱՅՆ, ՊԱԼԱՏԱԿԱՆՔ, ՏԻԿՆԱՅՔ, ՊԱՇՏՕՆԵԱՅՔ.

ԺԱՆՆԸ. (առ Սէն Լիւք) Թագաւորը կը մեկնի . Ցաւիտեան ազատ պիտի ըլլանք . այլ ևս զիրար չթողունք :

ՍԷՆ-ԼԻՒՔ. Երբէ՛ք . . . Տե՛ս թագաւորը. շո՛ւտ հեռացի՛ր ինձմէ :

ԱՐՔԱՅՆ. (առ Պրիսաք) Պարոն Պրիսաք, ամեն ինչ կատարեալ եղան . . . իմ սիրոյ ողջոյներս . . . : Դժբաղդաբար ժամանակը ուշ է և ես 'ի Լուվրը կը բնակիմ : (Մոմակալ մը կը ձգնէ :)

ԴՈՒՔՍԸ. Ձեր վեհափառութեան ընկերանալու պատիւը պիտի ունենա՞մ :

ԱՐՔԱՅՆ. Ոչ, շնորհակալ եմ : Գիշեր բարի, Ֆրանսուա :

ԴՈՒՔՍԸ. (ցած առ Օրիյլի) Արդ ուրեմն, մեկնի՛նք, Օրիյլի : (կը մեկնին)

ՍԷՆ-ԼԻՒՔ. Մինչև 'ի կառք Նորին Վեհափառութեան լոյս ցուցնեմ :

ԱՐՔԱՅՆ. Բոլոր բարեկամներս ալ դատարկասուն մարդիկ են որոնք բուն բարեկենդանը անցնել պիտի տան . . . գէշ ընկերութիւն : Դու՝ Սէն-Լիւք, ծանրաբարոյ մարդ մ'ես, ամուսնացեալ մարդ մը :

ԺԱՆՆԸ. Կարի քաջ :

ԱՐՔԱՅՆ. (ժպտելով) Գիշեր բարի, տիկին Սէն-Լիւք :

ԺԱՆՆԸ. (յուշագնելով) Վեհափառ տէր . . . . . (Ձեռնով) կատարեալ է ։

ԱՐՔԱՅՆ. (վերադառնալով) Ամէն խորհրդածութիւն ընելով կը վախնամ որ Ճանապարհը ձանձրանամ . ինձ պիտի ընկերանաս, Սէն-Լիւք ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. (Ժաննին) Տեսա՞ք հիմայ։

ԺԱՆՆԸ. Կ'երթա՞ք ։

ԱՐՔԱՅՆ. Ո՛ն ուրեմն՝ Սէն-Լիւք ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Աւասիկ եմ ։ Կուգամ ։ (Ժաննին) Հիմայ ես կը դառնամ ։

ՇԻՔՕ. (Ձեռնով) Ա՛հ, համեցայ . . . խե՛ղճ աղջիկ ։

ԺԱՆՆԸ. Աստուած իմ, Աստուած իմ ։

ՇԻՔՕ. Արդ ուրեմն . ինչ կը վախնա՞ք՝ Սէն-Լիւք ։ Լուվրի թաղը ապահով է . (Պիտակէ նայելով) Սէնթ Անթուանի դրուարձանին պէս չէ, մանաւանդ Պաթիյլի կողմէն, Թուրնելի պանդոկին առջեւներուն պէս . . ։ Հոն խորշ մը կայ որուն մէջ չորս մարդ կրնայ գլխրաւ ծածկուիլ խեղճ անցորդի մը վրայ յարձակելու համար ։

ՊԻԽՍԻ. (զարմացած) Ինծի համար է որ այս խօսքը կ'ըսէ . . ։

ՇԻՔՕ. Գիշեր բարի . . . . փոքրիկ Հէնրիս . զաւակս, սպասէ ինծի ։ (Ժեսթով կը ձգէ)

ՊԻԽՍԻ. (ինքնին) Գուցէ ինձ վախ ազդելու համար . . ։ Քաջալերութիւն ։ (առ Ժաննը) Բոլոր իմ յարգանքս՝ տիկին ։ (կը բարևէ և կը ձգէ ։ Ուրիշներ ալ կուգան կը բարևեն և դուրս կ'ելլեն . դահլիճ Ժաննը առանձին կը մնայ դահլիճին մէջ) ։

ԺԱՆՆԸ. Ահա առանձին մնացի . . ։ Հարսանեաց երեկոյ մը . . . ո՜վ Մերիտո՛ր, Մերիտո՛ր ։



# ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Սէնթ Անթուան փողոցը՝ Թուրնելի պանդոկին առջեւ ։ Ձախ կողմը պանդոկը իր պատուհաններով եւ փոսերով, Քարեղէն քիւ մը որուն տակ ապաստանած են Թագաւորականք ։ Աջ կողմը պատըշգամբաւ փայտեայ տուն մը, ցած միջնադռնակաւ ։ Փողոցը այս տան եւ պանդոկին մէջէն կը հասնի մինչեւ Պասթիյլ, որուն աշտարակները՝ մութին մէջ կը նշմարուին . — Ձիւն եկած է, լուսնոյ լոյս ։

## ՏԵՍԻԼ Ա.

ԳԻԼԻՒՍ, ՇՕՄՊԷՐԿ, ՄՕԺԻՐՕՆ, Տ'ԷՊԷՐՆՕՆ. (ծածկուած)

ԳԻԼԻՒՍ. Ահա ցուրտ մը, Փոլոնիական ճշմարիտ ցուրտ մը ։ Սա յանդուգն Պիւսին շատ իրաւունք ունէր . . . մորթս պիտի ճեղքուի ։

ՇՕՄՊԷՐԿ. Ո՛ն ուրեմն . վերարկուդ աչացդ վրայ քաշէ և ձեռքերդ ալ գրպանդ դի՛ր ։ (ոտքով գետինը կը զարնէ) ։

ԳԻԼԻՒՍ. Շօմպէրկ, ալմանացի ըլլալդ յայտնի կ'երևի ։

ՄՕԺԻՐՕՆ. Ընչացքս սառ եղաւ ։

Տ'ԷՊԷՐՆՕՆ. Իմ ալ ձեռներս ։

ԳԻԼԻՒՍ. Քիչ մը համբերութիւն . թերեւս իսկոյն օդը խիստ տաք պիտի գտնէք ։

ՄՕԺԻՐՕՆ. Աստուած լսէ գքեզ ։ Եւ թո՛ղ տաքութիւնը շուտով գայ ։

ՇՕՄՊԷՐԿ. (մօտէն դիտելով) Լռութի՛ւն ։

ԳԻԼԻՒՍ. Ինչ կայ ։

ՄՕԺԻՐՕՆ. Բան մը շառաչեց ։

ՇՕՄՊԷՐԿ. Պատուհան մը կը բացուի . . . կեցի՛ր, այս պատշգամբին վրայ է ։

ՄՕԺԻՐՕՆ. Կի՛ն մը ։

ԳԻԼԻՒՍ. Երկո՛ւ ։

## ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԺԷՐԹՐԻՒՏ, ՏԻԱՆԱ (պատշգամբէն)

ԺԷՐԹՐԻՒՏ. Ներս մտէք՝ օրիորդ, շատ ցուրտ է ։

ՏԻԱՆԱ. Այս արուարձանը գիշեր ատեն սոսկալի է ։ Տասնուհինգ օրէ 'ի վեր որ պարոն Մոնսորօ զմեզ այս տան մէջ բնակեցուց, իւրաքանչիւր գիշեր մէյմէկ տագնապաւ արթնցանք ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Այս երեկոյ ամէն ինչ հանդարտ է, ինչ փոյթ, ներս մտէք ։ Ինքզինքնիդ ցուցնելը անխոհեմութիւն մ'է, քանի որ պարոն տ'Անժու դուքսը Սէնթ Քաթերինի եկեղեցւոյն մէջ տեսաւ զձեզ ։

ՏԻԱՆԱ. Եւ դուք ճանչեց... ։ Ա՜հ Աստուած իմ ։

ԳԷԼԻՒՍ. (առ Մօժիրօն) Կը լսե՞ս ինչ կ'ըսեն այս երկու շաղակրատուհիները ։

ՄՕԺԻՐՕՆ. Հաւատա՛ ոչ. իրենց խօսքերը մեզ չհասած կը սառին ։

ԺԷՐԹՐԻՒՏ. (առ Տիանա) Հոն ծածկուած մարդիկ կան... Թուրնէլի պանդոկին անկիւնը ։

ՏԻԱՆԱ. Գուցէ չարագործնե՞ր... ա՜հ գնա՛ նայէ ծերունի Մարգարիտան նրբանցքին դուռը լաւ գոցե՞ր է գացած ժամանակը ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Կ'երթամ, տիկին ։ (Ներս կը մտնէ)

ՄՕԺԻՐՕՆ. Օ՛ն ըսէ՛ Գէլիւս. վայրկեան մը յառաջ սաքութեան գալուստը կ'իմացնէիր, արդ ուրեմն, կարծեմ ահա կուգայ ։

ՇՕՄՊԷՐԿ. Ո՞ւսկից ։

ՄՕԺԻՐՕՆ. Սէն-Բօլ փողոցէն ։

ԳԷԼԻՒՍ. Յիրաւի, երկու մարդիկ ։

Տ'ԷՊԷՐՆՕՆ. Կարծեմ այնպէս է ։

ԺԷՐԹՐԻՒՏ. (ելլել) Օրիորդ, դուռը աղէկ գոցուած է ։ Բայց ինչ բան զձեզ այսպէս կ'զբաղեցընէ ։



ՏԻԱՆԱ. (անոր փողոցը ցուցնելով) Սա եկող երկու մարդիկը կը տեսնե՞ս ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Գուցէ անոնց կ'սպասեն այս զարանակալ մարդերը.... ներս մտնենք.... ։

ՏԻԱՆԱ. Եթէ պարոն Մոնսորօն ըլլար ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Կոմսը միշտ առանձին կուգայ ։

ՏԻԱՆԱ. Ճշմարիտ է..... ։ Այս մարդիկը կը կենան ։

ԺԷՐԹՐԻՒՏ. Մեր դրա՛ն առջև... շո՛ւտ, շուտ, օրիորդ.... ։ (զանի ներս կը տանի ։)

ՏԻԱՆԱ. Ինչ պիտի պատահի ։ (Ներս կը մտնէ. պատուհանը կը փակուի) ։

## ՏԵՍԻԼ Գ.

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆՔ (ծածկուած) ՕՐԻՅԼԻ, ԴՈՒՔՍԸ (ներս մտնելով)

ԴՈՒՔՍԸ. Պատուհանի մը գոցուիլը լսեցի ։

ՕՐԻՅԼԻ. Եւ եթէ ձեր վհուկը կեղծ բանալի մը չծախեց ինծ, ձեր վեհութիւնը դրան մ'ալ բացուիլը պիտի լսէ ։ Միայն լաւ մը գիտենք թէ ա՞յն է... (դուռը կը գտնէ) փայտաշէն տուն. յարկին տակ Աստուածածնայ արձան մը ։

ԴՈՒՔՍԸ. Ասիկա է, բա՛ց ։

ԳԷԼԻՒՍ. (հեռուէն իւր քարէկամաց) Պիւսիէն զատ մէկը չը կրնար ըլլալ այս. չթողունք որ այս տունը մտնէ ։

ԱՄԷՆՔԸ. Օ՛ն, օ՛ն ։ (յարձակելու կը յարդուին)

ԴՈՒՔՍԸ. (զանոնք նշմարելով) Զինեալ մարդի՛կ. դաւաճանութի՜ւն մը ։

ՕՐԻՅԼԻ. (որ դուռը բացաւ) Շուտ մտնե՛նք, տէր ։

ԳԷԼԻՒՍ. (նախ յառաջ խաղալով) Ի մա՛հ, 'ի մա՛հ ։

ԱՄԷՆՔԸ. Ի մահ ։

ԴՈՒՔՍԸ. (քողերնին խաւարին դնելով) Կարծեմ՝ պարոն Գէլիւս, « 'ի մահ » ըսիք Գաղղիոյ որդւոյ մը համար ։

ԳԷԼԻՒՍ. Դուքս տ'Անժու իշխանազո՛ւնը ։

ԱՄԷՆՔԸ. Իշխանազո՛ւնը ։

ՄՕԺԻՐՕՆ. Ներեցէք՝ տէր, կատակ մ'էր ։

ԴՈՒՔՍԸ. Եղական կատակ մը ։

ԳԷԼԻՒՍ. Մեր փնտռածը ձեր վսեմութիւնը չէր ։

ԴՈՒՔՍԸ. Կը հաւատամ. բայց ո՞վ էր ուրեմն ։

ԳԷԼԻՒՍ. Մեր բարեկամներէն մէկը ։

ՄՕԺԻՐՕՆ. Զինքը վախցընելու համար ։

ԳԷԼԻՒՍ. Ձեր վսեմութիւնը չկրնար իսկ կասկածիլ որ իւր զուարճութիւնները խանգարել ուզած ըլլանք ։

ԴՈՒՔՍԸ. Կ'ապաչեմ՝ պարոն, ինչ զուարճութիւններ ։

ՄՕԺԻՐՕՆ. Ամէն ինչ որ ձեր վսեմութեան հաճոյ ըլլայ, ներողութի՛ւն ։

ԳԷԼԻՒՍ. Ձեր վսեմութիւնը կրնայ վստահիլ մեր խոհեմութեան վրայ ։

ԴՈՒՔՍԸ. Ձեզմէ զայդ չեմ խնդրեր ։ Բայց յայտնանէ ծածկելու դաղտնիք մ'ալ չունիմ ... Մոնսօէ Հոլէին՝ որ հոս բնակող վհուկ մ'է, խորհուրդ մը պիտի հարցնէի ... Օրեյլի զձեզ տեսաւ և պտոյտի ելած ալեղնաւորներ կարծեց և որովհետև ստուգիւ վհուկը կը հեռացուէր՝ կը ջանար պատերուն մօտէն անցնիլ, որպէս զի պահնորդներէն խոյս տայ ... ։ Ահաւասի՛կ, պարոնայք, ինչ որ կուզեմ որ ըսեն և կարծեն ։ Երթա՛յք բարեաւ, պարոններ ։

ԳԷԼԻՒՍ. Կ'երթանք՝ տէր ։ (Նշան կ'ընէ Իւր Բարեկամաց որ ելեն ու շրջակայքը կենան) ։

ՕՐԻՅԼԻ. Այս անձերը գէշ դիտաւորութիւն մը ունէին, տէր ։

ԴՈՒՔՍԸ Կը կարծե՞ս ։

ՕՐԻՅԼԻ. Դեռ չմեկնեցան, տեսէ՛ք ։

ԴՈՒՔՍԸ. Օ՛ն, օ՛ն, ներս մանե՛նք, քանի որ միայն հոս համնելէ զատ բան մը ըրած չեմք ... ։ Կ'ուզեմ գիտնալ թէ այս կինը Տիանաի չափ գեղեցի՞կ է ։

ՕՐԻՅԼԻ. Ա՛հ՝ տէր, անխոհեմութիւն չ'ընենք, դու իշխանազուն մը, տ'Անժու դուքսը .... դահաժառանգ մը, որ այնքան անձինք՝ ժառանգելնիդ տեսնել չեն ուզեր ։



ԴՈՒՔՍԸ. Իրաւունք ունիս ... պանդոկը մտնենք ... աւելի լաւագոյն ընկերութեամբ մը վերստին պիտի գամ ։

ՕՐԻՅԼԻ. Կեցէ՛ք, դանոնք կը տեսնե՞ք ։

ԴՈՒՔՍԸ. Արդարև ... բանալին առի՛ր, դուռը գոցեցի՛ր ։

ՕՐԻՅԼԻ. Է՛հ՝ այո՛ տէր, այո՛, մտնենք ։ (դուռն կը բանէ) ։

## ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, (բաց 'ի Դուքսէն և Օրեյլէն)

ԳԷԼԻՒՍ. Պարոնայք .... ։

ԱՄԷՆՔԸ. Աւասիկ ենք ։

ԳԷԼԻՒՍ. Ի՞նչ պիտի ընէր այս ապականեալ թաղին մէջ ։

ՄՕԺԻՐՕՆ. Գեղեցիկ հարցում ... հապա այն կիները որ պատուհանին մէջ քիչ մը յառաջ կ'սպասէին ։

ԳԷԼԻՒՍ. Ճշմարիտ է .... ։ Ա՛հ այս անգամ, մտիկ ըրէք ։ (Հեռուէն երգ մը կը լսուի)

Որ լաւ 'կռուի' կը ճանչնէ
Նա որ՝ Ամպուազ պարոնն է,
Միրահարս մ'ալ որ լաւ է
Նա՛ ալ Պիւսի պարոնն է ։

ԳԷԼԻՒՍ. Ի՞նքն է ։

ՄՕԺԻՐՕՆ. Է՛հ, ոչ, ասիկա առանձին է ։ Իւր բարեկամները այսպէս զինքը չպիտի թողուին ։

ԳԷԼԻՒՍ. Ես քեզ կ'ըսեմ թէ ինքն է ։

ՄՕԺԻՐՕՆ. Ուրեմն, մեզ թակարդ մը կը լարէ ։

ԳԷԼԻՒՍ. Թակարդ ըլլայ կամ չ'ըլլայ ... յարձակինք, յարձակինք, 'ի սո՛ւր ։

ԱՄԷՆՔԸ. Ի սո՛ւր ։

## ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ, ՊԻՒՍԻ, (յետոյ)

ՊԻՒՍԻ. (ոսկեդրամները համրելով) Երկու, երեք, չորս։ Ա՛հ գլուխ կը յարգեն, շնորհակալ եմ պարոններ։

ԳԻԼԻՒՍ. Ըսէ՛ք, ի՛նչն է։

ՊԻՒՍԻ. Նո՛յն ինքն, — Վարազն 'ի խնդիր... այն նշանաւոր խալամը... օ՛ն ուրեմն. մէկ քանիներու դէմ պիտի ելնէ նա։ Ես կ'սկսիմ (Տ'Էրբէրնօնը յանկարծ իր վրայ յարձակած տեղէն կը վերադառնայ)։

Տ'ԷՐԲԷՐՆՕՆ. (վերադառնալով) Լաւ, ես հաշիւս տամ. կարգը ձերն է՝ պարոններ։ (Իր վէրքը ծածկելու համար ձեռքն դէմ կը դնէ)

ՇՕՄՊԻՐԿ. Տեսէ՛ք սա մեծ անկիրթը՝ որ ձիուն վրայէն մեզ կը խօսի։

ՊԻՒՍԻ. (որ յետին վար ցատկեց) Կեցի՛ր. (որոշ հարուած մը ձգելով անոր)։

ՇՕՄՊԻՐԿ. (զարնուած) Ա՛յ Սադան։

ՊԻՒՍԻ. Ահա՛ երկու եղաւ. միւսնե՛րը։

ԳԻԼԻՒՍ. (Պիւսին վերադառնալով) Ա՛հ, ա՛հ, զարնուած։

ՊԻՒՍԻ. Կերպամէ՛ն։ (Արմուկի հարուածով մը Գիլիւսի ուսը մէկ կողմ կը նետէ)

ԳԻԼԻՒՍ. (Նորէն գալով) Տեսնենք, տեսնենք. ա՛հ կ'ընկերկիս։

ՊԻՒՍԻ. Ո՛չ. կը ջախջախեմ։

ՄՕԺԻՐՕՆ. (առ Պիւսի) Կը տկարանաս։

ՊԻՒՍԻ. Տեսէ՛ք։ (իր սուրն երախակալէն բռնած գլուխն կը զարնէ)

ՄՕԺԻՐՕՆ. (ծանրանալով գետինը կը ճլորի) Արիւնռուշտ։

ՊԻՒՍԻ. Օ՛ն, քաջասրտութիւն...։ Դուք էք որ կը թուլնաք։

ԳԻԼԻՒՍ. (ինքն ալ զարնուելով) Ա՛հ։



ԱՄԷՆՔԸ. Ի մա՛հ, 'ի մա՛հ։ (զանի դէպ 'ի Տիրանի դուռը կը մղեն)։

ՊԻՒՍԻ. (դրան կրթնած տեղն՝ դուռը ետ երթալով) Բացուեցա՛ւ (կը ստորերկրեայ և զանոնք հեռացնելէ յետոյ ներքնայէն մէջ կը փակուի)։

ԱՄԷՆՔԸ. Բացուեցա՛ւ։

ՊԻՒՍԻ. (դուռը գոցելով) Եւ հիմա ալ գոցուեցաւ։ (կը խնդայ)

ԳԻԼԻՒՍ. Ա՛հ՝ սատանայն։

ՇՕՄՊԻՐԿ. Դուռը մինէք։ (հեռուէն զանգակի ձայն)

ՄՕԺԻՐՕՆ. (ապշած) Ի՞նչ է այս։

ԳԻԼԻՒՍ. Պալթիկի արհաւիրք իմացընող զանգակը։

ՇՕՄՊԻՐԿ. Գիշերապահնե՛րը։

ԳԻԼԻՒՍ. Խոյս տանք։

ԱՄԷՆՔԸ. Շո՛ւտ, շո՛ւտ։

ՄՕԺԻՐՕՆ. Օգնէ՛ ինձ՝ Շօմպիրկ։ (ինքզինքնին քաշել տանելով կ'աներևութանան)։

ՊԻՒՍԻ. (դրան ետևէն) Գիշեր բարի, պարոններ... ժամանակն էր։ (կը դուրս ելնէ և կ'երթայ։ — Հեռուէն զինեալ խումբ մը Պալթիկէն ելնելը կ'երևի)։

# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

## ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Ի Լուվրը. Օրեր նախամուտք: Ձախ կողմը՝ մուտք սենեկաց արքային: Աջ կողմը ուրիշ դուռ: Խորը՝ մեծ ճեմելիքը, արքային զինուց սենեկին կցեալ:*

### ՏԵՍԻԼ Ա.

ՑԸ. ՆԱՆՍԷՅ, ՍԷՆ ԼԻՒՔ.

ՆԱՆՍԷՅ. (դռնապաններուն) Այս վարկենիս ոչ ոք ներս մի թողուք։ (Սէն Լիւք որ կը հասնի) Ա՛հ՝ պարոն Սէն-Լիւք, անկարելի՛։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Արքային գիս չպիտի՞ ընդունի։

ՆԱՆՍԷՅ. Այս անշուշտ, նոր լուրէն տեղեկութիւն չունի՞ք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ոչ՝ մեր տունէն կուգամ։

ՆԱՆՍԷՅ. Պարոն Մօժիրօն կէս մը մեռած . . . պարոն տ'Էբէրնօն ծանրապէս վիրաւորեալ . . . պարոն Շոմպէրկ խեղանդամ . . . . պարոն Գէլիւս . . ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ա՜հ Աստուած իմ, որմէ՞։

ՆԱՆՍԷՅ. Պարոն Պիւսիէն, որ ըստ երեւոյթին ինքն ալ մեռած ըլլալու է և ոչ ոք զինքը տեսած է։ Թագաւորը վայրացած է . . . կ'իմանա՞ք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Կուիր որո՞ւ հետ է։

ՆԱՆՍԷՅ. Պարոն տ'Անժու դուքսին հետ։ Ո՛հ՝ ինչ 'տեսարան . . ։ Հոս կուգան, չկենանք։ (պահապաններուն) Պահապանք, քաշն քայլ ետ։ Եկէ՛ք, պարոն Սէն-Լիւք, եկէ՛ք։ (դուրս կ'ելնեն)։



### ՏԵՍԻԼ Բ.

ՕՐՔԱՑՆ ԵՒ ԴՈՒՔՍԸ

ԱՐՔԱՅՆ. Ձեզ կ'ըսեմ թէ ատի սխալ է, պա՛րոն։

ԴՈՒՔՍԸ. Ես ալ կը հաստատեմ որ Ձեր բարեկամները Թուրնելի պանդոկին առջև անոր վրայ յարձակեցան։

ԱՐՔԱՅՆ. Ձայդ ձեզ ո՞վ ըսաւ։

ԴՈՒՔՍԸ. Ես տեսայ զանոնք։

ԱՐՔԱՅՆ. Ահա այդ ծանր է։

ԴՈՒՔՍԸ. Բայց յայսմանէ՝ անոնք զիս Պիւսին կարծելով իմ վրայ յարձակեցան։

ԱՐՔԱՅՆ. Ձե՛ր վրայ։

ԴՈՒՔՍԸ. Այո՛ իմ վրայ։

ԱՐՔԱՅՆ. Եւ Սէնթ Անթուանի Ճանապարհը ինչ գործ ունէիք։

ԴՈՒՔՍԸ. Բայց ձեզ ինչ փոյթ, եղբայր իմ։

ԱՐՔԱՅՆ. Կ'ուզեմ գիտնալ, այսօր հետաքրքիր եղած եմ։

ԴՈՒՔՍԸ. Մանասէի տունը կ'երթայի։

ԱՐՔԱՅՆ. Վհուկի՛ մը։

ԴՈՒՔՍԸ. Դուք ալ շատ անգամ Րիւճիէրիի տունը կ'երթաք, թունաւորիչի՛ մը։

ԱՐՔԱՅՆ. Ո՛ւր որ ուզեմ կ'երթամ, ես թագաւոր եմ։

ԴՈՒՔՍԸ. Այդ պատասխանել չէ, այլ տանջել։

ԱՐՔԱՅՆ. Պատճառը ձեր Պիւսին եղաւ։

ԴՈՒՔՍԸ. Է՜հ ուրեմն . . . չորս մարդիկ զրգուեց։

ԱՐՔԱՅՆ. Ցանո՛ւն Ցիսուսի։ Ձեզ կ'ըսեմ թէ ես գրգռեցուցիչ խօսքեր լսեցի, Սէն-Լիւքի պարահանդէսին մէջ . . . . արդէն անոնք միաբանած էին։

ԴՈՒՔՍԸ. (խոնարհաբար) Ջանի չեմ պաշտպաներ։

ԱՐՔԱՅՆ. Աւելի լաւ պիտի ըլլար։ Դորա սոսկալի մէկ

օրինակը ես պիտի տամ . . . ։ Ա՛հ , դուք բարեկամներ ունիք որք իմիններս կ'ըսպաննեն ։

ԴՈՒՔՍԸ․ Դուք ալ շատ բարեկամներ ունիք որք զիս կը նախատեն , զիս՝ ձեր եղբայրը , որուն բաց 'ի ձեր վեհափառութենէն ոչ ոք իրաւունք ունի Գաղղիոյ մէջ ընդ ակամբ նայելու ։

ԱՐՔԱՅՆ․ Ինչ ըսել է ։

ԴՈՒՔՍԸ․ Ըսել է որ ձեր վեհափառութիւնը առանց արգարութեան և անպատուութեամբ զիս կ'ընկճէ ։ Դպյթակղեցուցիչ տեսարան մը երէկ տեղի ունեցաւ , ահա ուրիշ մ'ալ այսօր ։ Ձեր արքունեաց օթեանը այլ ես անտանելի է ։

## ՏԵՍԻԼ Գ․

### ՆՈՅՆՔ , ՇԻՔՕ

ՇԻՔՕ․ (Արտաքին դռնակողը ցուցնելով)։ Լաւ ուրեմն . կրարու հետ կը վիճիք . . . երկու եղբայրնե՛ր , սիրո՛ւն բան ։

ԱՐՔԱՅՆ․ Լռէ՛ ։

ՇԻՔՕ․ Փոքրիկ Հենրիս , դու աւելի մեծ ես , պէտք է որ աւելի իրաւացի ըլլաս և դու պզտիկը լռցնել կուտաս ։

ԴՈՒՔՍԸ․ (Վերադառնալով) Ա՛հ ։

ՇԻՔՕ․ Այնքան աղնիւ է . . . . ։ Ես չեմ ուզեր որ զինքը նեղեն , ե՛ս , անանկ չէ՞ Փրանսուա , իմ նազելիս ։

ԴՈՒՔՍԸ․ Վեհափա՛ռ տէր . . . . իմ արձակուրդս , կ'աղաչեմ . . . . իմ ազատութիւնս , աքսոր 'ի հարկին ։

ԱՐՔԱՅՆ․ Զձեզ վար չեմ դներ ։ (դուռնէն դուրս կ'ելնէ)։

ՇԻՔՕ․ (յուզուած , զինքը վար կը դնէ) Կը մեկնի՞ ։

ԱՐՔԱՅՆ․ Այո Պիւսին , այն Պիւսին , եթէ ըունէի ։

ՇԻՔՕ․ Զանի սպարապետ մը կ'ընէիր , հէ՛ ։

ԱՐՔԱՅՆ․ Զանի չորս կտոր ընել կուտայի և զքեզ ալ 'ի միասին ։

ՇԻՔՕ․ Այերախտ . . . ։ Դու չորս սիրելիներ ունիս որոնք հասարակաց անէծքն են , չորս պղրուկներ , չորս տա-



րափոխիկ ախտեր որոնք զքեզ Հերովդէս և Հելիոկապալ անուանեցին և որ օր մը քու գահդ պիտի կործանեն . . . արդ ուրեմն արի մարդ մը զքեզ այս չորս գարշելիներէն կ'ազատէ և դու զանիկա չորս կտոր ընել տալ կ'ուզես ։ Կը նախանձոչե՞ս ։

ԱՐՔԱՅՆ․ Թշուա՛ռ ։

ՇԻՔՕ․ Դու մէկ հատիկ եղբայր մը ունիս , նախատիպ եղբայր մը , երկու քթով եղբայր մը . . . դու զանի կ'աքսորես ։

ԱՐՔԱՅՆ․ Պիտի լռե՞ս , միջամտ դա՛ւ . . . անխծեալ խշամեղու ։

ՇԻՔՕ․ (ոգեւորուելով) Ո՞ւր պիտի երթայ այս բարի Փրանսուան ։

ԱՐՔԱՅՆ․ Սատանային բերա՛նը երթայ, ա՛ն ալ , դո՛ւ ալ ։

ՇԻՔՕ․ Հէնրի տը Կիզ , մեծն Հէնրին զքեզ կը ձանձրացընէր . . . դու զանի բանակին հրամանատար կարգեցիր . . . իւր եղբայրը զքեզ անհանգիստ կ'ընէր . . . զանի ալ Հէնրի տը Կիզի քով խրկեցիր . . . ։ Ցաղթանդամ Մայէն զքեզ կը նեղէր , զանի կարտինալին քով խրկեցիր . . . Վերջապէս քու Ճանկիդ մէջ առիր իրենց պզտիկ կաղ քոյրը , այն դքսուհին որ իր փոքրիկ ոսկեղէն մկրատները միշտ սրելով շարունակ կը խնդայ , գիտե՞ս . . . անոնցմով քու մազերդ կտրել կ'ուզէ . . . վերջապէս զանիկա ալ աւջի երրեակը գտնելու խրկեցիր ։ Եւ ահաւասիկ քու Փրանսուա եղբայրդ ալ զքեզ կը ձանձրացընէ և դու զինքը կը խրկես . . ։ Ուրեմն դու բոլոր աշխարհք խրկե՞լ կ'ուզես ։ Լաւ ուրեմն , Թշուառական փոքրիկ Հենրիս, դու նրբամիտ քաղաքագէտ մ'ես , կարծեմ թէ իրաւունք ունիս ։ Թո՛ղ ինձ որ բոլոր այս մարդիկը 'ի մի հաւաքեմ . . . ա՛հ , ա՛հ, միենոյն աւթիւ իրենց խրկէ քու նոր որսորդապետդ , այն Մոնսորօն , քու եղբօրդ դժոխային հոգին , իրենց խրկէ նաև այն հինգ հարիւր հազար Բարիզցիները որոնք առաւօտէն մինչև երեկոյ զքեզ կ'երգեն . . . կեցցե՛ր , փոքրիկ Հենրիս , բոլոր Գաղղիան անոնց խրկէ , և միայն երկուքս առանձին միանք ։

ԱՐՔԱՅՆ․ (կոչելով) Պարոն Նանսէ՛յ ։

ՇԻՔՕ․ Ահա , պատուական տապկած ձուկ մ'ալ ։

## ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ՅԵ ՆԱՆՍԷՑ

ԱՐՔԱՅՆ. Աղաչեցէ՛ք եղբօրս՝ որ ինձ հետ չխօսած, Լուվըրէն չելլէ ։

ՆԱՆՍԷՑ. Վեհափառ տէր, պարոն Դուքսը հիմայ մեկնեցաւ ։

ԱՐՔԱՅՆ. Վազեցէ՛ք, հասի՛ք իրեն, և զինքը ինծի բերէ՛ք ։

ՆԱՆՍԷՑ. Այո՛ վեհափառ տէր ։

ԱՐՔԱՅՆ. (թղթապանակ մը) Պարոն տը Կիզի խրկած անձը ո՞ւր է ։

ՆԱՆՍԷՑ. Հոն ձեր վեհափառութեան կամաց կ'ըսպասէ . . . ։ (դուրս կ'ելնէ)

ԱՐՔԱՅՆ. Կ'երթամ ։

ՇԻՔՕ. (ամէնքէն պահելով անոր ետեւէն երթալով) Բայց ճաշակեցէ՛ք ։

ԱՐՔԱՅՆ. Ա՛հ այն Պիւսին . . . ։ (քովէ որոնել կ'անցնի)

ՇԻՔՕ. Փոքրիկ Հենրիս . . .

## ՏԵՍԻԼ Ե.

ՇԻՔՕ, ՍԷՆ-ԼԻՒՔ (յետոյ Ժաննը)

ՍԷՆ-ԼԻՒՔ. (երեւելով) Փոթորիկը անցաւ . . . Շիքօ՛ ։

ՇԻՔՕ. (դառնալով) Հէ՛ ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Թո՛ղ որ քեզ շնորհակալ ըլլամ, բարի մէկն ես դու ։

ՇԻՔՕ. Ե՞ս ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Այս գիշերուան ազատութիւնս ինձ դարձընողը դու էիր . դու էիր որ գիս կնոջս խրկեցիր, երբոր թա-



գաւորը ինձ դէշ խաղ մը կը խաղար ։

ՇԻՔՕ. Օրինակի՛ համար ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ո՛հ, քու ըլլալդ գուշակեցի . . . քու վեհանձն բարեկամութեանդ համար շնորհակալ եմ քեզ ։

ՇԻՔՕ. Ես ձեզ համար ամենափոքր բարեկամութիւն մ'անգամ չունիմ ։

ԺԱՆՆԸ. Անոր համար՝ կարելի է, բայց Ժաննը տը Պրիսաքի համար, Տիանա տը Մերիտորի ընկերուհւոյն համար, որն որ ձեր մանկութեան բարեկամուհին էր, զոր ձեր քոյրը կ'անուանէիք և որուն վրայ եղբօր մը նման կը հսկէիք . . . ։ Ո՛հ եթէ հոն ըլլա՛ր ։ Եթէ զինքը տեսնէիք իւր գեղեցիկ սև աչերով, իր ոսկեգոյն մազերով, և իւր հրեշտակային ժըպիտով՝ այսպէս անոր ալ կընակնիդ պիտի գարձընէի՞ք ։ Ո՛հ ըղձեզ աղէկ կը ճանչեմ ։

ՇԻՔՕ. Օ՛ն ուրեմն ։

ԺԱՆՆԸ. Ի՛նչ, դուք միթէ այն խեղճ որբը չէ՞ք, զոր պարոն Օկիւսթէն իւր քովը առնելով, մեծցուց և սիրեց ։

ՇԻՔՕ. Բառ մը չեմ հասկնար ձեր ըսել ուզածէն ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Օ՛ն, թագաւորը ատոր նկատմամբ երէկ կը խօսէր ։

ՇԻՔՕ. Թէոր թագաւորին բոլոր ըսածներուն ականջ դընես . . . ։ Կեցիր՝ Սէն-Լիւք, դու շատ անհաճոյ մէկն ես, հանդարտ թո՛ղ գիս որ նախաճաշեմ ։

## ՏԵՍԻԼ Զ.

ԱՐՔԱՅՆ, ՆՈՒԻՐԱԿ ՄԸ, (յետոյ) ՆԱՆՍԷՅ.

ԱՐՔԱՅՆ. (Պարոն տը Կէյլէն խրկուած պաշտօնէէն) Վերջապէս իմ հօրեղբօրորդւոյս տը Կիզի կ'ըսէք որ Բարիզի մէջ իրեն պէտք չունիմ . բայց Շարիթէի պաշարման մէջ իմ բանակիս գլուխը կենալուն մեծ պէտք ունիմ ։ Թո՛ղ իմ հրամաններուս ըսպասէ և ուրիշ տեղ չ'երթայ . . . իմ ողջոյններս իրեն մատուցէք.

երթայք բարեաւ, պարոն ։ (Դուռներուն քովէն ելլելով կը մեկնի . — Նանսէյ կ'երթայ)

ԱՐՔԱՅՆ. (առ Նանսէյ) Արդ ուրեմն ։

ՆԱՆՍԷՅ. Պարոն տ'Անժու դուքսը մեկնելու կը պատրաստուէր , և ձեր վեհափառութեան հրամանին վրայ՝ կը վերադառնայ ։

ԱՐՔԱՅՆ. Լաւ . . ։ Հիմա միթէ պարոն Պիւսիէն լուր մը կա՞յ։

ՆԱՆՍԷՅ. Բայց ո՛չ , վեհափառ տէր , կը կարծուի թէ մեռած է ։

ԱՐՔԱՅՆ. Ես կարծել չեմ ուզեր , գիտնալ կ'ուզեմ ։ Այս կերպով մարդ մի աներևոյթ չըլլար ։ Պարոն Պիւսին փնտռել տուէ՛ք մեռած կամ կենդանի , կ'իմանա՞ք ։

## ՏԵՍԻԼ Է.

### ՆՈՅՆՔ , ՊԻՒՍԻ.

ՊԻՒՍԻ. Վեհափառ տէ՛ր ։

ԱՄԷՆՔԸ. Պիւսի՜ ։

ԱՐՔԱՅՆ. Ինքը՛ , արդարև՛ ։

ՊԻՒՍԻ. Ձեր վեհափառութիւնը կարծեմ իմ վրայ անհանգիստ ըլլալու պատիւը կ'ընէ ինձ ։

ԱՐՔԱՅՆ. Դուք ձեր մահուան համբաւը թողուցիք որ տարածուի . . . և ինքզինքնիդ կը ծածկէիք ։

ՊԻՒՍԻ. Ինքզինքս չէի ծածկեր՝ վեհափառ տէր , քանի որ աւասիկ եմ ։

ԱՐՔԱՅՆ. Միշտ կը սնդէ՛ք որ այս գիշեր ձեր վրայ յարձակեցան ։

ՊԻՒՍԻ. Ես բան մը չհաստատեցի , վեհափառ տէ՛ր ։

ԱՐՔԱՅՆ. Ուրեմն, գանգատելու կուգա՞ք։

ՊԻՒՍԻ. Ինչու համար պիտի գանգատիմ, վեհափառ տէր . վրէժս լուծելու համար ունիմ դեռ այն երկու ձեռքերը՝ որոնցմով դիս պաշտպանեցի ։



ՇԻՔՕ. (Արքայէն) Կ'ուզէի որ ասոր նման հարիւր քարեկամ ունենայիր ։

## ՏԵՍԻԼ Ը.

### ՆՈՅՆՔ , ԴՈՒՔՍԸ (մտնելով)

ԴՈՒՔՍԸ. Պիւսի՜ . . . սիրելի՛դ իմ Պիւսի ։ (առնէ կը փրկէ)

ՊԻՒՍԻ. (առնէ եւ ծնելով) Ներեցէ՛ք՝ տէր , զիս ցաւցուցիք։

ԴՈՒՔՍԸ. Ինչ ունիս ուրեմն . . . պատասխանէ՛ ։

ԱՐՔԱՅՆ. Լաւ , լաւ ։ Ֆրանսուա, ձեզ խօսք ունիմ ։ Պարոն Պիւսի, մեք այս գործը պիտի կարգադրենք ։ Հոս ըսպասեցէ՛ք ինձ ։ Եկէ՛ք Ֆրանսուա ։ (Ներս կը մտնեն)

## ՏԵՍԻԼ Թ.

### ՆՈՅՆՔ , (բաց 'ի Արքայէն և Դուքսէն)

ԺԱՆՆԸ. Ա՛հ՝ պարոն , ինչու երէկ ամուսնոյս խրատին չհետևեցաք ։

ՊԻՒՍԻ. Տիկին, իրբեւ շատ անհնազանդ եմ , բայց երբէք ապերախտ չեմ ։ (ՍԷՆ-ԼԻՔ-ին ձեռքը կը սեղմէ , և Ժաննըին կը համբուրէ) ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Գէթ անգամ մը մեզ հաւատացէք , բժշկութիւն պէտք չէ . փոխանակ թագաւորին սպասելու , որն որ զայրացած է , դուրս ելէ՛ք և ինքզինքնիդ ապահովութեան մէջ դրէ՛ք ։

ՊԻՒՍԻ. Շնորհակալ եմ . . . բայց ասի պարոն Շիքօի խորհուրդն է ։ Ներեցէ՛ք որ իրեն հարցընեմ (գալ առ Շիքօ) . Պարո՛ն, դուք ինձ հետ վեհանձնաբար վարուեցաք ։ Չգիտեմ թէ ինչ նպատակաւ այն տեղոսը ինձ ցուցուցիք , բայց այսօր առողջութիւնս ձեզ կը պարտիմ , և որովհետև

կեանքս այնքան բանի մը տեղ դրած չէի երբէք, ձեզ կը մատուցանեմ իմ շնորհակալիքս ։

ՇԻՔՕ. Լաւ ուրեմն. եթէ կեանքերնիդ այնքան պահել կ'ուզէք, ինքզինքնիդ խնամեցէք՝ կամս, որովհետեւ դունատած էք։

ՊԻԽՍԻ. Ե՞ս ։

ՇԻՔՕ. Հապա աՀաւասիկ արեան բիծ մը որ ձեր մետաքսեայ բաճկոնին մէջ տեղէն դուրս կ'ելնէ, ծածկեցէք զայն՝ եթէ զձեզ այս գիշեր չվիրաւորուած կարծեցընել կ'ուզէք ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Վիրաւո՛ր, վիրաւորուա՞ծ է ։

ԺԱՆՆԸ. Աստուա՛ծ իմ ։

ՊԻԽՍԻ. Բան մը չէ տիկին, միայն դաշոյնի հարուած մը։

ԺԱՆՆԸ. Ա՛հ ։

ՇԻՔՕ. Ո՛րքան բարեբաղդ է ։

ԺԱՆՆԸ. Բարեբա՛ղդ ։

ՇԻՔՕ. Այս վէրքը զինքը թագաւորին պաշտել պիտի տայ ։

ԺԱՆՆԸ. Է՛հ, միթէ աւելի լաւ չէ՞ր թագաւորէն նուազ պաշտելի և քիչ մ'ալ աւելի ձեռք չգպցուած ըլլալ ։

ՊԻԽՍԻ. Ա՛հ՝ տիկին, այս շատ երջանիկ սրոյ հարուած մ'է, զանի կայսրութեան մը հետ չեմ փոխարինէր ։ Եթէ գիտնայիք թէ անոր ինչ կը պարտիմ ։

ԺԱՆՆԸ. Ի՞նչ ուրեմն ։

ՊԻԽՍԻ. Երազ մը . . .

ՍԷՆ-ԼԻՒՔ. Տեսնե՛նք ։

ՊԻԽՍԻ. Այո՛ . . . սիրեցեալ բարեկամ մը ինձ իմացուցած էր որ Թուրնէլի պանդոկէն զգուշանամ . . . ։ Հոն իմ վըրայ յարձակեցան ։ Ես մէկ քանի անձինք կը հաշմանդամէի, որոցմէ մին՝ որ կարծեմ պարոն Գէլիւս էր, ձեռաց հակառակ կողման ամենաճարտար հարուածով մը կողերս ներկեց ։

ՇԻՔՕ. Ձքեզ վիրաւորողը մեր սիրելին՝ Գէլի՞ւսն է ։ Աղէ՛կ գործ ։

ՊԻԽՍԻ. Զիս սպաննուած, ես վիրաւորեալ, վիճակս կը ծանրանար, երբոր չգիտեմ ինչպէս ըլլալով՝ դրան մը կրթընած տան, որ ետ երթալով՝ ինձ անցք մը բացաւ. զանի թըշնամեաց դէմ գոցեցի և անոնցմէ կ'ազատէի ։ Բայց հազիւ թէ



թաշկինակս վէրքիս վրայ սեղմելու ժամանակ ունեցայ, արիւնս զիս կը խեղդէր . . . ։ Շատ հաւանական է որ մարեցայ ։

ՇԻՔՕ. Եւ երա՞զը ։

ԺԱՆՆԸ. Աւա՛ղ. մինչեւ հիմայ տխուր իրականութիւն մը միայն կը տեսնեմ ։

ՊԻԽՍԻ. Սպասեցէ՛ք ։ Հո՛ն երազը կ'ըսկսի ։ Երազեցի որ ոսկեգոյն ծաղիկներով ճերմակ դամասկեան կերպասէ անկողնոյ մը վրայ պառկած էի, կնոջ մը կենդանագրին դէմը ։ Ո՜հ, ինչ կին . . . յանկարծ կենդանագիրը սկսեց դէպ 'ի առ իս քալել և անկողնոյս վրայ ծռիլ ։ Նորա խարտեաշ և ոսկեթել մազերը տեսայ որոնք ծալ 'ի ծալ իւր պաշտելի ուսերուն վրայ կ'իջնէին, սեւ և խորին աչքեր ունէր, ուր արտասուք մը կը դողդողէր, շրթունքը կարծես աղօթք մը կը մրմնջէին, իր ողորկ և սարսուռն մորթին տակէն արեան շրջագայութիւնն կը նշմարէի ։ Ո՛չ, նա կին մը չէր, անոր նման գոյութիւն ունեցող մը չկայ . . . ո՛չ, իւր երկայն, ճերմակ և կապոյտ զգեստին տակ ես այն հրեշտակներէն մին կը տեսնէի, որոնք Սրբոյն Մարիամայ բոլորտիքը կը թեւապարին կամ Ամենակալին առաջ կը ծնրադրեն ։

ՇԻՔՕ. Շատ բաղդաւոր էք դուք, այսպիսի երազներ տեսնելնուդ համար . . . և յետո՞յ ։

ՊԻԽՍԻ. Յետոյ, զինքը այնքան սքանչելի-կերպով գեղեցիկ կը գտնէի, որ ուզեցի իւր ոտներուն փարիլ, բայց շարժում մ'անգամ չյաջողեցայ ընել ։ Սկսեցի տաղաչափօրէն սիրոյ ողջոյն մը մտածել . . . մտածել կ'ըսեմ, որովհետեւ այլ ես բառ մը արտասանել չյաջողեցայ . . ։ Երկրորդ անգամ ես մարած էի ։

ԺԱՆՆԸ. Սակայն, 'ի վերջոյ ճանաչողութիւննիդ գտա՞ք ։

ՊԻԽՍԻ. Անշուշտ, կոմուհի ։

ԺԱՆՆԸ. Լաւ ուրե՞մն ։

ՊԻԽՍԻ. Լաւ ուրեմն, այլ ես ոսկեճամուկ ճերմակ դամասկեան անկողնոյն վրայ չէի . . . կապտազգեստ հրեշտակի մը ընկերութեամբ. այլ, Թանփլ թաղին մէջ խրամի մը եզերքը՝ պառաւ մանկաբարձի մը և նոյն թեմին դէր երգիչի մը մէջ տեղը կը գտնուէի, որ զիս իր բազկաց մէջ առաւ և իմ ասպարանքս

տարաւ ։

ՇԻՔՕ․ Ժամը քանի՞ն ։

ՊԻՒՍԻ․ Առաւօտուն ։

ՇԻՔՕ․ Տակառի նման կլոր երգի՞չ մ'էր ։

ՊԻՒՍԻ․ Այո՛, գինքը կը ճանչէ՞ք ։

ՇԻՔՕ․ Կորէնֆլօ բարեկամս է ։

ՊԻՒՍԻ․ Այո՛ , Կորէնֆլօ . . ։ Ծոմ պահած չէր ։

ՇԻՔՕ․ Ըսէք պարզապէս որ գինով էր ։

ՊԻՒՍԻ․ Արդ ուրեմն կոմսուհի , կ'երևի թէ երազս գձեզ մտածել կուտայ ։

ԺԱՆՆԸ․ Այն ոսկեթել մազերը . . . այն սև աչերը . . . վարդի թերթերու նման մորթ մը . . . ։

ՊԻՒՍԻ․ Ո՛հ տիկին , դուք փափկութեան դրախտին մէջ փոքրիկ շրջան մը ըրած էք, մինչ իմ հրեշտակս կը ճանչէ՞ք ։

ԺԱՆՆԸ․ Աստր նման կենդանագիր մը կը ճանչեմ , հարցուցէ՛ք պարոն Շիքօի ։

ՊԻՒՍԻ․ Ցիրաւի՞ ։

ՇԻՔՕ․ Տիկինը կատակ կ'ընէ ։

ԺԱՆՆԸ․ Ո՛չ երբե՛ք, ոչ երբէք ։

ՊԻՒՍԻ․ (առ Ժաննը) Դուք կը ճանչէ՞ք այն աչերը . . . այն բալուկը , այն բերանը ։

ԺԱՆՆԸ․ Եթէ Անժուի խարերը ըլլայինք՝ ձեզ » այո՛ » պիտի ըսէի . բայց քանի որ ձեր խօսքը Սէնթ-Անթուանի արուարձանին վրայ է՝ ոչ » այո՛ » կ'ըսեմ, և ոչ ալ » ո՛չ » . . . դուք երազեր էք, պարոն ։

ՇԻՔՕ․ Ձեր գործոց ամենէն ստոյգը՝ ձեր սրոյն հարուածն է ։

ՊԻՒՍԻ․ Ուրեմն, ինձ բան մը բացատրեցէ՛ք ։

ՇԻՔՕ․ Բացատրենք ։

ՊԻՒՍԻ․ Ես մէրքս թաշկինակովս գոցած էի . . . զայն ձեզ ըսի , այնպէս չէ՞ ։

ՇԻՔՕ․ Այո՛ ։

ՊԻՒՍԻ․ Լաւ ուրեմն , երբ արթնցայ՝ թաշկինակս չգտայ ։

ՇԻՔՕ․ Ո՛չ, Կորէնֆլօ՛ , օ՛ն անցր ։

ՊԻՒՍԻ․ Ահաւասիկ ինչ որ վիրացս վրայ կար ։ (բաճկոնէն Թաշկինակ մը կը հանէ և ցոյց կուտայ)



ԺԱՆՆԸ․ Անուշաբոյր թաշկինակ մը . . . ասղնագործեալ . . ։

ՊԻՒՍԻ․ Տ և Մ նշանագիրներով ։

ԺԱՆՆԸ․ (աշխուժով) Տ և Մ ։ ։

ՇԻՔՕ․ (աշխուժով) Ա՛հ ։

ԺԱՆՆԸ․ Արդեօք Բարի՛զ կը գտնուի ։

ՊԻՒՍԻ․ Հո՛ն է, կոմսուհի ։

ՇԻՔՕ․ Անկարելի է ։

ԺԱՆՆԸ․ (առ Շիքօ) Այնպէս չէ՞ ։

ՊԻՒՍԻ․ (առ Շիքօ) Ի՞նչ բան անկարելի է ։

ՇԻՔՕ․ (առ Պիւսի) Որ Կորէնֆլօ ասոր նման թաշկինակ մը ունենայ ։

ԺԱՆՆԸ․ (ինքնիրեն) Նա այսպէս չպիտի թողուր . . ։

ՊԻՒՍԻ․ (առ Ժաննը) Ո՞վ . . . ո՞վ չպիտի թողուր . . . կոմսուհի , մարմարիոն մ'էք . . . ։ Պարոն Շիքօ, քաջալերուեցէք . . . գթացէ՛ք իմ վրայ երկուքդ ալ , սիրահար մ'եմ , խելքս թռցուցած եմ, խենթեցած եմ ։

ՇԻՔՕ․ Տ մը և Մ մը . . . ։ (Մանկլաւիկ մը Ժաննի նամակ մը կը բերէ)

ՄԱՆԿԼԱՒԻԿԸ․ Տիկին Սէն-Լիւք կոմսուհւոյն համար ։

ՊԻՒՍԻ․ Ո՛հ , բայց ես գինքը պիտի գտնեմ ։

ԺԱՆՆԸ․ (որ նամակը կարդայ) Ինքն 'ի Բարի՛զ , ահա ըսքանչելիք մը ։ (նամակը Սէն-Լիւքի կուտայ)

ՍԷՆ-ԼԻՒՔ․ (կարդալով) » Ժաննը աղջիկս , քեզ կ'սպասեմ , եկո՛ւր ։ — Պարոն տը Մերիտոր » ։

ՇԻՔՕ․ (մեկնած) Մերիտո՛ր ։

ՍԷՆ-ԼԻՒՔ․ Երթա՛նք, կոմսուհի , զան սպասել մի տաք ։

ՊԻՒՍԻ․ Զիս կը թողո՛ւք . ա՛հ . . ։

ԺԱՆՆԸ․ 'Ի կրկին տեսութիւն . . . ձեր ունեցած ատտգանիշին վրայ կրնաք պարծենալ ։ (Սէն-Լիւքի հետ դուրս կ'ելնէ) ։

ՇԻՔՕ․ (մեկնած) 'Ի Բարի՛զ ։ (դուրս կ'ելնէ) ։

## ՏԵՍԻԼ Ժ․

ՆՈՅՆՔ, ԼԻՎԱՐՕ, ՐԻԲԷՐԱՔ, ԱՆԴՐԱԿԷ, ՊԱԼԱՏԱԿԱՆՔ, (յետոյ) ՆԱՆՍԷՅ։

ԱՆԴՐԱԿԷ․ Պիւսի՛, քա՛ջդ իմ ։

ԼԻՎԱՐՕ․ Կ'ըսկսէի՛նք գքեզ ողբալ։

ԱՆԴՐԱԿԷ․ Բոլոր Բարիզ տակնուվրայ ըրի․ արդ ուրեմն կ'երևի թէ թագաւորականներէն պրծար։ Բարիզցիք զքեզ յաղթանակաւ տանելու համար քեզ կ'ըսպասեն ։

ՊԻՒՍԻ․ Սատանա՛յ․ հիմայ ժամանակը չէ՛ ։

ՆԱՆՍԷՅ․ (Աբէտային դուռը բախելով) Վեհափառ տէ՛ր, պարոն Մոնսորօ կոմսը ձեր վեհափառութեան ունկնդրութեան կ'սպասէ։

ՁԱՅՆ ԱՐՔԱՅԻՆ․ Թո՛ղ ներս մտնէ ։ (պալատականք խորապէս կը մեծարեն)

ՆԱՆՍԷՅ․ Նե՛րս մտուցէք պարոն Մոնսորօ կոմսը ։ (ընդհանուր հետաքրքրական յուզմունք)

ԱՆԴՐԱԿԷ․ Վերջապէս պիտի տեսնենք զինքը ։ (դուռը յամրաբար ...)

ՊԻՒՍԻ․ Տեսնե՛նք ։

## ՏԵՍԻԼ ԺԱ․

ՆՈՅՆՔ, ԵՒ ՄՈՆՍՈՐՕ

ԴՌՆԱՊԱՆԸ․ (բարձր ձայնիւ) Պարոն կոմս տը Մոնսորօ՛ ։

ՆԱՆՍԷՅ․ (առ Մոնսորօ) Ինձ հետևեցէ՛ք, պարոն։ (Դուռը գոցուի կ'երևի)

ՄՈՆՍՈՐՕ․ Տէր, Ձեր Վսեմութեան գիտեմ թէ ինչ կը պարտիմ և պիտի ջանամ պարտքս հատուցանել ։

ԴՈՒՔՍԸ․ Մտէ՛ք, պարոն որսորդապետ ։ Եղբայրս իւր լաւագոյն գիմօք ձեզ կ'ըսպասէ ։ (Դուքսն ու Մոնսորօ Աբէտային սենեակը կը մտնեն) ։



## ՏԵՍԻԼ ԺԲ․

ՆՈՅՆՔ, բաց 'ի ԿՈՄՍԷՆ ԵՒ ԴՈՒՔՍԷՆ, ՊԱԼԱՏԱԿԱՆՔ խոլը ։

ՊԻՒՍԻ․ Օ՜հ, ինչ անձռունի դէմք․․․ ահա ձեր պաշտպանած անձինքը ։

ԱՆԴՐԱԿԷ․ Ի՛նչ տգեղ մէկն է այս Մոնսորօն ։

ՊԻՒՍԻ․ Զարհուրելի՛․․։ Տարօրինակ բան, չգիտեմ ինչո՞ւ համար կ'զգամ թէ այս մարդուն դէմ պիտի սպառազինիմ ։

ՐԻԲԷՐԱՔ․ Անոր համար աւելի գէշ ։

ԼԻՎԱՐՕ․ Է՛հ սատանայ․․․ տափ խրտուիլակ մ'է ։

ՊԻՒՍԻ․ Զինքը կը ճանչնա՞ս ։

ԼԻՎԱՐՕ․ Խիստ շատ․․․։ Նորա հողերներուն մօտ երկիր մը ունիմ ։

ՊԻՒՍԻ․ Ինչո՞ւ համար խրտուիլակ մ'է նա ։

ԼԻՎԱՐՕ․ Մի՛տ դի՛ր․ գիշեր մը կը վերադառնայի․․․

ԱՆԴՐԱԿԷ․ Պրրր՜․․․․ այդ սոսկալի սկիզբ մ'է ։

ՊԻՒՍԻ․ Թողէ՛ք որ վերջացընէ ։

ԼԻՎԱՐՕ․ Ըսեմ, ասկից գրեթէ վեց շաբաթ յառաջ գիշեր մը Մերիտորի անտառներուն մէջէն Անդրակէ հօրեղբօրս տունէն կը վերադառնայի ։ Յանկարծ կեղեքիչ աղաղակ մը կը լսեմ և ճամբու մը ծայրը սև նժոյգի մը վրայ հեծեալ մարդ մը կը նշմարեմ․․․։ Այս մարդը թամբին առջևի կողմը տապալեալ կնոջ մը աղաղակները կը խեղդէր իւր ձեռքով ։ Իմ որսի հրացանս քովս էր և այս մարդը պիտի սպաննէի․․․ բայց անտառին մէջ աներևոյթ եղաւ ։

ՊԻՒՍԻ․ Եւ յետո՞յ ։

ԼԻՎԱՐՕ․ Յետոյ հարցուփորձ ըրի և իմացայ որ այն մարդը պարոն Մոնսորօն է եղեր։

ԱՆԴՐԱԿԷ․ Բայց կին մը առևանգելը՝ հասարակ բան մ'է ։

ՐԻԲԷՐԱՔ․ Այո՛, բայց կը թողուն զանոնք որ պօռան ։ (ծիծաղ)

## ՏԵՍԻԼ ԺԳ․

ՆՈՅՆՔ ԵՒ ԴՈՒՔՍԸ

ԴՈՒՔՍԸ․ Հոս կը խնդան ։

ՊԻԽՍԻ․ Հաւատացէ՛ք այնպէս է , Վսեմափայլ Տէր ։

ԴՈՒՔՍԸ․ Եւ ինչ բանի վրայ ։

ՊԻԽՍԻ․ Որսորդապետին ձեզ մատուցած ծառայութեանց վրայ ։

ԴՈՒՔՍԸ․ Զանոնք գիտե՞ս ։

ՊԻԽՍԻ․ Պիտի տեսնէք ։ Կ'ըսեն թէ նա է որ Ձեր Վըսեմութեան համար սև նժոյգով մը կիներ կ'առևանգէ ։

ԴՈՒՔՍԸ․ Պարոն Պիւսի՛ ։

ՊԻԽՍԻ․ (ինքնին) Կարծես թէ աղէկ բռնեցի ։

ԴՈՒՔՍԸ․ (մօտենալով) Ի՛նչ , Պիւսի՛ ։

ՊԻԽՍԻ․ Վսեմափայլ Տէ՛ր ։ (Դուքսը Բարբերոյին կը խնդայ) Կեցցէ՛ք ։ Կ'երևայ թէ խօսքս ձեզ ծիծաղաշարժ երևցաւ ։

ԴՈՒՔՍԸ․ Քու տեղեկութեանցդ վրայ կը խնդամ . . . զանոնք ուսկի՞ց կ'առնուս ։

ՊԻԽՍԻ․ Միրիտօրի անտառներէն (Դուքսը շարժում մը կ'ընէ . – Պիւսի մեկուսի) Լիվարօի տեսածին մէջ գուքոն ալ կը գտնուի կիսավին ։

ԴՈՒՔՍԸ․ Միթէ սիրահարելու իրաւունքը մեզ պիտի մերժէի՞ր ։

ՊԻԽՍԻ․ Բայց . . . ։

ԴՈՒՔՍԸ․ Եւ նախանձոտ ըլլալո՞ւ ։

ՊԻԽՍԻ․ Ըստ ձեր հաճոյից , Վեհափայլ Տէր ։

ԴՈՒՔՍԸ․ Լաւ ուրեմն , ինձ ծառայութիւն մը ըրէ՛ ։

ՊԻԽՍԻ․ Ձեր որսորդապետին ըրածի՞ն նման ։

ԴՈՒՔՍԸ․ Ուշ դի՛ր ։ Եկեղեցւոյն մէջ կին մը նշմարեցի որուն դիմաց գծերը ինձ ուրիշ կին մը յիշել տուին , կին մը՝ զոր մանկդին սիրով սիրեցի . . . և միշտ պիտի սիրեմ ։

ՊԻԽՍԻ․ Ունկնդիր եմ , Վեհափայլ Տէր ։



ԴՈՒՔՍԸ․ Կ'ըսուի թէ նա պարկեշտ և գեղեցիկ է , բայց . . . . ։

ՊԻԽՍԻ․ Բայց դուք ատոնց չէք հաւատար ։

ԴՈՒՔՍԸ․ Իմացայ՝ որ մարդ մը գիշերները գաղտագողի նորա տունը կը մտնէ ։

ՊԻԽՍԻ․ Ա՛հ , ա՛հ . սիրահա՞ր մը . . . ամուսի՞ն մը . . . ։

ԴՈՒՔՍԸ․ Ահա այդ կ'ուզէի գիտնալ ։

ՊԻԽՍԻ․ Որո՞ւ միջոցաւ , ինձմո՞վ ։

ԴՈՒՔՍԸ․ Կը հաճի՞ս այնմ ։

ՊԻԽՍԻ․ Այդ կինը լրտեսելո՞ւ . ես . . . . ։

ԴՈՒՔՍԸ․ Այն մարդուն վրայ հսկելու ։

ՊԻԽՍԻ․ Լրտեսական արհեստ մը . . . է՛հ Վեհափայլ Տէր , դուք պարոն Մոնտորոն ունիք ։

ԴՈՒՔՍԸ․ Բայց Պիսսի , գուցէ սուր քաշել հարկ ըլլայ ։

ՊԻԽՍԻ․ Այդ յանձնարարութիւնը պարոն որսորդապետին տալու համար՝ ալ աւելի պատճառ մը ։ Նա ամէն ինչ ընելու վարձն առած է ։

ԴՈՒՔՍԸ․ Կը մերժե՞ս . . . դու , իմ ծառայս ։

ՊԻԽՍԻ․ Ծառայութեան մէջ կնոջ մը անիրաւութիւն ընել չկայ . . ։ Եւ ասկից զատ՝ ես վաստակաբեկ և վիրաւորեալ եմ ։

ԴՈՒՔՍԸ․ Լաւ . . . Այն լրտեսութիւնը անձամբ պիտի ընեմ , ինչպէս որ երեկ քու վրայ յարձակած ժամանակին Օրլէլէի հետ ըրի ։

ՊԻԽՍԻ․ Դուք հո՞ն էիք ։

ԴՈՒՔՍԸ․ Նոյն իսկ հո՛ն ։

ՊԻԽՍԻ․ Ուրեմն այս կինը կը բնակի՞ . . . . ։

ԴՈՒՔՍԸ․ Թուրնէլի պանդոկին դէմը . . . . ։

ՊԻԽՍԻ․ Ա՛հ ։

ԴՈՒՔՍԸ․ Եւ եթէ ինձ դժբաղդութիւն մը պատահի , դո՛ւ զքեզ պիտի յանդիմանես ։

ՊԻԽՍԻ․ Մի՛ երթաք հոն , և ձեզ բան մը չպատահիր ։

ԴՈՒՔՍԸ․ Ո՛հ , նա չափազանց գեղեցիկ է ։

ՊԻԽՍԻ․ Դուք հազիւ թէ զինքը տեսած էք ։

ԴՈՒՔՍԸ․ Իր զմայլելի խարտիշագեղ մազերը նմանը չունին ։

ՊԻԽՍԻ․ Ա՛հ ։

ԴՈՒՔՍԸ. Այն սև աչերը ։

ՊԻՒՍԻ. (ինքնին) Սև՛ ։

ԴՈՒՔՍԸ. Աշխարհիս վրայ անզուգական երեսաց գոյնը, այն գիշու հուռյ մը հասակը ։

ՊԻՒՍԻ. (մէկուսի) Ինքն է ։ (բարձր) Տեսնե՛նք, Վեհափայլ Տէր, զիս կը խանդավառեցնէք ։

ԴՈՒՔՍԸ. Կը ծաղրե՞ս ։

ՊԻՒՍԻ. Խօսքս վկա՛յ ոչ ։ Ըսէ՛ք ինձ ինչ որ պէտք է ընել ։

ԴՈՒՔՍԸ. Միայն պէտք է այն փայտաշէն և սրածայր յարկով տան բոլորտիքը պահուըտիլ, որն որ յարկին տակ կուսական արձան մը ունի ։

ՊԻՒՍԻ. (մէկուսի) Ճիշդ հոն է ։ (բարձր) Եւ յետո՞յ ։

ԴՈՒՔՍԸ. Պիտի հետևիս այն տունը մտնող մարդուն, մինչև որ ո՛վ ըլլալը գտնաս ։

ՊԻՒՍԻ. Բայց նա դուռը պիտի գոցէ ։

ԴՈՒՔՍԸ. Ահաւասիկ բանալին ։

ՊԻՒՍԻ. Տուէ՛ք ։

ԴՈՒՔՍԸ. Պիտի երթա՞ս ։

ՊԻՒՍԻ. Թէ պիտի երթա՛մ, ա՛յս երեկոյ իսկ ։

ԴՈՒՔՍԸ. Կը խոստանա՞ս ։

ՊԻՒՍԻ. Ցանո՛ւն ազնուականութեան ։

ԴՈՒՔՍԸ. Լաւ . . . . . անկնդրութիւնը վերջացաւ . . . Մնա՛յք բարեաւ ։

## ՏԵՍԻԼ ԺԴ.

ՆՈՑՆՔ, ՄՈՆՍՈՐՕ, ՇԻՔՕ

ԴՈՒՔՍԸ. Արդ ուրեմն, գո՞հ էք Թագաւորէն պարոն որսորդապետ ։

ՄՈՆՍՈՐՕ. Զմայլած եմ տէր, շնորհիւ ձեր վսեմութեան գովեստից ։

ԴՈՒՔՍԸ. Ես ձեր որսորդութեան տաղանդին վրայ ճշմարտութենէ զատ բան չըսի ։



ՄՈՆՍՈՐՕ. Այս տաղանդը արքայն խնդրյն փորձել կ՚ուզէ . . . ինձ կը հրամայէ այս գիշեր Փօնթէնըպլօ երթալ՝ ուր վաղուէն յետոյ կ՚ուզէ որսալ ։

ԴՈՒՔՍԸ. Լաւ ուրեմն, մնկնեցէ՛ք ։

ՄՈՆՍՈՐՕ. Անկարելի է՝ Վսեմափայլ Տէր ։

ԴՈՒՔՍԸ, Ինչո՞ւ ։

ՄՈՆՍՈՐՕ. (աւելի ցած) Պարոն տը Կիզ այս առաւօտէն ՚ի վեր Բարիզն է և պարոն տը Մայէն ալ Նիքօլա Տավիտի հետ նոր հասաւ ։

ԴՈՒՔՍԸ. Աւելի ցա՛ծ ։

ՇԻՔՕ. ([illegible]) » Նիքօլա Տավի՛տ » ըսաւ ։

ՄՈՆՍՈՐՕ. Ժամադրութեան տեղին այս գիշերուան համար է, Սէնթ-Ժէնըվիէվի մենաստանին մէջ։

ԴՈՒՔՍԸ. Այս գիշե՛ր ։

ՄՈՆՍՈՐՕ. Ձեր վսեմութիւնը ինձ պատուիրած էր իւր անուամբը խօսիլ. խօսեցայ. պայման ։

ԴՈՒՔՍԸ. Իմ խոստո՛ւմս . . . իմ խոստո՛ւմս . . . ։

ՄՈՆՍՈՐՕ. Իշխանաց տուեալ իշխանի մը խոստումը, տէր ։

ԴՈՒՔՍԸ. Փօնթէնըպլօ երթալու համար վաղուէն առաջ մի՛ մեկնիք ։

ՄՈՆՍՈՐՕ. Եւ այս երեկոյ ձեր վրայ վստահ ըլլա՞նք ։

ԴՈՒՔՍԸ. Այո՛ ։

ՄՈՆՍՈՐՕ. Ժամը տասնին, մենաստանին մէջ։

ԴՈՒՔՍԸ. Ժամը տասնին ։

ՇԻՔՕ. (որ լսեց) Ժամը տասնի՛ն ։

ԴՈՒՔՍԸ. Ահաւասիկ արքայն ։ Հեռացէ՛ք ։

## ՏԵՍԻԼ ԺԵ.

ՆՈՅՆՔ, ԱՐՔԱՅՆ (յետոյ) ՄՆՐԻՏՈՐ.

ԱՐՔԱՅՆ. Արդ ուրեմն, պարոններ, յետ վաղուան Փօնթէնըպլօյի մէջ որսի պիտի երթանք ։

ՁԱՅՆ ՄԸ. Թողէ՛ք որ անցնիմ, կ՚ըսեմ ձեզ: (Յուզմունք և շփոթ շշուկներ)

ԱՐՔԱՅՆ. Ո՞վ է այն, ի՞նչ է այս աղմուկը:

ՁԱՅՆԸ. Հարցուցէ՛ք արքային թէ Լուվրէն պիտի վանէ՞ ծերունին Պարոն տը Մէրիտօրը:

ՇՈՒՔՕ. (խումբէ մը ետին ծածկուելով) Ա՜հ:

ԱՐՔԱՅՆ. Այս ծերունին . . .

ՊԱՐՕՆԸ. (պահապանները մէկդի ընելով ներս ինկնելով) Զիս կը ճանչնա՞ք, Վեհափառ Տէր:

ԴՈՒՔՍԸ. (անհանգիստ) Մոնսորո՞ն:

ՄՈՆՍՈՐՕ. (նոյնպէս) Վեհափառ Տէ՛ր:

ԱՐՔԱՅՆ. Թողէ՛ք որ մտնէ Պարոն տը Մէրիտօր: (պահապանք դռները կը բանան. — Մէրիտօր յառաջ կու գայ և կը ծնրադրէ):

ՄԵՐԻՏՕՐ. Վեհափառ Տէ՛ր, ես՝ ձեր վաղեմի ծառայն եմ, որ չորս թագաւորութեանց միջոցին մէջ անգամ մ՚իսկ պակասութիւն մը չգործեցի ոչ երկրիս և ոչ թագաւորիս դէմ:

ԱՐՔԱՅՆ. Ի՞նչ կ՚ուզէք մեզմէ՝ պարոն:

ՄԵՐԻՏՕՐ. Արդարութի՛ւն

ԱՐՔԱՅՆ. Խօսեցէ՛ք:

ՄԵՐԻՏՕՐ. Տանս մէջ ազնուական մը ընդունեցայ, հիւրընկալեցի՝ իբրև բարեկամ . . . նա աղջիկս առևանգեց, զանի իր դղեկին մէջ բանտարկեց . . . անոր անպատուութիւնը կամ մահը թաղելով յանձն առնուլ:

ԱՐՔԱՅՆ. Ատի պատժուելու արժանի ոճիր մ՚է:

ՄԵՐԻՏՕՐ. Եւ իմ զաւակս մահը ընտրեց . . . : Նա ամեն ի՛նչ թողուց, երախտագիտութիւն, պատիւ, յոյս, որպէս զի ինքզինքը այնպիսի մաքրութեամբ Աստուծոյ ձեռքը յանձնէ՝ ինչպիսի կերպով որ անկից ելած էր . . . : Վեհափառ Տէր, նա մեռաւ, - զիս միայնակ և յուսահատ թողլով, ես՝ որ նորա զատ ուրիշ ուրախութիւն չունէի երկրիս վրայ, ես՝ որ նորա վրէժը լուծելէս վերջը մեռնելէ զատ ուրիշ բան մը չունիմ ընելիք . . . ես ծերունի զոր երկինք կը մոռնայ, և որ հողը ճակտին զարնելով կ՚ըսէ. «Հո՛ղ, եթէ թագաւորս զիս մօտիկ չընէ՝ զիս քու ծոցդ ընկլուզէ՛»:



ԱՐՔԱՅՆ. Ձեզ ունկնդիր եմ և վրէժնիդ պիտի լուծեմ: Ցանցառո՞րը, ըսէ՛ք համարձակ նորա անունը . . . : Ա՜հ, անուանեցէք զինքը, ով որ ալ ըլլայ, դուքս կամ պարոն, կամ իշխան:

ՄԵՐԻՏՕՐ. (կ՚ելլէ և ուղղակի Դուքսին կ՚երթայ) Ցանցառորը . . . ահաւասի՛կ:

ԱՄԷՆՔԸ. Նորին Վսեմութի՛ւնը:

ԱՐՔԱՅՆ. Կ՚իմանա՞ք՝ եղբայր իմ:

ԴՈՒՔՍԸ. Այս մարդը ըսածը չգիտեր . . . զինքը չեմ ճանչեր:

ՄԵՐԻՏՕՐ. Դուք զիս չե՞ս ճանչեր:

ԱՐՔԱՅՆ. (առ Դուքսն) Աւելի լաւ պատասխան մը տուէ՛ք:

ԴՈՒՔՍԸ. Այս թշուառ ազնուականը իր աղջիկը կորսնցուցեր է: Զանի կը պաշտէր եղեր, մինչդեռ զինքը կը մոլորեցնէ կ՚երևի, և չկարենալով Աստուծմէ վրէժ առնուլ, մարդոցմէ առնուլ կ՚ուզէ:

ՄԵՐԻՏՕՐ. Վատ դո՛ւ . . . : Բայց մէկը պէտք է որ զիս ճանչէ հոս, մէկը պիտի ըսէ թագաւորին որ ես երբեք սուտ չեմ և թէ նոյն իսկ կեանքս չեմ գներ ստախօսութեան մը փոխարէն: Պարոննե՛ր . . . (Մէրիտօր կը դառնայ դէպ ի Մոնսորօն նորա ըսած մէկ յարգանք) Ո՜հ, Մոնսորօ կոմսը, բարեկա՛մս . . . նա որ ինձ յառաջուց իմացուց այս չար իշխանին խորհուրդները և ես չուզեցի հաւատալ . . . կոմս տը Մոնսորօ, եկէ՛ք. ինձ համար վկայութիւն տուէ՛ք:

ԴՈՒՔՍԸ. (անհանգիստ) Կոմսը իր բարեկամը կը կոչէ:

ՄԵՐԻՏՕՐ. Այո՛, իմ լաւագոյն բարեկամս, որովհետև եթէ ես իրեն անսացած ըլլայի, եթէ իմ աղջիկս քու նշանածներէդ մէկուն առնուլ՝ նա պիտի ապրէ՛ր, աւա՜ղ . . . նա դեռ պիտի ապրէ՛ր:

ԴՈՒՔՍԸ. Արդ ուրեմն Վեհափառ Տէր, պարոն տը Մոնսորօն՝ այս ծերունւոյն լաւագոյն բարեկամը ես կ՚ընդունիմ իբր դատաւոր: Թո՛ղ խօսի:

ՄԵՐԻՏՕՐ. Թո՛ղ խօսի . . . ինչ որ ըսէ՝ աղէկ ըսած պիտի ըլլայ:

ԱՐՔԱՅՆ. (առ Մոնսորօ) Խօսեցէ՛ք, պարոն:

ՄՈՆՍՈՐՕ. Վեհափառ Տէր, բարեկամի մը՝ այսքան անգըթաբար փորձուած ծերունւոյ մը գալը չէի լքաներ...։ Սակայն պէտք է ձեզ ըսեմ որ պարոն ալ Մերիտոր իւր աղջըկան մահուանէն 'ի վեր, բոլոր գաւառէն յիմար ճանչցուած է։

ՄԵՐԻՏՈՐ. Ե՛ս...։

ԴՈՒՔՍԸ. Կը տեսնէք...։

ՄՈՆՍՈՐՕ. Ասի շատ ծանր էր ինձ, բայց թագաւորին ըստել կարելի չէ։

ՄԵՐԻՏՈՐ. (Վերջին ծայր նեղացած) Ա՛հ։

ԴՈՒՔՍԸ. (Արքային ականջը ներսելով) Զգուշացէ՛ք, Վեհափառ Տէր... այս յիմարութիւնը կրնայ վտանգաւոր ըլլալ։

ՄԵՐԻՏՈՐ (Ծունր) Վեհափառ Տէր, յանուն ամենասուրբ գոյից, յանուն ամենանուիրական էից...։

ԱՐՔԱՅՆ. (տեսաշարժելով) Այո՛, այո՛... իմ Միրօն բժիշկս թո՛ղ կանչեն... գէթ պիտի բժշկէ, յուսամ թէ։ (Դառնալով) Ներեցէ՛ք, Փրանսուա։

ՄԵՐԻՏՈՐ. Միթէ ճշմարիտ յիմա՞ր կ'ըլլամ...։

ԱՐՔԱՅՆ. Պարոն Նանսէյ... ամենքն ալ հեռացուցէ՛ք, յետոյ այս ծերունին իրեն թշուառութեանց պատշաճ եղած ամենայն յարգանօք Լուվրէն դուրս հանեցէ՛ք։ (Դուքսին հետ յախ [illegible] խումբը կը մտնէ)։

ՆԱՆՍԷՅ. Լաւ, Վեհափառ Տէ՛ր։ (Արքային ներս մտնելէն յետոյ) Դո՛ւրս ելէք, պարոննե՛ր։ (Պարոնք կը վերջնեն)

ՊԻՒՍԻ. Ես այս թշուառը երեսի վրայ չպիտի թողում։ (Պարոնին կը մօտէ)

ՇԻՔՕ. (ցած) Պարոն Պիւսի... Գացէ՛ք Սէնթ-Անթուանի արուարձանին այն տունը՝ ուր բոլոր տեսածներնիդ պիտի խօսիք։

ՊԻՒՍԻ. Բայց...։

ՇԻՔՕ. Գացէ՛ք, ես հոս կ'ըսպասեմ։ (Պիւսի դուրս կ'ելնէ)



## ՏԵՍԻԼ ԺԶ.

ՇԻՔՕ (խորք), ՄԵՐԻՏՈՐ

ՄԵՐԻՏՈՐ. Ո՞ւր էք ուրեմն Աստուած իմ, ինչո՞ւ չէք տեսներ իմ տառապանքս Աստուած իմ, կ'աղերսեմ ձեզ, կը պաղատիմ, կը հայցեմ. օգնութի՛ւն, օգնութի՛ւն խրկեցէ՛ք ինձ։

ՇԻՔՕ. (Նորա ասոնք լսելով) Հա՛յր։

ՄԵՐԻՏՈՐ. (դառնալով) Ա՛հ... զաւա՛կս։

ՇԻՔՕ. Լռութի՛ւն։

ՄԵՐԻՏՈՐ. Ալ չեմ թողուր զքեզ։

ՇԻՔՕ. Ընդհակառակը, այժմ իսկ պիտի թողուք։ Եթէ զմեզ հոս 'ի միասին տեսնեն, եթէ կասկածին թէ մեք զիրար կը ճանչեմք, ամէն ինչ պիտի կորսուի։

ՄԵՐԻՏՈՐ. Ի՛հ, կեանքն ինձ ինչ բանի պիտի ծառայէ՝ քանի որ Տիանա՞ մեռած է։

ՇԻՔՕ. Եւ եթէ մեռած չըլլա՞ր։

ՄԵՐԻՏՈՐ. Ի՞նչ ըսիր։

ՇԻՔՕ. Ոչինչ... ո՞ւր կը բնակիք։

ՄԵՐԻՏՈՐ. Արպըը-Սէք փողոցը... Գօրն տը Սէրֆ պանդոկը։

ՇԻՔՕ. Հոն գացէ՛ք և ինձ սպասեցէ՛ք։

ՄԵՐԻՏՈՐ. Զիս թողո՞ւլ կ'ուզես...։

ՇԻՔՕ. Ես բարեկամ մը մանկու համար ու պալատական եմ և ոչ որսորդապետ... ձեզ պիտի ազատեմ, հանգարտ եղէք։

ՄԵՐԻՏՈՐ. Ուրեմն ո՞վ ես դու։

ՇԻՔՕ. Յիմար մը...։

ՄԵՐԻՏՈՐ. Դո՛ւ։

ՇԻՔՕ. Ձեզի նման... Գացէ՛ք, գացէ՛ք։ (պարոն որ Մերիտոր կը մեկնի։ — Նանսէյի որ ներս կը մտնէ) Մեկնեցաւ... ալ անոր մի՛ զբաղիք։ Բայց ինչո՞ւ համար կը թողուն որ այս անձինք Լուվրէն ներս մտնեն։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Թուլոնի տան ներքին կողմը : Թատերաբեմը երկուքի բաժնուած է : Աջ կողմը՝ փողոցին վրայ նայող պատուհանով սալոն մը : Ձախ կողմը՝ Տիանայի ննջելու սենեակը որ բեմին երկու երրորդը բռնած է : Ցած եւ 'ի ձախ դուռներ : Խորը աղօթատեղի : Ոսկեթել ծաղկոր դամասկեան ճերմակ կերպասէ անկողին մը : Պատուհաններուն մէջ տեղ մեծ կենդանագիր մը :*

### ՏԵՍԻԼ Ա.

ՏԻԱՆԱ , ԺԵՐԹՐԻՒՏ

ՏԻԱՆԱ. (երազելով) Արդեօք ինչ եղաւ այն թշուառ անձը . . . այնքան արի՛ , այնքան գեղեցի՛կ (Ժերթրիւտ ներքնասենեկին պատուհանը կը բանայ) : Հո՛ն էր , գունատ , անկենդան , եւ յանկարծ իւր աչերը բացուեցան . . . ինչ նայուածք . . . : (կ'ելլէ)

ԺԵՐԹՐԻՒՏ. Զի՞ս կը կոչէք :

ՏԻԱՆԱ. Ապահո՞վ ես որ այն ազնուականը հոս ընդունելնուս վրայ, ոչ ոք կը կասկածի շրջակայներէն :

ԺԵՐԹՐԻՒՏ. Ոչ ոք , որովհետեւ ես պատասխանատու կ'ըլլամ այն փոքրիկ վիրաւորին համար , որ զնա խնամեց եւ զանի Թուլոնը տանելու ինձ օգնեց :

ՏԻԱՆԱ. Զինքը այնպէս թողու՛լ . . . ա՛հ . . . :

ԺԵՐԹՐԻՒՏ. Թամբլի կրօնաւորները հիւրասէր են : Անհոգ եղիր : Ուէմի զիս վստահեցուց ատոր վրայ :

ՏԻԱՆԱ. (խոհուն) Այո՛ Ժերթրիւտ , այո՛ (Ժերթրիւտ դուրս կ'ելլէ) Որքան կ'ուզէի իւր անունը գիտնալ . . . արդեօք զինքը նորէն չպիտի տեսնեմ երբէք :

ԺԵՐԹՐԻՒՏ. (ներսէն) Տիկի՛ն , դուռը կրկին զարնուեցաւ : Մէկը ներս մտաւ : Վեր կ'ելնեն: Երկու մարդիկ . . . Գուցէ այն Օրլէանին հետ, Դուքսը : (հոն կը մնայ)

ՏԻԱՆԱ. (երկինքին դառնալով՝ աչքն իւր ծունր կը դնէ) Թո՛ղ գան, այլ ես անոնցմէ չեմ վախնար :

ԺԵՐԹՐԻՒՏ. Օրիո՛րդ , պարոն կոմսն է :



### ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ , ՄՈՆՍՈՐՕ

ՄՈՆՍՈՐՕ. Միշտ ձեզ երկի՛ւղ կը պատճառեմ :

ՏԻԱՆԱ. Բայց ո՛չ՝ պարոն , կ'աղօթէի :

ՄՈՆՍՈՐՕ. Կրնա՞մ ձեզ հետ առանձին խօսակցիլ :

ՏԻԱՆԱ. Գնա՛ Ժերթրիւտ . (աղախնոյն) Դուռը բաց թո՛ղ : (Ժերթրիւտ ներքնասենեակը կը մտնէ այնպէս որ ամէն ըսուածը կարենայ լսել :)

ՄՈՆՍՈՐՕ. Ինձմէ շա՞տ կը վախնաք Տիանա :

ՏԻԱՆԱ. Ինձ ըսելու կարեւոր բան մը ունի՞ք, պարոն կոմս:

ՄՈՆՍՈՐՕ. Զայն այժմ պիտի գտա՛ք, եւ եթէ իմ պաշտպանութիւնս անզօր գտնուի , պիտի հասկնաք որ յանցանքն իմս չէ :

ՏԻԱՆԱ. Ունկնդիր եմ :

ՄՈՆՍՈՐՕ. Կարծեմ, զձեզ Պ . տ'Անժու դուքսին ձեռքէն խլելու եւ ձեր պատիւը ազատելու յաջողեցայ :

ՏԻԱՆԱ. Ճշմարիտ է :

ՄՈՆՍՈՐՕ. Ջուրին վրայ ծածանելով գտնուած ձեր քօղը, ձեր անբացատրելի աներեւոյթանալը՝ ձեր մահուան համբաւը հաստատած էին . եւ դուքսն ալ կը հաւատար :

ՏԻԱՆԱ. Այո՛, նաեւ իմ հայրս ալ:

ՄՈՆՍՈՐՕ. Անողորմ բայց փրկարար հարկ մը : Ձեր հօրը յուսահատութիւնը տեսնելով՝ ինչպէս կարելի էր ձեր մահուան վրայ կասկածիլ :

ՏԻԱՆԱ. Խե՛ղճ հայր , պէտք էր որ մինչեւ իր սխալանքը ուղղած վայրկեաննիդ տեւայէր . բայց անշուշտ երջանիկ եղաւ ձեզմէ իմ ազատութիւնս եւ առանձնութիւնս խնդրելով :

ՄՈՆՍՈՐՕ. Անտարակոյս խիստ երջանիկ . բայց ձեր ազատութիւնը վտանգի ենթարկուեցաւ , ձեր մենակեցութիւնը յայտնուեցաւ : Եթէ ինձ հնազանդած ըլլայիք , եթէ այս տան մէջ փակեալ մնայիք՝ թերեւս այսօր ամեն վտանգ դադրած ըլլար : Դուք դուրս ելնել ուզեցիք . . . :

ՏԻԱՆԱ. Կ'ուզէի Աստուծոյ շնորհակալ ըլլալ իմ հայրս մխիթարելուն համար ։ Սէնթ-Քաթերինի եկեղեցին գայի ։

ՄՈՆՍՈՐՕ. Առի պակասութիւն մ'էր . գժբաղդաբար իշխանն ալ հոն եկած էր և զձեզ նշմարեց ։

ՏԻԱՆԱ. Ճշմարիտ է . զայն քեզմէ պահելուս համար ներեցէ՛ք ինծի ։ Կը յուսայի որ քողիս տակէն զիս չպիտի կարենար ճանաչել ։

ՄՈՆՍՈՐՕ. Երէկ գորա հակառակն հաստատող ապացոյցն ունեցայ ։

ՏԻԱՆԱ. Գիտէք . . . ։

ՄՈՆՍՈՐՕ. Գիտեմ որ դուքսը այս տան բանալի մը ձեռք անցուցած է . գիտեմ որ Օրլէյի իր բոլոր բնակութեանց մեղսակցին հետ ընկերացած էր , և գիտեմ ալ որ երբ հոս պիտի մտնէին՝ Թագաւորին սիրելիները բարեպատեհ սխալանօք մը անոր վրայ յարձակեցան և զինեցան . նա իր այլակերպութեան զոհ ըլլալէ փախնալով՝ ինքզինքը անուանեց և յետոյ մէկզի քաշուեցաւ . լաւ տեղեկացեր եմ ։

ՏԻԱՆԱ. Այո՛ , այո՛ ։ (Ցնցուած) Կը սոսկա՛մ ։

ՄՈՆՍՈՐՕ. Այն աղմուկին և պատերազմին վրայ՝ շատ անհանգիստ եղաք անշուշտ ։

ՏԻԱՆԱ. Անտարակոյս . . . բայց երբ դուքսը մեկնեցաւ . . . ։

ՄՈՆՍՈՐՕ. Նսեմ և յամառող սիրտ մ'է նա . դարձեալ կու գայ ։

ՏԻԱՆԱ. Պիտի մոռնայ, պարոն ։

ՄՈՆՍՈՐՕ. Ո՛չ, ես ալ զձեզ մոռնալու համար բոլոր կըրցածըս ըրի . բայց զձեզ տեսնող մը կարելի չէ որ մոռնայ ։

ՏԻԱՆԱ. Պարո՛ն ։

ՄՈՆՍՈՐՕ. Դուքսը այս գիշեր դարձեալ պիտի գայ ։

ՏԻԱՆԱ. Կը թողում այս տունը և հօրս քով կը դառնամ ։

ՄՈՆՍՈՐՕ. Ո՛ւր որ կ'ուզէք գացէք՝ նա մինչև որ զձեզ չը գտնայ՝ ձեր հետքը չպիտի թողու ։

ՏԻԱՆԱ. Զիս կը սոսկացընէ՛ք ։

ՄՈՆՍՈՐՕ. Այդպիսի դիտաւորութիւն մը չունիմ ։

ՏԻԱՆԱ. Ուրեմն, ի՞նչ կը խորհիք ընել ։



ՄՈՆՍՈՐՕ. Ո՛հ ես խեղճ խորհրդոյ տէր մէկն եմ, բայց ես, կամ մանաւանդ ձեր հայրը միջոց մը գտած էր . . . ։

ՏԻԱՆԱ. Իմ հա՛յրս. ի՞նչ միջոց ։

ՄՈՆՍՈՐՕ. Վերջին անգամ երբ զինքը Մերիտորի մէջ տեսայ , և իրեն իմացուցի որ դուք մեռած չէիք , բայց մեծ վտանգի մը ենթակայ էիք . երբ իրեն կ'երդնուի մինչև իսկ կեանքս վտանգելով զձեզ ազատել, ինծի նամակ մը յանձնեց ։

ՏԻԱՆԱ. Հօրմէս նամակ մը ունիք . . . և մինչև հիմայ ինծի չցուցուցի՛ք ։

ՄՈՆՍՈՐՕ. Կը յուսայի առանց ձեզ վշտութիւն մը ընել տալու յաջողիլ ։ Անծանօթ չէ ինծի բոլոր այն անելութիւնը , զոր ձեզ կը ներշնչեմ ։ Սակայն վտանգը սոսկողական է և արդէն մեզ դէմ յանկման ։

ՏԻԱՆԱ. Այն նամակը՛ , պարո՛ն ։

ՄՈՆՍՈՐՕ. Ահասիկ ։

ՏԻԱՆԱ. (կարդալով) « Իմ ամենասիրելի Տիանաս » . . . ։

(Նամակը կը համբուրէ և ծոցին մէջ կը դնէ)

ՄՈՆՍՈՐՕ. Կը ճանչէ՞ք այս սիրելի գիրը ։

ՏԻԱՆԱ. Ո՛հ այո՛ , այո՛ ։ (կարդալով)

Իմս Տիանա

Անհուն եւ անպարտելի է այն վտանգը որում ենթակայ եղած ես: Ես կարող չեմ զքեզ ազատել, պարոն Մոնսորօ կ'ուզէ զայն փորձել: Վստահէ՛ իրեն իբրեւ յատուկ եւ երկնառաք բարեկամի մը: Կոմսը յետոյ ձեզ պիտի ըսէ իրեն նկատմամբ մեր ունեցած պարտաւորութիւնը կատարելու համար ինչ որ 'ի խորոց սրտէ կը փափաքիմ որ ընես: Կը պաղատիմ քեզ, հաւատա՛ եւ ննացանիք՛ ինձ. գթա՛ իմ եւ ձեր բարեկամին վրայ:

ՊԱՐՕՆ ՏԸ ՄԵՐԻՏՕՐ »

(Տիանա գլուխը խոնարհելով կ'արտասուէ)

ՄՈՆՍՈՐՕ. Այս էր միակ միջոցը . ձեր հայրը ատոր հաւանութիւն տուաւ . դուք կը մերժէք՝ ես ալ հրաժեշտ կու տամ ։

ԺԻՐԹՐԻՒՏ. (Ներս մտնելով) Ձեր ետեւէն մարդ եկած է , պարոն կոմս , դրան վանդակներուն մէջէն շուքեր կը տեսնեմ ։

ՄՈՆՍՈՐՕ. Մեկնելուս կ'ըսպասեն ։

ԺԻՐԹՐԻՒՏ. (դուռը ցուցնելով) Կը տեսնէ՞ք ։ (Մոնսարօ հեռուէն կը նայի)

ՄՈՆՍԱՐՕ. (Տիանային) Իմ երկու մարդիկս, լաւ ։

ՏԻԱՆԱ. Ո՞րդ ուրեմն ։

ՄՈՆՍԱՐՕ. Դուրսն է ։

ՏԻԱՆԱ. Աստուած իմ, Աստուած իմ ։ Բայց դուք ալ, պարոն, չպիտի կարենա՞ք զիս այս հալածանքէն ազատել։

ՄՈՆՍԱՐՕ. Ներեցէ՛ք տիկին. ես սրսուրդապետ եմ, այլ ես միայն Թագաւորէն կախում ունիմ և եթէ ամուսնացած ըլլայի Թագաւորը իմ կինս պիտի պաշտպանէր ։

ՏԻԱՆԱ. (իր բռունցքը դեղելով) Անկարելի՛. երբե՛ք . . . երբեք . . . ։

ՄՈՆՍԱՐՕ. Ձեզմէ արձակուրդս խնդրելէ զատ ուրիշ բան չմնար ինծի ընել։

ՏԻԱՆԱ. Ուրեմն զիս կը թողո՞ւք ։

ՄՈՆՍԱՐՕ. Ձեզ կը հնազանդիմ . . . առանց ձեր ամուսինն ըլլալու կրնամ գիշեր մը ձեր յարկին տակ անցընել։

ՏԻԱՆԱ. Ձեզի հետ պիտի մեկնիմ։

ՄՈՆՍԱՐՕ. Ձեզ փտանգի ենթարկել չպիտի ուզէի ։ Բայց միայն ձեր ամուսնոյն հետ պէտք է որ զձեզ տեսնեն ։

ՏԻԱՆԱ. Ես այս դրան վրայ նիզեր ունիմ։

ՄՈՆՍԱՐՕ. Իշխանազունի մը դէմ նիզե՞ր։

ՏԻԱՆԱ. Ինքզինքս պիտի սպաննեմ։

ՄՈՆՍԱՐՕ. Դուք ձեր հայրը պիտի սպաննէ՛ք ։

ՏԻԱՆԱ. Ա՛հ, ա՛հ . . . ։ (Ներքնասենեակին պատուհանը կը դիտէ) Միշտ հոն են։ (ընկճուած կը մնայ)։

ՄՈՆՍԱՐՕ. (Սպասաւորի մը, դուռը կիսով չափ բանալով) Պարոն Քահանային և իր ընկերը ներս մտցուր ։ (Տիանային) Մերիտարի հնազանդիլը այսքան դժուարին էր ։

ՏԻԱՆԱ. (նամակը վերստին կարդալէն յետոյ) Իբր թէ Աստուած ինծի հրամայած ըլլար ։ Դու կը հրամայես՝ հայր իմ, պիտի հնազանդիմ։

ՄՈՆՍԱՐՕ. Եկէ՛ք ուրեմն ։

ՏԻԱՆԱ. Ո՞ւր ։

ՄՈՆՍԱՐՕ. Ձեր աղօթարանին ։



ՏԻԱՆԱ. Իմ աղօթարանի՞ս ։

ՄՈՆՍԱՐՕ. Քահանայ մը . . . ։

ՏԻԱՆԱ. Ա՛հ, ամեն ինչ նախապատրաստած էիք ։

ՄՈՆՍԱՐՕ. Կրնաք մերժել։

ՏԻԱՆԱ. Կ՛ուզեմ հայրս տեսնել։

ՄՈՆՍԱՐՕ. Ազատ էք՝ տիկին, ոչինչ ձեր կամքը կը բռնադատէ ։ Կը զղջա՞ք ձեր խոստման վրայ, զայն ետ կը դարձընեմ։

ՏԻԱՆԱ. Եկէք, պարոն ։ Եկո՛ւր՝ Ժէրթրիւտ ։ (Աղօթարանին դուռնէն դուրս կ՛ելլեն, որոյ դուռը գոցուած վայրկեանին ներքնասենեակինը կը բացուի և Պիւսի կ՛ելլէ ։)

## ՏԵՍԻԼ Գ.

### ՊԻՒՍԻ (առանձին)

Կարծեցի թէ այս մարդիկը երբեք ներս չպիտի մտնեն . . . ա՛հ, բայց եթէ լաւ հաշուեցի չորս մարդ կայ տան մէջ ։ Հիմա ի՛նչ շահ կրնայ ունենալ զիս հոս խրկելով . . . տեսնենք ։ Ո՞ւր եմ։ Սանդուխը, գաւիթը, ներքնասենեակը . . . խելքս կը թուցընեմ։ Բայց չեմ տեսներ այն սպիտակ անկողինը, այն կենդանագիրը. զիս ուրիշ սենեակ մը տարած պիտի ըլլան ։ (կամաց մը Տիանային սենեակին դուռը կը բանայ) Աւասի՛կ, աւասի՛կ. իմ երազս հոս էր, այն գեղեցիկ հրեշտակէն զատ բան մը պակաս չէ ։ Սակայն տունը մարդերով լի էր և ոչ զոք կը տեսնեմ. ո՞ւր են արդեօք ։ (դուռ մը կը բանայ) Սանդուխին կցեալ մթին նրբաշաւիղ մը . . . (Աղօթարանին մօտենալով ձայն կը լսէ) Տարօրինա՛կ բան. կարծես սաղմոսերգութեան աղօթք մը կ՛ընեն . . . (բանալիին ծակէն նայելով) Մարդ մը ծնրադրած, անոր քով կի՛ն մը ։ Նա՛ . . . ա՜հ երազէն ալ աւելի գեղեցիկ. բայց այն մարդը, ո՞վ է կարելի չէ զինքը տեսնել։ Եւ այն քահանային ինչ գործ ունի։ Ա՛հ, բայց ասի ամուսնութեան մը կը նմանի ։ Կը խոնարհին, քահանայն զանոնք կ՛օրհնէ ։ Լմնցաւ . . . ։ Կու գան . . . օ՜ն, զգուշ լեր, Պիւսի։ (Ներքնասենեակը կը մտնէ վերստին ։)

## ՏԵՍԻԼ Դ.

ՊԻՒՍԻ, (ննջասենեակին մէջ)։ ՄՈՆՍՕՐՕ, ԺԸՐԹՐՈՒՏ, ՏԻԱՆԱ

ՊԻՒՍԻ. Պարոն Մոնսօրօ. սև նժոյգով առևանգիչը։

ՏԻԱՆԱ. Ձեր կինն եմ պարոն, բայց այս ամուսնութեան հօրս օրհնութիւնը կը պակսի, 'ի գղեակն Մերիտորի։

ՊԻՒՍԻ. Մերիտոր . . . ամեն ինչ կը հասկնամ։

ՄՈՆՍՕՐՕ. Մտիկ ըրէք, Տիանա . . . թողէք ինձ տակաւին յուսալ . . ։

ՏԻԱՆԱ. Դուք ինձ ըսիք թէ « կինս եղիք, որպէս զի՝ զձեզ պաշտպանելու իրաւունք ունենամ։ » Հիմայ կրնաք զիս յայտնել թէ տ'Անժու դուքսին և թէ բոլոր աշխարհի։ Օ՛ն ուրեմն պահպանեցէք զիս, պաշտպանեցէք զիս։

ՄՈՆՍՕՐՕ. Դուրս ելէք Ժէրթրիւտ։ (Ժէրթրիւտ կը մեկնի։)

ՏԻԱՆԱ. Գնա՛. (Ժէրթրիւտ դուրս չ'ելնէ։)

## ՏԵՍԻԼ Ե.

ՄՈՆՍՕՐՕ, ՏԻԱՆԱ

ՄՈՆՍՕՐՕ. Տիկին, պէտք է այս ողջի դերը վերջացընել։ Դուք 'ի Բարիզ իմ տանս մէջ էք, դուք Մոնսօրօի կոմսուհին, այսինքն, իմ կինս էք . . . ։

ՏԻԱՆԱ. Հիմա որ այլ ևս վախու բան մը չունիմ, զիս հօրըս տարէք։

ՄՈՆՍՕՐՕ. Առի անխոհեմութիւն մը պիտի ըլլար, տակաւին այն վայրկեանը չհասաւ, ես կարգադրութիւններ ունիմ ընելու։

ՏԻԱՆԱ. Լաւ ուրեմն, երբ զանոնք ընէք՝ այն ատեն եկէ՛ք։

ՄՈՆՍՕՐՕ. Իմ սէրս և իրաւունքներս խաղալիք մը կը համարիք։

ՏԻԱՆԱ. Ամուսնութիւնս ինձ յորդել տալու համար՝ վըս-



տահութեան արժանի ամուսին եղիք։

ՄՈՆՍՕՐՕ. Որ ըրածս զիս անվստահելի կ'ընէ։ Ձեր վստահութեան արժանի ըլլալու համար ինչ պէտք էր։

ՏԻԱՆԱ. Ձեզմէ աւելի իմ վրայ մտածել։

ՄՈՆՍՕՐՕ. Ա՜հ, այդ չափազանց եղաւ. դուք զիս կ'անպատուէք, զիս յուսահատութեան կը մղէք։

ՏԻԱՆԱ. Ժէրթրիւ՛տ. (Մոնսօրօ կ'ուզէ նորա ճամբան գոցել։)

ՄՈՆՍՕՐՕ. Այս գիշեր խել դուք իմս պիտի ըլլաք։ (Պիւսի ձեռքը սուրին կը տանի)

ՏԻԱՆԱ. (իր դաշոյնը հանելով) Տեսէ՛ք ինչպէս ձեզ կը պատասխանեմ. (դաշոյն 'ի ձեռին ննջասենեակը կը խոյանայ և դուռը կը գոցէ։)

ՄՈՆՍՕՐՕ. (բռունցք դրան զարնելով որ տեղի կու տայ) Տիանա՛։

ՏԻԱՆԱ. Բացէ՛ք, բայց զիս սեմին վրայ մեռած պիտի գտնէք։

ՊԻՒՍԻ. (նորա տեղ անցնելով և ինքն ալ գոցելով) Եւ մրցակից մ'ալ պիտի ունենաք։

ՏԻԱՆԱ. Ա՜հ . . ։ (ձայնը ճանչելով) Ինքն՛ . . . ։

ՄՈՆՍՕՐՕ. Ճամբը յենն է . . . հապա իշխանաց ժամադրութիւնը։ (առ Տիանա.) Կը պահանջէք տակին, կը հեռանամ, ներեցէք ինձ . . . բառ մը . . . խօսք մը միայն . . . (կ'աղաչէ. լռութիւն) Կը հնազանդիմ։ (ինքնին) Բայց դարձեալ պիտի գամ։ (Մոնսօրօ ներքնայարկին դռնէն աներևոյթ կ'ըլլայ։ Ժէրթրիւտ աղջկանս-ննջարանէն կը դառնայ, անոր ճրագը կ'առնէ և դուռը գոցելու համար նորա կը հետևի, որոյ ոտքին ձայնը լսելի կ'ըլլայ։)

## ՏԵՍԻԼ Զ.

ՏԻԱՆԱ, ՊԻՒՍԻ

ՏԻԱՆԱ. Բայց պարո՛ն, ինչպէս հոս եկաք։

ՊԻՒՍԻ. Անձ մը՝ որոյ կեանքը ազատած էք. մի՞թէ կըրնա՞յ ձեր պատիւը վտանգի ենթարկել։

ՏԻԱՆԱ. Լսեցիք . . . ։

ՊԻԻՄԻ. Աւա՛ղ, տիկին ։

ՏԻԱՆԱ. Ո՞վ էք դուք , ձեր անո՞ւնը . . . ։

ՊԻԻՄԻ. Լուի տը Քլերմօն , կոմս տը Պիւսի ։

ՏԻԱՆԱ. (ուրախութենէ ալլալած) Պիւսի՛ . այն քաջ Պիւսի՛ն . — ո՛հ՝ ծէրթրիտ որքան երջանիկ եմ . . ։ Անհաւասիկ Գաղղիոյ ամենէն աւելի քաջ և ամենէն աւելի ազնուական անձը ինձ պաշտպան ունիմ ։

# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

## ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

### ԳՈՐՆ ՏԸ ՍԷՐՃԻ ՊԱՆԴՈՒԿԸ

*Ստորին սրահ մը։ — Խորը դուռ. աջ կողմը պատուհան. ձախ կողմը դուռ։*

## ՏԵՍԻԼ Ա.

ՇԻՔՕ (մտնելով), ՊՕՆՕՄԷ

ՊՕՆՕՄԷ. Ի՛նչպէս . դո՞ւք էք, պարոն Շիքօ . . . բարի երեկոյ , պարոն Շիքօ , բարի երեկոյ և բարի ախորժակ ։

ՇԻՔՕ. Անհաւասիկ բարեմաղթութիւն մը որ ինծի չափ ձեզ ալ օգտակար է , սիրելիդ իմ Պօնօմէ . գժբաղդաբար առանձին ուտել չեմ սիրեր ։

ՊՕՆՕՄԷ. Եթէ պէտք է՝ ձեզի հետ կ'ընթրեմ, պարո՛ն ։

ՇԻՔՕ. Շնորհակալ եմ. մէկը կ'սպասեմ։

ՊՕՆՕՄԷ. Կօրէնֆլօ այրարի՞ն. անոր համար աւրեմն սենեակ մը խնդրեցի ուր կարենայ մտածել և խորհիլ ։



ՇԻՔՕ. Խորհի՛լ . . . Կօրէնֆլօ՛ ։ Գէշ հասկցեր էք, բարեկամս , մարսել ըսած ըլլալու է ։

ՊՕՆՕՄԷ. Ոչ, պարոն Շիքօ , ո՛չ. ըսածիս վրայ ապահով եմ։ Մարսելը շատ գիւրին պիտի ըլլար ։

ՇԻՔՕ. Գործը հոն է որ լաւ ստամոքս մը ունի ։

ՊՕՆՕՄԷ. Նորա այս երեկոյեան համար պատուիրած ընթրիքը ամենէն գէշ ստամոքս մ'ալ կրնայ մարսել։

ՇԻՔՕ. Բէհ ։

ՊՕՆՕՄԷ. Պնակ մը շոմին՝ ըստ պահոց ։

ՇԻՔՕ. Կօրէնֆլօ պնակ մը շոմինով կ'ընթրէ ։ Հոդ անսովոր բան մը ըլլալու է ։

ՊՕՆՕՄԷ. (ճարտարմտութեամբ) Է՛հ , էհ ։

ՇԻՔՕ. Բարիզ ինձ այս երեկոյ այնպիսի դէմք մը կու տայ, որուն նմանը միայն Սուրբ Բարթուղիմէոսի տօնին առջի իրիկունը տեսած եմ։ Սակայն դուցէ խաբուած ըլլամ։ (պճնօձ կը ծոցի) խաբուած չեմ, հէ՞ ։

ՊՕՆՕՄԷ. Չեմ գիտեր . . . ։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. (գլուխը դռնէն ցոյց տալով) Կրնա՞մ ձեզ խօսիլ, ընկեր ։

ՇԻՔՕ. Ձինք ճանչնամ պիտի ։

ՊՕՆՕՄԷ. Լահիւրիէր վարպետը , պաշտօնակից մ'է ։ (առ Լահիւրիէր) Հիմա կու գամ։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Ձեզ կ'սպասեմ։ (դուրս կ'ելնէ)

ՇԻՔՕ. Լահիւրիէրն է , Պէլ-Էթուալի պանդոկապետը։

ՊՕՆՕՄԷ. Այո՛ ։

ՇԻՔՕ. Եւ ձեզ կ'սպասէ . . . միասին գո՞րծ բռնած էք ։

ՊՕՆՕՄԷ. Փոքրիկ ժողովք մ'ունինք ։

ՇԻՔՕ. Լա՛ւ , լա՛ւ, գացէք՝ վարպետ Գլօտ , գացէ՛ք։ Վարկեա՛ն մը , այսօր հասած ծերունի ազնուական մը կը բնակի հոս ։

ՊՕՆՕՄԷ. Այո՛, պարօն Մերիտոըը, այո՛ , պարո՛ն Շիքօ։

ՇԻՔՕ. Ձեզ չըսա՞ւ թէ այս երեկոյ այցելութեան մը կ'ըսպասէր ։

ՊՕՆՕՄԷ. Երբ այդ այցելութիւնը տեղի ունենայ՝ իրեն ձայն պիտի տամ։

ՇԻՔՕ. Լաւ ուրեմն, իմացուցէք իրեն որ զինքը կ՚ըսպասեմ։

ՊՕՆՕՄԷ. Ո՛ւր։

ՇԻՔՕ. Հո՛ս...։ Գացէ՛ք վարպետ Պօսա, գացէ՛ք։
(Պօնօմէ դուրս կ՚ելնէ)

## ՏԵՍԻԼ Բ.

ՇԻՔՕ (յետոյ) ՊՕՆՕՄԷ

ՇԻՔՕ. Ա՛հ, պարոն Լահիւրիէր իւր ընկերները գիշերային ժողովքի կը հրաւիրէ....։ Ա՜հ՝ Բարիզ տարօրինակ կերպարանք մը ունի...։ Ա՛հ, Պարոն Մօնսարօ Նիքօլա Տավիտի անունը տուաւ։ Նիքօլա Տավիտ, վարպետ սուսերաձիգ դու առանձին եկած չես... սուրը միշտ ուէ մարմնէ մը կը կախուի, և Նիքօլա Տավիտ ինչպէս կրնայ բաժնուիլ իւր սիրելի Մայէն տիրոջմէն, և Մայէն իւր սիրելի Հէնրի եղբօրմէն. Կիզ և Մայէն 'ի Բարիզ են։ Այս էր որ Մօնսարօ՝ պարոն տ՚Անժուի կ՚իմացընէր ... ո՛հ, արդեօք վճարաժամը այսօ՞ր է։ Ձեր հաշիւները 'ի կարգին են, պարոն Մայէն, քուկիններդ ալ՝ Նիքօլա Տավիտ։

ՊՕՆՕՄԷ. (մոմեղէնը հետը մտնելով) Կ՚իջնէ, կ՚իջնէ, արժանապատիւ տէրը։ Ձեր սեղանը ո՞ւր պէտք է դնել։

ՇԻՔՕ. Այդ ինչ ըսել է։

ՊՕՆՕՄԷ. Կորէնֆլօ տիրոջ սեղանը, որ ժամը տասնին պիտի հասնի։

ՇԻՔՕ. Եւ այդ ի՞նչ է։

ՊՕՆՕՄԷ. Իւր ջուրի շիշը։

ՇԻՔՕ. Իւր շիշը՛ ... սուտղիւ, ենթալուսնեայ մեքենային մէջ խանգարուած բան մը ըլլալու է։

ՊՕՆՕՄԷ. Ծերունի ազնուականին քայլերը կ՚իմանամ։

ՇԻՔՕ. Ճիշդ պատեհ ժամուն (անոր ցած ձայնով կը խօսի) երբեք հարուած զարկէք այս փեղկին երբ այն անձինք հասնին։



ՊՕՆՕՄԷ. Այո՛, պարոն Շիքօ...։ Ասկից, տէ՛ր Պարոն, ասկից։ (Մերիտորը կը մտնէ և կ՚ելնէ)

## ՏԵՍԻԼ Գ.

ՇԻՔՕ, ՄԵՐԻՏՈՐ

ՄԵՐԻՏՈՐ. Զաւա՛կս, բարեկա՛մս։

ՇԻՔՕ. Հոս կրնաք զիս գտնել. (ձեռքն երկարէ) Նստեցէ՛ք հայր իմ։

ՄԵՐԻՏՈՐ. (կը նստի) Ո՛չ. ալ չեմ ապրիր, ալ չեմ մտածեր։ Իմ հին արիւնս բոլորովին սիրտս եկած է ... գէթ թաղելէս 'ի վեր է որ ջերմ ունիմ. կը տեսնե՞ս։

ՇԻՔՕ. Ա՛հ, տեսնե՛նք։

ՄԵՐԻՏՈՐ. Դու բառ մը արտասանեցիր... սոսկալի բառ մը... բառ մը՝ որ զիս կ՚ըսպաննէ... ըսիր թէ «Եթէ Տիանա մեռած չ՚ըլլար»։ Զղջացի՛ր, զղջացի՛ր։

ՇԻՔՕ. Ըսի։

ՄԵՐԻՏՈՐ. (ետանդում ձեռ ցուցնելով) Ուրեմն կարելի է։

ՇԻՔՕ. (մեկուսի) Զինքը չ՚սպաննենք։ (բարձր) Օ՛ն հանդարտեցէք, Աստուծոյ համար անկարելի ինչ կայ։

ՄԵՐԻՏՈՐ. Աստուած այլ եւս ինձ հետ չէ։

ՇԻՔՕ. Յուսահատութի՛ւն, շատ գէշ բան է։

ՄԵՐԻՏՈՐ. Կը համարձակի՞ս ինձ ըսել որ յուսամ։

ՇԻՔՕ. Ուշ դրէք ուրեմն...։ Դուք այն խեղճ մեռեալը ձեր բաղկաց մէջ չառիք, և ընդհակառակը, Բարիզի մէջ մէկը կին մը տեսած է որ այնքան տարօրէն կերպիւ կը նմանի...։

ՄԵՐԻՏՈՐ. Տիանայի՞։

ՇԻՔՕ. Այո՛։

ՄԵՐԻՏՈՐ. Ո՞ր...։

ՇԻՔՕ. Որ զինքը աղաչեցի... նա բարեկամ մ՚է, վեհանձն սիրտ մը... որպէս զի տեղեկանայ և ինձ պատասխան մը բերէ։

ՄԵՐԻՏՈՐ. Ո՛ւր։

ՃԻՔՕ. Հա՛ս ։
ՄԵՐԻՏՈՐ. Ե՞րբ ։
ՃԻՔՕ. Բայց . . . այսօր . . . թերեւս այս երեկոյ ։
ՄԵՐԻՏՈՐ. Այնպէս որ . . . ։
ՃԻՔՕ. Այնպէս որ, եթէ աղէկ պատասխան մը ունենայ՝ այն բարեկամը պիտի գայ և պատուհանին փեղկին երեք հարուած պիտի զարնէ ։ (Երեք հարուած)
ՄԵՐԻՏՈՐ. (դուռ յայտնի եղած) Ո՞վ ։
ՃԻՔՕ. Հա՛յր, հա՛յր, յոյս կայ՝ բայց ոչ ստուգութիւն ։ (առ Պիւսի որ կ'երեւի) Հասա՛ւ ։
ՄԵՐԻՏՈՐ. (առ Պիւսի) Զիս մի՛ տանջէք՝ պարոն, կեա՞նք կամ մա՞հ ։

## ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ՊԻՒՍԻ, ՏԻԱՆԱ.

ՏԻԱՆԱ. Սիրեցեա՛լ հայր իմ ։ (կը խոյանայ)
ՄԵՐԻՏՈՐ. Տիանա՛, զաւա՛կս ։ (կը գրկախառնուին)
ՃԻՔՕ. (առ Պիւսի) Շնորհակա՛լ եմ ։
ՄԵՐԻՏՈՐ. Դուն իմս ես . . . դուն իմս ես ։
ՊԻՒՍԻ. (ցած հառաչելով) Ո՛չ, խե՛ղճ հայր . . . ուրիշի մ'է նա ։
ՃԻՔՕ. Այն թշուառական Մոնսորօին . . . կը կասկածէի ։
ՄԵՐԻՏՈՐ (առ Տիանա) Զքեզ տանիմ, ալ զիս չպիտի թողուս ։
ՏԻԱՆԱ. (Պիւսին ցուցնելով) Գոնէ շնորհակալ եղիր իմ ազատչիս ։
ՄԵՐԻՏՈՐ. Ա՛հ, ինչպէս իրեն շնորհակալ ըլլամ ։ (Պիւսիին ձեռները կը սեղմէ)
ՏԻԱՆԱ. (առ Ճիքօ) Եւ դուն, բարեկամդ իմ, եղբայր իմ . . . ։
ՃԻՔՕ. Ա՛հ, բա՛ւ է, բա՛ւ է ։ Ձեր սենեակը մտէք և զձեզ մէ՛կը չտեսնէ . . . ։ Բնաւ դուրս մ'ելնէք և դուռը մի՛



բանաք, մինչև իսկ եթէ իմ կողմանէ, կամ թագաւորին կողմանէ և կամ ես անձամբ զձեզ կոչեմ ։ Գացէ՛ք, գացէ՛ք ։
ՄԵՐԻՏՈՐ. Բայց ինչպէս զքեզ վերստին պիտի տեսնեմք ։
ՃԻՔՕ. Վաղը՝ ժամ ութին, թագաւորին զինուց գահլճին մէջ. երկուքդ ալ ներկայացէ՛ք ։ Գացէ՛ք ։
ՄԵՐԻՏՈՐ. Եկո՛ւր զաւակդ իմ, եկուր աղջի՛կս ։
ՏԻԱՆԱ. (առ Պիւսի՝ ծածկաբար) Վա՛ղը ։
ՊԻՒՍԻ. (զգայնաբանօրէն) Մի՛շտ ։ (Տիանա և Մերիտոր դուրս կ'ելլեն)
ՃԻՔՕ. Իսկ դուք, պարոն Պիւսի, մինչև վաղը դուքսին մի՛ երևիք ։ Գացէ՛ք տուն, հանգստացէ՛ք, ես կը հսկեմ ։ Երթանք տեսնենք փողոցն ազա՛տ է. եկէ՛ք ։
ՊՕՆՕՄԷ. Բայց ընթրիքը, պարոն Ճիքօ ։
ՃԻՔՕ. Մինչև զետեղը պիտի առաջնորդեմ պարոնին և վերստին պիտի գամ ։ (Պիւսիին հետ դուրս կ'ելլէ)

## ՏԵՍԻԼ Ե.

ՊՕՆՕՄԷ (յետոյ), ԿՕՐԷՆՖԼՕ

ՊՕՆՕՄԷ. Պիտի վերադառնայ . . . լա՛ւ ։ Ի՞նչ ընթրիք տամ իրեն, լաւ ճաշակի տէր մէկն է և աղէկ կը վճարէ, որ արդի ժամանակիս մէջ հազուագիւտ է ։ (մտնելով որ ձեռք կը մտնէ) Սա սեղանը շտկէ, զինիի հոգ մի՛ տանիր, զայն ինքն ընտրելու սովորութիւնն ունի ։ (Կորէնֆլօ երկայնաբան մարդու մը նման թոյլ և թոյլ քալելով և շարժումներով մտախոհ ձեռք կը մտնէ) Արդարանալի տեղ խեցգետնի թան մը չ'արհամարհեր նա. այո . . . ։ (Մտնելով) Կը լսեմ, խեցգետնի թան մը ։ Խեցգետնի թանէն յետոյ, նարնջեայ վառ'էն կարմրաձուկ մը, հէ. ինչպէ՞ս կ'ըլլայ . . . ։ Այո՛, նարնջեայ կարմրաձուկ մը . . . ։ (Մտնելով) Իմացա՞ր ։ Գանք խորովածին . . . լաւ ուրեմն, Պրէսի աղէկ վառեակ մը . . . — (Կորէնֆլօ կը հառաչէ — նշմարելով զԿորէնֆլօ) Ա՛հ, դո՛ւք էք, եղբայր Կորէնֆլօ ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Ես ծոլ է այն խստամիրտ մեղաւորը որուն համար աղուհացէյ օրով այդպիսի ընթրիք մը կը պատրաստէք ։

ՊՕՆՍՕՄԷ. Բայց ամէնն ալ պահքուան բաներ են . . . խնդրեմ ի ժամ ։

ԿՕՐԷՆՖԼՕ. (ճերմակ շրթունքը վրայ անցնելով) Ա՛հ ։

ՊՕՆՍՕՄԷ. Նարնջենայ գետին կարմրաձուկ մը ։

ԿՕՐԷՆՖԼՕ. (հոգւոց) Ա՛հ ։

ՊՕՆՍՕՄԷ. Վասկոն . . . ա՛հ, կեցիր, չմոռնամ է . . . լաւ ուրեմն վաւեալին տեղ՝ Սէնի ծածանի մը հետ խեցեմոյներով և արծաթաձուկերով համեմուած խեչափառի քամուածոյք մը ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Ա՛հ, ա՛հ ։

ՊՕՆՍՕՄԷ. Եղբայր Կօրէնֆլօի պաշտօնական շամփուր սեղան բերէք ։ (դուրս կ'ելնէ)

## ՏԵՍԻԼ Զ.

ԿՕՐԷՆՖԼՕ (առանձին)

Երբ մարդ մտածէ թէ առանձին ընթրելու չափ որկրամէտ անձինք կան . . . ։ Պօնսօմէ գիս ինչու այս սենեակը բերաւ. « փորձութեան մէջ մի՛ ձգեր ինքզինքնիդ » կ'ըսէ Սուրբ Գիրքը։ Վանքին չարաչար մտածումները։ (ձեռքը ճակատը կը բերէ։) Արդէօք ձայն անգամ մը վարժութիւն ընեմ, քանի որ առանձին եմ . . . « Եղբարք իմ, եղբարք իմ . . . » ասիկա սովորական բան մ'է. Էհ, հարիւր անգամ « եղբարք իմ » կը կրկնեմ երբ ուրիշ բան չեմ գտներ ։ (աթոռին վրայ կ'ելնէ) « Եղբարք իմ » այս աղէկ ։ « Մեծ օր մ'է այսօր . » մեծ օր մ'է այսօր . . . կամ մանաւանդ, « մեծ օր մ'է այսօր » չեմ կրնար ըսել, քանի որ իմ ճառախօսութիւնս ժամը երեկոյեան ութնուկէսին պիտի ըլլայ ։ « Եղբարք իմ, մեծ գիշեր մ'է այս, հանդիսաւոր գիշեր մը . . . ։ (Շիֆօ ներս մտած՝ աւ- կը դնէ)



## ՏԵՍԻԼ Է.

ԿՕՐԷՆՖԼՕ, ՇԻՖՕ

ՇԻՖՕ. Ի՜հ ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Դո՛ւն ես, պարոն Շիֆօ ։

ՇԻՖՕ. Օ՛, մեր բարեկամը, բայց ինչ կ'ընէք ուրեմն հոդ ։

ԿՕՐԷՆՖԼՕ. (իջնելով) Կը տեսնէք՝ պարոն Շիֆօ, որ կ'ընթրեմ։

ՇԻՖՕ. Բայց այս աթոռին վրայ կայնած ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Ոչինչ, ոչինչ։

ՇԻՖՕ. (ինքնին) Արդէօք սա անպիտանը ինծմէ բան մը կը պահէ։ Աստուած վկայ, չքնաղ բան մը պիտի ըլլար, երբ երկու նապաստակներու միայն մէկը բռնելու համար վազած ատեն՝ երկուքն ալ բռնէի. (առ Կօրէնֆլօ) Ա՛հ, կ'ընթրէիք։

ԿՕՐԷՆՖԼՕ. (ձայնը փոխելով) Այո։

ՇԻՖՕ. Ի՞նչ է ասիկա ։ (ձեռքը շիշերուն մէջ կը խոթէ)

ԿՕՐԷՆՖԼՕ. Խիստ առողջարար բանջարեղէն մը ։

ՇԻՖՕ. Բի՛փ. Ճգնաւորի խոտեղէն, գնա՛ բանդ ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Աղուհացից մէջ ենք, մեր փրկութեան նայինք ։

ՇԻՖՕ. Մեր փրկութեան նայինք՝ բայց մեր ստամոքսն ալ չ'ապականենք ։ Էհ, ինչու միասին չպիտի ընթրենք ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Օ՛հ, անկարելի է, ինծ կ'սպասեն ։

ՇԻՖՕ. Ո՞ւր տեղ ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Բայց . . . ։

ՇԻՖՕ. Աստուած իմ, ժամը քանիին ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Ժամը . . . ։ (ոտք կ'ելնէ)

ՇԻՖՕ. Սա Մօնմարթր կիրճին մէջ ըրած փորրիկ ճաշկերնիս կը յիշէք ։

ԿՕՐԷՆՖԼՕ. Երբ ։

ՇԻՔՕ. Խարազանարախման օրը՝ երբ մեր մեծ Թագաւորը ինքզինքըլե ուրիշները կը ձաղկէր, Կուանժ-Պաթըլլիէրի լճէն թռչուն մը և սքանչելի խորոված մը կերանք և Պուրկօնելի այն սիրուն գինիէն խմեցինք . . . :

ԿՕՐԷՆՖԼՕ. Իմ հայրենեացս՝ Հռոմանիայի գինին . . . լաւ էր:

ՇԻՔՕ. Ա՛հ , թէ լաւ էր . . . : Արդ ուրեմն, կը կարծէք որ Պօնօմ այն գինիէն յիսուն շիշ իւր շտեմարանին մէջ ունենայ որոյ քով Մօնմարթրինն՝ Ջրախառն և թթու բան մ'է :

ԿՕՐԷՆՖԼՕ. Ճշմարտութիւնն է այդ :

ՇԻՔՕ. Ինչպէս . և այսպիսի դանձ մը սպառնալով կերակրատան մէջ դուք պարզ ջուր կը խմէ՞ք. ամօթ: (Ջրին շիշով տինեակը կը տրուի)

ԿՕՐԷՆՖԼՕ. Ամէն բանին ժամանակը կայ, պարոն Շիքօ , երբ մարդ խօսելիք Ճառ մը ունենայ . . . :

ՇԻՔՕ. Ա՛հ , դուք Ճառ . . . :

ԿՕՐԷՆՖԼՕ. Ճառ մը ունիմ:

ՇԻՔՕ. Լաւ ուրեմն, ես որ Ճառ մը չունիմ խօսելիք՝ այս Հռոմանիայի գինիէն պիտի Ճաշակեմ. միասին ինչ ուտել կը խրատէք :

ԿՕՐԷՆՖԼՕ. Այս խոտերէն մի' ուտէք , մարդուս ստամոքսը կը խառնակեն :

ՇԻՔՕ. Ո՛չ: (պնակը գետին կը նետէ) Վարպետ Գօրմ :

ՊՕՆՕՄԷ. Ահաւասիկ եմ:

ՇԻՔՕ. Երկու շիշ Հռոմանիայի գինի բերէ՛ք :

ԿՕՐԷՆՖԼՕ. Ինչո՞ւ համար երկու շիշ, քանի որ ես չեմ խըմեր :

ՇԻՔՕ. Թշուառական , թէ որ դուք ալ խմէիք՝ չորս շիշ բերել կու տայի, վեց շիշ , թերևս շտեմարանին մէջ բոլոր եղածները . բայց երբ առանձին խմեմ՝ լաւ ախորժ չեմ ունենար և երկու շիշ ինձ կը բաւեն: (Պօնօմ շիշերը սեղան կը բերէ)

ԿՕՐԷՆՖԼՕ. Յուսամ թէ պահք կը բռնէք :

ՇԻՔՕ. Կը տեսնէք . խեցգետին . . . ըճայլին որս . . :

ԿՕՐԷՆՖԼՕ. Ճշմարիտ է :



ՇԻՔՕ. (հացը ցուցնելով) Եւ ծածան ձուկ մը :

ԿՕՐԷՆՖԼՕ. Ծածան ձուկ մը :

ՇԻՔՕ. (պնակը նորա քթին մօտեցնելով) Անշուշտ :

ԿՕՐԷՆՖԼՕ. Եւ ո՞ր ատենէ 'ի վեր ծածան մը կտուց ունի:

ՇԻՔՕ. Ցուուկ մը ըսել կ'ուզէք :

ԿՕՐԷՆՖԼՕ. Թևե՞ր :

ՇԻՔՕ. Լողացող թևեր :

ԿՕՐԷՆՖԼՕ. Եւ թաթեր :

ՇԻՔՕ. Ատի իւր պոչն է : Ա՛հ , սիրելիդ իմ Կօրէնֆլօ , գինով էք դուք :

ԿՕՐԷՆՖԼՕ. Գինո՛վ՝ ես որ շոմինէ զատ բան չկերայ և ջուրէ 'ի զատ ոչինչ խմեցի . մեր պանդոկապետը կանչենք , թող վՃռէ :

ՇԻՔՕ. Թո՛ղ այնպէս ըլլայ . բայց նախ թող լեցընէ , կ'ուզեմ գիտնալ թէ միևնոյն գինին է : (պանդոկապետը շիշը բանալով կը լեցնէ , Շիքօ յամրաբար կը խմէ :)

ԿՕՐԷՆՖԼՕ. (փոքր 'ի փոքր ըմպէ) Լաւ ուրեմն :

ՇԻՔՕ. Ա՛հ , խեղՃ համտեսող մ'եմ: Մօնմարթրինն անգամ չեմ յիշեր : (գաւաթին մէջ գինի մը նորէն լեցնելով) Կեցիք՝ տէր իմ , բարի քրիստոնէի մը պարտաւորութիւնն է ընկերին առաջնորդել. առաջնորդեցէք ինձ :

ԿՕՐԷՆՖԼՕ. Նոյն համն ունի , բայց . . :

ՇԻՔՕ. Բա՞յց . . :

ԿՕՐԷՆՖԼՕ. Բայց այնքան շատ չէ որ կարենամ դէշ կամ աղէկ ըլլալն ալ ըսել:

ՇԻՔՕ. Ա՛հ , եթէ այս երեկոյ խօսելիք Ճառ մը չունենայիք՝ (գաւաթը լեցնելով) ամբողջ Ճշմարտութիւնն պիտի յայտնէիք ինձ :

ԿՕՐԷՆՖԼՕ. Եթէ այդքան հետաքրքիր էք . . . (կը խմէ) լաւագոյն :

ՇԻՔՕ. Աղէկ . պանդոկապետին հետ խորհրդակից կ'ըլլաք:

ԿՕՐԷՆՖԼՕ. Ոչ . . . Գինեգէտ մը առաջին անգամուն պարտի համը Ճանաչել, երկրորդին՝ տեսակը . երրորդին՝ տարին :

ՇԻՔՕ. (Ելնելով և Կորէնֆլօյի մօտենալով) Տարին, ահաւասիկ ինչ որ պէտք է գիտնալ, տարին: (Երէք ժամերը կը զարնէ:)

ԿՕՐԷՆՖԼՕ. Ասկէց վերջին բան չկայ...: (տանը շուրջ դառնալով կը խօսի) Հազար հինգ հարիւր վաթսուն և մէկ:

ՊՕՆՕՄԷ. Ծնունդ Քրիստոսի. Ճշմարիտ է:

ՇԻՔՕ. Կորէնֆլօ բարեկամ, ձեզի չափ արժէք չունեցող անձանց արձաններ կանգնած են:

ԿՕՐԷՆՖԼՕ. Փոքր ինչ վարժութիւն է, պարոն Շիքօ (կ՚ելնէ)

ՇԻՔՕ. Լաւ ուրեմն, ինչ կ՚ընէք:

ԿՕՐԷՆՖԼՕ. Իմ ժողովքս կ՚երթամ:

ՇԻՔՕ. (Ցածուկ) Ա՛հ, (բարձր) Եւ անտարակոյս խառնակչութեամբ վտանգի կ՚ենթարկէք ինքզինքնիդ... անխոհեմ:

ԿՕՐԷՆՖԼՕ. Ինչու համար:

ՇԻՔՕ. Թագերնիդ պիտի հատցնէք... Կալվէն այնպէս ըսաւ. «Մարդկային թագը գլուխ կը վնասէ»:

ԿՕՐԷՆՖԼՕ. Ես քիչ թագ ունիմ... բայց...: (Ընդ-չքը տեղ մը վրայ կը նայի) Նուանդ ունիմ:

ՇԻՔՕ. Նուանդը բաւական չէ, խեղճ բարեկամս. կաթիլ մը...:

ԿՕՐԷՆՖԼՕ. Ուրեմն, մէկ կաթիլ միայն:

ՇԻՔՕ. Հայտ, հայտ: (Շիշ մը կը ցուցնէ, Կորէնֆլօ կը խմէ)... Ահա այդպէս...: Ուրեմն:

ԿՕՐԷՆՖԼՕ. Ինքզինքս նուաղ տկար կ՚զգամ, ահա արդիւնքը:

ՇԻՔՕ. Թշուառական, գործը նուաղ տկար ըլլալու վրայ չէ, պէտք է ինքզինքնիդ խիստ զօրաւոր զգաք: Ա՛հ, զգուշացէք, քիչ մը սա խեցգետնի ջուրէն կերէք, ապա թէ ոչ գինի պիտի հատիք:

ԿՕՐԷՆՖԼՕ. Իրաւունք ունիք...: Հէ՛, ինչ աղուոր:

ՇԻՔՕ. Եւ ինչ գինի:

ԿՕՐԷՆՖԼՕ. Եթէ ուզ՚էք ինձ պիտի հաւատաք, արդ ուրեմն, խիստ անօթի եմ:

ՇԻՔՕ. Խեղճ Կորէնֆլօ, որուն համար գունաւոր էք:



ԿՕՐԷՆՖԼՕ. Կար մ՚ալ սա կարմրաձուկէն, հէ:

ՇԻՔՕ. Ինչպէս ուրեմն:

ԿՕՐԷՆՖԼՕ. (կռանալով) Համեմունք մը... ա՛հ, այսպէս աւելի աղէկ:

ՇԻՔՕ. Ձեզի լողացող թև մը կարեցի:

ԿՕՐԷՆՖԼՕ. Լողացող թև՛ մը. ա՛հ, իրաւ կ՚ըսէք:

ՇԻՔՕ. Ո՛հ, դուք այդ վճիռը մեր սանդղոկալեալին թռուցիք. հարցուցէք իրեն: Վարպետ Գիլօմ...: (Կորէնֆլօյի) Ա՛հ, թողէք սանիկս... բան մը չէ:

ՊՕՆՕՄԷ. Բայց ծածան ձուկ մը. սա ձուկը կերպարանափոխ ըլլալու համար իրեն տրուած ձև մ՚է:

ԿՕՐԷՆՖԼՕ. Ա՛հ, այդ ուրիշ: Տո՛ւր այդ լողացող թևն ալ: (Խեղդուելու պէս կ՚ըլլայ)

ՇԻՔՕ. Փո՛ւշ մը:

ԿՕՐԷՆՖԼՕ. (ոսկորը ցուցնելով) Աստուած իմ, այո:

ՇԻՔՕ. Ահաւասիկ ձկան անօգտութիւնը...: Վարպետ Պօնօմէ, մեզի համար խոզի ճարպով ձուազեղ մը կը շինէք:

ԿՕՐԷՆՖԼՕ. Ամէնը մէկէն պատառ մը կ՚ընեմ... ինչպէս որ սա զաւաթն ալ ումպ մը...: Ա՛հ, բարեկամս, որքան անքան էի...:

ՇԻՔՕ. Դո՛ւք:

ԿՕՐԷՆՖԼՕ. Սա իմ ճաշս պատճառաւ, որուն համար երեք օրէ ՚ի վեր սիրտս կը հատցընեմ:

ՇԻՔՕ. Շքեղ ճաշ մը ըլլալու է:

ԿՕՐԷՆՖԼՕ. Գերազանց:

ՇԻՔՕ. Ուրեմն մինչև ձուազեղի գալը՝ ինձ ատոր քանի մը խօսքերը ըսէք նայիմ:

ԿՕՐԷՆՖԼՕ. Ի սեղա՛ն...: Ո՛ւր տեսար այդ բանը, վարպետ խենդ, քու Սարդանաբաղեան արքունիքը... Հերովդեսեան ապարանքը... Նաբուգոդոնոսորեան պալատը: (Պօնօմէի) Բե՛ր, բե՛ր:

ՇԻՔՕ. Բայց ճաշը:

ԿՕՐԷՆՖԼՕ. (ճակատին զարնելով) Հո՛ս է:

ՇԻՔՕ. Այնքան անճապարանաց մէջ էիք:

ԿՕՐԷՆՖԼՕ. Կը սաէի...: Ամէն մարդ սատախօս է:

ՇԻՖՕ. Ուրեմն ձեր ժողովը ժամը քանիին պիտի ըլլայ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ժամը տասնումէկին, աբբայարանին մէջ։

ՇԻՖՕ. Ժամը տասնումէկին. բայց ես կը կարծէի որ աբբայարանը ժամը տասնին կը գոցուէր։

ԿՈՐԷՆՖԼՕ. Թող գոցուի . . . ես բանալին ունիմ։

ՇԻՖՕ. Բանալի՞ն . . . ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Աւասիկ. (Օդին մէջ դրամ մը կը նետէ)

ՇԻՖՕ. Ա՜հ, ստակ . . . դռնապան եղբայրը կը կաշառէք։

ԿՈՐԷՆՖԼՕ. Տուր ինծի իմ դրամս։

ՇԻՖՕ. Ա՛ռ, անիծեալ դրամդ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Սարդանաքաղի պատկերով . . . սիրտէն ծակուած։

ՇԻՖՕ. (Մեկուսի) Ա՜հ, աճուսնիկ գործը կը յայտնուի. բայց տակաւին բաւական դինուոլ չէ։ (Կը լռէ. — Բարձր) ուրեմն կատարելապէս կը հասկնամ. այս դրամը դռնապանին կը ցուցնէք և ներս կը մտնէք։

ԿՈՐԷՆՖԼՕ. Եւ ներս կը մտնեմ։

ՇԻՖՕ. Առանց դժուարութեան։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ինչպէս այս գինին իմ ստամոքսիս մէջ։

ՇԻՖՕ. Առանց քղանցից դպելու։

ԿՈՐԷՆՖԼՕ. Այսինքն Կորէնֆլօյի համար դրան երկու փեղկերն ալ կը բանան։

ՇԻՖՕ. Եւ դուք կը խօսի՞ք։

ԿՈՐԷՆՖԼՕ. Եւ ես կը խօսիմ . . . ։ Հոն՝ պարոններ, կիներ և դուքսեր կան։

ՇԻՖՕ. Եւ իշխաննե՞ր։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ասի դու ըսիր . . . ։ Ես Մէտիսեան ուղղափառաց քով կը նստիմ։

ՇԻՖՕ. Այդ ուղղափառները տեսնելու հետաքրքիր եմ։

ԿՈՐԷՆՖԼՕ. (Փքացածելով) Կորէնֆլօ՛ կը կոչեն և ես կը յառաջանամ։

ՇԻՖՕ. Եթէ կարենաք։

ԿՈՐԷՆՖԼՕ. Կը յառաջանամ և կ՚ըսեմ . . . ։

ՇԻՖՕ. (Մեկուսի) Սա գինեմոլին գինիէն ինչ գեղեցիկ ճշ-



մարտութիւններ պիտի ելնեն հիմա։ (Բարձր) Եւ կ՚ըսէ՞ք։

ԿՈՐԷՆՖԼՕ. « Եղբա՛րք իմ . . . ։ »

ՇԻՖՕ. Եղբարք իմ . . . ։

ԿՈՐԷՆՖԼՕ. « Գեղեցիկ օր մ՚է այս՝ վասն . . . շատ գեղեցիկ գիշեր մ՚է այս՝ վասն . . . ամենագեղեցիկ օր մը, գիշեր մը վասն . . . ։ (գինովցած կ՚երգէ)

ՇԻՖՕ. Գիշեր բարի . . . տասներկու ժամու քուն մը ունի։ (Կորէնֆլօյի գլուխը կ՚առնէ, և անոր գլուխը անհետացում մը կը դնէ, ու երբ գլուխը իր վերարկուին տակ գտնելով, կը խօսէ։) Վարպետ Գլօտ, աՀա ընթրեացս համար, աՀա ձիուս համար և աՀա Կորէնֆլօն այնպիսի տեղ մը փոխադրելու համար ուր կարենայ մինչև վաղուան կէս օրը քնանալ։

ՊՕՆՕՄԷ. Անհոգ եղէք. (Կորէնֆլօ կը խռպայ) վաւերական թաթերուն արդիւնքն է։ (Կորէնֆլօյի նայելով) Ի՛նչ գեղեցիկ բան, գինեմոլ մը։ (Կորէնֆլօն սեղանին վրայ կը դնէ գլուխը, բռնած չէր։)

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Սէնթ-Ժընըվիէվի աբբայարանին ստորին մէկ սրահը: Մատրան մնացեալ մասը բռնող տախտակամած մը, ուր հինգ աստիճաններով կ՚ելնուի: Կողմնական դրունք: Տախտակամածին տակ ստորերկրեայ դամբարան: Աբբայարանը մարդերով լի, որոնք վեղարով կամ ուխտաւորաց պատմուճանով ծածկուած են: Կամարական սիւներ, աշտանակներ: Երկու եկեղեցական դասեր կամ գոց խորշեր յաջ և 'ի ձախ, որոց մուտքը ժողովրդեան դէմ առ դէմ են:

## ՏԵՍԻԼ Ա.

ԱՆԾԱՆՕԹ ԿՂԵՐԱԿԱՆՔ, ՇԻՖՕ (Քաղաքացիի մը զգեստ երեն ծածկեալ բանալով։) (Տանեցրիս կեդրոնական երեխաներու տախտակամածին վրայ շարուած են, Նոյն ատեն՝ երեք պարապ նստարաններ։)

ՏԸ ԿԻԶ ԴՈՒՔՍԸ. (Առ Նիքօլա Տավին՝ յետ կողմ դրան անոր ցուցնելով) Եկէ՛ք, վարպետ Նիքօլա Տավին . . . հոն պահուեցէ՛ք և ինչ որ տեղի ունենայ՝ արձանագրեցէ՛ք։

ՏԱՎԻՆ. Այո՛, վսեմափայլ տէր։

ՇԻՔՕ. (մտնելով) Թշուառական, այս առանց դժուարութեան չէ։ Տասը վայրկեան յետոյ շատ ուշ պիտի ըլլար։ (փոխանակ և Նիքերու փողոցէն կը լսուի) Ահա դռները կը գոցուին։ (տախտակին տապանակ և աղմկալից ծուղակը կը գիրէ) Ինչ պիտի ըլլան բոլոր այս անձինք . . . ։ (Երբեք կրծնաւորք տախտակամածին վրայ կ'եկեն և աթոռներուն վրայ 'ի պաշտօն կը մտնեն) Եւ ասոնք։ (Երեքը կրկնեալ ընթացքի ձայնով։)

ՓՈՔՐ ԱԲԵՂԱՅ ՄԸ. Հարիւր երեսուն և վեց եմք։ Ասի Աստուծոյ համարն է։

ՇԻՔՕ. Ա՛հ, (աղմուկ. մարդիկ ելնալ կը սկսին, կը վէճեն։)

ԲԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆՔ. Լռութիւն . . . լռութիւն։

ԿՐՕՆԱՒՈՐԸ. (տախտակամածի աստիճաններէն) Եղբայր Մոնսորօ։

ՄՈՆՍՈՐՕ. Ներկայ։

ՇԻՔՕ. Լաւ, ահա նապաստակներուս մին։

ՆԱԽԱԳԱՀ ԿՐՕՆԱՒՈՐԸ. Եղբայր Մոնսորօ, Անժուի գաւառէն ինչ լուր կը բերէք Միաբանեան։

ՄՈՆՍՈՐՕ. (վերելով ամբիոնին մէջ յառաջանալով) Գէշ, եղբարք իմ։ Միութիւնը՝ այս գաւառին մէջ տարածելու համար յոյս պարոն Մերիտորի վրայ էր, բայց այս ծերունին իւր աղջկան մահուանէն յուսահատեալ՝ իւր վշտաց մէջ, Սուրբ դաշնակցութեան բոլոր մասնակցութիւնը մերժեց։ Բայց սակայն բազմաթիւ միակցութիւններ կը բերեմ, որոց կարևորութիւնը խորհուրդնիս պիտի գնահատէ։ Զանոնք՝ ըստ կանոնի, ուղղափառներու արձանագրութեանց մէջ դնելիցեմ։ (Համաձայնութեան մրմունջ. Մոնսորօ նորէն 'ի կարգ կը մտնէ)

ԿՐՕՆԱՒՈՐԸ. Եղբայր Լաճիւրիէր։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Ներկայ։ (աղմուկ)

ՆԱԽԱԳԱՀ ԿՐՕՆԱՒՈՐԸ. Բարիզի մէջ ձեր սահմանէն ինչ լուր։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Եղբարք իմ, ամէնքդ ալ գիտէք որ ես նախանձախնդիր մ'եմ։ Ես էի, որ Սուրբ Բարթողիմէոսի օրը հերետիկոսութեան ծիծաղելի նախապաշարումներ արհամարհելով՝ ընկերցս իմ վարձուորներս սպաննել։ Արդ, գիս թաղապետ անուանեցին. Միաբանութեան համար երջանիկ պարագայ մը, որովհետև Սէն-Ժերմէն-Լօքսէրուա թաղին բոլոր հերետիկոսները



մի առ մի կը գիտեմ, որ միշտ ձեր ծառայութեան պատրաստ կը կենամ, եղբարք իմ, Արպըրսէք փողոցին Պէլ-Էթուալ պանդոկին մէջ։

ՇԻՔՕ. Պարկեշտ Լաճիւրիէր։

ՁԱՅՆՔ. 'Ի խնդիր։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Պատրաստ եմ։ Մեզ երբեմն իշխանի մը միակցութիւնը խոստացած էին 'ի Սուրբ դաշնակցութիւնս . . . բայց նա չը գար։ Պարոն տ'Անժու գուցէ շատ դանդաղ է։ (Համաձայնութիւն։ Աղմուկ)

ՄՈՆՍՈՐՕ. Ինչու դանդաղ է։ Զայդ ձեզ ով ըսաւ։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Որովհետև վտանգի ենթակայ ըլլալու վախուն համար մերիններէն չէ։ (Շշնջոց։ Համաձայնութիւն և աղմուկ։)

ՄՈՆՍՈՐՕ. Ինչպէս գիտէք որ իւր միակցութիւնը իմ այս երեկոյեան բերած և ներկայացուցածներուս հետ չէ։ (Աղմուկ։ Համաձայնութիւն։)

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Իրաւացի է պիտի սպասեմ համարոյն բացանդակութեան։ Բայց եթէ պարոն տ'Անժուն մեզ գլխաւոր չուզենանք՝ ուրիշներ ունինք և նշանաւորներ խակ. ընկերութիւննիս կազմենք, ուղղափառները դասակարգենք. ամէնքս ալ գիրար կը ճանչեմք, ամէնքս ալ գիրար կը հասկնամք . . . ։ Լռութիւն, ինչպէս որ Պիկէրան կ'ըսէ, և բոլորովին մեղմով գործենք . . . բոլորովին մեղմով։ (Խոր լռութիւն կը չէ։ Ծափահարութեան աղմուկ)

ՇԻՔՕ. Լռութիւն . . . բայց ոչ ընտանին։ Բոլորովին մեղմով, բոլորովին մեղմի՛կ. աս իմ գործս չէ։

ՆԱԽԱԳԱՀ ԿՐՕՆԱՒՈՐԸ. Եղբայր Լաճիւրիէրի առաջարկութիւնը գերագոյն խորհրդոյ պիտի ուղարկի։

ՇԻՔՕ. Ա՛հ, կ'սկսիմ հասկնալ . . . ։ Տը Կիզ պարոնները Տէրութեան մէջ փոքրիկ ընկերութիւն մը կը կազմեն . . . Մեծն Կիզ՝ զինուորները պիտի ունենայ . . . Մայէն՝ գիւղացիները . . . Կարդինալը՝ եկեղեցին։ Միայն իմ զաւակս փոքրիկ Հէնրիս այլ ևս բան մը չպիտի ունենայ։

ԿՐՕՆԱՒՈՐԸ. (կոչելով) Եղբայր Կորէնֆլօ։

ՇԻՔՕ. Ո՞ւր է այն նախկին Փրանսուա տ'Անժու . . . ինչ

կ՚ընէ այս գործին մէջ։ Իմ երկրորդ նպատակս ինտոր ընենք որ երեւան ելլէ ։

ԿՐՕՆԱՒՈՐԸ. (կանչելով) Եղբայր Կորէնֆլօ ։

ՇԻՖՕ. Է՛հ, կը մոռնայի որ Կորէնֆլօն ես եմ։ Արդեօք ինծի ձայն մը պիտի ուղեն, ըստ գիտաց ։

ԿՐՕՆԱՒՈՐԸ. Եղբայր Կորէնֆլօ, հոս չէք ։՝

ՇԻՖՕ. Ա՛յ սատանայ, այ սատանայ . . . (բարձր) ներկայ ։

ԿՐՕՆԱՒՈՐԸ. Ինչու չէիք պատասխաներ ։

ՇԻՖՕ. (ընդ ատամունս խօսելով) Եղբայր Լաշխուրիէրի գաղափարաց վրայ կը մտածէի ։

ԿՐՕՆԱՒՈՐԸ. Լաւ ուրեմն, խօսեցէք ։

ՇԻՖՕ. Շատ կարեւոր պիտի ըլլայ որ զիրենք ամէնքն ալ ճանչեմ։ (ականջին մէջ կը յաւելու) Եղբարք իմ . . . ։ (ինքնին) Ուսկից սկսելու է ։ (բարձր) Ա՛հ, գեղեցիկ օր մ՚է այս, վասն . . . գեղեցիկ օր մ՚է այս որ զմեզ կը միացընէ, բայց քանի որ մեք միացած եմք՝ մեր մէջ այլ եւս խաւար չկայ, իրարու խօսք հասկնամք, յայտնի խօսիմք . . . ազատ խօսիմք։

ԲԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆՔ. Այո . . . այո . . . իրաւունք ունի . . . ազատ խօսիմք . . . ։

ՇԻՖՕ. (ինքնին) Կարի քաջ։ (բարձր) Եղբարք իմ, ինչ է թագաւորութիւն մը, մարմին մը . . . omnis civitas corpus est . ամէն քաղաք մարմին մ'է: Ինչ է մարմնոյ մը փըրկութեան պայմանը . մարմնոյ քաջառողջութիւնը ։ Ինչպէս կը պահուի մարմնոյ քաջառողջութիւնը. անոր վրայ լայներակահատութիւններ 'ի գործ դնելով՝ երբ ունէ տեղ մը զօրութեան չափազանցութիւն կայ . . . ։ Արդ ուրեմն, մեր թշնամիք չափազանցօրէն զօրաւոր են, ահա ահա սոսկալի է։

ԱՄԷՆՔԸ. Քաջ է, քաջ է, քաջ է ։

ՇԻՖՕ. Նա ով զմեզ կ՚արգելու երակահատութիւնն 'ի գործ դնել։ Միթէ գործիներու պակասութիւնն . միթէ ազատ կամքին . . . ոչ . . . ։ Եղբայր Մոնտրօ, մեր ուղղափառը, ապահով եմ որ իւր որսորդապետութեան սուրը զօտիէն կախած է. եղբայր Լաշխուրիէր գիտութեամբ իւր շամփուրն ու խոհանոցի դանակը գործածելու կերպը գիտէ։ Բայց զմեզ կեցընողը օրինակի



մը պակասութիւնն է։ Եւ մեր չունեցածը մեր նպատակին խրախոյսն է ։ Ինչ . վեղարի մը տակ ծածկուելու, ինքզինքնին կը ծածկեն կամ բոլորովին մեղմով կը ժողովին, բոլորովին մեղմով. չեն համարձակիր դաշնակցութեանս զինուոր ըլլալնին խոստովանիլ, չեն համարձակիր նորա գլխաւորները ըլլալնին խոստովանիլ, եւ ինչպէս որ Ուտիկէի Կատոն կ՚ըսէ, աքսիներու նման գիշեր ժամանակ գաղտագողի կը սպրդին հին մենաստանի մը մէջ, Ներօմիւսէն Կորէնֆլօյի ունկնդիր ըլլալու համար, բայց եղբարք իմ, մեք վախկոտ դէմք կը կրեմք. ամենքս ալ պարզապէս վախկոտ եմք. բայց մեք տեղի կու տամք այն անիծեալ հերետիկոսներուն ծիծաղելու, որոնք պատե բազմի օրը խեթիւ չեն նայիր. բայց մենք զմեզ իրարու չցուցունելնուս համար մեր զօրութիւնը չեմք ճանաչեր . . . բայց մեր գլխաւորները՝ ծանօթ չըլլալնուն պատճառաւ՝ մեզ զինուոր չեն բերեր։ Ո՛ն ուրեմն, մեր դատաստանը վսեմ է. զայն յարկերուն վրայէն հռչակենք, ինքզինքնիս ցուցընեմք, քալեմք կարգ կանոնով, թափօր դառնամք մեր զինուորներով եւ դեղարդներով, Բարիզի փողոցներուն մէջ ։ Ստորագրե՛մք դաշնակցութիւնը, ստորագրե՛մք, եւ չստորագրողներուն ապակիները կոտրեմք, ահա այսպէս մեր դատաստանին կը ծառայեն, ահա այսպէս հայրենեաց կը ծառայեն ։ Եւ եթէ ինձ ըսէք, ո՛վ է այն մարդը որ օրինակ պիտի տայ . պիտի պատասխանեմ, ես եմ, ես Ներօմիւսէն-Մօնէսմ Կորէնֆլօ . ես զօր պիտի տեսնէք զրահը կռնակս, հրացանը ուսիս վրայ, սուսերն 'ի կողիս, ես՝ որ ինձ հետեւիլ ուզող ուղղափառ զինուորաց գունդին գլուխը անցած առանձինն յառաջանալը պիտի տեսնէք ։ Եւ այս ալ երբ, եղբարք իմ, յառաջիկայ կիւրակէ, ոչ աւելի ուշ։ Ես պատրաստ եմ, ինձ հետեւիլ ուզողներն ալ պատրաստ են ։

ԱՄԷՆՔԸ. Այո, այո, այո, ստորագրենք, ստորագրենք։

ՇԻՖՕ. Լաւ ուրեմն, կիւրակէ օրը ։ Յառաջ խաղամք, յառաջ խաղամք . . . ։ Կիւրակէ օրը ։

ԱՄԲՈՂՋ ՁԱՅՆԵՐՆ. Քաջ է, քաջ է։ (ծափահարութեան աղմուկ) Կեցցէ քաջն Կորէնֆլօ . կեցցէ անվեհերն Կորէնֆլօ։ Դաշնակցութեան թափօրը, թափօրը . . . ստորագրեմք ։

ՆԱԽԱԳԱՀ ԿՐՕՆԱՒՈՐԸ. Շատ շուտ է ։

ՄՈՆՍՈՐՕ. Կը տեսնէք հեղ մը ատ յանդուգն . . :

ՆՈՒԱԳԱՀ ԿՐՕՆԱՒՈՐԸ. Եղբայրք իմ, արձակման ժամ է . տանտը գոցուած է . . . . :

ԱՄԻՆՔԸ. Թափօրը, թափօրը : Կիւրակէ, Կիւրակէ :

ՇԻՔՕ. (ընդոստնելով) Շնորհակալ եմ, եղբայրք իմ. շնորհակալ եմ: (զինքը կը շրջապատեն, կը ծիծղին : — Հանդարտաբար կը հեռանայ :) Ա՛հ, Միութեան պարոններ, հուսկ յետոյ զիրար պիտի տեսնենք : Ապահով եմ որ Մայէն և Նիքօլա Տալիա հոս են . . . բայց ո՞ւր են: Այս անիծեալ վեղարներուն տակ զիրենք ինչպէս ճանչնալու է : Ելնելու ժամանակ փորձենք, աւելի մօտէն զիրենք տեսնելով: (դէպ 'ի դուռը կը յառաջանայ)

ՄՈՆՍՈՐՕ. Դուքսը չերևցաւ : Ինծի կը կասկածի : Իր միակցութիւնը, մինչ իրենց տուածին ամենը այս է . . : Զայս ինչպէս հասկնալու է : Ամէն ոք դուրս կ'ելնէ . . . բան մը ինծ կ'ըսէ թէ այս նիստէն ետքը ամեն ինչ լմնցած չէ: Երեք գլխաւորները իրենց ետևը կեցող երկոտասնեակին ծանօթութեան նշան մ'ըրին, մէկ կողմ սպասուրտինք . . : Այս սանդուխին ծայրը բեմ մը կայ . . : (շուտին մէջ կ'անհետանայ)

ՇԻՔՕ. (վերադառնալով) Թշուառական, բայց դուրս ելնելու համար ատաղձէ ուրիշ դրամ մը պէտք է ցուցընել և ես զայն չունիմ . . . : Բայց ամեն մարդ դուրս ելան . . . ես առանձին պիտի մնամ, գլխ երևան պիտի հանեն. ա՜յ սատանայ, ո՞ւր ծածկուիմ . . . Թշուառական : (փոքր աբեղային առջև կրօնաւոր մը հետ դուռը տեսնելով՝ սիւնի մը ետին կը կծկի:)

ՓՈՔՐ ԱԲԵՂԱՅՆ. Մէկը չկա՞յ . . . պիտի գոցուի :

ՇԻՔՕ. (Իր տեղէն ելլէ խոյս տալու համար կամաց կամաց սիւնին բոլորտիքը դառնալ, աջ կողմի դրանէն մէջ խորշ մը կը գտնէ, ուր ամփոփուելով փայտէ վանդակը կը բանայ :) Գոցէ, գոցէ :

ՓՈՔՐ ԱԲԵՂԱՅՆ. Դռնապան եղբայր, ամէն կողմ աչքէ անցընենք :

ՇԻՔՕ. Ո՜վ Աստուած, ահա աբեղայիկ մը զոր չպիտի մոռնամ: (կը խորշելով . — Շիքօ անկիւն մը կը կծկի . . : Երեք Երկոտասնեակ կրօնաւորները իրենց տեղը կը նստին : Շիքօ վերը կ'երեւցնէ և կը նայի) Ա՛յ սատանայ . այս կրօնաւորները և փոքր



աբեղայն հոս չպիտի սպասէին . . . : Երկուք մինչև՞ աթոռները սեղաններուն վրայ կը դիզեմ և պատուհանէն խոյս կուտամ :

ՓՈՔՐ ԱԲԵՂԱՅՆ. Բոլոր լոյսերը մարեցէք . որպէս զի ամեն ինչ լմնցած ըլլալը դուրսէն հասկնան :

## ՏՍԻԼ Բ.

ՇԻՔՕ. (ծածկուած). — Գիշեր. պատուհանէն լուսնոյ աղօտ ճառագայթ : Հմ... եթէ վախկոտ բնաւորութիւն ունենայի . . : Ա՜հ, իմ փոքրիկ Հէնրիս որքան պիտի վախնար հոս տեղ . . . : Ըստ իս, առ այժմ քուն մը առնեմք: (ամբիոնի վրայ զետեղուած մեծայայն հարուած մը :) Հէ, քարերը կը քալե՞ն . . . էհ . . . (գետնամածէն մէկ տախտակ յանկարծ կը բարձրանայ և կրօնաւոր մը անցնելու տալ, յետոյ ուրիշ մը, ևն :) Տակաւին . . . ա՜հ, մինչ այս աբբայարանին բոլոր վանահայրները՝ Օրթէէն սկսեալ մինչև Բիէռ Պօտուէն, իրենց գերեզմաններէն դուրս պիտի ելնեն . . . սատանա՜յ, ա՜յ սատանայ, սատանա՜յ . . . : (ամէն ինչ կը դադարի . նոր գիշեր կը հնչէ)

## ՏԵՍԻԼ Գ.

ՓՈՔՐ ԱԲԵՂԱՅՆ, ԵՐԵՔ ԿՐՕՆԱՒՈՐՆԵՐԸ, ՇԻՔՕ (ծածկուած)

ՄԱՅԷՆԻ ՁԱՅՆԸ. Մեր ապաստան անձը հոս է :

ՇԻՔՕ. Աւասիկ ձայն մը զոր կը ճանչեմ:

ԿՐՕՆԱՒՈՐ ՄԸ. (առ Մայէն) Այո, վեհափայլ տէր :

ՇԻՔՕ. Վեհափայլ Տէր . . . Մայէնն է . . . ինքն ըլլալուն ապահով էի :

ՄԱՅԷՆ. Թո՛ղ զինքը ներս մտցնեն . . . : Դուք ալ

եկէք, պարոններ ։ (Աստուածատուրն տանելու կը ձեռնարկէ դուրս կ'ելլեն ։)

ՇԻՔՕ. Ո՛հ, ասի երկու արարուածով կատակերգութիւն մ'է եղեր ։ Ահաւասիկ երկրորդը կ'սկսի ։

ՄԱՅԷՆ. Պարոննե՛ր, հիմա որ առանձինն եմք՝ կրնամք զմեզ յայտնել։ (Վերջինները կ'ելլան և նախ ճոխ ապսպրելով)

ՇԻՔՕ. (ըմպելով ծխելով) Դրստ հի՛ն . . . ա՜հ փոքր աբեղայն, կոբե՛ր ։ Մեծն Հէնրի տը Կի՛զ, իր փառաւոր սպիով։ Ա՜ն զոր Նորին Ամենաքրիստոնէական Վեհափառութիւնը Շարլի թէի պաշարման զբաղեալ կը կարծէ . . . ։ Լա՛ւ։ Պարոն Լօրէն . . . ոչինչ կը պակսի ։ Ա՜հ, այո, Նիքօլա Տավիտ պակաս է ։

ԼԻՎԱՐՕ. (Դուռը բերելով) Պարոն տ'Անժու դուքը ։
(Կինը, Մայէն, պարոն Լօրէն կը բռնեն ընթը ։)

## ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ԴՈՒՔՍԸ

ԴՈՒՔՍԸ. Ահաւասիկ եմ, պարոնայք ։

ՇԻՔՕ. Իմ միւս նապաստակս ։

ԱՄԷՆՔԸ. (ոտքի-ելլալով) Կեցցէ՛ պարոն Դուքս տ'Անժու ։

ՇԻՔՕ. Լիվարօ, Րիպէրաք, Անդրակէ, բոլոր իր բարեկամները ։ Ուրեմն այս թշուառական Ֆրանսուան ուրիշներու գլխով թագաւորին խաղ խաղալէ չպիտի՞ ձանձրանայ, ինչպէս որ Լա Մօլի և Գօգօնասի գլուխներով կը խաղար ։

ՏԸ ԿԻԶ. Բանէ մը մի՛ վախնաք՝ վեհափայլ տէր, կամարները խուլ և մեր դռները լաւ պահպանուած են ։

ՇԻՔՕ. Այո՛, այո՛ ։

ԴՈՒՔՍԸ. Պարոննե՛ր, քիչ մը առաջ տեղի ունեցած բոլոր խօսքերը լսեցի ։ Ես ալ ձերիններէն եմ, ասոր վրայ անտարակոյս եղիք ։

ՇԻՔՕ. Բարի՛ Ֆրանսուա ։ (ամենքն ալ կը խոնարհին)

ԴՈՒՔՍԸ. Բայց այս թագաւորութեանս աղնուականաց նը-



պատակը պէտք չէ որ միայն հերետիկոսութեան կործանումն ըլլայ ․ ես ուրիշ մ'ալ ընդնշմարած եմ։

ՇԻՔՕ. Խօսէ՛, ես ալ ազնուական եմ։

ՊԱՐՈՆ ԼՕՐԷՆ. Ձեր Վսեմութեան երկիւղածօրէն ունկընդիր եմք ։

ՄԱՅԷՆ. Եւ մեր սիրտերը՝ ձեզ ունկնդրած ատեննիս յուսով կը բաբախեն ։

ՇԻՔՕ. Ա՛յ սատանայ, ինչ կրնամ յուսալ։

ԴՈՒՔՍԸ. Արդ, երբ ազնուական մը իր առ Աստուած ունեցած պարտուց վրայ մտածէ, այն ատեն կը խորհի . . ։

ՇԻՔՕ. Իր թագաւորին վրայ ։ Միշտ յառա՜ջ։

ԴՈՒՔՍԸ. Ա՜ն ատեն կը խորհի իր երկրին վրայ ։

ՇԻՔՕ. Կեցի՛ր նայինք ։

ԴՈՒՔՍԸ. Ինքնիրեն պիտի հարցընէ թէ այն ազնիւ երկիրը որոյ որդին է ինքն, իր սպասելու իրաւունք ունեցած բոլոր բարութիւնները կը վայելէ՞ ։ Իրարու վրայ աճող և թունաւոր բոյսեր հունձքը կը խեղդեն ․ ինչու այն մահաբեր բոյսերը արմատախիլ չ'ըլլա՞ն։ Պարոններ, Հէնրի թագաւորը ոչ թէ բարեկամներով այլ ամօթապարտ պատաւաբոյծներով շրջապատեալ է, որոնք Գաղղիոյ երջանկութիւնը կը խեղդեն ։

ԿԻԶ. Ճշմարիտ է ։

ՄԱՅԷՆ. Իրաւունք ունիք, իշխան ․ ջնջենք այն անիծեալ սերունդը, որու՝ մեզնէ իւրաքանչիւրը պէտք է անընդհատ յարի։

ԴՈՒՔՍԸ. Զմեզ Սէն-Մէկրէնէն ազատելով՝ արդէն այդ ջանքն սկսած էք կատարել՝ պարոն դուքս ։

ՇԻՔՕ. զՍէն-Մէկրէն սպաննելով ։

ՄԱՅԷՆ. Ուրիշներ ալ կան՝ վեհափայլ տէր ։

ԱՆԴՐԱԿԷ. Մեր ձեռքն են՝ վեհափայլ տէր, ես՝ Գէլիւսին վրայ պիտի յարձակիմ։

ԼԻՎԱՐՕ. Ես ալ՝ Մօժիրօնին ։

ՐԻՊԷՐԱՔ. Ես՝ Շօմպէրկին ։

ԴՈՒՔՍԸ. Եւ մնացեալը՝ իմ քաջ Պիւսիս կ'ըստանձնէ։

ՇԻՔՕ. Վստահ եղի՛ր, քու քաջ Պիւսիիդ վրայ ։

ԴՈՒՔՍԸ. Աս գիշեր մեզի հետ կ'ըլլար, պարոններ, եթէ ինձ հաճոյ պատրաստելով ստացած վէրքը զինքը յանկողին չենթար-

կէր ։ Բայց ես պատասխանատու եմ իրեն համար ։

ՇԻՔՕ. Ե՛ս ալ ։

ՄԱՅԷՆ. Պարոննե՛ր, քիչ մը առաջ հոս մոլեռանդին մէկը կը բանդագուշէր և իւր ցնորից հակառակ . . ։

ՇԻՔՕ. Շնորհակալ եմ ։

ՄԱՅԷՆ. Ճշմարտութիւն մը խօսեցաւ . ըսաւ թէ « Համարձակութիւն չունիմք » , իրաւունք ունէր . համարձակ ըլլանք ։

ՇԻՔՕ. Արդ ուրեմն, աղէ ։ Համարձակ եղիք, իմ ուզածս ալ այդ է ։

ՄԱՅԷՆ. Գործառեայ թագաւորի մը իշխանութեան տակ միթէ պարտիմք տակաւին ապրիլ այնպիսի ժամանակ մը , յորում Սպանիա՝ խարոյկներ կը վառէ, Գերմանիա՝ վանքերու շուքին մէջ թմբրեալ ծերունի հերձուածապետները կը զարթուցանէ, երբ Անգլիա՝ թէ խնդիրներ և թէ գլուխներ կը կտրէ ։ Մեք կը քնանամք , պարոններ ։ Թող մեծ իշխան մը ներէ մեզ ըսելու որ մեք ոչ թէ թագաւորով մը այլ կրօնաւորով մը կը կառավարուիմք ։

ԱՄԷՆՔԸ. Անկցի՛ Վալուա , անկցի՛ Հէնրի , անկցի՛ . . . Ճշմարիտ թագաւոր մը, ասպետ մը , և բռնաւոր մը իսկ եթէ պէտք է, քան թէ կրօնաւոր մը ։

ԴՈՒՔՍԸ. (կեղծաւորաբար) Ներողութի՛ւն , պարոննե՛ր , գուցէ եղբայրս մոլորեալ է ։

ՇԻՔՕ. Սուլէ , օ՛հ , սուլէ ։

ԿԻԶ. Վեհափայլ Տէ՛ր, ձեր լսածը Ճշմարտութիւնն էր ։ Մեր իղձերը կը ճանչէք, դաշնակցութեանս խորհուրդը ձեզ անծանօթ չէ ,և այժմ սորա արդիւնքը պիտի տեսնէք ։

ԴՈՒՔՍԸ. Ի՞նչ ըսել կ'ուզէք , պարոն տը Կիզ ։

ԿԻԶ. Վեհափայլ Տէր, մեք ոչ թէ անհիմն և չնչին խընդրոյ մը համար հաւաքուած եմք, այլ հասարակաց պատւոյն և փրկութեան նպատակաւ ։ Գաղղիոյ ազնուականութեան պետ մը պիտի կարգեմք ։ Եւ ըստ որում մեր նախահարց՝ Ֆրանկաց սովորութիւնն էր արժանագոյնին արժանի նուէր մը ընել , ահաւասիկ մեր նուէրը , վեհափայլ տէր, զայն Ձեր Վեհափառութեան ոտից ներքև կը դնեմ ։ (Նոյն կը ցուցնէ թուղթ մը զոր երէց աշխատաւորները որոյն և Սուրբ Գէորգին հետ բերած էն ։)

ԴՈՒՔՍԸ. Ինծի թա՞գ մը ։



ԱՄԷՆՔԸ. (իրենց սուրը քաշելով) Կեցցէ Ֆրանսուա Երրորդ ։

ԴՈՒՔՍԸ. (սարսափահար) Պարոնայք , պարոնայք , եղբայրս դեռ ո՛ղջ է ։

ԿԻԶ. Զինքն առ այժմ իշխանութենէ կը զրկեմք մինչեւ որ Աստուած արդարութիւնն 'ի գործ դնէ ։

ԴՈՒՔՍԸ. (դողդողալով) Պարոններ ։

ԱՆԴՐԱԿԷ. (ցած) Վեհափայլ Տէր , մեք ամե՛նքս ալ ձեզ անձնուէր եմք ։ Ընդունեցէ՛ք, այսպէս պէտք է ։

ԴՈՒՔՍԸ. Լա՛ւ ուրեմն . լաւ ուրեմն . . . այո . . . ։

ԱՄԷՆՔԸ. Երդո՛ւմը . . . երդո՛ւմը ։

ՊԱՐՈՆ ԼՕՐԷՆ (ծերը ներկայացնելով) Երդում ըրէ՛ք, տէ՛ր ։

ԴՈՒՔՍԸ. Կ'երդնում ։

ՄԱՅԷՆ. (զինքը ցուցնելով) Պահէ զքեզ Աստուած՝ պըսակաւն արդարութեան և փառաց ։

ԿԻԶ. (սուրը նմա մատուցանելով) Զինէ զքեզ Աստուած՝ սրովն արդարութեան և փառաց ։

ԱՄԷՆՔԸ. Կեցցէ արքայն Ֆրանսուա Երրորդ ։

ՊԱՐՈՆ ԼՕՐԷՆ. Վեհափառ տէր , այս վայրկենէս Գաղղիոյ թագաւոր էք դուք, և կաթողիկէ Երրորդէ նուիրագործեալ , որոյ ներկայացուցիչներն մեք եմք ։

ՇԻՔՕ. Թշուառակա՛ն , խոյլ չունենալն ալ ի՜նչ դէշ բան է եղեր ։

ԴՈՒՔՍԸ. Պարոնայք , զիրենք կառավարելու համար զիս ընտրողները երբեք չպիտի մոռնամ ։ (Կիզին) Եկէ՛ք, պարոն սպարապետ իմ . (զինքը համբուրելով . — Մայէնի .) Եկէ՛ք, մեծդ իմ իշխան Գաղղիոյ ։ Իմ իրականապէս թագաւոր եղած օրս , պարոններ , հոս ներկայ եղող բոլոր ազնուականներն ալ զանազան կարգի ասպետներ պիտի ըլլան (ամենքը կը խոնարհին)

ՇԻՔՕ. Կապոյտ-ժապաւէն մ'ըլլալու ի՜նչ առիթ ։ Աղէկ պահո՛ւինք , աղէկ պահո՛ւինք ։ (Լօրէնի իշխանները զօրքը կ'առաջնորդեն ։ Մեծաները ալ իրեն կ'ընկերանան և նորա հետ զօրքերուն մէջ կ'իջնեն ։ Այն ատեն ամբողջն բանակով զօրքերուն կը ծունի ։)

ՄՈՆՍՕՐՕ. Ա՛հ, շնորհազարդ տէրդ իմ . . . ահաւասիկ ի՜նչ որ արքայարանին մէջ պիտի ընէիք . — ահաւասիկ ձեր

իմ վրայ ունեցած վստահութիւնը ։ Զքեզ կը բռնեմ, Ֆրանսուա տ'Անժու, Գաղղիոյ Թագաւոր . . . ։ (Թուղթը ձեռք կ'առնու, իշխանին հետեւող մեծաւորաց մէջ կը մտնէ եւ անոնց հետ կ'աներեւութանայ)

## ՏԵՍԻԼ Ե.

ԿԻԶ, ՄԱՅԷՆ, ՊԱՐՈՆ ԼՕՐԷՆ, ԴՔՍՊՈՒՀԻՆ, ՇԻՔՕ (ծածկուած)

ԴՔՍՊՈՒՀԻՆ. (մեծաձայն խնդալով) Հա՛, հա՛, հա՛ ։

ԿԻԶ. Լռութի՛ւն, քո՛յր իմ ։

ԴՔՍՊՈՒՀԻՆ. Պսակին տակ այն սոսկալի դէմքը նշմարեցի՞ք ։

ԿԻԶ. Մեր ձեռքն է. անկարելի է որ մեզմէ խոյս տայ ։

ՄԱՅԷՆ. Եւ օգուտ քաղենք այն անմար Փարիզցիներուն յուզմունքէն զոր դաշնակցութեանս ստորագրութեան պատճառաւ իրարու պիտի առթեն ։

ՊԱՐՈՆ ԼՕՐԷՆ. Նախ և առաջ, ինքզինքնիս կարգադրենք՝ մեր յատուկ գործերուն զբաղի՛նք ։

ՇԻՔՕ. Ինչպէ՞ս, իրենց գործե՛րը ։ Ուրեմն դեռ լմնցած չէ՞ն ։ Ի՞նչ օգուտ ունի խաղալը՝ երբ բոլոր մարդիկ կը ննջեն ։

ՄԱՅԷՆ. Ուստի հո՛ս է կ'ըսէք ։

ԿԻԶ. Այո՛ ։

ՊԱՐՈՆ ԼՕՐԷՆ. Ես զինքը չնշմարեցի ։

ՇԻՔՕ. Որո՞ւ վրայ կը խօսին ։

ԿԻԶ. Պահուած է ։

ՇԻՔՕ. Հէ՞ ։

ՄԱՅԷՆ. Ո՞ւր ։

ԿԻԶ. Խորշի մը մէջ ։

ՇԻՔՕ. Ո՛ւֆ. ուրեմն ո՛վ պահուած է խորշի մը մէջ . . . ։ Թշուառակա՛ն, ինձմէ զատ մէկը չեմ տեսներ ։

ՄԱՅԷՆ. Ուրեմն ամեն ինչ լսե՞ց ։

ԿԻԶ. Անշո՛ւշտ . . . ։ Զինքը փնտռեցէք, Մայէն ։ (Մայէն Շիքօյի խորշէն կը յառաջանայ)



ՇԻՔՕ. Ա՛յ . . . անիծեա՛լ, գլս մուկի մը պէս ծակին մէջ պիտի սպաննեն ։ Բայց չեմ կրնար ինքզինքս թողուլ որ այնպէս ընեն, և. քանի որ առիթը կը ներկայանայ՝ նախ և առաջ պարոն Մայէնը պիտի խեղդեմ ։ (Մայէն մինչեւ ծածուկ դուռը կը յառաջանայ՝ երբ Կիզ երեսը կը ծռէ)

ԿԻԶ. Այդ չէ . . . միւս դէմինը ։

ՇԻՔՕ. Ո՛հ, ժամանակին է՛ր ։ Բայց ո՞վ է ուրեմն միւսը ։

ՄԱՅԷՆ. Ելէք, վարպետ Նիքօլա Տավիտ ։

ՇԻՔՕ. Լա՛ւ. դու պահւած էիր հանդիսէն ։ Ա՛հ, իսկոյն . . . ։ (Խոր ողջոյն) Քիչ մը համբերութիւն, իմ փոքրիկ բարեկամս ։

## ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ, ՆԻՔՕԼԱ ՏԱՎԻՏ

ՏԱՎԻՏ. Ձեր հրամաններուն պատրաստ եմ, տեա՛րք իմ ։

ԿԻԶ. Դուք ամե՛ն ինչ տեսաք, ամե՛ն ինչ հասկցաք՝ և կրնաք՝ ամե՛ն ինչ Պապի դեսպանին հաղորդել Ավինեոնի մէջ ։

ՏԱՎԻՏ. Առանց բառ մը զանց առնելու ։

ԿԻԶ. Դուք, ինչպէս որ յարմարած էր, պարոն տ'Անժու դուքսին պսակման այս ատեանը համառօտագրեցիք և իր երդումն ու խօսքերը հոն բովանդակեցիք ։

ՏԱՎԻՏ. Ամե՛ն ինչ արձանագրեցի, տէ՛ր, ստորագրեցի և հիւսակեցի ։ Աշխատասիրութեանը ։

ԿԻԶ. Լաւ ։

ՏԱՎԻՏ. Եւ աշխատասիրութիւնը, տէ՛ր, այն յառաջակայիրը որ զինք առանց վէճի Գաղղիոյ գահին վրայ նստեցընելու համար համառօտագրել խոստացայ Ձեր Մեծապատուութեանդ ։

ՇԻՔՕ. Անո՛նք ալ. ա՛հ. բայց ուրեմն ամեն մարդ Վալուայի գահն ելնել կ'ուզէ ։ Այլ ես ոչ թէ գահոյք մը, այլ նստարան մ'է այն ։

ԿԻԶ. Լօրէնեան սերունդը որքան որ նշանաւոր ալ ըլլայ,

գժուարաւ Վալուայի սերնդեան վրայ պիտի կարենայ քայլ առնուլ։

ՏԱՎԻՏ. Միայն թէ Շարլըմաներէն իջած չըլլայ, ինչպէս որ այս ազգաբանութիւնը կ'ապացուցէ։

ԿԻԶ. Շարլը տը Լօրէնէն, այո. բայց խզարգել օրէնքը։

ՏԱՎԻՏ. Տէր, խզարգել օրինաց առաջին գործածութեան թուականն որն է։

ԿԻԶ Կարծեմ, հազար երեք հարիւր քսան և ութն։

ՏԱՎԻՏ. Այսինքն ձեր նախահայր Շարլը տը Լօրէնէ երկու հարիւր քառասուն տարի վերջը։ Ուրեմն, երբ խզարգել օրէնքն հնարուեցաւ՝ երկու հարիւր քառասուն տարիէ 'ի վեր ձեր նախահարք գահոյից իրաւունք ունէին։ Օրէնքը անցելոյն վրայ ներգործող հանգամանք մը չունի։

ՇԻՔՕ. Ա՛յ անիծեալ, մնասունը կարծածէս աւելի թունաւոր է եղեր։

ԿԻԶ. Ճարտար մարդ մ'էք դուք, վարպետ Տավիտ։

ՊԱՐՈՆ ԼՕՐԷՆ. Հանճարեղ։

ՄԱՅԷՆ. Զմայլելի։

ԴՔՍՈՒՀԻՆ. Քանդակիչներս իրաւունք ունին։

ՇԻՔՕ. Աստուած իմ։ Փաստաբանները, փաստաբանները։

ԿԻԶ. Եւ ըսել թէ իմ հասակս ունեցող մարդու մը այսպիսի թշուառութիւններ կարևոր են . . . ըսել թէ երբեմն հասարակութիւնը սորա կը հնազանդի փոխանակ մարդու մը ազնուութիւնն ու իրաւունքը իր աչաց կամ սրոյն փայլման մէջ կարդալու։

ՊԱՐՈՆ ԼՕՐԷՆ. Ահաւասիկ ձեր երկու հարիւր ոսկի սկուտները։ (Քսակ՝ մը կու տայ։)

ՄԱՅԷՆ. Միւս երկու հարիւրներուն հետ։ (Ուրիշ քսակ մը կու տայ իրեն։) Եւ Ավինեօնի ճանապարհին վրայ . . . Բիէր տը Գօնտի որ մեղնէ է, այս ազգաբանութիւնը Հռոմ պիտի տանի և վաւերացեալ պիտի դարձնէ։

ՏԱՎԻՏ. Վաղն առտու պիտի մեկնիմ ես։

ՄԱՅԷՆ. Այս գիշեր, նոյն իսկ այս գիշեր։

ՏԱՎԻՏ. Այս գիշեր, տէր։

ԿԻԶ. Ցե՛տս փառնանք արդ . . . մեր դամբարանէն



( Տավիտի ) Դուք՝ այս դռնէն՝ որուն մէկ բանալին ձեզ պիտի տայիմ, որպէս զի կարենայիք եկեղեցի մտնել։

ՏԱՎԻՏ. Ահաւասիկ բանալին։

ԿԻԶ. Բարի ճանապարհորդութիւն։

ՏԱՎԻՏ. Աստուած ձեզ հետ ըլլայ, տեարք իմ։ (Իշխաննեըը դուրս կ'ելլեն)

## ՏԵՍԻԼ Է.

ՆԻՔՕԼԱ ՏԱՎԻՏ, ՇԻՔՕ

ՇԻՔՕ. (ցնցելով զՏավիտ որ ճշմարիտը առնել կու տայ և պառակելով որ դամբարանին դուռը նորէն փակուի։) Ա՛հ . . . ահաւասիկ վճարաժամը։ (Նորա ճանապարհը կը փակէ։)

ՏԱՎԻՏ. Ո՞վ է այն. ներողութիւն. (կ'ուզէ անցնիլ, բայց Շիքօ դուռ կուրծքով ու դէմ կը կենայ) Դուցէ ո՛վ ըլլալս չէք գիտեր։

ՇԻՔՕ. Ընդհակառակը. Նիքօլա Տավիտն էք։ Դո՛ւք էք որ զիս չէք ճանաչեր.

ՏԱՎԻՏ. Ո՞վ ուրեմն . . . .

ՇԻՔՕ. Հին ծանօթ մը . . . Շիքօն . . . պարոն տը Շիքօն։

ՏԱՎԻՏ. (յետ յետ երթալով) Անկարելի՛։

ՇԻՔՕ. (անհամբերութեամբ փետուր մը մօտենալով) Դիտեցէ՛ք։

ՏԱՎԻՏ. Ի՞նչ ընել եկած էք հոս. ի՛նչ կ'ուզէք։

ՇԻՔՕ. Է՛հ . . .

ՏԱՎԻՏ. Մեր ձեզի տուած գաւազանի հարուածներուն հատուցումը ուզելու։

ՇԻՔՕ. Ընդհակառակը, զանոնք ես պիտի դարձընեմ հիմայ . . . և սոյն առթիւ պիտի ուզեմ այդ սիրուն ազգաբանութիւնը ձեռք անցընել . . . .

ՏԱՎԻՏ. Հէ՞։

ՇԻՔՕ. Դուք գիտէք, այն մագաղաթը՝ որ պարոն Կիզի Շարլըմանէն սերունդէ իջած ըլլալը կ'ապացուցէ։

ՏԱՎԻՏ. Ա՛հ, գաղտագէտ... գաղտագէտ և միանգամայն ծաղրածու ։

ՇԻՔՕ. Գաղտագէտ՝ զձեզ կախել տալու համար և ծաղրածու՝ զայն ծաղր ընելու համար ։

ՏԱՎԻՏ. Դուք հո՛ս էիք... ։

ՇԻՔՕ. Ձերինին դէմը եղող գասին մէջ... ո՛հ՝ եթէ այսքան մօտ ըլլալը գիտնայի.... ։ Սա ազգարանութիւնը, եթէ կը հաճիք ։

ՏԱՎԻՏ. Ի՞նչ ընելու համար ։

ՇԻՔՕ. Զանի թագաւորին տալու համար որ հետաքրքրական բաները կը սիրէ և անով զձեզ պիտի հաշտեցընեմ, եթէ պարկեշտաբար զայն ձեր պարտեաց փոխարէն վճարէք ։

ՏԱՎԻՏ. Ձեր վրայ կը թքամ ։

ՇԻՔՕ. (սուրը հանելով) Դուք ինձ չէք հաւատար, պարոն Տավիտ, որովհետև գէշ բնաւորութիւն մը ունիք ։ Որովհետև խորամանկութեամբ, ստրնդաբերութեամբ և սրով զօրաւոր էք, դուք ինքզինքնիդ կ՛ըսէք՝ թէ մարդ մը իր թշնամին պարտի մաչեցնել, ինչպէս որ ժանգը երկաթը կը մաշեցնէ ։ Կեցիք, հաւատացէք ինձ. զձեզ շատ կ՛ատեմ, բայց սա մագաղաթը ինձ տուէք, և ես ձեր բաղդը շինեմ... ։ Հանդարտ կեցիք ուրեմն... գիտէ՞ք թէ ինչու համար ձեզ հետ այսպէս պիտի վարուիմ, որովհետև մէկը կը սիրեմ ։ Ասի զձեզ կը զարմացնէ, զձեզ՝ որ ձեր անձէն 'ի զատ ոչ զոք կը սիրէք ։ Ես թագաւորը կը սիրեմ, որքան տկար և որքան որ մոլորեալ երևի. թագաւորը՝ որ ինձ ապաստանարան տուաւ և զիս պաշտպանեց ձեր այն մարգախոշոշ Մայէնի դէմ որ բռնակիրներու միջոցաւ աղնուականները կ՛ըսպաննէ ։ Արդ ուրեմն, թո՛ղ իմ խեղճ թագաւորս հանգչի, թո՛ղ հանդարտ տիրէ, թո՛ղ Կիզերու, Մայէններու, Անժուներու, ազգարանութիւններու և Նիքօլա Տավիտներու ձեռքէ ազատի.... ։ Սա մագաղաթը և դուք ինչ որ ըլլալ ուզէք՝ պիտի ըլլաք... Մի անգամ, երկու անգամ, երեք անգամ... ։ Չէ՞ք ուզեր ։ Լա՛ւ ուրեմն, զձեզ կախել պիտի տամ ։

ՏԱՎԻՏ. (զինքը կեցնելով) Վարպետ յիմար, երբ մարդ այսպիսի գաղտնեաց տեղեակ ըլլայ՝ կը մեռնի. երբ մէկը Նիքօլա Տավիտի սպառնայ՝ կը մեռնի. երբ մարդ մը հոս մտած



է, ալ դուրս չ՛ելնէր, կը մեռնի ։ (սուրը յետ կ'առնէ ։)

ՇԻՔՕ. (ինքն 'ի յետս) Ո՛րքան անբան է այս մարդը որ ինձ պատճառած հաճոյքը չտեսնէր. ո՛հ, զձեզ պիտի սպաննեմ... ո՛հ, զձեզ պիտի սպաննեմ, այնպիսի հարուածով մը զոր թագաւորէն սորվեցայ, որուն հետ ամէն օր զինավարժութիւն կ՛ընեմ ։ Ասի շողոքորթիչ է, հէ՞, ձեզ նման ստահակի մը համար ։ (անոր կուրծքէն դպչելով) Կեցիք, հո՛դ. սա տեղ ատասիկ պիտի դպիմ. (Ճերմակ կաշիով նորա կուրծքէն վրայ խոց մը կը գծէ. — Պատերազմ. — Նիքօլա Տավիտ վիրաւորած՝ մէկ քանի հառաչներ կը խօսէ) Ա՛հ, ա՛հ, զայս չէի՞ք յուսար ։ Այն գաւազանի հարուածներէն 'ի վեր յառաջադիմութիւններ ըրած եմ, հէ՞, այնպէս չէ՞.... ։ Տեսնե՞նք, սա թուղթերը... կը հաճի՞ք ։

ՏԱՎԻՏ. Երբէ՛ք ։ (Շիքօյի վրայ կը գահավիժէ)

ՇԻՔՕ. Ահաւասիկ այն հարուածը ։ (սուրը կը ձգէ ։ Տավիտ կ՛իյնայ և մահու տագնապներու մէջ կը գլորի ։ Շիքօ նորա հոգին աւանդելը կը դիտէ ։ Նորա քաշկինը կը տանի և ազգարանութիւնը կ՛առնու ։) Լա՛ւ, ահա՛ իմ առաջին նապաստակս... զայն ականջներէն բռնած եմ... թագաւորութեան ատենագրութիւնը, խիստ լաւ ։ Հիմայ ալ բանալին ։ (պատառածանին՝ ուր իր յոյս յետը քանդած է) Ա՛հ, Կօրէնֆլօ, այս գիշերն աղէկ անցուցիր ։

(դուրս կ՛ելնէ ։)

# ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

## ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Լուվրի մէկ սրահը, ձախ կողմէն Թագաւորին սենեկին կցեալ, եւ խորէն Մառսի սրահին կից: Աջ կողմը խորաշէն մեծ պատուհան մը:*

### ՏԵՍԻԼ Ա.

ՇԻՔՕ (*հանգստեան աթոռին մը վրայ պառկած,*) ԱՐՔԱՑՆ

ԱՐՔԱՑՆ. (*դուռն 'ի ներս դիտելով*) *Վերջապէս աւասիկ... Թշուառականը, արդեօք ժամը քանիին վերադարձած է և ինչ բռած է ամբողջ գիշերը: Կը քնանայ. իւր սենեակն երթալու անգամ զօրութիւն ունեցած չէ: (կանչելով) Շիքօ, Շիքօ:*

ՇԻՔՕ. (*զարթնլով*) *Հէ՜, ինչ է ան դարձեալ:*

ԱՐՔԱՑՆ. *Շիքօ, ինչ կ'ընես հոդ, հոս չեն քնանար:*

ՇԻՔՕ. *Բայց ընդհակառակը, շատ աղէկ կը քնանան..: Անցիր փոքրիկ Հէնրիս. միթէ հիւանդ ես, զաւակս:*

ԱՐՔԱՑՆ. *Օ՛ն, ելի՛ր. կամ մանաւանդ եթէ քնանալու փափաք ունիս՝ կորսուէ՛ քու սենեակդ. թո՛ղ որ գործս տեսնեմ:*

ՇԻՔՕ. *Հէ՜, գո՛ւ, դու գործ պիտի տեսնես:*

ԱՐՔԱՑՆ. *Պարոն Մօրվիլիէի կ'սպասեմ: Այո՛:*

ՇԻՔՕ. *Ադ ինչ է: Ո՞վ է այդ պարոն Մօրվիլիէն:*

ԱՐՔԱՑՆ. *Խեղճը քունէն այնքան անզգայացեր է, որ իմ գիւանագպիրս այլ ես չճանչեր: Պարոն Մօրվիլիէ այնպիսի մարդ մ'է, որ չքնանար, կը տեսնես, և իւր Թագաւորին վրայ կը հսկէ:*

ՇԻՔՕ. *Ա՛հ, այո՛, մարդ մը, որ խոշոր ոտքիկներ ունի:*

ԱՐՔԱՑՆ. *Եւ զանոնք ո՛վ կը վասոկի: Առանց նորա արթնութեան և քաղաքագիտութեան ինչ պիտի ըլլար թագաւորութիւնը:*



ՇԻՔՕ. (*հեգնել*) *Ըսիր... իւր քաղաքագիտութիւնը: Փոքրիկ Հէնրիս, միթէ ստուգիւ զորա կը հաւատաս:*

ԱՐՔԱՑՆ. *Վարպետ յիմա՛ր:*

ՇԻՔՕ. *Ի՞նչ կու տաս ինծ՝ եթէ քեզ ապացուցեմ թէ դու քաղաքագիտութիւն չունիս: Տեսնե՛նք, ինչ կու տաս ինծ... կը թողո՞ւս որ քնանամ:*

ԱՐՔԱՑՆ. *Լռէ՛, Շիքօ. այս առաւօտ ես չեմ խնդար: Կ'երևի թէ պարոն Մօրվիլիէ ծանր բաներ ունի ինծ ըսելիք:*

ՇԻՔՕ. *Բէ՜հ... ինչ բանի վրայ:*

ԱՐՔԱՑՆ. *Պապանձէ՛:*

ՇԻՔՕ. *Մտիկ ըրէ՛...: Կը յիշե՞ս որ օր մը... ո՛չ, երեկոյ մը...:*

ԱՐՔԱՑՆ. *Ի՛:*

ՇԻՔՕ. *Ա՛հ, գլուխ մ՛ ընդմիջեր...: Կը յիշե՞ս որ երեկոյ մը Գէյլիւսի և Շօմպէրկի հետ Գրուամանթէլ փողոցին մէջ կը շրջագայէիր:*

ԱՐՔԱՑՆ. *Կարելի է... յետոյ:*

ՇԻՔՕ. *Կը յիշե՞ս որ Գէյլիւս և Շօմպէրկ խիստ ուժգին հարուածներ ընդունեցան:*

ԱՐՔԱՑՆ. *Հէ՜:*

ՇԻՔՕ. *Շատ ուժգին հարուածներ՝ մանկլաւիկի մը գդչելնուն համար... խիստ ուժգին ծեծ մը կերան, և դու ալ նաև:*

ԱՐՔԱՑՆ. *Գարշելի՛:*

ՇԻՔՕ. *Օ՛ն... ապացուցէ՛ թէ ոչ...: Ա՛հ... արդ ուրեմն, հետեւեալ օրը, կը յիշես որ պարոն Մօրվիլիէն բերել տուիր, ինչպէս որ այս առաւօտ ալ պիտի գայ:*

ԱՐՔԱՑՆ. *Յետոյ:*

ՇԻՔՕ. *Եւ առջի իրիկունը քու բարեկամներէդ աւնուականի մը գլխուն՝ Գրուամանթէլ փողոցին մէջ պատահած ցաւալի դէպքը իրեն պատմեցիր:*

ԱՐՔԱՑՆ. *Յետո՛յ, յետո՛յ:*

ՇԻՔՕ. *Անոր հրամայեցիր որ այն չարը, այն ամբարիշտը գտնէ:*

ԱՐՔԱՑՆ. *Թէ՛րև՛ս:*

ՃԻՔՕ. Զէնքն գտաւ ։

ԱՐՔԱՑՆ. Ո՛չ։

ՃԻՔՕ. Լաւ ուրեմն, ես էի այն . . . կը տեսնես հիմայ որ քաղաքագիտութիւնդ բարեկամ չէ։

ԱՐԲԱՑՆ. Թշուառ անզգամ։

## ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ, ՆՈՒԻՐԱԿՆ 'Ի ՊԱՇՏՕՆԻ

ՆՈՒԻՐԱԿԸ. Պարոն ատենապլապետը նորին Վեհափառութեան հրամանաց պատրաստ է ։

ՃԻՔՕ. Գնա՛, գնա՛, և թո՛ղ որ քնանամ. (Արտաքին ելնելուն պէս Ճիքօ կը կանչէ. — Նուիրակին) Մէկը հոն ինձ կ'սպասէ։

ՆՈՒԻՐԱԿԸ. Այո՛, տէր, պարոն Պիւսին ։

ՃԻՔՕ. Առանձի՞ն ։

ՆՈՒԻՐԱԿԸ. Այո՛, տէր ։

ՃԻՔՕ. Ինձ բեր զինքը . . . գնա։ (Նուիրակը դուրս կ'ելնէ) Թո՛ղ այս օրս այնպիսի մարդու մը երեսը տեսնելով սկսիմ, որ ոչ ղք կը մատնէ . թերևս այս կերպով երջանիկ ըլլամ։

## ՏԵՍԻԼ Գ.

ՃԻՔՕ, ՊԻՒՍԻ

ՃԻՔՕ. Ա՛ղէ ուրեմն, պարոն կո՛մս, ինչպէս քնացաք, դուք։

ՊԻՒՍԻ. Ես չքնացայ . . ։ Շատ հաւանական կ'երևի, ինձ որ այլ ես երբէք չպիտի քնանամ, ատի լմնցաւ ։

ՃԻՔՕ. Վէրքերնիդ կը նեղէ զձեզ։

ՊԻՒՍԻ. Այո՛, իմ վէրքս . . . ։ Տակաւին մարդ մը չտեսա՞ք։

ՃԻՔՕ. Դեռ շատ կանուխ է։ Միջնորդրան դռնապանին պատուիրեցի որ մեր երկու բարեկամները ներկայանալնուն պէս՝ զինուց դահլիճը տանի զիրենք ։



ՊԻՒՍԻ. Ա՛հ, պարո՛ն, ա՛հ. ինձ ըսելու ուրիշ բան մը չունի՞ք ։

ՃԻՔՕ. Բայց ոչ . . . ։

ՊԻՒՍԻ. Դուք կը հանդուրժէք որ այս գարշելի, անիրաւ, և արհաւրօք յափշտակեալ ամուսնութիւնը՝ այսուհետև անարգել, առանց մահավերջ պատերազմի մը նուիրական ըլլայ ։ Վերջապէս . . . յունութիւն, նենգապատրութիւն տեղի ունեցաւ, և կոմսուհին՝ պիտի թողքէ, 'ի հարկին ։

ՃԻՔՕ. Է՛հ, է՛հ, ամուսնութիւն մը . . . մարդ ինչ կրնայ ընել .

ՊԻՒՍԻ. Ես չպիտի հանդուրժեմ։ Այնքան մոլեգին սիրով կը սիրեմ . ։ ։ (Ճիքօ կը յուզուի) Պարոն Մերիտոր . . . այս արժանաւոր ազնուականին վիշտը ինձ այնպէս թափանցեց որ իւր աղջիկը իրեն դարձնելու համար . . ։

ՃԻՔՕ. Զինքը պարոն Մոնսորոյէն ետ պիտի առնուք . . . ատի խիստ լաւ . . . ինչպէս կը խորհիք ընել . . . ։

ՊԻՒՍԻ. Ես յատակագիծս ունիմ։

ՃԻՔՕ. Պարոն ս'Անժու ձեզ ինչ ըսաւ ։

ՊԻՒՍԻ. Զինքը չտեսայ . . ։ Ինձ պատուիրեցիք որ ձեզ խօսելէ առաջ զինք չտեսնեմ։ Ձեզ թողլով իրեն պիտի երթամ .

ՃԻՔՕ. (Յետոյ անոր տալով) Ի Լուվր պիտի գայ հիմայ ։

ՊԻՒՍԻ. Այսքան կանո՞ւխ ։

ՃԻՔՕ. Խիստ կանուխ պիտի գայ . . . այս առաւօտ ։ Տեսէք, իւր ձիերն են բակին մէջ, կը լսէք ։

ՊԻՒՍԻ. Ճշմարիտ է . . ։ Վեր կու գայ ։ (Նուիրակը Ճիքօյի մօտենալով ցած ձայնիւ կը խօսի իրեն)

ՃԻՔՕ. Եւ զինուց դահլիճին մէջ ինձ կ'ըսպասեն ։

ՊԻՒՍԻ. Ո՛հ, ըսէք իրեն . . . ըսէք իրեն որ զինքը պիտի ազատեմ, և իմ միակ վիշտս՝ բոլոր արիւնս իրեն համար թափած չ'ըլլալս պիտի ըլլայ . . . ։ Ըսէք իրեն . . . ։

ՃԻՔՕ. Պարոն Մերիտորին . . . կ'երթամ։ (Եւ դառնալով) Ի դէպ ժամուն . . . եթէ չյաջողիք . . ։

ՊԻՒՍԻ. Պիտի յաջողիմ։

ՃԻՔՕ. (Ինքնիրեն) Առանց Մոնսորոյի հաշիւ կը տեսնէ .

(Քաշուի) բայց վերջապէս եթէ չյաջողիք՝ յիշեցէք որ իմ երկրիս մէջ, յուսահատ պարապայից համար հին դեղ մը կայ միշտ ։ (Դուրս կ'ելնէ)

## ՏԵՍԻԼ Դ.

ՊԻԽՍԻ, ԴՈՒՔՍԸ

ԴՈՒՔՍԸ. (Նստելով) Եղբօրս թող իմացուան... ։ Այս առաւօտ, իր առողջութեան համար անհանգիստ էի ։ Սոսկալի երազ մը տեսայ.... ։

ՊԻԽՍԻ. Ցերա՛ն, Վեհափայլ տէր ։

ԴՈՒՔՍԸ. Պիսսի՛ ։ այս ժամուս, ՚ի Լուվր ։

ՊԻԽՍԻ. Ձեր Վսեմութեան տունէն կու գամ, զիս չընդունեցին ։

ԴՈՒՔՍԸ. Սակայն հրամայած էի... ։

ՊԻԽՍԻ. Հոգ չէ, վեհափայլ տէր, զձեզ տեսնել կ'ուզէի, զձեզ կը տեսնեմ... բաւական է ։

ԴՈՒՔՍԸ. Ինձ ըսելու կարեւոր բան մը ունի՞ս ։

ՊԻԽՍԻ. Բայց այո՛, վեհափայլ տէ՛ր ։

ԴՈՒՔՍԸ. (Անհանգիստ) Ա՛հ... ։

ՊԻԽՍԻ. Այս գիշերուան վրայ ձեզ պիտի խօսիմ։

ԴՈՒՔՍԸ. (Անհանգիստ) Ա՛յս գիշերուան վրայ... իմացա՞ր... ։

ՊԻԽՍԻ. Ամէն ինչ որ գիտնալ կ'ուզէի... բայց ի՞նչ ունի ուրեմն Ձեր Վսեմութիւնը ։

ԴՈՒՔՍԸ. Չեմ հասկնար ։ Ահաւասիկ ունեցածս... ։

ՊԻԽՍԻ. Ձեր Վսեմութիւնը չհասկնա՞ր որ ինձ իրեն համար յանձնարարութիւն մը բրած ըլլալով՝ նոյն յանձնարարութեան վրայ հաշիւ կու տամ։

ԴՈՒՔՍԸ. Ա՛հ... ներողութիւն... այնքան բաներ անցան... ։ Այո՛, Պիսսի, այո՛, դու ինձ հաշիւ մը տալու կը պարտէիր այնպիսի բանի մը վրայ որ սիրտս բոլորովին գրաւած է... ։ Արդ ուրեմն... ի՞նչ պէտք եմ յուսալ ։



ՊԻԽՍԻ. Վեհափայլ տէր, պէտք էք հնձել՝ ինչ որ ցանեցիք, մեծ անօթապարտութիւն... ։

ԴՈՒՔՍԸ. Ինչո՞ւ բոլք... ։ (Պիսսի [illegible] Նաչն) Ո՞ւր է ուրեմն այն կինը ։

ՊԻԽՍԻ. Կը կարծէի թէ Ձեր Վսեմութիւնը զինք ճանչցած էր ։

ԴՈՒՔՍԸ. Ինքն է... Տիանա՛ն է ։

ՊԻԽՍԻ. Այո՛, Վեհափայլ տէ՛ր ։

ԴՈՒՔՍԸ. Ո՞ղջ... զինքը տեսա՞ր... քեզ հետ խօսեցա՞ւ... ։

ՊԻԽՍԻ. Այո՛ ։ Ուրուականները միայն չեն խօսիր ։ Ճշմարիտ է՝ տէր, որ զինքը մեռած կարծելու շատ իրաւունք ունէիք... եւ արդարեւ աւելի լաւ պիտի ըլլար եթէ մեռած ըլլար ։

ԴՈՒՔՍԸ. Ինչու՞ համար... ։

ՊԻԽՍԻ. Որովհետեւ նահատակութենէ խոյս տալով՝ կեանքն պահելով, մահուանէ աւելի մեծ թշուառութիւն մը գտաւ ։

ԴՈՒՔՍԸ. Ի՞նչ ։

ՊԻԽՍԻ. Որովհետեւ մարդ մը նորա պատիւը ազատեց եւ նա պարոն տ'Ընժու գործին արդէն կարկառեալ բազուկներէն խոյս տալու համար, որուն հոմանին ըլլալ չէր ուզեր, այնպիսի մարդու մը բազկաց մէջ նետուած է, յորմէ ինքը կը գարշի եւ նա զինքը իւր կինը ըրած է ։

ԴՈՒՔՍԸ. Ի՞նչ կ'ըսես ։

ՊԻԽՍԻ. Կ'ըսեմ թէ Տիանա տը Մերիտոր, երէկուընէ ՚ի վեր, տիկին Մոնսորօ կը կոչուի ։

ԴՈՒՔՍԸ. Մա՜հ իմ կենաց... ։ Ի՞նչ կ'ըսես... ։

ՊԻԽՍԻ. Վկայ Աստուած, քանի որ զայդ ես կ'ըսեմ։

ԴՈՒՔՍԸ. Լաւ չէք հասկնար զիս ։ Ես ինձ կը հարցնեմ միայն թէ կարելի՞ է որ իմ պաշտօնականներէս մէկը, Մոնսորօ մը, ինձ դէմ պաշտպանելու յանդգնի կին մը՝ զոր իմ սիրովս կը պատուէի ։

ՊԻԽՍԻ. Նա ձեզ պիտի պատասխանէ թէ զինքը ոչ թէ ձեր սիրոյն դէմ պաշտպանած է՝ այլ բռնութեան ։

ԴՈՒՔՍԸ. Բռնութեա՛ն . . . զայդ՝ ինք խրատեց ինծի :

ՊԻԽՍԻ. Ինքը՞ . . . :

ԴՈՒՔՍԸ. Կարծ իսկ ստիպմամբ :

ՊԻԽՍԻ. Այն մանկամարդ օրիորդը անպատուել կը խրատէր ձեզ այն մարդը :

ԴՈՒՔՍԸ. Զայն ինծի գրած է :

ՊԻԽՍԻ. Ա՛հ, վեհափայլ տէր . . . :

ԴՈՒՔՍԸ. Դու ալ կը կասկածիս (նամակ մը առնելով իր գրպանէն) Տես :

ՊԻԽՍԻ. (կարդալով) « Վեհափայլ Տէր. Առանց խղճի անձկութեան . . : Ձեռքի հարուածը անվրդով պիտի կատարուի, որովհետև իմ շնորհիւս գեղանի անձը այս երեկոյ Լիւտէի դղեակը կը մնայ: Այս հոգը ես կը տանիմ ... զալով գիմադրութեան՝ Պօժէի դղեակը փոխադրուելէն վերջը ալ բանէ մ՚ալ մի կասկածիք . . : Այս երեկոյ իսկ հոն պիտի ըլլայ: Ձեր Վսեմութեան ամենայարգատու ծառայն: Կոմս Պրիյան տը Մոնսորօ :

ԴՈՒՔՍԸ. (Նամակը նորէն առնելով) Ի՞նչ կ՚ըսես: Այս մատնիչը Տիանայի՝ իրեն հաւատացնել կու տար զիս :

ՊԻԽՍԻ. Ինքն ալ կը սիրէր զան, ահա նորա արդարացումը:

ԴՈՒՔՍԸ. Կը հաւատամ : Պիտի տեսնես թէ որքան վրէժ լուծել գիտեմ:

ՊԻԽՍԻ. Ա՛ն ուրեմն : Իշխան մը այսպիսի թշուառէ մը վրէժ չլուծեր . . . կը պատժէ զան :

ԴՈՒՔՍԸ. Եւ ի՞նչպէս :

ՊԻԽՍԻ. Օրիորդ տը Մերիտորն երջանկացնելով . . . ազատութիւնն իրեն դարձնելով:

ԴՈՒՔՍԸ. Բայց կ՚ըսես թէ իր կինն է :

ՊԻԽՍԻ. Ամուսնութիւնը բռնի եղած է, ոչինչ է :

ԴՈՒՔՍԸ. Ճշմարիտ է :

ՊԻԽՍԻ. Ջնջել տուէք այս ամուսնութիւնը, Վեհափայլ տէր, ինքզինքնիդ արժանաւոր ազնուական մը ցուցըցէք, ազնիւ իշխան մը . . : Մեր ամենէն գծեզ օրհնել տուէք :

ԴՈՒՔՍԸ. Ի՛նչ եռանդ . . : Ուրեմն քեզ այդքան կը շահօգտէ այս, Պիկսի :

ՊԻԽՍԻ. Ինծի՝ բնաւ երբէք . . : Թէ որ այս կէտին մէջ ինծի



շահօգտող բան մը կայ, այն է՝ որ Ձեր Վսեմութիւնը խաղալիկ չըլլայ այնպիսի վատի մը զոր երախտեօք լցուցած էք . . . գոյցէ ՚ի վնաս իմ: Այն է ինծի շահօգտող բանը՝ որ չըսեն թէ դուք վատութեանց կը հանդուրժէք և թէ ես անպատիւ իշխանի մը կը ծառայեմ:

ԴՈՒՔՍԸ. Պիտի տեսնես :

ՊԻԽՍԻ. Կը հասկնա՞ք, այնպէս չէ՞, Վեհափայլ տէր :

ԴՈՒՔՍԸ. Պիտի տեսնես թէ հասկցա՞յ :

ՊԻԽՍԻ. Ուրեմն համամիտ էք, այս ամուսնութիւնը ջնջել կու տա՞ք :

ԴՈՒՔՍԸ. Ջնջուա՛ծ է :

ՊԻԽՍԻ. Ազնուականի մը խոստմամբ :

ԴՈՒՔՍԸ. Իշխանի մը խոստմամբ :

ՊԻԽՍԻ. Եւ այն թշուառ կինը ազա՞տ է :

ԴՈՒՔՍԸ. (Նորա ձեռքը բռնելով) Խօսքս առած ես :

ՊԻԽՍԻ. (Նորա ձեռքը համբուրելով) Ա՛հ, կեանքս ուզեցէք ինծմէ, վեհափայլ տէր:

ԴՈՒՔՍԸ. Արքա՛յն . . . : Լռութի՛ւն :

## ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ, ԱՐՔԱՅՆ (յախ կողմէն մտնելով) ՇԻՔՕ, ՏԻԱՆԱ ԵՒ ՄԵՐԻՏՈՐ

ՇԻՔՕ. (առ Պիկսի) Մոնսորօ՝ որ Ֆոնթէնպլօյի որսին համար հակահրաման ընդունեցաւ, այս վայրկենիս ՚ի Լուվր կը հասնի : Պարօնն ու Տիանան՝ Մասսի սրահը առաջնորդեցէք : (Պիկսի խորք կ՚երթայ, Տիանան և իր հայրը փնտռելու)

ՊԻԽՍԻ. (ցած առ Տիանա) Ազա՛տ, տի՛կին, ազա՛տ էք . . : Մէկ ժամէն յաւիտեանս ազատ և երջանիկ պիտի քալէք :

ՏԻԱՆԱ. Ո՛հ, օրհնեա՛լ ըլլաք . . . :

ՇԻՔՕ. (առ Պիկսի) Արդ ուրեմն, ի՞նչ լուր . . . :

ՊԻԽՍԻ. (առ Շիքօ) Իր խոստումն առի :

ՇԻՔՕ. Ի՞նչ բանի վրայ երդումն ըրաւ :

ՊԻԽՍԻ. Իր պատուոյն :

ՇԻՔՕ. Աւելի լաւ ունիմ որիշ բան մը . . . Հասկցէ՛ք՝ որ Մանսորօ, Տիանան ու Հայրը չիշմարէ :

## ՏԵՍԻԼ Զ.

ՇԻՔՕ, ԱՐՔԱՅՆ, ԴՈՒՔՍԸ

ՇԻՔՕ. Արդ ուրեմն գնա՛ս, պարոն Մորվիլիէն տեսար.

ԴՈՒՔՍԸ. (առ Ռոգասոյն) Այնքան փոյթ ունէի Ձեր Վեհափառութիւնն գրկելու . . . :

ՇԻՔՕ. (մեկուսի) Սինյօր :

ԱՐՔԱՅՆ. (բարեկամաբար) Շնորհակալ եմ, Ֆրանսուա :

ՇԻՔՕ. (մեկուսի) Անիծեալ : (Ռոգասոյն) Եւ քաղաքականութեանդ ծանր պարագանե՞րը :

ԱՐՔԱՅՆ. Առեւտրականը՝ 'ի Շարթը ուխտագնացութեան երթալս վտանգաւոր կը կարծէ :

ՇԻՔՕ. Ա՞յդ է ամենը :

ԱՐՔԱՅՆ. Բաւական չէ . . . :

ՇԻՔՕ. Ի՜նչ գարշելի բան է սուտը . . . : Խոստովանէ ուրեմն որ առեւտրականդ քեզ այնպիսի բաներ ըսաւ, զորս չես ուզեր եղբօրդ ներկայութեան կրկնել:

ԴՈՒՔՍԸ. Եւ ինչու համար, պարոն :

ՇԻՔՕ. Թագաւորը գիտէ թէ Ձեր Վսեմութիւնը որքան զինքը կը սիրէ . . . և կը վախնայ զանիկ վշտացնելէ.

ԱՐՔԱՅՆ. (ցած) Պապանձէ :

ՇԻՔՕ. Ի՞նչ կ'ըլլայ եղեր խօսիմ նէ .

ԱՐՔԱՅՆ. Կորսուէ :

ՇԻՔՕ. Եւ թէ որ չկորսուիմ:

ԱՐՔԱՅՆ. (աղաչանաւ) Օ՛հ :

ՇԻՔՕ. Եթէ նոյն Վսեմութեան կրկնել ուզեմ ինչ որ պարոն Մորվիլիէ այս գիշեր երկան հանեց :

ԱՐՔԱՅՆ. Յիմա՛ր :

ՇԻՔՕ. Կը կարծես թէ ես ալ իմ քաղաքականութիւնս չու-



նիմ և գուցէ քու կինէդ լաւագոյն, որովհետև զայն ես ինքս կ'ընեմ: Լաւ ուրեմն, մտիկ ըրէ . . . : Մտիկ ըրէք, Վեհափայլ տէր :

ԴՈՒՔՍԸ. Տեսնենք :

ՇԻՔՕ. Պարոն Մորվիլիէ նախ և առաջ քեզ իմացուց որ պարոն տը Կիզ Շարիթէի բանակին մէջ չէ, ինչպէս որ կը կարծես :

ԱՐՔԱՅՆ. Ո՛ւր, ո՞ւր է ուրեմն .

ՇԻՔՕ. Ի Բարիզ:

ԱՐՔԱՅՆ. Ասոր վրայ բան մը չըսաւ ինծի .

ՇԻՔՕ. Լաւ ուրեմն, զայն ես կ'ըսեմ քեզ . . . : Եղբօրդ հարցո՛ւր :

ԴՈՒՔՍԸ. (շփոթած) Բայց . . . իրաւի . . . .

ՇԻՔՕ. Դուք չըսեցիք, Վեհափայլ անէր, որ պարոն տը Կիզ՝ պարոն Մայէնի, պարոն Լօրէնի և դքսուհւոյն հետ 'ի Բարիզ կը գտնուի . . . : Զայն չէք գիտեր.

ԱՐՔԱՅՆ. Ֆրանսուա՛ :

ԴՈՒՔՍԸ. Ա՛հ, սատանայն .

ԱՐՔԱՅՆ. Արդ ուրեմն .

ԴՈՒՔՍԸ. Աստուած իմ, Վեհափառ Տէր. գուցէ այս ամենուն վրայ բաներ լսած եմ, բայց տարաձայնութիւններ . . .

ԱՐՔԱՅՆ. Դուք իմացաք և ինծի չըսիք .

ԴՈՒՔՍԸ. Բայց, Վեհափառ Տէր . . . : Այս նպատակաւ էր որ այսքան կանուխ 'ի Լուվր կու գայի :

ՇԻՔՕ. Սա՛ւկ ըսէք . . . ես ասոր վրայ շատ վստահ էի, ինչպէս նաև այս գիշերուան տեղի ունեցածին համար, (առ Ռոգասոյն) Դու գիտես, առեւտրականդ զայն քեզ ըսաւ . . . ,

ԱՐՔԱՅՆ. Քանի մը դաւաճանութիւններ . . . քանի մը տրտնջողներ :

ՇԻՔՕ. Քանի մը . . . համեստօրէն է . . . : Նա քեզ ըսաւ որ այդ քանիմիները պիտի ժողովէին.

ԱՐՔԱՅՆ. Գիտեմ:

ՇԻՔՕ. Աբբայարանին մէջ . . . : Խօսէ ուրեմն, պէտք է խօսքերը բերնէդ քաշել:

ԱՐՔԱՅՆ. Ո՞ր աբբայարանին մէջ . . . .

ՇԻՔՕ. Ի Սէնթ-Ժընըվիէվ.

ԱՐՔԱՑՆ. Ասի ինչպէս գիտես ։

ՇԻՔՕ. Իմ քաղաքականութիւնս միշտ, եւ ժողովքներն ըրեր են ։

ԱՐՔԱՑՆ. Այո, ժամը տասնումէկին ։

ՇԻՔՕ. Եւ ճառախօսութիւններ ըրեր են ։

ԱՐՔԱՑՆ. Հրձիգներ . . . մէկը մանաւանդ . . . անուամբ . . . մէկը . . . ։

ՇԻՔՕ. Կօրէնֆլօ . . . շատ վտանգաւոր մարդ մը ։

ԱՐՔԱՑՆ. Այո . . . այն է . բայց դու ուրկէ գիտես ։

ՇԻՔՕ. Դարձեալ իմ քաղաքականութիւնս ։ Թափօր մը որոշած են . . . քիչ առենէն պիտի տեսնես . . . ։ Հրացաններ, կերոնի տեղ նիզակներ ։ Չքնաղ բան մը պիտի ըլլայ ։

ԱՐՔԱՑՆ. Բայց նպատակը, այս ամենուն նպատակը ։

ՇԻՔՕ. Ա՜հ, պարոն Մօվիլիէի հարցուր ։ (ցած) Եղբօրըդ երեսը նայէ հեղ մը ։

ԱՐՔԱՑՆ. Ո՛րքան տժգոյն է ։

ՆՈՒԻՐԱԿԸ. Պարոն Մոնսորօ, արքային հրամաններն ընդունիլ կու գայ ։

ՇԻՔՕ. (Դուքսին) Խոստովանեցէք, վեհափայլ տէր, թէ ահաւասիկ որսորդապետ մը որ խօսքը դարձնելու համար խիստ յարմար առենին կու գայ ։

## ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ, ՄՈՆՍՈՐՕ

ՇԻՔՕ. (Արքային) Տես հեղ մը, շատ ժամանակ չկայ դեռ որ քու որսորդապետդ պայլի մը պատահեցաւ ։

ԱՐՔԱՑՆ. Ինչո՞ւ համար ։

ՇԻՔՕ. Որովհետեւ Արիսթօֆանի ամպերէն միայն պէս, նորա գէմքը պահեր է . . . ։ Ճշմարիտ պայլ մը, զարմանալի է ։

ԱՐՔԱՑՆ. (ծիծաղելով) Պարոն Մոնսորօ, անմիջապէս իմ սենեակս եկէք, հրամաններս փոխեցի ։

ՄՈՆՍՈՐՕ. Վեհափառ տէր . . . (Կը խոնարհի . — Թագաւորը



դուրս կ'ելլէ) . — Դուքսին ։) Ձեզի հետ խօսելէ զրկուելու պատճառ մը չեմ տեսներ, քանի որ առանձին ենք։ Եթէ կը հաճիք սա պատուհանին խորշին մէջ։

ՇԻՔՕ. Եթէ կ'ուզէք՝ անտառի մը խորը . . . ա՜հ . . . զարմանալի է այս։ (Անձայնաբար Դուքսին) Այնպէս չէ, վեհափայլ տէր։

ՄՈՆՍՈՐՕ. Պարո՛ն Շիքօ, պարո՛ն քիմար, պարո՛ն խեղկատակ, աղնուական մը ձեզ կ'արգելու, ձեզ կ'արգելու, կ'իմանաք, իր վրայ խնդալ եւ անտառներու մէջ ձեր ժամադրութիւնը տալէ առաջ՝ զձեզ կը հրաւիրէ լաւ խորհիլ թէ այս անտառներուն մէջ ձողերու, բիրերու եւ թուչող գաւազաններու հաւաքումն մը կը գործածէ, որոնք պարոն Մայէնի կողմէ այնքան խստորէն ձեզ զարնուածներուն արժանի են ։

ՇԻՔՕ. Ա՜հ, պարոն, ուրեմն իմ յիշողութեանցս մէջ միւնոյն կարգը բռնել կ'ուզէք ։

ՄՈՆՍՈՐՕ. Պարո՛ն, ձեր յիշողութիւնը վախնալու բան մը չէ, ամեն անգամ որ երկիւղի մէջ ըլլաք ձեզմէ կը պակսի այն, եւ այն առեն ձեր գլխաւոր պարտաւէրները կը մոռնաք։

ՇԻՔՕ. Որո՞ւ վրայ կ'ուզէք խօսիլ . պարոն, կ'աղաչեմ։

ՄՈՆՍՈՐՕ. Վարպետ Նիքօլա Տավիտին վրայ ։

ՇԻՔՕ. Ա՜հ, այդ ըսածնուդ համար կը սխալիք, պարոն կոմս . . . այդ ըսածնուդ այլ ես բան մը չեմ պարտիր . . . վճարուած է ։ Ձեր ձեռնները կը համբուրեմ, վեհափայլ տէր։ (Մեկնած) Եթէ մէկզմէկ կարենայինք գիշատել ։

## ՏԵՍԻԼ Ը.

ԴՈՒՔՍԸ, ՄՈՆՍՈՐՕ

ԴՈՒՔՍԸ. (Նստած) Թողէք սա մարդը . . . ես պէտք է որ խօսիմ ։ (Մոնսորօ անհանգիստ՝ իւր բոլորտիքը զննելով կը դիտէ) Ա՜հ, բանէ մ'ալ մի՛ վախնաք . . . բոլորովին առանձին ենք . . . միայն ձեր տիրոջ քովն էք, բարի տիրոջ մը, եւ ալ՝ միայն իմ հաւատարիմ ծառայիս հետ եմ ։

ՄՈՆՍՈՐՕ. Վսեմափայլ Տէր . . . կարծեմ այդ գովեստին արժանի եմ ։

ԴՈՒՔՍԸ. Այո՛, շատ անգամ իմ ձեռնարկներուս օգնեցիք մոռնալով ձեր շահն, և նոյն իսկ ինքզինքնիդ վտանգի ենթարկելով . . . Կեցիք, դեռ վերջին անգամ, այն թշուառական գործին մէջ։

ՄՈՆՍՈՐՕ. Ո՞ր գործին, Վեհափայլ Տէր ։

ԴՈՒՔՍԸ. Օրիորդ տը Մերիտորի առևանգութեան, խեղճ մանկամարդ ։

ՄՈՆՍՈՐՕ. Ափսոս ։

ԴՈՒՔՍԸ. Կը ցաւիք իր վրայ ։

ՄՈՆՍՈՐՕ. Ո՞վ չպիտի ցաւէր նորա վրայ ։

ԴՈՒՔՍԸ. Ես չեմ . . . իր մահուան ինձ պատճառած յուսահատութեան և այն ցաւալի մտածմին խորհուրդէս առթեալ վշտին՝ Աստուած վկայ է ։ Իմ բոլոր բարեկամութիւնս պէտք էր ձեզ համար որպէս զի մոռնայի թէ առանց ձեզ այն մանկամարդ օրիորդը չպիտի առևանգէի ։

ՄՈՆՍՈՐՕ. Դուք իր մահը չէիք ուզէր՝ Վեհափայլ տէր ։ Նպատակն զձեզ կ՚արդարացնէ . . . ։ Ասի դժբաղդութիւն մ՚է, դժբաղդութիւն մը՝ զոր ճակատագիրը ամեն օր կ՚առթէ ։

ԴՈՒՔՍԸ. Այսու ամենայնիւ. աս լմնցած է, այնպէս չէ, և մահը ամեն ինչ իւր յաւիտենական լռութեան մէջ ծածկած է։

ՄՈՆՍՈՐՕ. ( Մէկուսի ) Ամեն բան գիտէ . . . և այն կինը զոր Մառսի սրահին մէջ պահած են, նա ինքն Տիանան է . . . Նա հոս է ։ ( Բարձր ) Վեհափայլ Տէր, կ՚ուզէք հիմայ ներել ինձ իմ անկեղծութեանս ։

ԴՈՒՔՍԸ. Հիմա ։

ՄՈՆՍՈՐՕ. Ձեր վսեմութիւնը չուզէր որ Օրիորդ տը Մերիտորի թերևս կենդանի ըլլալուն վրայ տեղեկութիւն տամ . . . և այդ կասկածն իսկ՝ ինձ դէմ ուղղեալ տեսակ մը ամբաստանութիւն չէ ։

ԴՈՒՔՍԸ. ( ոտք ելլելով ) Մատնիչ. դու զիս խաբեցիր. դու զիս մատնեցիր ։ Դու ինձմէ յափշտակեցիր այն կինը զոր ես կը սիրէի ։

ՄՈՆՍՈՐՕ. Ճշմարիտ է, Վեհափայլ տէր ։



ԴՈՒՔՍԸ. Ա՜հ, Ճշմարիտ է կ՚ըսես . . . ։ Անամօթ ննդաւոր ։

ՄՈՆՍՈՐՕ. Հաճեցէք ցած ձայնիւ խօսիլ, Վեհափայլ Տէր, որովհետև կարծեմ կը մոռնաք թէ ոչ միայն հաւատարիմ ծառայի մը այլ և ազնուականի մը հետ կը խօսիք . . . ։ Անկից զատ, արդարայումն մ՚ալ ունէի։

ԴՈՒՔՍԸ. Ո՞րը ։

ՄՈՆՍՈՐՕ. Օրիորդ տը Մերիտորը կը սիրէի ։

ԴՈՒՔՍԸ. Հապա ես ։

ՄՈՆՍՈՐՕ. Օրիորդ տը Մերիտոր զձեզ չէր սիրեր, Վեհափայլ տէր ։

ԴՈՒՔՍԸ. Զքեզ կը սիրէր գուցէ ։

ՄՈՆՍՈՐՕ. Թերևս ։

ԴՈՒՔՍԸ. Կը ստես ։ Միայն թէ ես իմ վստահութիւնս և դու քու մատնութիւնդ ունէիր ։

ՄՈՆՍՈՐՕ. Վեհափայլ Տէր, զինքը կը սիրէի ։

ԴՈՒՔՍԸ. Է՜հ, ինձ ինչ փոյթ ։

ՄՈՆՍՈՐՕ. ( սպառնալեօք ) Վեհափայլ Տէր ։

ԴՈՒՔՍԸ. Կ՚ըսպառնաս, ծօ ։

ՄՈՆՍՈՐՕ. Զգուշացէք, վեհափայլ տէր. ձեզ կ՚ըսեմ թէ զինքը կը սիրէի և ես ստրուկ մը չեմ . . ։ Ես կնոջս և կալուածատէր եմ։ Կինս, ինչպէս նաև երկիրս՝ իմս են, ոչ ոք կարող է զայն ինձմէ առնուլ, նոյն իսկ թագաւորը ։ Արդ ուզեցի այն կինն ունենալ և առի զայն ։

ԴՈՒՔՍԸ. Ճշմարտապէս . զինքն առիր. արդ ուրեմն զինքը ետ պիտի դարձնես ։ ( դէպ ՚ի դուռը կը խոյանայ)

ՄՈՆՍՈՐՕ. ( Նորա առջև ծնկնելով ) Մէկղի ըրէք այդ դէշ մտածմունքը, վեհափայլ տէր . . . ։ Եթէ ինձ վճարելու խորհուրդ մը ունիք, եթէ անգամ մը կոչէք, եթէ հրապարակային նախատինք մը ինձ ընէք . . . ։

ԴՈՒՔՍԸ. Պիտի ետ դարձնես այն կինը, կ՚ըսեմ քեզ։

ՄՈՆՍՈՐՕ. Աստուծոյ ներկայութեան նորա հետ պսակուած եմ։

ԴՈՒՔՍԸ. Զինքը ետ պիտի դարձնես։

ՄՈՆՍՈՐՕ. Խօսէ՛ք։

ԴՈՒՔՍԸ. (բարկութենէ դողդողալով) Այդ ամուսնութիւնը, պիտի խզես, եթէ ոչ ես պիտի խզեմ՝ մինչև անգամ երկնից մէջ ապրող բոլոր աստուածոց ներկայութեանն իսկ թէոր պարտաւոր եղած ըլլաս։

ՄՈՆՍՈՐՕ. Կը հայհոյէք, Վեհափայլ Տէր։

ԴՈՒՔՍԸ. Վաղը օրիորդ տը Մերիտոր իւր հօրը դարձած պիտի ըլլայ. վաղը դու յաքսոր պիտի մեկնիս։ Մէկ ժամէն քու որսորդապետութեան պաշտօնդ պիտի ձգես։ Աւասիկ իմ պայմաններս. ապա թէ ոչ՝ զգուշացի՛ր, մրբանեակ. զքեզ սա բաժակին նման պիտի խորտակեմ։ (սեղանին վրայէն աման մը կը ջախջախէ։)

ՄՈՆՍՈՐՕ. Իմ պաշտօնս չպիտի ձգեմ, իմ կինս չպիտի թողում և 'ի Գաղղիա պիտի բնակիմ։

ԴՈՒՔՍԸ. Ինչպէս, անիծեալ։

ՄՈՆՍՈՐՕ. Որովհետև ներողութիւն պիտի խնդրեմ Գաղղիոյ թագաւորէն, Ճշմարիտ թագաւորէն, որ այս գիշեր Սէնթ-Ժէնըվիէվի աբբայարանին մէջ ընտրուեցաւ և այն նոր վեհապետը իւր ծնգաց առջև ինկող առաջին աղերսարկուին չպիտի մերժէ ունկնդրել։

ԴՈՒՔՍԸ. (սարսափած) Լռէ։

ՄՈՆՍՈՐՕ. Վեհափառ տէր..։

ԴՈՒՔՍԸ. Բայց լռէ ուրեմն, թշուառական։ (Կամաց կը՛ վերցնէ և անոր հետ մէկտեղ կը խօսի) Եթէ ինձմէ խնդրելու շնորհ մ'ունիք, խնդրեցէք զայն ինձմէ, բայց բոլորովին կամաց... ձեզ մտիկ կ'ընեմ. խնդրեցէք։

ՄՈՆՍՈՐՕ. Խոնարհաբար, ինչպէս որ Ձեր Վսեմութեան խոնարհ ծառային պատշաճ է։

ԴՈՒՔՍԸ. (յանկարծ աչքերը շուրջը ածելով) Կ'ըսէիք...։

ՄՈՆՍՈՐՕ. Կ'ըսէի, թէ ամէն ինչ իմ ձախող ելքս բրաւ... թէ ես այլ ևս անձիս տէր չէի, թէ իմ դատողութիւնս կորուսած էի և թէ ինձ պիտի ներէք։ Վեհափայլ Տէր։

ԴՈՒՔՍԸ. (տարուբերելով) Ո՛չ... որովհետև իշխանի մը առաջին պարտաւորութիւնը՝ արդարութիւնն է։

ՄՈՆՍՈՐՕ. Վեհափայլ Տէր...։



ԴՈՒՔՍԸ. (մեկուսի) Պիտի խոստանայ։ (բարձր) Կեցի՛ր, դու ազնուական մ'ես, գիտես որ քու վարմունքդ չեմ կրնար ընդունիլ...։ Ո՛ւշ դիր. Հրաժարէ այս կնոջմէն, Մոնսորօ, այս զոհողութիւնն ալ ըրէ ինծի համար և փոխարէնը ինչով որ ուզես պիտի հատուցանեմ։

ՄՈՆՍՈՐՕ. Ուրեմն միշտ զինքը կը սիրէք, Վեհափայլ Տէր։

ԴՈՒՔՍԸ. Ո՛չ, կ'ըսեմ, ո՛չ։

ՄՈՆՍՈՐՕ. Ուրեմն ո՞վ կրնայ զձեզ արգելուլ, նա իմ կինս է։

ԴՈՒՔՍԸ. Նա զքեզ չսիրեր։

ՄՈՆՍՈՐՕ. Ձեր Վսեմութեան ինչ փոյթ։

ԴՈՒՔՍԸ. Ինձ համար, Մոնսորօ, ըրէ այս բանը, քեզ կը պաղատիմ։

ՄՈՆՍՈՐՕ. Անկարելի՛։

ԴՈՒՔՍԸ. Կը հասկնամ զքեզ... գաղտնիքս գիտես և զայն պիտի հրատարակես... վատահամբաւութիւն մ'է այդ։

ՄՈՆՍՈՐՕ. Ճշմարիտ է, բայց վատահամբաւ ըլլալու չափ կը սիրեմ զՏիանա։

ԴՈՒՔՍԸ. Վա՛տ։

ՄՈՆՍՈՐՕ. Այո՛, բայց վատ ըլլալու չափ ալ կը սիրեմ զՏիանա։ (ձեռքը յետոյ իւր դաշոյնին վրայ կը դնէ) Ա՛հ, զիս սպաննելով բան մ'ալ չպիտի շահիք, Վեհափայլ Տէր. գաղտնիք կան որ գլխի մը վրայ ալ կը լողան։

ԴՈՒՔՍԸ. (Յոգնածութեան գլուխը խոնարհելով) Նշքո՛յրս։

ՄՈՆՍՈՐՕ. Օ՛ն, վեհափայլ տէր, ձեզ լաւ ծառայելու պատրաստ մարդու մը համար որոշում մ'ըրէք։

ԴՈՒՔՍԸ. Ի՞նչ կը խնդրէք։

ՄՈՆՍՈՐՕ. Որ Ձեր Վեհափառութիւնը...։

ԴՈՒՔՍԸ. Շո՛ւտ, ձեր պայմանները։

ՄՈՆՍՈՐՕ. Ինձ պիտի ներէք։

ԴՈՒՔՍԸ. Այո՛։

ՄՈՆՍՈՐՕ. Պարօն Մերիտորի հետ զիս պիտի հաշտեցնէք։

ԴՈՒՔՍԸ. Այո՛։

ՄՈՆՍՈՐՕ. Եւ կինս թագաւորին պիտի ներկայացնէք։

ԴՈՒՔՍԸ. Այո՛, աւելի ուշ։

ՄՈՆՍՈՐՕ. Անմիջապէս։

ԴՈՒՔՍԸ. Տեսնենք . . . զինքը պէտի երթաք գտնէք . . . :
ՄՈՆՍՈՐՕ. Հոս է նա, վեհափայլ տէր :
ԴՈՒՔՍԸ. Ինչպէս :
ՄՈՆՍՈՐՕ. Ճիշդ հոս . . . Մասսի սրահին մէջ:

## ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՅՆՔ, ԱՐՔԱՅՆ, ՏԻԱՆԸ, ՊԻԽՍԻ, ՊԱՐՈՆ ՏԸ ՄԵՐԻՏՕՐ, ՇԻՔՕ, ԱՄԲՈՂՋ ՊԱԼԱՏԱԿԱՆՔ

ՊԻԽՍԻ. (առաջին տեղ փութալով՝ ցած) Ահաւասիկ, ուհին, Վեհափայլ Տէր :
ՄՈՆՍՈՐՕ. (ցած) Կ'ըսպասեմ, վեհափայլ տէր :
ՏԻԱՆՆԱ. Վերջապէս :
ՊԻԽՍԻ. Վերջապէս :
ԴՈՒՔՍԸ. (Հրաւէր ձեռք մը ընելով. Տիկնոջ յետոյ երթալ բերանելով և զինքը թագաւորին ներկայացնելով) Վեհափառ Տէր, ներեցէք որ Ձեր Վեհափառութեան ներկայացնեմ օրիորդ Տիանա տը Մերիտոր, Մոնսորօ կոմսուհին և իմ ամենահաւատարիմ ծառայիս կինը :
ՏԻԱՆՆԱ. (ծունկ մը առնելով) Ա՜հ :
ՊԻԽՍԻ. Ո՜հ . . . :
ԱՐՔԱՅՆ. (Մոնսորոյի) Իմ յարգանքս, պարոն որսորդապետ : (Արքայն կը բռնէ և Մոնսորոն իրեն հետ տանելով կ'անցնի. բոլոր պալատականք անոնց կը հետևին)
ՏԻԱՆՆԱ. Բայց ի՞նչ պատահած է, կոմս :
ՊԻԽՍԻ. Տիկին, անարգեցէք զիս, ատեցէք զիս. կը կարծէի թէ ես ալ բան մ'եմ աշխարհիս վրայ. չնչին հիւլէ մըն եմ միայն. կը կարծէի թէ կարող եմ բան մ'ընել և չկարեմ սիրտս իսկ խլել . . . : Այո տիկին, դուք ստուգիւ պարոն Մոնսորոյի կինն էք . . . իր օրինաւոր կինը . . . իր ծանուցեալ կինը : Ես զձեզ կորսնցուցի, ես թշուառս, ես անխելամիտ, որովհետև վատ և վատանուն մը հաւատացի :
(ցնծութիւն և անհամբերութիւն կը խառնուի պալատականաց մէջէն)
ԴՈՒՔՍԸ. (շտապաւ) Ներեցէ՛ք սա մարդը՝ որ իշխան մը



կը նախատէ :
ՏԻԱՆՆԱ. Կորսուեցանք :
ՇԻՔՕ. (ինքնիրեն) Կորսուեցա՜ք : Ա՜հ, ոչ երբեք :

# ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Երդիք—Մէջ քառուղիին գլուխը: Ձախ կողմը, առաջին մակերևոյթը, երեք աստիճաններով ելնելուց փոքր դուռ մը, նախեւէն փողոց: Խորը, խուլ մը տուն. Պել—Էսթո—ի ցանկը, ներկարար մը իր անձնեղեն կնիքով: Աջ կողմը, Դօր—տը Մէրֆ, պատշգամ, պատուհաններ: Մէջ տեղը երեք ճանապարհաց միացումէն գոյացեալ լայն միջոց մը, որոյմէ մին Թատեր խորէն կը դառնայ: Խորը, Սէն գետի համապատկերը՝ Սէն—Ժէրմէն Օքսէրուայի դէմ:

## ՏԵՍԻԼ Ա.

ՊՕՆՕՄԷ, ԼԱՀԻՒՐԻԷՐ, ՔԱՂԱՔԱՑԻՔ, ԱՆՑՈՐԴՔ.

ՊՕՆՕՄԷ. (խոր դրան առջև) Երկու պատուհան, թափօրին համար վարձու երկու պատուհան :
ԼԱՀԻՒՐԻԷՐ. (խոր դրան առջև) Ստորագրեցէք, պարոններ, ստորագրեցէք, Սուրբ Դաշնակցութեան արձանագրութեան վրայ: (քաղաքացիներ անցնող որք կ'ստորագրեն :)
ՊՕՆՕՄԷ. Երկու պատուհան, թագաւորին մեծ թափօրին առջևէն անցնիլը նայելու համար : (Անցնողներ որք Պօնօմէի հետ սակարկութեան կը մտնեն)
ԼԱՀԻՒՐԻԷՐ. Ստորագրեցէք, քաջ Բարիզցիներ, այսօր է մեծ օրը : (Անցնողներ որք կը շրջագային, եկեղեցի կը մտնեն, խանութներ կ'առնեն : Քաղաքացիք որոնք Լահիւրիէրի արձանագրութեան վրայ կ'ստորագրեն :)
ՇԻՔՕ. (հասնելով) Ձեզմէ ետքը, պարոն : (Քաղաքացին ձեռքը կ'ստորագրէ, և երբ ուրիշ մ'ստորագրել էր՝ ետք ստորագրել կ'ստորագրէ)

ՔԱՂԱՔԱՑԻՆ. Բայց դուք արդէն ստորագրեցիք, պարոն ։

ՇԻՔՕ. Կը կարծէք. աւելի աղէկ, հարիւր անգամ պիտի ստորագրեմ քան թէ մէկ անգամ. կ՚ուզեմ Բարիզի բոլոր արձանագրութիւնները ստորագրել ։

ՊՕՆՕՄԷ. Երկու պատասխան Թափօրին համար ։

ՇԻՔՕ. Մէկը ես կ՚առնում։

ՊՕՆՕՄԷ. Պարոն Շիքօ՛

ՇԻՔՕ. Լռէ, գետնայարկինը։ (Գուքն ու Սէրֆ կը մտնէ)

ՊՕՆՕՄԷ. Լա՛ւ, պարոն Շիքօ ... (բարձր) Մեծ՝ Թափօրին և Թագաւորին անցնիլը տեսնելու համար պատասխան մը ։
(ամբոխ, ամբոխ. խումբը Կորէնֆլօյին հետ հասնող ամբոխ մը)

## ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ, ԿՈՐԷՆՖԼՕ, Նորա բոլորտիքը վազող ԲԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԸ

ՁԱՅՆՔ. Կորէնֆլօ՛, Կորէնֆլօ՛ ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Այո՛, տղաքներս, այո՛, ես եմ ... ողջո՛յն ձեզ ։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Վարպետ Կորէնֆլօ՛։ (Եռանդեամբ կը վազէ) Հռչակաւո՛ր ատենաբանը. Նուիրական փաստին մարտիրոսը ։

ՁԱՅՆՔ. Կորէնֆլօ՛ ։ Կորէնֆլօ՛։ (Նորա բոլորտիքը կը խռնուին)

ԿՈՐԷՆՖԼՕ. Միթէ այս անձինքը յիմա՞ր են ։

ՁԱՅՆՔ. Յաղթանա՛կ, յաղթանա՛կ եղբայր Կորէնֆլօյին։ (Շիքօ իւր պատուհանը կը բանայ)

ՇԻՔՕ. (պատուհանէն) Իմ անուամս ։

ԿՈՐԷՆՖԼՕ. (բազմութեան) Զաւակներս, թողէք որ անցնիմ, կ՚աղաչեմ ձեզ. կ՚ուզէի քանի մը վայրկեան հոս կենալ ։

ՁԱՅՆՔ. Յաղթանա՛կ, Յաղթանա՛կ Կորէնֆլօյին ։

ՇԻՔՕ. (ոտքերը պատուհանէն դուրս երկնցնելով) Բայց լաւ կը տեսնէք որ այս արժանաւոր մարդը հանգստեան և խոկալու պէտք ունի. հանգիստ թողէք ուրեմն զինքը ։

ՁԱՅՆՔ. Այո՛, ... այո՛ ։ — Ո՛չ, ո՛չ .... ։



ԿՈՐԷՆՖԼՕ. (առանց ճանչնալու Շիքօ նշմարելով) Ահաւասիկ պարկեշտ անձ մը ։

ՇԻՔՕ. Լաւ կը տեսնէք որ միտքը ամփոփել և ատենաբանութիւն մը յօրինել կ՚ուզէ ։

ՁԱՅՆՔ. Այո՛, այո՛, թողունք զինքը, այո՛ ... յաղթանա՛կ, յաղթանա՛կ ։ (կամաց կամաց կը ցրուին)

## ՏԵՍԻԼ Գ.

ՇԻՔՕ, ԿՈՐԷՆՖԼՕ

ԿՈՐԷՆՖԼՕ. Աս ինչ երջանկութիւն է. (ճանաչելով Շիքօ) Պարոն Շիքօ՛ ։

ՇԻՔՕ. Բարի լո՛յս, կնքահա՛յր ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Գիտէք ինձմէ ինչ կ՚ուզեն այս անձինք ... Ճանճերու պէս վրաս կը յառին ։

ՇԻՔՕ. Գանգատէ ուրեմն, դու ժողովրդեան սիրելի ես ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ե՞ս ։

ՇԻՔՕ. Համեստութիւն մի՛ ցուցներ. ատի լաւ գիտես ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ահաւասիկ շաբաթ մ՚է որ ոտքս դուրս հանած չեմ. առաւօտեան ժամը վեցին տուն դարձած ըլլալուս պատճառաւ՝ ութն օր կայ, որ զիս բանտարկած էին ապաշխարելու համար ։ . . .

ՇԻՔՕ. Այո՛, այո՛, այն նշանաւոր երեկոյն ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ի՞նչ նշանաւոր երեկոյ ։

ՇԻՔՕ. Լաւ գիտես, երբ ինծի հետ ընթրել չուզեցիր ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ճշմարիտ է ։

ՇԻՔՕ. Ու՞ ժամը տասնումէկին զիս թողուցիր ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ես զձե՞զ ... ։

ՇԻՔՕ. Երթալու համար ... ։ Լա՛ւ գիտես ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ո՛չ ... ։

ՇԻՔՕ. Արտասանելու ... ։

ԿՈՐԷՆՖԼՕ. Ի՞նչ։

ՇԻՔՕ. Այն ճառը ... ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Լաւ ուրեմն ։

ՇԻՔՕ. Այն պատուական , այն շքեղ ձայը . . . ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Անարոշ կերպիւ կը յիշեմ . . . ։

ՇԻՔՕ. « Եղբայրք իմ . . . ։ Աս գեղեցիկ օր մ'է . . . ։ »

ԿՈՐԷՆՓԼՕ. Աչերս կը բանաք ։

ՇԻՔՕ. Ո՜հ , ո՛րքան սոսկալի բաներ կային քու ձառիդ մէջ ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Բէ՜հ ։

ՇԻՔՕ. Արքային դէմ, պալատականաց դէմ, ամենուն դէմ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ճշմարտապէս ։

ՇԻՔՕ. Այնքան սոսկալի , որ քիչ մը յառաջ գրեր այն քաղմութեան մէջ տեսնելով՝ ինքնիրենս ըսի . « խեղճ կնքահայր . . . գլուխը պիտի բռնեն ։ »

ԿՈՐԷՆՓԼՕ. ( անհանգիստ) Բայց , պարոն Շիքօ , ես երբէք ձառ մը չ'արտասանեցի։

ՇԻՔՕ. Օ՛հ ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ես հո՛ս քնացայ . . . 'ի Գօրն տը Սէրֆ . . . և հո՛ս արթնցայ ։

ՇԻՔՕ. Օ՛հ , ուրեմն ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Պարոն Պօնօմէի հարցուցէք ։

ՇԻՔՕ. Ինքը գաղտնապէս ձեզ պատը բացեր է , երբ ժողովքէն դարձեր էք . . . ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ժողովքէն ։

ՇԻՔՕ. Բոլորովին հպարտութեամբ ուռեցած . . . ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ի՛նչ բանի պատճառաւ ։

ՇԻՔՕ. Ձեր գտած յաջողութեան և այն շնորհաւորութեանց պատճառաւ , զոր պարոն տը Կիզ, պարոն տը Լօրէն և պարոն տը Մայէն ըրեր են, ( կը բոռայ ) Աստուած պահէ . . . ։ Տեսնենք , կը յիշէք ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ո՛չ . . . ։ ( մեծ ձայնով ) Ա՜հ , Աստուա՛ծ իմ։

ՇԻՔՕ. Ի՛նչ է ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ամէն ինչ հասկցած եմ ։

ՇԻՔՕ. Հա՛ն ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Քնաշրջիկ եմ։

ՇԻՔՕ. Ի՛նչ ըսել է այդ ։



ԿՈՐԷՆՓԼՕ. Ըսել է թէ, պարոն Շիքօ, իմ ներսի գիս այս կէտին՝ ոգին նիւթին վրայ կը տիրէ , մինչդեռ մարմինս քնացած է, ոգիս կը հսկէ և անոր կը հրամայէ բաներ, բաներ . . . ։

ՇԻՔՕ. Գերազանց բանե՛ր ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Աստուած իմ, այո ։

ՇԻՔՕ. Հրդեհարկու . . . յեղափոխական, գլխուն մազերը բարձրացնող բաներ ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ա՛հ ։

ՇԻՔՕ. Ձեզ կախել տալու բաներ՝ եթէ զձեզ տեսնեն ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ա՛հ ։

ՇԻՔՕ. Ձեզ չորս ձիերու լծած կտոր կտոր ընել տալու բաներ՝ եթէ ձեզ պատահին ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ուրեմն ինչ ընելու է ։

ՇԻՔՕ. Ապաստանուելու է և խիստ շուտ ։

ԿՈՐԷՆՓԼՕ. ( սարսափահար ) Կարծեմ թէ կրաւունք ունիք ։

ՇԻՔՕ. Եթէ ոչ՝ մեռած մարդ մ'էք ։

ԿՈՐԷՆՓԼՕ. ( ատրճանակ մը հանելով և խոյս տալով ) Պարոն Շիքօ՛։

ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ. ( զայն նշմարելով ) Կորէնփլօ՛ , Կորէնփլօ՛։

ԿՈՐԷՆՓԼՕ. Թողէ՛ք որ անցնիմ։

ՇԻՔՕ. ( խոր պատուհանէն ) Թողէք որ անցնի , դատապարտեալ մ'է ։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Նա . սուրբ մը ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Ես , սուրբ մը ։

ՇԻՔՕ. Իր գլուխը 'ի գին դրուած է ։

ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ. ( բազմութեան մէջէն ) Օ՜հ ։

ՇԻՔՕ. Գնա՛ սուրբ մարդ ։

ԼԱՀԻՒՐԻԷՐ. Օգնութիւն , օգնութիւն Կորէնփլօ վարպետին ։

ՇԻՔՕ. Ցաղթանա՛կ եղբայր Կորէնփլօյի ։

ԱՄԵՆՔԸ. Կեցցէ՛ եղբայր Կորէնփլօ ։ Կեցցէ՛ սուրբ Դաշնակցութիւն. կեցցէ դուքս տը Կիզ ։ Անկցի՛ բռնաւորն ։

ԿՈՐԷՆՓԼՕ. Զիս կտոր կտո՛ր ընել պիտի տան ։

ՇԻՔՕ. Կեցցէ՛ մարտիրոսն Կորէնփլօ ։

ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ. Անկցի Վալուա . . . : Անկցի բռնաւորն . անկցի . . . : ( Կորէնֆլօն տաճարին վրայ կը ցոյնէ )

## ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ԴՈՒՔՍԸ, ՄՈՆՍՈՐՕ, ԱՆԴՐԱԿԷ

ԱՆԴՐԱԿԷ. Կը տեսնէք զիրենք, վեհափայլ տէր :

ՄՈՆՍՈՐՕ. Եւ կը լսէք ըսածնին :

ԴՈՒՔՍԸ. Այո, կը լսեմ որ անկցի Հէնրի և կեցցէ Կիզ կը գոչեն, ահա այսչափ ամէնը : ( Շիքօ ետ կը քաշուի )

ՄՈՆՍՈՐՕ. Եթէ կեցցէ Անժու գոչէին՝ վեհափայլ տէր, այս երեկոյ խիստ վտանգաւոր պիտի ըլլար :

ԴՈՒՔՍԸ. ( ինքնիրեն ) Սատանայ, ինչպէս կը գուշակէ: ( բարձր ) Այդ ըսել չեմ ուզեր, պարոն. ըսել կ'ուզեմ թէ բոլոր այս աղաղակները, բոլոր այս վռավռուն բանդագուշանքը կրնան թագաւորին կասկածելի ըլլալ:

ՄՈՆՍՈՐՕ. Եւ ինչ պիտի ընէ, վեհափայլ տէր :

ԴՈՒՔՍԸ. Ի՞նչ պիտի ընէ. այս երեկոյ փոխանակ դուրս ելնելու 'ի Լուվր կը մնայ, Զուիցերցիները և Գրիլեօնի գաղղիացի պահակները կը խրկէ որպէս զի այս ժողովուրդը ցրուեն և թափօրը տապալեն և այն ատեն ձեր բոլոր առաջարկութիւններն ինչ պիտի ըլլան :

ՄՈՆՍՈՐՕ. Մեր գաղափարաց վրայ չմտատանջուինք, վեհափայլ տէր : Թագաւորը Դաշնակցութեան դէմ զինուոր մը անգամ չպիտի խրկէ, քանի որ ինք անոնց գլխաւորը ճանչցուց ինքզինք. և այս թափօրը չարգիլելէ զատ՝ ինքն անոնց գլուխըն անցած պիտի քալէ : Դիցուք թէ կասկածի, դարձեալ խոստանօք զայս պիտի ընէ: Ասկից զատ միթէ իր սովորութիւնը չէ ամեն տարի թափօրն առաջնորդել : Իր սովորութիւնը չէ միթէ, այս թափօրէն յետոյ, կրօնական միաբանութեան մը մէջ երկու օր առանձնանալ : Անցեալ տարի Մինիմ մէջ էր, այս տարի Գէնովեֆեանցն ընտրած է : Ուստի բանէ մ'ալ մի վախնաք, Վեհափայլ Տէր :

ԱՆԴՐԱԿԷ. Ամեն ինչ լաւ պիտի երթայ, Վեհափայլ Տէր:

ԴՈՒՔՍԸ. Ձեզ կ'ըսեմ թէ աբբայարանի գործէն 'ի վեր



եղբայրս կը կասկածի :

ՄՈՆՍՈՐՕ. Ատի՛ աճապարելու աւելի պատճառ մը կու տայ մեզ, Վեհափայլ Տէր : Եթէ թագաւորը կը կասկածի, զանի յառաջենք : Երկու ժամէն՝ Գէնովեֆեանց սեամէն անցած պիտի ըլլայ, որոյ դուռը իր վրայ պիտի փակուի. երկու ժամէն զինքը կը բռնենք : Պարոն Մայէն իւր Լօրէններով քաղաքին վրայ կ'արշաւէ. պարոն Կիզ աբբայարանին մէջ իւր ընտրելագոյն սուրերէն ութսուն հատ պահած է: Ամբողջ միաբանութիւնը մեր ձեռքն է : Դուք հոն ձեր բարեկամները, ձեր հաւատարիմները պիտի ունենաք. նա առանձին պիտի ըլլայ : Երկու ժամէն դուք՝ մեր և նորա տէրը պիտի ըլլաք :

ԴՈՒՔՍԸ. ( կեղծաւորաբար ) Ի՞նչ ընելու է նուիրական գլխու մը, ինքն ալ օծեալն է Տեառն :

ՄՈՆՍՈՐՕ. Պիտի խորհինք, վեհափայլ տէր. բայց նախ և առաջ գործ տեսէք: Համարձակապէս եկէք, և հաստատ խաղացէք :

ԱՆԴՐԱԿԷ. Յիշեցէք, որ խաղագրաւնիս մեր ամենուն գլուխն է. շահեցէք, Վեհափայլ Տէր, շահեցէք :

ԴՈՒՔՍԸ. Իր բարեկամները կրնան զինքը տեղեկացնել:

ՄՈՆՍՈՐՕ. Ձերինները ժողվեցէք : Թնդանօթի առաջին հարուածին՝ որ ըստ սովորութեան իւր Լուվրէն մեկնիլը պիտի իմացնէ, պատրաստ եղէք, բայց առանց նշանակական շարժման մը : Երկրորդ հարուածին՝ որ թագաւորին Գէնովեֆեանց մենաստանը մտնելն պիտի իմացնէ, ձեր բարեկամներուն աբբայարանին վրայ արշաւեցէք, որոյ փոքր դուռը ձեզ պիտի բանամ:

ԴՈՒՔՍԸ. Այդ թնդանօթի երկու հարուածները պիտի լսեմ երբէք :

ԱՆԴՐԱԿԷ. Պիւսին չտեսայ.

ԴՈՒՔՍԸ. Պիւսին . . . :

ԱՆԴՐԱԿԷ. Յուսամ թէ մեզ հետ է : Ա՛հ, բայց մեզ պէտք է ան . . . :

ՄՈՆՍՈՐՕ. Ձեզ լուր մը պիտի ըսէր թէ այդ քաջակալ սուրը ամեն ինչ պիտի պակսեցնէր :

ԱՆԴՐԱԿԷ. Այս սուրն ալ ըլլալով՝ ամեն ինչ պիտի յաջողցընէ :

ԴՈՒՔՍԸ. Ճշմարիտ է, երբ Պիւսի իմ քովս ըլլայ, ես հանգիստ կ'ըլլամ. դժբաղդաբար երկու օրէ 'ի վեր խեթիւ կը նայի ինձ։

ԱՆՏՐԱԿԷ. Հաշտուեցէք, Վեհափայլ Տէր, շուտ ըրէք։

ԴՈՒՔՍԸ. Քիչ մը յառաջ Օրիլլին իր ապարանքը խրրկեցի. կանխողը ես կ'ըլլամ։ Այս ընթացքը անշուշտ զինքը պիտի շարժէ, և այն ատեն Օրիլլի զանի ինձ պիտի բերէ։

ՄՈՆՍՈՐՈ. Ո՞ր տեղ, Վեհափայլ Տէր։

ԴՈՒՔՍԸ. Հոս, ուսկից թէ քաղաքը՝ և թէ Լուվրն կը հսկեմ։

ԱՆՏՐԱԿԷ. Ահաւասիկ Օրիլլին, Վեհափայլ Տէր։

ԴՈՒՔՍԸ. (առ Օրիլի) Արդ ուրեմն, ո՞ւր է Պիւսին։

ՕՐԻՑԼԻ. Վեհափայլ Տէր, պարոն Պիւսի մեծ ջերմով մը յանկողին ինկած է և բժիշկը կ'արգիլու իրեն դուրս ելնել.

ԱՆՏՐԱԿԷ. Դժբաղդութիւն....։

ԴՈՒՔՍԸ. Ըսեր...։

ՕՐԻՑԼԻ. Ինչ որ կրնայի սպասաւորի մը ըսել, որովհետև զիս չ'ընդունեցին։

ԴՈՒՔՍԸ. Ինչպէս։

ՕՐԻՑԼԻ. Ոչ, Վեհափայլ Տէր. բժիշկը դուռը կը պահպանէր։

ԴՈՒՔՍԸ. Նաև ինձմէ խրկուածին դէմ. ուրեմն Պիւսի հոգեվարք է։

ԱՆՏՐԱԿԷ. Վեհափայլ Տէր, կ'ուզէք որ փորձեմ.

ԴՈՒՔՍԸ. Բայց...։

ԱՆՏՐԱԿԷ. Ինչ որ ալ ըլլայ՝ պէտք է մեզ Պիւսին։

ՄՈՆՍՈՐՈ. Նորին Վսեմութիւնը պարզ ազնուականի մը այսպէս պաղատի։

ԴՈՒՔՍԸ. Անտրակէ իրաւունք ունի, կոմս. թագաւորն Գրիլլիոնն ունի. պէտք է որ ես ալ Պիւսին ունենամ։ Գնա, Անտրակէ, գնա։ (Անտրակէ կը խոնարհի և կը մեկնի) Այս երեկոյ բանէ մ'ալ չէք կասկածիր, դուք. ամսուանէ 'ի վեր ամեն ինչ զեղչեցին կը տեսնէք։ Բնական է. սիրոյ՝ և երջանիկ սիրոյ մը յաջողածակողմն նայելով.



ՄՈՆՍՈՐՈ. (Ինքնիրեն) Երջանիկ սէր։

ԴՈՒՔՍԸ. Օ՛ն, ժամը կը մօտենայ, ձեր մարդիկը ժողվեցէք և գացէք ապարանքին մէջ ձեր տեղն առէք...։

ՄՈՆՍՈՐՈ. Արդեօք իմ թշուառութիւնս գիտէ և զիս կը ծաղրէ։

ԴՈՒՔՍԸ. Ինչ ունիք։

ՄՈՆՍՈՐՈ. Ոչինչ Վեհափայլ Տէր, ոչինչ. կը հնազանդիմ։ (Ինքնիրեն) Երջանիկ սէր։ (կը մեկնի)

ԴՈՒՔՍԸ. Այս մարդը, երբեք չգիտցուիր թէ կուսակից մ'է թէ ոչ թշնամի։ Գործելի գործիք. ինչպէս զինք հաճութեամբ պիտի խորտակէի... կին մը ընտրած էի, գեղեցկագոյնը, զինքը կը սիրէի. զայն ինձմէ կ'առնու։ Բարեկամ մը ունէի, ապահովագոյնն ու քաջագոյնը... նա զինքը ինձ թշնամի կ'ընէ։ Ո՛հ, անմիջապէս դարձեալ քովս պիտի առնում զՊիւսին... և անձամբ պիտի երթամ ես իրեն։ Գալով Տիանան իրմէ ետ առնելուն, ետքը կը նայինք։

ՕՐԻՑԼԻ. Վեհափայլ Տէր, նայեցէք հեռ մը։ (խումբ մը կ'անցնի աջէն 'ի ձախ)

ԴՈՒՔՍԸ. Դիմակաւորները... միթէ կատակ կ'ընես։

ՕՐԻՑԼԻ. (աջ կողմը ցուցնելով) Այն կողմ չէ... այս կողմ, կը տեսնէք։

ԴՈՒՔՍԸ. Սա երկու մարդիկը որ կու գան... կարծես թէ Սէն-Լիւքն է.

ՕՐԻՑԼԻ. Եւ միւսը։

ԴՈՒՔՍԸ. Պիւսի... Պիւսի... ջերմով պառկած... Պիւսի որոյ դուռը ինձ դէմ գոցուած է. (ծածկուելով կը հեռանայ։)

## ՏԵՍԻԼ Ն.

ՆՈՅՆՔ, ՊԻՒՍԻ, ՍԷՆ-ԼԻՒՔ

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ինչ կ'ուզէք ըսէք, կոմս, հոս աւելի զուարթ էք քան թէ Պիւսիի ապարանքին մէջ փակուած...։ Ուղիղ օր առանց դուրս ելնելու և կենդանի հոգի մը տեսնելու.

ՊԻՒՍԻ. Մարդ կլիման կը փոխէ բայց ոչ գաղափարը . և դուք աւելի զուարթ չպիտի տանիք զիս իմ տունս , որքան զուարթ որ անկից հանեցիք :

ՍԷՆ-ԼԻՒՔ. Տեսնենք :

ԴՈՒՔՍԸ. (յանկարծ մտաբերելով) Բարի խրխուն , Պիւսի :

ՊԻՒՍԻ. (ողջոյն) Վեհափայլ Տէր : (ՍԷՆ-ԼԷՕ անձայն կ'ողջունէ)

ԴՈՒՔՍԸ. Ուստի՞կ բժշկուած էք , կարծեմ . . . հրաշքով : Հիմայ իսկ անկողնոյ մէջ չէի՞ք :

ՊԻՒՍԻ. Ճշմարիտ է , Վեհափայլ Տէր:

ԴՈՒՔՍԸ. Դուք խեթիւ կը նայէիր ինձ , խոստովանէ զայն, և իմ հաշտութեան պատգամաւորս մերժեցիր : Բայց քանի որ հաշտութիւնն դու անձամբ կը բերես , ասոր ընելիք չունիմ, բարեսիրտ մէկն ես դուն , շնորհակալ եմ:

ՊԻՒՍԻ. Ձեր Վսեմութիւնը կը սխալի, ես զինք չէի փընտռեր :

ԴՈՒՔՍԸ. Օ՛ն , իրաւացի եղիր . ինչ որ անցեալ օր չը կարացի քեզ բացատրել քիչ ատենէն պիտի գիտնաս , վաղը զայն պիտի գիտնաս և պիտի տեսնես թէ այս ցաւալի գործին մէջ ըրածէս տարբեր կերպով կրնայի վարուիլ . . . : Կեցիր. զայն այս երեկոյ պիտի գիտնաս և երկու ժամէն յառաջ . . . : (Ձեռքէն կը բռնէ) Օ՛ն ուրեմն , հետս եկուր :

ՊԻՒՍԻ. ('ի բաց քաշելով) Ներողութիւն , Վեհափայլ Տէր. Ձեր Վսեմութեան ընկերանալ կարելի չէ ինձ :

ԴՈՒՔՍԸ. Ա՛հ :

ՊԻՒՍԻ. Խիստ կը տառապիմ: Սխալեցայ դուրս ելնելուս և կը վերադառնամ դարձեալ անկողինս մտնելու :

ԴՈՒՔՍԸ. Նաև չարաչար չպիտի գործածեմ զքեզ. քեզմէ միայն պարոն Սէն-Լիւքի հետ սկսած շրջագայութիւննիդ ինձ հետ լմնցնել կը խնդրեմ, որն որ տեսածիս համեմատ՝ հիմա քու բարեկամներէդ է :

ՊԻՒՍԻ. Այո՛ , Վեհափայլ Տէր, լաւագոյններէն :

ԴՈՒՔՍԸ. Լաւ ուրեմն , ես ալ քու բարեկամդ եմ, և թուականաւ առաջինը . . . : Օ՛ն , եկո՛ւր :

ՊԻՒՍԻ. Եթէ մեր մէջ բարեկամութիւն ըլլար, Վեհափա-



Տէր , ինձ համար մեծ պատիւ մ'եղած կ'ըլլար . բայց այդ պատւոյն պարտիմ հրաժեշտ տալ:

ԴՈՒՔՍԸ. Ինչո՞ւ համար :

ՊԻՒՍԻ. Մեք երկուքս այլ ևս իրարու համար ոչինչ եմք, Վեհափայլ Տէր :

ԴՈՒՔՍԸ. Ա՛հ . . . առաջին քայլը ես կ'առնում:

ՊԻՒՍԻ. Ատի աւելի ցաւ մ'է ինձ համար :

ԴՈՒՔՍԸ. Ես քեզ կ'աղաչեմ:

ՊԻՒՍԻ. Վսեմափայլ Տէր . . . :

ԴՈՒՔՍԸ. Մտիկ ըրէ . . . : Դու այնպիսի մէկն չես որ օտար մ'անգամ վտանգի մէջ լքանէ. նոյն իսկ թշնամի մ'ըլլայ , դու իրեն կ'օգնես :

ՊԻՒՍԻ. Ձեր Վսեմութիւնը 'ի վտանգի չէ և իմ օգնութեանս պէտք չունի :

ԴՈՒՔՍԸ. Այո՛ կ'ըսեմ . . . : Այս երեկոյ քեզմէ պէտք ունիմ, գուցէ կենացս ամենէ ծանր պարագայի մը մէջ . . . : Միա՛յն ինձ հետ եկուր , տո՛ւր ինձ այս երեկոյթը և վաղը պիտի զարթնուս դուքս , իշխան , թագաւորութեան երկրորդը :

ՊԻՒՍԻ. (ծաղրելով) Առ առաւելն երրորդն կարելի էր ըլլալ, Վեհափայլ Տէր . որովհետև ինձմէ առաջ թագաւորը և դո՛ւք պիտի ըլլայիք :

ԴՈՒՔՍԸ. Կը մերժե՞ս . . . :

ՊԻՒՍԻ. Այդպէս պէտք է :

ԴՈՒՔՍԸ. Իմ բարեկամութիւնս :

ՊԻՒՍԻ. Այո՛ :

ԴՈՒՔՍԸ. Իմ խոստմունքներս :

ՊԻՒՍԻ. Այո՛ :

ԴՈՒՔՍԸ. Իմ հրամաններս :

ՊԻՒՍԻ. Այո՛ , Վեհափայլ Տէր :

ԴՈՒՔՍԸ. Պիտի զղջա՛ս այլ ևս իմ բարեկամս չըլլալուդ վրայ :

ՊԻՒՍԻ. Ըլլալուս արդէն զղջացած էի :

ԴՈՒՔՍԸ. Եկո՛ւր , Օրիյլի , եկո՛ւր :

ՕՐԻՅԼԻ. (առ Դուքսն) Քանի որ Ձեր Վսեմութեան հա-

մար չէր դար հոս, ջանանք գիտնալու որ ինչ բանի համար եկած է։

(դուրս կ'ելնէ։)

## ՏԵՍԻԼ Զ.

ՍԷՆ-ԼԻՒՔ, ՊԻԽՍԻ.

ՊԻԽՍԻ. Ա՜հ, Սէն-Լիւք, ինչու դիս հոս բերիք։ Եթէ դուրս ելած ըլլայի՝ այս անհամեմատ հանդիպումը տեղի չէր ունենար։ Վերադառնանք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Վայրկեան մը։

ՊԻԽՍԻ. Այս անշնորհք թաղին մէջ ինչ ընենք, ուրինչ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ես բանի մը համար եկած եմ հոս։ Տիկին Սէն-Լիւքի կ'սպասեմ որ եկեղեցին է, հոս, կեցէք։

ՊԻԽՍԻ. Այդ ուրիշ։ Լաւ ուրեմն, զձեզ կը թողում...։ Իմ հաւատարիմ մանկլաւիկս քովս է, ապարանքս կը վերադառնամ։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Չէք ուզեր կոմսուհին ողջունել։ Արդարև կ'ելնեն։ Ահա ինքը։ (Անոնք, որ եկեղեցիէն դուրս կ'ելնեն։ Նոյնպէս Տիանա և Ժաննը՝ աստիճաններէն իջնելով որոց կը հետևին Ժերթրիւտ և մանկլաւիկ մը։)

ՊԻԽՍԻ. Առանձին չէ....։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Ոչ. իր բարեկամուհիներէն մէկուն հետ է։ Եկէք կոմս, մօտ երթանք։

ՊԻԽՍԻ. (առ Ժաննը) Տիկին...։ (Տիանան տեսնելով) Տիանա՛։

ՍԷՆ-ԼԻՒՔ. (ցած) Ահաւասիկ զձեզ թաղին հետ կը հաշտեցընէ։

ԺԱՆՆԸ. (ողջունելով զՊիխսի) Պարոն Պիխսի. ինչ հրաշք։ (առ Սէն-Լիւք) Տեսնենք պարոն Սէն-Լիւք, թափօրը տեսնելու համար ինձ պատուհան մը խոստացաք։ Միասին փնտռենք։

ՍԷՆ-ԼԻՒՔ. Դէմը, կ'ուզէք։ (Պիխսին և Տիանան առանձին թողլով կը հեռանան. Պանդոկին մէջ կը հրաւիրէ։)



## ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ, ՊԻԽՍԻ, ՏԻԱՆԱ.

ՊԻԽՍԻ. Ո՜հ, տիկին, աւասիկ դէպք մը որ ինձ համար նախախնամութեան տեղ կը բռնէ։

ՏԻԱՆԱ. Ասի բնաւ դէպք մը չէ, պարոն կոմս։ Ես տիկին Սէն-Լիւքի աղաչեցի որ ձեզ հանդիպելու համար ինծի օգնէ։

ՊԻԽՍԻ. Դո՛ւք...։

ՏԻԱՆԱ. Ձեր վեհանձնական ջանքերուն համար մեծ շնորհակալիք մը կը պարտէի ձեզ։

ՊԻԽՍԻ. Ինչ. Դուք զիս չէք ատեր, զիս՝ որ չկարացի ձեր թշուառութիւնը խափանել, զիս՝ որ դուցէ զանի մեծցուցի։

ՏԻԱՆԱ. Այս ահեղ օրուան անհնարին տագնապին մէջ իմ միակ մխիթարութիւնս ձեր յիշատակն եղաւ։ Բայց այս ... որ ձեզ տանի կ'ուզէի. ես ալ, իմ կողմէս, պարտաւորութիւն մ'ունիմ ձեզ նշանակելու կատարելիք։ Դուք մեծ վտանգի մը ենթակայ էք, պարոն կոմս։

ՊԻԽՍԻ. Ես՞։

ՏԻԱՆԱ. Դուք ձեր ապարանքին մէջ փակուած և հիւանդ կ'ապրիք, այդպէս չէ։

ՊԻԽՍԻ. Այո. հիւանդ, ցաւերէ և կատաղութենէ մաշած։

ՏԻԱՆԱ. Սակայն իւրաքանչիւր գիշեր իմ նոր բնակարանիս շուրջը խորհրդաւոր մարդ մը կը սպրդի, կը թափառի, պատուհանիս լոյսն կամ մթութիւնն կը լրտեսէ։ Ես զինքը տեսայ, ճանաչեցի, դուք էք այն։

ՊԻԽՍԻ. Տիկին, զձեզ կը հաւատեմ...։

ՏԻԱՆԱ. Դո՛ւք էք, դո՛ւք էք...։

ՊԻԽՍԻ. Լաւ ուրեմն, այո, ես եմ. ես՝ որ այստեղ առանց նպատակի, առանց յուսոյ, իմ այլ ևս անհոգի մարմնոյս քովէն ալ, պիտի լրտեսեմ ձեր ճրագին վառիլը, ձեր շուքին անցնիլը. ես եմ որ զձեզ տեսնելով, զիս կ'ապահով-

ցունեմ, թէ իմ սէրս յիմարութիւն չէ, և քան յաւիտեանս աւելի յուսահատ կը վերադառնամ, բայց դեռ կենդանի, որովհետև ձեր շնչած օդն շնչած եմ։

ՏԻԱՆԱ. Ա՛հ, թշուառ. բայց ես այս տան մէջ առանձին չեմ. իմինէս ուրիշ աչերալ զձեզ տեսան . . . Արդէն կը փնտռեն, ասոր վրայ անհանգիստ են։ Մոնսորօ կոմսը նախանձոտ է։

ՊԻՒՍԻ. Նախանձոտ, է՞հ. փախչելու ինչ ունի. ինքը՝ գեղեցկագունին և ամենէն աւելի պաշտելի կնոջ ամուսինը. նախանձել տառապող թշուառէ մը, անմիտ անգործէ մը։

ՏԻԱՆԱ. Կոմսը իւր կասկածանաց և բարկութեանց մէջ սարսափելի է։ Երէկ գիշեր, իմ պատուհանէս զձեզ կը դիտէի և նորա պատուհանը որ իմինիս մօտն է, յանկարծ մեղմօրէն բացուեցաւ։ Զէնքի մը շողիւն տեսայ։

ՊԻՒՍԻ. Է՛հ, թող զիս սպանէ։

ՏԻԱՆԱ. Ա՛հ, ձեզ կը պաղատիմ, այլ ևս մի՛ գաք, գթացէք յիս։

ՊԻՒՍԻ. Եւ ինչու համար կ'ուզէք որ ապրիմ. այս թշուառականին երջանկութեան ականատես ըլլալու, երջանկութեան՝ զոր երկիցս գողցաւ։ Տակաւ մեռնելու համար, վայրկեան առ վայրկեան, այնպիսի տանջանքով որ այս դժոխային երջանկութիւնը տառապիլ կու տայ ինձ։ Նախանձոտ. նախանձոտ է թշուառականը, նախանձոտ է շուքէն երբ ինքն նորա իրաւանութեան տէրն է. բայց յանուն կենդանւոյն Աստուծոյ, անմտութիւն մ'ըրած պիտի ըլլամ թողլով ինքզինքս որ այս մարդէն սպանուիմ։ Նա իմ մահացու թշնամիս է, և զինքը ես իմ ձեռօքս պիտի սպաննեմ։

ՏԻԱՆԱ. Պարո՛ն . . . ա՛հ . պարո՛ն, գուցէ արդարանալի է նա։

ՊԻՒՍԻ. (յուսահատօրէն) Զինքը կը պաշտպանէք։

ՏԻԱՆԱ. Եթէ գիտնայիք . . .

ՊԻՒՍԻ. Գիտեմ որ զձեզ կը սիրեմ և թէ նա ձեր այրն է։

ՏԻԱՆԱ. Բայց եթէ այդպէս եղած չըլլա՞ր, և եթէ երբեք չպարտէր ըլլալ . . .

ՊԻՒՍԻ. (ապշելով) Ո՛հ.



ՏԻԱՆԱ. (շփոթած) Մնաք բարեաւ։

ՊԻՒՍԻ. Տիանա՛, Տիանա՛։ (Նորա ետևը կ'երթայ. խայտ կոյս դրան; Տէսնոյ, երբոր ժամանքէ մեկնելու։)

## ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՔ, ԴՈՒՔՍԸ, ՕՐԻՑԼԻ. որոնք ճոյլերնէ մը ՚ի վեր եկեղեցւոյն տեսքին վրայ կ'երևան։

ԴՈՒՔՍԸ. (եկեղեցւոյն դրանէն) Ա՛հ, Պիւսի, աւասիկ ինչու համար քու տէրդ կը մտնես . . . լաւ։ (կը հեռանան)

ՏԻԱՆԱ. (առ ժամը) Մեկնինք։

ՊԻՒՍԻ. (ընթե կեցնելով) Բառ մը ևս, ա՛հ, բարեկամքդ իմ։

ՇԻՔՕ. (նոր պատուհանէն խօսելով) Մոլեգնա՛ծ էք, տէր իմ . . . գետնին վրայ ծնրադիր, տ'Անժու դուքսէն տասն քայլ անդին, որ զձեզ կը լրտեսէ։

ՊԻՒՍԻ. ՏԻԱՆԱ. Ա՛հ . . . դուքսը . . .

ՇԻՔՕ. Կոմսին տանն սիրահարները։

ՊԻՒՍԻ. Կը կարծէք թէ զինքը դարձեալ պիտի թողում որ ձեռքէս փախչնիմ։

ՇԻՔՕ. Կը կարծեմ թէ ջերմ ու տաքուն ունիք և թէ անմիջապէս Պիւսիի ապարանքը պիտի վերադառնաք։

ՊԻՒՍԻ. Ա՛հ . . .

ՇԻՔՕ. Անմիջապէս կ'ըսեմ, և դուք ձեր վիրմակաց տակ ինքզինքնիդ պիտի ծածկէք, որ ջերմէն ատամնակառկառ ըլլաք. և եթէ ձեր գլուխը ուսերնուդ վրայ պահել ուզէք՝ երբեք չպիտի խոստովանիք թէ այս երեկոյ դուրս ելած էք։

ՊԻՒՍԻ. Բայց ինչ կայ ուրեմն։ (հեռուէն մեծ աղաղակ)

ՇԻՔՕ. Սա կայ որ . . . Բայց մեկնեցէք շուտով. պարոն Պիւսի. ա՛ս մ'կամուրջ կինը 'ի կործանս կը մտնէք։ (Պիւսի կը հեռանայ) Գացի՛ք ձեզ. Տիանա. իմ փոքրիկ քոյրս, կը յիշէք որ ձեզ խոստացայ որ ձեր հօրը դարձնեմ զձեզ . . . ահա ազատութիւն . . . Ա՛հ, ժամը, ինչ յիմարութիւն,

դուք միշտ միևնոյն իմ Մերիտորի թեթևսօլիկութիւն էք . . . .
Գացէք , գացէք . . . . ։ ( դէպ Սէն-Լիւ ) Դուք , ինձ հետ մնացէք , որովհետև քեզ ամուսնոյն ձևը պէտք պիտի ունենամ . Այս երեկոյ է որ կ'ուզ գիշերին արքայարանին մէջ . Շէքս իր պարտքը պիտի վճարէ լման է ։ ( Երկուքն ալ կ'ելնեն )

## ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՅՆՔ , ԿՈՐԷՆԹԻՆՕ. իր առանձնին վրայ, ուր կը հետևի ամբոխն և գինովցած խումբ մը ։

ԽՈՒՄԲԸ. Կեցցէ Դաշնակցութիւն. անկցի Վալուա, կեցցէ Կորէնթինօ։

ԿՈՐԷՆԹԻՆՕ. ( ողբերգաբար ) Այո , քաջ Բարիզցիք , կեցցէ Կորէնթինօ, պոռացէք։ Ես ձեր ախոյեանն եմ, և աշխարհի առաջին տաւղահարն ։

ԽՈՒՄԲԸ. Յաղթանակ , յաղթանակ . Ձայն մը , ձայն մը ։

ԿՈՐԷՆԹԻՆՕ. Այո , ձայն մը ։

ԽՈՒՄԲԸ. Լռութիւն , լռութիւն ։

ԿՈՐԷՆԹԻՆՕ. Զաւակներս . Բարիզ Գաղղիոյ ամենէն գեղեցիկ քաղաքն է և Բարիզցիք թագաւորութեան ամենէ հանճարեղ անձինքն են , այո . երգս այսպէս կ'ըսէ .

Ո՛վ բարեկամ իմ բարիզեան
Որքան տխրեալ եւ զուարթեան

ԽՈՒՄԲԸ. ( ծիծաղելով և ծափահարելով ) Այո , այո . . . .

ԿՈՐԷՆԹԻՆՕ. Բան մը միայն կ'պակսի զԲարիզ և զԳաղղիա, այն է Վալուային բռնաւորն, զոր այժմ իմ ճարտասանական շաւիղներովս գետնահարեցի . . . ։

ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ. Անկցի , անկցի բռնաւորն ։ ( Կորէնթինօ իւր տեղը կ'ելնէ )

ԿՈՐԷՆԹԻՆՕ. ( երգը կանչելու վերջանալէն ) Լաւ գիտեմ որ երկիրս չոր ու ցամաք հողին է , որ մարդ միայն իր արտասուօք կրնայ ծարաւն անցունել . . . բայց մեռնելէս առաջ՝ Սարգանաւաղին պատիժը տեսնելու մխիթարութիւնն պիտի ունենամ . Միթէ այսօր է որ գինը իշխանութենէ կը զրկեմք , իւր մա-



գերը կը խուզեմք և զինքը վանքի մը մէջ կը նետեմք ։ ( Խորտակեալ ամբոխին մէջէն կը լսուի թափօրին հարուածը . )

ԱՄԵՆՔԸ. Թափօրը , թափօրը ։ ( ամենքն ալ Կորէնթինօն կը թողուն թափօրին առաջը վազելու համար )

ԿՈՐԷՆԹԻՆՕ. ( դիտելով ) Երթանք թափօրին . . . ։ Ո՞ւր է Երկայնաձանգ . ո՞ր է իմ էշս , երթանք թափօրին . . . ։ ( դուրս կ'ելնէ ։ Նոյն միջոցին, ամբոխն թափօրը կը հասնի . )

ԱՄԵՆՔԸ. Թափօրը , թափօրը ։

## ՏԵՍԻԼ Ժ.

ԹԱՓՕՐԸ, ԱՆՑՈՐԴԱՇԱՐ, ԴԱՇՆԱԿԻՑՔ, ԼՕՐԷՆԵԱՆՔ, ԲՁՆՈՒԱԿԱՆՔ , ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ , իրենց դրօշակով . ԶԻՆՈՒՈՐՆԵՐ, ՊԱՀԱՊԱՆՔ , ԿԱՆԱՅՔ , ՄԱՆԿՏԻՔ ։

ԴՈՒՔՍԸ. ( ... Օրլէի և Անդրոնիկէի հետ ) Դուրս եկած է . . . մինչև արքայարան պիտի երթայ ։ ( ... )

ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ. Արքայն , արքայն . . . կեցցէ արքայն, կեցցէ արքայն ։ ( ... )

ԴՈՒՔՍԸ. ( ... ) Թագաւոր եմ ։ ( ... )

# ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՑԱՍՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Գենովէփեանց վանքին մեծ սրահը : Խորը մեծ դուռ մը որոյ կը համնուի վերուստ 'ի վայր խորասուզող լայն սանդուղ մը : Աջ կողմը, դուռ եւ պատուհան : Ձախ կողմը Թագաւորին մենախորշին վրայ բացուող դուռ :

### ՏԵՍԻԼ Ա.

( Վարագոյրը բացուած ժամանակ · Մացէն [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] կը [illegible] և ուրիշ կ'անցունէ , և [illegible] [illegible] մէջ կը ննջէ . )

ՄԱՑԷՆ , ԴՔՍՈՒՀԻՆ , ՊԵՐՈՆ ՏԸ ԼՕՐԷՆ .

ԴՔՍՈՒՀԻՆ . ( հառնելով ) Արդ ուրեմն , ինսէր եղաւ .

ՄԱՑԷՆ . Ամեն ինչ լաւ կ'երթայ . . . մեր ամրոցին մէջ տնառինք եմք։

ԴՔՍՈՒՀԻՆ . Վաղուան , ինչ կ'ընէ :

ՄԱՑԷՆ . Մտնելուն պէս իր մենախորշը փակուեցաւ , հոն, սա ձեմելեաց խորը . . . իր շունչը իսկ չլսուիր : Կ'աղօթէ .

ԴՔՍՈՒՀԻՆ . Կրօնաւոր ըլլալու համար ծնած է :

Պ . ՏԸ ԼՕՐԷՆ . ( մօտենալով ) Բայց դուրսէն ինչ լուր .

ՄԱՑԷՆ . Հասարակութիւնը խաղաղութեամբ կը վերադառնայ և իր գիւղերին ծափօրէն խիստ գոհ է , իր թագաւորը իրեն չպակսիր .

ԴՔՍՈՒՀԻՆ . Այդպէս կարծեմ . . . : Ո՛հ , որքան պիտի ուզէի սա Վալուան մեր տեղով և դուխը խոնարհած տեսնել՝



տակաւ դէպ 'ի թակարդը յառաջացած միջոցին . . . որչափ պիտի խնդայի .

ՄԱՑԷՆ . Ես չէի խնդար . . . : Մէն մի կայարանին՝ նա կը կենար հանգչելու կամ զովանալու համար , գաւառական վարագոյրները կը գոցէին : Ես չէի խնդար, սիրտս ուժգին կը բաբախէր . գինքը տեսութենէ կը կորսուէինք և ես ինքնին կ'ըսէի : « Դուրս պիտի ելնէ . չպիտի դառնայ » :

ԴՔՍՈՒՀԻՆ . ( խնդալով ) Զգարմա . . . :

ՄԱՑԷՆ . Վերջին գաւառին, Արալը–Սէք փողոցին մէջ , միւս անգամներէն աւելի փակեալ մնաց և երբ իր սքեմին տակ ծածկուած դուրս ելաւ , քան զաւաջինն աւելի ծռած և երկբայանաց մէջ ինձ երեցաւ . . . կը վախնայի թէ մի գուցէ մինչև հոս համնելու զօրութիւնն չունենայ :

ԴՔՍՈՒՀԻՆ . Աւասիկ հոս է , օրհնեա՛լ է Աստուած . և ստուգիւ հոս է : Գտնք տ'Անժու դուքսին :

ԿԱՐԴԻՆԱԼԸ . Նոր հասաւ : Մենաստրս դուռը իրեն բացաւ .

ԴՔՍՈՒՀԻՆ . Իր եղբօրը պէս բռնուած է : Ջինքը ինչ պիտի ընենք :

ՄԱՑԷՆ . Ա՛հ, անոր հետ արարողութեան պէտք չկայ, թագահրաժարման վճռագիրը ստորագրուելուն պէս, մեր զօրաւոր դղեակներէն միոյն համար ճամբայ կ'ելնենք : Բայց աւասիկ ինքը . ալ խօսք պէտք չէ : .

### ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ, ԴՈՒՔՍԸ Ե ԲԱԶՈՒՄ ԱԶՆՈՒԱԿԱՆՔ .

Պ . ՏԸ ԼՕՐԷՆ . Ձեր Վեհափառութեան հրամանաց պատրաստ եմք . . . :

ԴՈՒՔՍԸ . Բարի երեկոյ , պարոնայք .

ՄԱՑԷՆ . Միայն ձեզ կ'ըսպասեմք . Վեհափառ Տէր .

ԴՈՒՔՍԸ . Ձեր եղբայրն Հէնրի տը Կիզ չեմ տեսներ .

( [illegible] [illegible] [illegible] [illegible] )

Պ. ՏԸ ԼՕՐԷՆ. Մեր պահակակայաններուն վերակացու եղած է.

ԴՈՒՔՍԸ. Ե՛ւ ո՞ր . . . ո՞ր է բանտարկեալը։

ՄԱՅԷՆ. Իր մենախուցին մէջ։

Պ. ՏԸ ԼՕՐԷՆ. Պէտք չէ ժամանակ կորսնցնել, Վեհափառ Տէր, և աթոռահրաժարման վաւերագիրը իրեն ստորագրել տալու է։

ԴՈՒՔՍԸ. Լաւ ուրեմն, ստորագրել տուէք, պարոնայք։

ՄԱՅԷՆ. Այդ մեր գործը չէ. Վեհափառ Տէր, այդ իրաւունքը չունինք մենք։

ԴՈՒՔՍԸ. Ինչպէս։

Պ. ՏԸ ԼՕՐԷՆ. Ներկայ թագաւորը պարտի իւր նախորդին՝ իր իրաւանց կորուստն իմացնել։

ԴՈՒՔՍԸ. Բայց . . . եթէ մերժէ։

ՄԱՅԷՆ. Մեզ աւելի իրաւամբ կրնար մերժել. և այն ատեն բան մը չպիտի կարենայինք ընել։ Նոյնպէս աջակից իրաւունքը բոլորովին ձեզ կը վերաբերի այժմ, Վեհափառ Տէր։

ԴՈՒՔՍԸ. Ա՛հ, նա պիտի մերժէ . . . (— Մոնսորօ) այնպէս չէ։

ՄՈՆՍՈՐՕ. Կը վախնամ . . .

ԴՈՒՔՍԸ. Բայց, այն ատեն . . .

ՄԱՅԷՆ. Ժամանակը թանկագին է։

Պ. ՏԸ ԼՕՐԷՆ. Յաջողութիւնը փութանակի որոշումէ մը կախեալ է։

ԴՈՒՔՍԸ. Պիտի մերժէ. կ՚ըսեմ ձեզ . . .

ՄՈՆՍՈՐՕ. Միտ փորձեցէք։

ՄԱՅԷՆ. Այնպէս պէտք է։

Պ. ՏԸ ԼՕՐԷՆ. Եթէ առանձին մնայ, առանց օգնութեան . . .

ՄՈՆՍՈՐՕ. Ընկճեր և զօրաւոր ձեռքի մը մէջ . . .

ՄԱՅԷՆ. Զինքը հոս բերել տուէք Վեհափառ Տէր։

Պ. ՏԸ ԼՕՐԷՆ. Աւասիկ իր մենախուցին բանալին։

ԴՈՒՔՍԸ. Առէք Մոնսորօ։

ՄԱՅԷՆ. Եւ ահա թագահրաժարման վաւերագիրը ըստ օրէն ի գրուած, ինչպէս որ մեր մէջ յար արեցանք. Վեհափառ Տէր . . . միայն ստորագրութիւնը կը պակսի։
(Դուքսը ձեռք կ'առնէ)

Պ. ՏԸ ԼՕՐԷՆ. Եւ այժմ, Վեհափառ Տէր, գործ



տեսէք։

ՄԱՅԷՆ. Ձեր առաջին նշանին պիտի սպասենք։

ԴՈՒՔՍԸ. Զիս կը թողո՞ւք։

ՄՈՆՍՈՐՕ. (Մեկուսի) Կը հեռանան։

ՄԱՅԷՆ. Մեր ներկայութիւնը վնասակար աչարկութիւն մը պիտի ըլլար . . . պէտք է բանտարկեալը չվախցնել։ Իր հաւանութիւնն համոզմամբ ստանանք. եթէ խստութիւն հարկ ըլլայ՝ մեք բոլոր մեր զօրութեամբ հոս եմք . . . (Դուրս կ'ելլեն)

## ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ, ՄՈՆՍՈՐՕ, ՕՐԻՅԼԻ.

ՄՈՆՍՈՐՕ. Լօրէնեանք կը մեկուսանան. ինչու համար . . .

ԴՈՒՔՍԸ. Ասի կը նշանակէ թէ իրենց ընել չհամարձակած գործադրութիւնն ինձ կը թողուն։

ՄՈՆՍՈՐՕ. Կը հաւատամ. բայց ժամանակը կ'անցնի, պէտք է որ մէկը գործ տեսնէ։

ԴՈՒՔՍԸ. Այն ես պիտի ըլլամ։ Լօրէնեանց կամակատարն ըլլալու ստիպուած եմ արդէն . . .

ՄՈՆՍՈՐՕ. Դուք զիրենք երբեք ձեր առաջին աստիճանաւորներն առիք. սպարապետ, առաջին պաշտօնապետ . . . զձեզ բռնած են։

ԴՈՒՔՍԸ. Երկար ատենի համար չէ։

ՄՈՆՍՈՐՕ. Ի՞նչ կ'որոշէք, Վեհափառ Տէր։

ԴՈՒՔՍԸ. Բացէք սա դուռը։ (Մոնսորօ կը բանայ) կ'երևի . . .

ՄՈՆՍՈՐՕ. Այո, Վեհափառ Տէր, իւր մենախուցը բաց է։

ԴՈՒՔՍԸ. Ի՞նչ կ'ընէ։

ՄՈՆՍՈՐՕ. Ծնրադրած է . . . ուժաթափ, մտաց յափշտակութեան մէջ։

ԴՈՒՔՍԸ. Լաւ ուրեմն, Անդրակէն միասին առնելով՝ գացէք այս վաւերագիրը իրեն կարդացէք։

ՄՈՆՍՈՐՕ. Ե՞ս . . . իւր որսորդապետը . . .

ԴՈՒՔՍԸ. Ես իւր եղբայրը չեմ։

ՄՈՆՍՈՐՕ. Սուր ունեցող մարդ մը վաւերագիր մը չընթեր-

նուր , Վսեմափայլ Տէր , զայն գործադրել կու տայ ։

ԴՈՒՔՍԸ · Ա՛հ . . . ։

ՄՈՆՍՈՐՕ · Պարոն Օրիյլին ունիք եւ , զինքը խրկեցէք Անդրակէի հետ ։

ԴՈՒՔՍԸ · (ինքնիրեն ըսելով) Իրաւունք ունիք, կոմս ։ Ա՛հ , Պիւսի , Պիւսի , ո՛ւր ես . . . ։ (Մոնսորօ Անդրակէն փնտռել կ'երթայ ) Խոնարհելնիս տակաւին , քիչ ատենէն պիտի բարձրանամ . . . ։

## ՏԵՍԻԼ Դ ·

ՆՈՅՆՔ , ԱՆԴՐԱԿԷ , ՕՐԻՅԼԻ .

ԴՈՒՔՍԸ · Մարքիզ Անդրակէ , ընկերացէք պարոնին մինչև բանտարկելոյն քով , որոյ այս վճռագիրը իւր բոլոր մանրամասնութեամբ պիտի կարդացուի ։

ԱՆԴՐԱԿԷ · Այո՛ ,Վեհափայլ Տէր ։

ԴՈՒՔՍԸ · Անշուշտ դէմ կենալու է · բայց, ինչ որ ալ ըսելու ըլլայ , տրտնջայ , սպառնայ կամ աղաչէ՝ դուք լռելէ ուրիշ բան չպիտի ընէք ։

ԱՆԴՐԱԿԷ · Այո՛ , Վսեմութիւն ։

ԴՈՒՔՍԸ · Ամէն կողմ գոցեցէք, ա՛հ, իւր ձայնը լսել չեմ ուզեր ։ Ահաւասիկ վճռագիրը, գացէք ։ (Անդրակէ կը խօնարհի . — Դուքսը վճռագիրը կու տայ ։ Երկուքն ալ դուռը կ'երթան արտաքին դուռ երթալու և դուռը կը գոցեն ։ Այն ատեն Մոնսորօ դուռէն կը մտնայ ։ ) Ի՞նչ կ'ուզէք , Մոնսորօ կոմս ։

ՄՈՆՍՈՐՕ · Բառ մը միայն , Վեհափայլ Տէր ։ Մէկ վայրկենէն Ձեր Վսեմութիւնը Թագաւոր պիտի ըլլայ և մեր իրեն տուածին 'ի տրիտուր , Թագաւորը մեզ երաշխաւորութիւններ կը պարտի ։

ԴՈՒՔՍԸ · Երաշխաւորութիւններ ։

ՄՈՆՍՈՐՕ · Իւր ծառայից պատիւն ու հանգիստը յարգել բոլորովին որոշած է արքայն, այնպէս չէ ։

ԴՈՒՔՍԸ · Պարո՛ն ։



ՄՈՆՍՈՐՕ · Ձայս ձեզ ըսելուս պատճառն այն է , Վեհափայլ Տէր, որ երէկի օրն վաղուին շատ մօտ է և թէ դեռ երէկ Ձեր Վսեմութիւնը իւր լաւագոյն աջնուականներէն միոյն կինը բաւական չէր յարգեր ։

ԴՈՒՔՍԸ · Ո՛ր կնոջ վրայ խօսիլ կ'ուզէք ։

ՄՈՆՍՈՐՕ · Իմինիս վրայ ։ Ձեր Վսեմութիւնը զՏիանա որ Մերիտոր միշտ կը սիրէ և Ձեր Վսեմութիւնը միշտ կը յուսայ ։

ԴՈՒՔՍԸ · Կոմս ։

ՄՈՆՍՈՐՕ · Իմ ամուսնութենէս 'ի վեր, ամեն գիշեր Ձեր Վսեմութիւնը մանկլաւիկի մը հետ կամ առանձին, իմ տանս շուրջը կու գայ ։

ԴՈՒՔՍԸ · Ե՞ս . . . ։

ՄՈՆՍՈՐՕ · Ձեզ տեսայ, Վեհափայլ Տէր · ես կը հըսկեմ . . . ո՛հ, երդումն ըրի թէ այս կինը և ոչ մէկուն պիտի ըլլայ ։ Քանի որ կենդանի՝ երբեք զիս չպիտի թողու, իսկ եթէ մեռնիմ՝ դարձեալ հաշիւ թէ զինքը թողած պիտի ըլլամ , զինքը միասին պիտի տանիմ երբ մեկնիմ ։ Ի՛նչ կ'ուզէք , Վեհափայլ Տէր , աս իմ խելայեղութիւնս է ։ Բարեբաղդաբար մտածեցի յառաջուց ձեզ աղդարարել ։ Բայց վերջապէս , երբ Թագաւոր ըլլաք · ինչ պիտի պատահի թէ որ մէթութեան մէջ զձեզ չճանչեմ և թէ դուք երէկուան պէս հրամայութեան չափ մօտ գտնուած ըլլաք . . . ։

ԴՈՒՔՍԸ · Մոնսորօ . . . բայց յիմար մ'էք դուք ։

ՄՈՆՍՈՐՕ · Ե՛ս, պատուհանիս տակ, մարդ մը տեսայ . . . ։

ԴՈՒՔՍԸ · Մարդ մը տեսաք , կարելի է · բայց ձեզ ո՛վ ըսաւ թէ այն մարդը ես էի . . . ։

ՄՈՆՍՈՐՕ · Ուրեմն ուրիշ մէկը կայ ։

ԴՈՒՔՍԸ · Երևաբար ։

ՄՈՆՍՈՐՕ · Որ զՏիանա կը սիրէ ։

ԴՈՒՔՍԸ · Այո՛ ։

ՄՈՆՍՈՐՕ · Եւ նա իրմէ սիրուած է ։

ԴՈՒՔՍԸ · (ուսերը բարձրացնելով ) Գուցէ ։

ՄՈՆՍՈՐՕ · Ա՛հ , Վեհափայլ Տէր . . . այս մարդուն անունը , զայն ձեզմէ կը խնդրեմ, իբր բոլոր ծառայութեանցս 'ի փոխարէն . . . Վեհափայլ Տէր, մինչև որ զայն ինձ չըսէք՝

զձեզ չեմ թողուր ։

ԴՈՒՔՍԸ. Հանդարտ կեցէք՝ զայն պիտի գտնանք։ (արտաքին դուռը նորէն կը բացուի. — Լատուրեան.)

## ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ, ԱՆԴՐԱԿԷ, ՕՐԻՑԼԻ.

ԴՈՒՔՍԸ. Արդ ուրեմն,

ԱՆԴՐԱԿԷ. Վճռագիրը կարդացուեցաւ, Վեհափառ Տէր։

ԴՈՒՔՍԸ. Եւ ինչ ըսաւ,

ԱՆԴՐԱԿԷ. Ոչինչ,

ԴՈՒՔՍԸ. Զարմանալի, չբողոքեց ։

ԱՆԴՐԱԿԷ. Անշարժ, որպէս թէ այսու յայտնութեամբ ընկճած ըլլար, իր դողդոջուն ձեռացը մէջ իր ճակատն թաղելով՝ ծնրադրեալ մնաց, և քան յաւիտեանս խոնարհած. գլխոյն ամէնէն կրնաք տեսնել որ լուին իր կուրծքն կը ծեծէ.

ՄՈՆՍՈՐՕ. Տարօրինակ բան ։

ԴՈՒՔՍԸ. (որ նայելու համար կը յառաջանայ) Կը վախնայ....

ՕՐԻՑԼԻ. Ճշմարիտ է որ հարուածն խստասաստ է ։

ՄՈՆՍՈՐՕ Վերջացուցէք, Վեհափառ Տէր, վերջացուցէք, իր ստորագրութիւնը դիւրաւ պիտի ունենանք ։

ԴՈՒՔՍԸ. Ո՛հ, հոս բերէք զինքը, Անդրակէ. (Անդրակէ կը հեռանայ)

ՄՈՆՍՈՐՕ. (խոժոռ) Կը վազեմ Լօրէնի ասպետաց իմացընել և իմ զինակիրներս յառաջացնել։ (Մեկուսի) Նէ՛ մէկը կը սիրէ... զո՞վ ուրեմն...։ (դուրս կ'ելլէ)

ԴՈՒՔՍԸ. Զինքը տեսնել, իրեն խօսիլ, իմ կարծածէս աւելի դժուարին է ։

## ՏԵՍԻԼ Զ.

ԴՈՒՔՍԸ, ԱՆԴՐԱԿԷ, ՕՐԻՑԼԻ, ԱՐՔԱՅՆ իր վերարկուն փակ ծածկեալ, կը յառաջանայ հակեալ, նուաղեալ, խորտակեալ, յետոյ ինքն ծնրադրած ։

ԱՆԴՐԱԿԷ. (ցած) Գթա՛ծ վիճակ.



ԴՈՒՔՍԸ. Մօտեցէք Հէնրի. Ճշմարտութիւնն բոլորովին գիտէք, այնպիսի ճշմարտութիւն մը զոր շատ անգամ թագաւորներէն կը ծածկեն և երբ յերեւան ելնէ զիրենք կը շանթահարէ ։ Գիտէք որ ձեր ժողովուրդը զձեզ թողած է և թէ ձեր ազնուականներն ու թագաւորութեան աւագանին զձեզ իշխանութենէ զրկած են ։ Ապահով եղիք, կեանքերնիդ ձեզ պիտի թողուի. և ձեր այժմ ստորագրելիք վճռագիրը՝ ձեր աթոռահրաժարումը իբրև կամաւոր ներկայացնելով, կը փրկէ դարձեալ մեր տան երևոյթն ու պատիւը. (Արքայն ձայն մը կ'արձակէ) Ա՛հ, դուք ինծ համար աւելի խիստ կրնայիք ըլլալ, դուք՝ որ զիս շատ անգամ նուաստացուցիք, որպէս թէ ես եղած ըլլայի Գաղղիոյ որդի մը, ձեր հաւասարը և այն գահին միակ ժառանգը՝ ուսկից զձեզ կը վանեն և որ այսուհետև ինծ կը վերաբերի ։ (կենդանի) Միշտ նոյն անշարժութիւնը ։

ԱՆԴՐԱԿԷ. Վեհափառ Տէր, ձեր եղբայրն է... իր տագնապից վերջ տուէք ։ (առ Արքայն) Վեհափառ Տէր, ստորագրեցէք ։

ՕՐԻՑԼԻ. Ստորագրեցէք....։ (Նորա գրիչ մը կու տայ։ Արքայն կը մերժէ.)

ԴՈՒՔՍԸ. Ա՛հ, խոհեմ եղիք... մեր համբերութիւնը մի՛ փորձէք ։ (դարձեալ աղմուկ) Ստորագրեցէք, Հէնրի, ապա թէ ոչ ամեն բանի պատրաստ գտնուեցէք....։

ՄՈՆՍՈՐՕ. (ներս մտնելով) Լօրէնեանք աներևոյթ եղած են և Զուիցերցիք գերեզմանատունէն արքայարանին մէջ կը մտնեն ։

ԴՈՒՔՍԸ. (սպառնալեօք) Պիտի ստորագրէք....։ (Արքայն կը ծռի և յամրաքայլ կ'առաջանայ։) Վերջապէս ։

ՕՐԻՑԼԻ. (որ պատուհանէն կը նայի) Եւ ահաւասիկ Գրիլեօն որ իր Գաղղիացի զօրականօք դրան կը հսկէ ։

ԱՆԴՐԱԿԷ. Վեր կ'ելլեն...։

ԴՈՒՔՍԸ. Այսպիսի պատանդով մը՝ բանէ մը չվախնանք.... (խորապէս դրան զարնուած հարուածք)

ՁԱՅՆ ՄԸ. (դուրսէն) Բացէք, վերապատուելիքդ իմ...։

ԴՈՒՔՍԸ. Այս ձայնը ։

ՄՈՆՍՈՐՕ. Աստուած իմ։

ՁԱՅՆԸ. (դուրսէն) Ո՛հ, ինծ դարձուցէք սա քիմարս ։

որ դեռ 'ի Լաւմը դարձած չէ ։

ՄՈՆՍՈՐՕ. (պատուհանէն նայելով) Արքայն . . . ։

ԴՈՒՔՍԸ. Բայց ուրեմն . . . ։ (տարակուսանքներու կը կոր-չայ) Շիքօ Առաջին . . . ։

ՄՈՆՍՈՐՕ. (կէսը արտաքին վարագոյրը վերցնելով) Ա՛հ . . . ։

ՇԻՔՕ. (խնդութեան պոռալով) Հա՛, հա՛, հա՛, ինչպէս կը զուարճանամ . . . ։

ԴՈՒՔՍԸ. Թշուառական . . . ։

ԱՐՔԱՅՆ. (դուրսէն) Կործանեցէք դուռը, պարոն Գրիլեօն . . . ։

ԴՈՒՔՍԸ. (անձայն) Առ իս, առ իս . . . ։

ՄՈՆՍՈՐՕ. Ամե՛ն ինչ կորսուած է . . . իւրաքանչիւր ոք իրեն համար, Վեհափայլ Տէր ։ (պատուհանէ մը կը ցատկէ և կը փախչի)

ՕՐԻՑԼԻ. (Դուքսը տեսնելով) Երթա՛նք, երթա՛նք, Վեհափայլ Տէր . . . ։ (փախչելու առենին Զուարճարանի դուռ կը մղէն Սէն-Լիւքի հրամանաւ, որ ալ կողմէն ներս կը մտնէ. խոյլ դուռը խորտակուելով շառաչմամբ կը բացուի ։)

ՍԷՆ-ԼԻՒՔ. (առ Շիքօ) Ո՛ւր է Մոնսորօ ։

ՇԻՔՕ. Սարսափելի յարկը, այս գունէն . . . ։ Շո՛ւտ . . . ։ (Սէն-Լիւք փախչողներու դուրս կ'ելնէ)

## ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ, ԱՐՔԱՅՆ, ՍԷՆ-ԼԻՒՔ, ԳՐԻԼԵՕՆ, ՊԱՀԱՊԱՆՔ
'ի դուրս և ամենուրեք ։

ՇԻՔՕ. Աղէկ հասար, քիչ մնաց որ զիս աթոռահրաժար պիտի ընէին ։

ԱՐՔԱՅՆ. Ինձ բերէն տը Նիղ պարոնները . . . ։ (կը փոխէ) Պարոն Պիւսի . . . կ'իմանա՞ք Նանսէյ ։

ԳԻԼԻՒՍ. (առ Արքայն) Ասորմէ առնելիք տրխտուր մը ունինք . . . զայդ ես կ'ստանձնեմ ։ (դուրս կ'ելնէ)

ԱՐՔԱՅՆ. Պարոն Մոնսորօ . . . ։

ՇԻՔՕ. Զայն ես ստանձնած եմ . . . ։

ԱՐՔԱՅՆ. Զիս առանձին թողէք, պարոններ . . . . կե-



ցէք, Շիքօ . . . ։ (պահապանները խորը սանդուխին վրայ կը կեցուին ։ Շիքօ մնալով դուրս կը ելնէ ։)

## ՏԵՍԻԼ Ը.

ԱՐՔԱՅՆ, ԴՈՒՔՍԸ, ՇԻՔՕ

ԴՈՒՔՍԸ. (ծնկէն խոնարհելով) Վեհափառ Տէր . . . ։

ԱՐՔԱՅՆ. Այսպէս, ինձ դէմ դաւաճանութիւն ըրիք, ինչպէս որ ուրիշ անգամ իմ Շարլը եղբօրս դէմ դաւաճանեցաք ։ Այն ատեն, Նաւարայի Թագաւորին հետ էիք. այսօր Կիզեանց հետ, որո՛նք զձեզ կը նախատեն և խաղք կ'ընեն ։ Ուրիշ անգամ օձի մը պէս կը սողոսկէիք. այսօր՝ կ'առիւծանաք և կ'ուզէք խածնել . . . նենգութենէ յետոյ՝ բռնութի՛ւն, թոյնէ յետոյ՝ սուր ։

ԴՈՒՔՍԸ. Թո՛յն . . . ։ Ի՞նչ ըսել կ'ուզէք ։

ԱՐՔԱՅՆ. Զես գիտեր ինչ ըսել կ'ուզեմ . . . ։ Զես ճանչեր որսորդութեան գրոց այն թոյնը, զոր Նաւարայի թագաւորին կը յատկացունէիր և բաղդը մեր եղբօրը Շարլի վրայ դարձուց ։ Սակայն մեր մօրը այն մահարեր թոյնը լաւ ճանչցուած է, պէտք եղածէն աւելի ճանչցուած, այնպէս չէ։ Ատասիկ ինչո՞ւ իմ մասին զան մեկդի թողուցիր ։ Ատասիկ ինչու համար սուրն ընտրեցիր։ Բայց ինձ նայէ ուրեմն, դու որ ծարւնայի և Մոնթօնթուքի յաղթողին վրայ սրով կը յարձակիս . . . ։

ԴՈՒՔՍԸ. Եղբա՛յր իմ . . . ։

ԱՐՔԱՅՆ. Սո՛ւրը . . . լաւ ուրեմն, զքեզ ինձ հետ առանձին տեսնել կ'ուզէի սուր 'ի ձեռին ։ Դու քուկդ ունիս, կ'ուզես իմ զաչս առնուլ, և մեք առասիկ դէմ առ դէմ եմք. տեսնենք . . . ։ Ա՛հ, թշուառ. լաւ ըմբռնէ՝ որ քու որպիսութիւնդ ունեցող մարդ մը՝ իմայնոյն նման անձ մը չկրնար սպաննել ։ Կեցիր, այլ ես այս կամ այն ինչ կերպով մեռցիլ մ՛ մտածեր, որովհետև այս վայրկենէս ալ քու եղբայրդ չեմ, այլ՝ քու թագաւորդ, քու տէրդ, քու տիրապետդ . . . ։ Քու շարժմանցդ վրայ կը հսկեմ. զքեզ խաւարին մէջ կը հալածեմ, ամենա-

փոքրիկ միութեան մը, ամենափոքրիկ կասկածանաց առեն՝ ձեռքս վրադ կ'երկնցնեմ, ո՛ չարաճճի, և զքեզ դաշնիս կայծերէն շնչասպառ կը դնեմ։

ԴՈՒՔՍԸ. (խոնարհելով) Վեհափառ Տէր, գթութիւն... գթութիւն...։

ԱՐՔԱՅՆ. Ո՛չ։

ԴՈՒՔՍԸ. Շնորհք...։

ԱՐՔԱՅՆ. Շնորհք պիտի գտնէք, եթէ ձեր դատաւորները ձեզ շնորհք ընեն...։

ԴՈՒՔՍԸ. Թողէք ինձ մեր մայրը տեսնել։

ԱՐՔԱՅՆ. Ի՞նչ բանի կը ծառայէ, քանի որ ընտանեաց թոյնը ես կը ճանչեմ։

ԴՈՒՔՍԸ. Ա՛հ, Վեհափառ Տէր... Վեհափառ Տէր...։

ԱՐՔԱՅՆ. Բաւական... առ իս Գրիլեօն... իմ զօրապետներս. ամէ՛ն ոք։

## ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՅՆՔ, ԱՄԵՆ ՈՔ.

ԹԱԳԱՒՈՐԸ. Իմ բանտարկեալներս... ո՞ւր կ'իջ պարոնները...։

ՆԱՆՍԷՅ. Խոյս տուած են, Վեհափառ Տէր, զէրենք կը հալածեն։

ԱՐՔԱՅՆ. Շարլըմաների ճշմարիտ յաջորդները... անկորնչելի են։ Զիրենք պիտի գտնեմ նորէն։

ՍԷՆ-ԼՈՒՔ. (Մոնսորօն բերելով) Ահաւասիկ պարոն տը Մոնսորօն, Վեհափառ Տէր...։

ՇԻՔՕ. Է՛հ, մեր մեծ որսորդապետը, ահաւասիկ ուրեմն նե՞ղը ինկած էք...։

ԱՐՔԱՅՆ. (Մոնսորոյին) Արքայասպանութիւն, մատնութիւն և սրբապղծութիւն... գիտէք թէ ինչ կ'ըսպասեն ձեզ...։

ՄՈՆՍՈՐՕ. Բարի, Վեհափառ Տէր...։



ՇԻՔՕ. Ահա մանկամարդ կին մը որ քիչ ատենէն այրի պիտի մնայ։

ԱՐՔԱՅՆ. Զինքը երկրորդ անգամ պիտի ամուսնացնենք։

ՄՈՆՍՈՐՕ. (դողալով) Ա՛հ...։

ԳԷԼԻՒՍ. Պարոն Պիւսի ինքզինքը աղէկ կը պահէ, Վեհափառ Տէր, զինքը աբբայարանին մէջ չգտանք։

ՆԱՆՍԷՅ. Վեհափառ Տէր։ պարոն Պիւսի...։ (Պիւսի ներս կը մտնէ)

ԱՐՔԱՅՆ. (Պիւսիին) Ո՞ւր էիք...։

ՊԻՒՍԻ. Անկողնոյս մէջ, Վեհափառ Տէր. — Ձեր պահապանաց զօրագլխին հարցուցէք...։

ՆԱՆՍԷՅ. Ճշմարիտ է։

ՊԻՒՍԻ. Անկից զատ եթէ գործը մատնութեան վրայ է, ինչպէս որ կը լսեմ ըլլալ, Ձեր Վեհափառութիւնը գիտէ թէ ես երբէք չեմ մատներ։ (Դուքսը կը ծռի) Կը ժպտիք, պարոն դուքս։

ԴՈՒՔՍԸ. Զարմացումէս։

ԱՐՔԱՅՆ. Ինչո՞ւ ուրեմն։

ԴՈՒՔՍԸ. Կը կարծէի թէ վտանգի ատեն իւր բարեկամները ուրանալու չափ վեհանձն է Պ. Պիւսի։

ՊԻՒՍԻ. Ի՞նչ ըսել կ'ուզէ Ձեր Վսեմութիւնը։

ԴՈՒՔՍԸ. Ոչինչ։

ԱՐՔԱՅՆ. Խօսեցէք, կ'ուզեմ։

ՊԻՒՍԻ. Ո՞ր բարեկամներս են զորս կ'ուրանամ։

ԴՈՒՔՍԸ. Բայց դիս, նախ և առաջ։ Դուք այս երեկոյ թափօրին ժամանակ ինծի հետ չէիք։

ՊԻՒՍԻ. Բայց...։

ԴՈՒՔՍԸ. Երբ պարոն Սէն-Լիւքի հետ ձեզ պատահեցայ։

ՇԻՔՕ. Օ՛հ։

ԴՈՒՔՍԸ. Եկեղեցւոյն առջև... ուր այն անձուհւոյն հետ ժամադիր էիք։

ԱՐՔԱՅՆ. Ո՞ր անձուհւոյն։

ԴՈՒՔՍԸ. (Մոնսորոյին հետ անկիւնը քաշուելով) Տիկնոջ մը։

ՊԻՒՍԻ. (ցած) Պարոն դուքս... ձեզ կը պաղատիմ...։

ԴՈՒՔՍԸ. (բարձր ձայնիւ) Տիկին Մոնսորօ՛ն։

ՄՈՆՍՈՐՕ. (խայթուելով) Ա՛հ։

ՇԻՔՕ. Թշուառականը։

ՄՈՆՍՈՐՕ. (առ Դուքս) Վեհափառ Տէր...։

ԴՈՒՔՍԸ. (կիսաձայն, Պիւսին ակնարկելով) Ի՛նքն է։

ՄՈՆՍՈՐՕ. Ինքը՛։

ՊԻՒՍԻ. Ա՛հ, Վեհափառ Տէր, ինչո՞ւ այլ ևս ամենազօր չէք... ինչո՞ւ այլ ևս ազատ չէք...։ (Սէն-Լիւք կը կեցնէ զՊիւսի։)

ԱՐՔԱՅՆ. (առ Շիքօ) Պատասխանատու կ'ըլլա՛ս ինձ Պիւսիի համար։

ՇԻՔՕ. Որպէս թէ ես ինքն եղած ըլլայի։

ԱՐՔԱՅՆ. (առ Դուքսին) Դուք, պարոն դո՛ւքս, 'ի Լուվր...։ (առ Նանսէյ) Աչքէ չհեռացնէք...։ (պալատականաց) Ինձ կը լսէք...։ (առ Մոնսորօ) Դուք, պարոն Մոնսորօ, 'ի դղեակն Վէնսէն։ Պարոն Պիւսի, դուք ազատ էք...։

ՄՈՆՍՈՐՕ. (մռլտալով) Ինք ազատ է. և ես բանտարկեա՛լ։ Ա՛հ, ո՛չ, ազատութիւնը։ (առ Դուքսին) Վեհափառ Տէր, ազատութիւն պէտք է ինձ...։

ԴՈՒՔՍԸ. (իւր դաշոյնը անոր ցուցնելով) Աւասի՛կ։

ՄՈՆՍՈՐՕ. Այո՛... այո՛... երթա՛նք։ (պահապանաց մէջ տեղէն դուրս կ'ելնէն)

ԱՐՔԱՅՆ. Պարոնա՛յք, 'ի Լուվր։

ՆԱՆՍԷՅ. Ձեր սուրը, Վեհափառ Տէր։

ԴՈՒՔՍԸ. (Պիւսիի առջևէն անցած ատեն) Պիտի զղջաս...։ (Պիւսի առանց պատասխանելու կը խոնարհի. ամէն ոք արքային ետե-ւէն դուրս կ'ելնէ։)

ՊԻՒՍԻ. (առ Շիքօ) Ո՛հ, բարեկամդ իմ... ի՛նչ երազ...։

ՇԻՔՕ. (առ Պիւսի) Աւասիկ ուրեմն իմ գործս լմնցաւ։ Թագաւորը փրկուեցաւ, Տիանա ազատ... ալ մնացեալը ինձ չվերաբերիր։

ՊԻՒՍԻ. Թուրնէլի փողոցը չէք մոռնար, այս երջանկութիւնը պարոն Մերիտորի և Տիանայի իմացնելու։

ՇԻՔՕ. Միթէ դուք հոդ չէք...։ Շատ կարևոր է որ բան մը ընէք...։



ՊԻՒՍԻ. (ձեռքը սեղմելով) Ո՛հ, դէպ 'ի հո՛ն կը թռիմ։ Մնաք բարեաւ։

ՇԻՔՕ. Եւ ես, կ'երթամ պառկելու...։ Գիշե՛ր բարի։

## ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Թուրնէլ փողոցի տունը։ Տան ճեմելեաց վրայ ապակեփեղկով մը բացուող բարձր սենեակ մը. յաջ և ի ձախ դռներ։ 'Փոթորկալից գիշերաւ մը Բարիզի տեսիլը։

### ՏԵՍԻԼ Ա.

ՏԻԱՆԱ, ՊԻՒՍԻ, ԺԻՐԹՐԻՒՏ.

ՏԻԱՆԱ. Ջիս չէք խաբեր երբէք, այնպէս չէ՞, և դուք ալ խաբուած չէք. Որքա՛ն ուրախութիւն հօրս համար, և ինձ համար ազատութիւն, խորհուրդ և կեանք... Ճշմարիտ է ինչ որ ինձ կ'իմացնէք։

ՊԻՒՍԻ. Ջայն ձեզ 'ի ծունր եկած կը կրկնեմ...։ Յուսահատութեան այն դարէն յետոյ՝ երջանկութեան այս փայլակն կը պարտէր ինձ Աստուած։

ՏԻԱՆԱ. Երջանկութեան վրայ մի՛ խօսիք ինձ հոս, ուր այն թշուառը տակաւին տեսնել կը կարծեմ։

ՊԻՒՍԻ. Այո, ձեր վեհանձն հոգին կը հասկնամ. ձեր անցեալն և ապագային մէջ պէտք չէ որ արիւն հոսի. Լաւ ուրեմն, արքային կ'աղերսենք և դուք իսկ իրեն կը պաղատիք որ այս մարդուն կեանքը փրկեմք։ Իւր աքսորն զինքն առ յաւիտեան ձեզմէ կը բաժնէ. Իւր դատապարտութիւնը՝ ամուսնութիւնը կը խզէ. բաւական չէ՞։ Թո՛ղ ապրի։

ՏԻԱՆԱ. Թո՛ղ ապրի և կեանքն մեզ պարտի...։ Ո՛հ, վաղը, վաղը իսկ, Բարիզը թողուլ, 'ի Մերիտոր դառնալ, ինչպէս որ դեռ երէկ ասոր խորհուրդն Ժաննի հետ կ'ընէի. ապրիլ՝ առանց երկիւղի, առանց խղճի խայթերու, ապրիլ

երջանիկ ։

ՊԻԽՍԻ․ Պիտի մեկնիք . . . , և հոս առանց բանի մը վրայ ցաւելու ։

ՏԻԱՆԱ․ Սակայն բաց 'ի եղբօրմէս՝ զիս ազատող այն ազնիւ բարեկամէս՝ ոչինչ թողած պիտի ըլլամ 'ի Բարիզ։

ՊԻԽՍԻ․ Ձեզ իսկ նաև . . . ։

ՏԻԱՆԱ․ (բոցեռանդութեամբ) Ա՛հ , դո՛ւք . . . բայց ոչ. հոս ձեզ բան մը ըսել չեմ կրնար , չեմ ուզեր . . . ։ Հոս՝ ձեզ հոգեվարք ընդունեցայ ես և ձեր առաջին հայեցուածքն քաղեցի . հոս՝ թշուառութիւն և ամօթ կ'ըզգամ . հոս՝ . . . ո՛չ, ո՛չ, խօ՛սք մ'անգամ մի՛ ուզէք ինձմէ ։

ՊԻԽՍԻ․ Լաւ ուրեմն , անգամ մ'ալ նայեցէք ինձ . զայս հիմայ կրնաք ընել։ Դուք մի՛ խօսիք , բայց թողէք որ ձեզ տեսնեմ, թողէք որ պաշտեմ զձեզ։

ՏԻԱՆԱ․ Պիսսի՛ , սիրեցեալ Պիսսի՛ ։

## ՏԵՍԻԼ Բ․

ՆՈՅՆՔ , ՇԻՔՕ

ՇԻՔՕ․ (դիմակաւ) Օրհնեա՛լ է Աստուած . ժամանակին կը հասնիմ . . . ։

ՊԻԽՍԻ․ Ի՞նչ կայ . . . ։ (Շիքօ դիմակը կը հանէ)

ՏԻԱՆԱ․ Եղբա՛յր իմ։

ՇԻՔՕ․ Մոնսորօ , որ զինաթափ եղած կը կարծուէր , զինքն 'ի Վէնսէն առաջնորդող պահակաց վրայ յարձակեր է, անոնցմէ երկուքը դաշոյնով զարկեր , միւսներուն վրայէն անցնելով՝ խոյս տուեր է ։

ՏԻԱՆԱ․ Ա՛հ ։

ՊԻԽՍԻ․ Խո՛յս է տուեր . ո՞ւր է ինքն ։

ՇԻՔՕ․ Նախ և առաջ հոս պիտի գայ. կորսնցնելու վայրկեան մը չկա՛յ . պէտք է ասկից դուրս ելնել։

ՊԻԽՍԻ․ Պէտք է իրեն սպասել։

ՇԻՔՕ․ Դո՛ւք , ինչո՞ւ համար . այս տան մէջ ո՞վ էք դուք.



եթէ ամուսինը գանայ , և՛ զձեզ հոս գտնէ ։

ՏԻԱՆԱ․ Խո՛յս տուէք ։

ՊԻԽՍԻ․ Խո՜յս տալ։

ՇԻՔՕ․ Վազեցէք Սէն-Լիւքի , թո՛ղ իր սպասաւորները զինէ , և ո՛վ որ պատահէ թէ բարեկամ և թէ զինուոր թո՛ղ զինքնք հաւաքէ, այս թշուառականը նորէն բռնելու ։

ՊԻԽՍԻ․ Եւ Տիանա՞ն։

ՇԻՔՕ․ Ես զինքը իւր հօրը տունը կը տանիմ, փութացէք Սէն Լիւքն ու իւր մարդիկը բերելու , բայց զձեզ չտեսնեն, զձեզ։ Միայն դուք չէք կրնար այս մարդուն մէկ մազին անգամ դպիլ։ Օ՛ն ։

ՊԻԽՍԻ․ Կը սլանամ, բայց իմ բացակայութեանս . . . ։

ՇԻՔՕ․ Ես հոս կը մնամ։

ՏԻԱՆԱ․ Ա՛հ , զիս կը թողուք , կորսուա՛ծ եմ . . . ։

ՊԻԽՍԻ․ Կը կենամ . . . ։

ՇԻՔՕ․ Մա՛հ իմ կենաց . զինքը սպաննե՛լ տուէք , բայց մի՛ անպատուէք ։

ՊԻԽՍԻ․ Կը մեկնիմ։

ՏԻԱՆԱ․ Երթայք բարեա՛ւ . կը սիրեմ զձեզ, երթայք բարեա՛ւ ։

ՊԻԽՍԻ․ Ո՛հ , 'ի կրկին տեսութիւն ․ (կը փնչէ)

ՏԻԱՆԱ․ (հեծեծանքին) Աւա՜ղ։

ՇԻՔՕ․ Հունչ կ'առնում․

## ՏԵՍԻԼ Գ․

ՏԻԱՆԱ , ՇԻՔՕ , ՊԻԽՍԻԻ ՄԱՆԿԼԱՒԻԿԸ օնտան վրայ ։

ՇԻՔՕ․ Օ՛ն , քոյր իմ, քաջութիւն . ամեն ինչ յաջող կ'երթայ։ Մէկ քառորդէն կրնանք հօրդ քով ըլլալ. օգնութիւն պիտի գտնենք . և աշխարհի բոլոր Մոնսորօները պիտի խիզախենք ։ Աղէ՛ , թեւս մտէք և երթանք ։

ՏԻԱՆԱ․ (դողդողալով) Բարեկամս , չգիտեմ թէ ինչ կ'ըլլամ։ Քեզի հետ չեմ վախնար, բայց ինքզինքս սառած կ'զգամ․ Ոտներս տախտակամածին վրայ կ'արմատանան . գաղտնի և ան-

յաղթելի կամք մը ինձ կը հրամայէ հոս մնալ և գլխս կը կաշկանդէ . կը տեսնես որ չեմ կարող քալել, չեմ կրնար ։

ՇԻՔՕ . Սակայն պէտք է . վրաս կռթնեցէք, բազկացս մէջ, ձեզ պիտի տանիմ, աշխարհ իսկ պիտի կարենամ տանիլ ։ (յանկարծ պատուհանին ապակի մը շառաչմամբ կը ճռի՝ պատուհանը կը բացուի և երեք անձինք պատշգամբէն ոտքերնին ներս կ'երկնցնեն ։)

ՏԻԱՆՆԱ . Աւասի՛կ իրենք ։

ՇԻՔՕ . Արդէն ։ (Տիաննան կը դէպ դուռն դառնայ)

## ՏԵՍԻԼ Դ .

ՆՈՅՆՔ , ՄՈՆՍՈՐՕ, ՍԻԿԱՐԵԱՆՔ

ՄՈՆՍՈՐՕ . (Ուրիշ երեք անձերէ հետևեալ) Ա՛հ , պարոն Պիւսի , ինքզինքնիդ ձեռք տուէք ։

ՏԻԱՆՆԱ . Եղբա՛յր իմ ։

ՇԻՔՕ . (Նորա բերանը գոցելով) Անուանս մի՛ տաք ։

ՏԻԱՆՆԱ . Զձեզ պիտի սպաննէ . . . ինքզինքնիդ ճանչցուցէք ։

ՇԻՔՕ . (առ Տիանա՝ ցած) Որպէս զի փախչի և երթայ զՊիւսին սպաննէ . . . և կամ Պիւսի զինքն սպաննէ . . . Ուրեմն նաձեր երկուքին մէջ յաւիտենական խոչընդոտ մը ։ Ո՛ն , խախնամութեան թողէք գործը . . . ։ (առ մանկլաւիկին) Ո՛ն , տարէ՛ք զինք . . . տարէ՛ք զինքը ։ (մութ սենեկէն մէջ դռնէ կը փակէ)

ՄՈՆՍՈՐՕ . Այո՛ . . . փակէ ։ Անոր ալ կարգը կու գայ ։ Նախ և առաջ զքեզ, յետոյ զայն ։

ՇԻՔՕ . Գրուած էր որ ես զինքը այրի պիտի թողուի ։

ՄՈՆՍՈՐՕ . Աղէ՛ , քաջքդ իմ, արդէն վախէն կիսամեռ է ։

ՇԻՔՕ . Կը ստէք , ես Պիւսի՛ կը կոչուիմ ։

ՄՈՆՍՈՐՕ . Ա՛հ , կը կարծէք թէ այն խեղճ որսորդապետը բանտարկեալ է . ո՛չ գիտէ , գուցէ զլխատեալ . և այս բարի լուրը կու գաք իւր կնոջ իմացնելու . . . ո՛ն , ձեր դիմակը վա՛ր առէք , անգամ մ'ալ իրարու երես տեսնենք ։



ՇԻՔՕ . Ամենևի՛ն . . . մասերնիս հաւասար չպիտի՞ ըլլար . ես խիստ գեղեցիկ եմ . . . դուք՝ վախցնելու չափ տգեղ էք . . . ։ (կը պատրաստուի և կ'ամբառնայ)

ՄՈՆՍՈՐՕ . Սկսի՛նք ։

ՇԻՔՕ . Սկսի՛նք . . . ։ (Բաղդակը կ'երկնցնէ . սուր մը կ'իյնայ ։ Իւր վրայ պատուհանէն երկու հարուած կը տեղեն , որոյ մէկը մանկլաւիկը փառակէտէն կը յերէ և միւսը հայելի մը կը խորտակէ ։) Խե՛ղճ տղայ . . . ա՛ռ քեզ անձդ կարմրաբաճկո՛ն ։ (Նոյնը կը զարնէ ։ — Զայրացած պոռալով . Լարյանկոյց երկուքը կ'իյնան . Շիքօ միւսները կը հալածէ , որք կը փախչին , մին՝ պատուհանէն, միւսը՝ դռնէն ։ Յաղթական պոռալով) Ա՛հ , տեղերնիս կը մաքրուի դեռ ուրիշ մնա՞յ . . . ։

ՄՈՆՍՈՐՕ . Այո՛ . . . առ ի՛ս . . . ։

ՇԻՔՕ . Լա՛ւ . . . ։ (ճեմելեաց պատշգամին վրայ հինգ անձինք կ'երևին)

ՄՈՆՍՈՐՕ . Օ՛ն , ձեզ տեսնեմ . . . բարեկամք իմ ։

ՇԻՔՕ . Կ'երևի թէ մարդասպանութիւն մ'է ասի ։

ՄՈՆՍՈՐՕ . Անշուշտ ։

ՇԻՔՕ . Ամո՛ւր կեցէք ուրեմն , թշուառականներ ։ (Խոյէն հակառակ կողման հարուածով ճրագները կը մարէ . յետոյ աթոռներէն մը ետևէն ծածուկ պատնէշէ կ'ամրանայ ։ Պատերազմ . մէն մի անգամուն մարդ մը կը վիրաւորէ կամ կը ճանկէ , մերթ այս մերթ այլ պատնէշէ մը ետևէն ապաստանելով . մէկ անգամուն երկու սիկարեանք իւր սուրը կը բռնեն և կը խորտակեն ։ Զանոնք կը փետահարէ կամ կը խեղդէ . անոնցմէ մին պատնէշէ մը հարուածով զէնքը կոտրելէն կը զարնէ ։)

ՄՈՆՍՈՐՕ . Զինաթափ . . . մեր ձեռքն է ։ (Շիքօ կարասեաց կոշտ բեկոր մը կը վերցնէ և օդին մէջ կը ճօճէ . յարձակողք կը խուսափեն . Շիքօ , առաջին անգամ ըլլալով ետ կը մղուի ։)

ՇԻՔՕ . Զէնք չկա՛յ . . . վիրաւորեալ ։ (մանկլաւիկը մեռելոյ մօտէն հոգեվարք ոտք կ'ելնէ և իրեն սուր մը կու տայ) Ո՛հ , շնորհակալ եմ, խեղճ տղայ . . . շնորհակալ եմ . . . ։ (տորնտնակէ երկրորդ հարուածով մանկլաւիկը կը մեռնի ։)

ՄՈՆՍՈՐՕ . Օ՛ն . . . և թող վերջանայ . . . ։

ՇԻՔՕ . Զո՛րս ևս . անոնցմէ երկուքը պիտի սպաննեմ թերևս . . . բայց միւսները զիս պիտի մեռցնեն . . . ։ Ա՛հ , Պիւսի՛ . . . ա՛լ ժամանա՛կն է ։

ՄՈՆՍՈՐՕ . Յառա՛ջ . . . ։ (տորնտնակէ հարուածով մը կը

[illegible] Շիքօ . [illegible] ) Կորսուած է :

ՇԻՔՕ . ( [illegible] ) Պիւսի , ժամանակն է . . . ժամանակն է .

ՄՈՆՍՈՐՕ . ( [illegible] ) Դու մեռար , Պիւսի . . . :

## ՏԵՍԻԼ Ե .

ՆՈՅՆՔ , ՊԻՒՍԻ , [illegible] ՄԱՐԴԻԿ

ՊԻՒՍԻ . ( [illegible] ) Հոս մարդ կ'ըսպաննեն . . . բացուեցէք :

ՇԻՔՕ . Հա՛ս . . . Հա՛ս . . . : ( [illegible] ) Պիւսի . . .

ՄՈՆՍՈՐՕ . ( [illegible] ) ուրեմն ո՞վ է միւսը . . . :

ՇԻՔՕ . ( [illegible] ) որ լուր վերջին [illegible] ) Յիմարը . . . : ( [illegible] ) յիմարութիւնն կ'ընէ . . . : ( [illegible] )

ՄՈՆՍՈՐՕ . ( [illegible] ) Շիքօ . . . ո՞վ կատաղութեանս . . . սադաններ . . . : ( ՍԷՆ-ԼԻՒՔ [illegible] ներս կը մտնէ )

## ՏԵՍԻԼ Զ .

ՊԻՒՍԻ , ՍԷՆ-ԼԻՒՔ , ՄՈՆՍՈՐՕ , ՇԻՔՕ , ՏԻԱՆԱ .

ՊԻՒՍԻ . ( [illegible] ) Բարեկամս . . . եղբայրս . . . ո՞ւր է Տիանա . . . : ( [illegible] – ՍԷՆ-ԼԻՒՔ ) Հո՛ն , Հո՛ն . . . :

ՇԻՔՕ . Կ'ուզէի զինքը դարձեալ գրկել : ( ՍԷՆ-ԼԻՒՔ [illegible] )

ՏԻԱՆԱ . ( [illegible] ) Իմ . . . իմ բարեկամս . . . : ( [illegible] )

ՇԻՔՕ . ( [illegible] ) Իմ քոյրս այրի է . . . : ( [illegible] ) Զինքը ձեզ կու տամ . . . : ( [illegible] )

ՎԵՐՋ .

11 MAY 2013



# ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԼԻՕՆԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ

ԿՆՈՋ ՄԸ ՎԷՊԸ

ՓՕՂ ՆԱԽԱՊԵՏ

ՔՈՅՐ ՄԸ

13/85